

ՏԵՐ ԵՐԱԿ

VI ՏԵՐ

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՄՈԱԳԻՐ

№ 2

ՓԵՏՐՈՒԱՐ

1906

ՀՎՀ

ԽԸ Ե Յ Ե Ր Ա

Տպական ՀԱՅՐԴԱՐԱՐ Առարկա, Ա. 15.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 2

	<i>Երես</i>
1. ԱՐԾԻԻՆ ՄԱՀԻ (Հերկիսա), 1. Զուգանիսինի	5
2. ԳԵՐԱ, «ՄԵԿԸ ՇԱՏԵՐԻ ՀԱՄԱՐ»	6
3. * * Աւ. Խառնավիսնի	22
4. ՖԻՆԱՆՏԻՑ, Ա.-ի	23
5. ԹԱՅՐՅՈ-ԲՐԴԱԿՈՆ ԱՐԺԱԼԱՆԵՐԻ ՔԱՄԵԱԿԻ Ականատեսին	53
6. ԿԱՐԼ ՄԱՐՔՍԸ ԵՒ ՄԱՐՔՍԻ ԶՄԸ, Բ. Իշխանիսինի . .	60
7. ԻԲԻՐՈՍԻ ԿՌՈՒՆԿԵՐԸ (Շիլերի)թար. 1. Մանուկյանի 87	
8. ԱԳՐԱՐ. ՀԱՐՑԸ ԵՒ ՆՐԱ ԼԹԻԾՈՒՄԸ ԹՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ Երուանդ Մարգարիսին	94
9. ՔՆՆԱԴԱՏԱԽԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԿԱԾՈՒԹԻՒՆ	
10. Ա. Վ. Արյութեան Արկանաբազուկի, «Մանկական պար- ալզ», 2. Տէր-Միքարեանի, Dr. Grennfield Die Verfassung des persischen Staates. (Պարսկ. պետ. կազմը), Ա. Շահ. 3) Վաւանսերն ինչ կարգան Յով. Տէր-Միքարեանի 4) Inga Nal- bandian (f. Golin) «Bolgesang», digte um drom v. *	105
11. ՆՈՐ Ե. ՅՈՒԱՆ ԳՐԲԵՐ	134
14. ՆԵՐԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — Հայ-Խուրբական համաժողով.— Կոտորածների զինանոր պատճառը հայերի կարծիքով. —«ոյնը Խուրբակի կարծիքով, —Քոյի հարցը Խուրբակի բժբանողաւթեամբ, —«ոյնը հայերի տեսալիւով, —Թա- րմնիր վերաբերելու հարցը հայերի առաջարկութեամբ, —Փօխարքայի եղ- րակացութիւնը, —«ոյր առեւտրական դաշնակիր Գեր- մանիսյի հետ	135
15. ԱՐՏԱՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — Վիճիատրական փոփոխութիւն Խոայիսում, —Անգարայան պարլամենտի խոփոնումը. —† Անտան Վիճիեր և Եւգինի Թիվառեր. — Վիճիատ- րական փոփոխութիւն Ձրանսիայում, —Անդիան, Արան- սիան և Խոտայիան արմատականում են: 7, Ա. 188	

Նոր շրջան VI տարի

Հրատ. XVIII տարի

ՄՈՒՐՃ

ԴՐԱԿԱՆ, ՀԵՇՎՐԵԿԱՆ ԵՒ ՔԱՂԵՐԵԿԱՆ

Ա. Մ Ո Ս Լ Կ Ի Ր

№ 2


Փ Ե Տ Բ Ո Ւ Ա Ր

1906

—>|><<—

ԹԻՖԼԻՍ

Տպարան „ՀԵՇՎՐԵԿԱՆ“ Ընկ. Մոդոք. փող., 15.
1905



ԲՐԱՄԴԱԿՈՒԹԻՒՆ

Nº 2

	Երես
1. ԱՐԾԻԻԽՆ ՄԱՀԲ (Հերեղիա), Ա. Զուզաննանի	5
2. ՎԵՐԱ, «ՄԵԿԸ ՇԱՏԵՐԻ ՀԱՄԱՐ»	6
3. * * Աւ. Խամակեանի	22
4. ՅԻՆԱԱՆԴԻՍ, Դ.-ի	23
5. ԹՈՒՐՔՕ-ԲՐԴԱԿԱՆ ԱՐՃԱԿԱՆՔԻ ՔՍԱՆԵԿՀԻՆԳԱՄԵԱԿԲ Ականատեսի	53
6. ԿԱՐԱ ՄԱՐՔՍԸ ԵՒ ՄԱՐՔՍԻ ԶՄԸ, Բ. Իշխաննանի	60
7. ԻԲԻԿՈՍԻ ԿՌՈՒՆԿՆԵՐԸ (Շիլլերի) Թար. 1, Մանուէլեանի 87	
8. ԱԴՐԱՐ. ՀԱՐՑԸ ԵՒ ՆՐԱ ԼՈՒԾՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ Երուանդ Սարգսիանի,	94
9. ՔՆԱՇԴԱՏՈՒԹԻԽՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻԽԻԽՆ. — Ա. Վ. Առյութնայ Կրկանար պատկ, «Պանկական պար- տէզ», Յ. Տէր-Միլաքեանի, 2) Dr. Grennfield Die Verfassung des persischen Staates. (Պարսկ. պետ. կազմը), Ա. Շահ.-ի 3) Գիտականերն ինչ կարգան Յով. Տէր-Միլաքեանի 4) Inga Nal- bandian (f. Golin) «Bolgesang», digte um drom ւ ա. *	105
10. ՆՈՐ ԵՎ ՅՈՒԱԾ ԳՐԲԵՐ	134
14. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻԽԻՆ.—Հայ.-Ռուբրուկան համաժողով. — Կոտորածների դիմաւոր պատճառք հայերի կարծիքով. —Նոյնի Ռուբրերի կարծիքով. —Քոյի հարցը Ռուբրերի բնրոնողութեամբ. —Նոյնի հայերի տեսավկչով. —Թա- լմնի վերադարձները հարցը հայերի առաջարկութեամբ. —Նոյնի Ռուբրերի առաջարկութեամբ. —Փոխարքայի եզ- րակացութիւնը. —Նոր առեւտրական դաշնագիր Գեր- մանիայի հետ:	135
15. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻԽԻՆ.—Մինիստրական փոփոխութիւն Խոսկեայում. —Ունկարական պարբաժնութի խափանումը. —† Անտոն Մինդեր Եւ Եւգնի Միխար. —Մինիստ- րական փոփոխութիւն Ֆրանսիայում. —Անդիհան, Ֆրան- սիան և Խոտայիան արքանականանում են: Հ. Ա. 188	

16. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏՎՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ
 17. ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ
 19. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ
 20. ՅԱԻԵԼՈՒԹ. ՁԷՅՄԱ ՄՈՐԻՔԸ «ՀԱԶԻ ԲԱԲԱՆ ԱՆԴ-
 ԼԻԱՅՈՒՄ», ՎԵՊ ՊԱՐԱԿ. ԿԵԱՆՔԻց, ԹԱՐԳԹ.
 ԱՆԳԼ. Մ. ԿԱՐԱՊԵԿԻՆԻ 174—206

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը յատուկ խնդրում է յօդուածագրերից՝ գրել պարզ, մասնաւոն բռները, յուտու և անուններն ու օտար բռները, եւ բերքի միայն մի երեսի վրայ. առահնձնապէս ու ո դարձնել կէտադրութեան, ուղղագրութեան եւ նոր պարբեռութիւնները ուռուսկի լինելու վրայ. Թարգմանութեան հետ պէտք է ուղարկել խմբագրութեանը նաև բնագիրը:

2. Զբնդունուած մեծ յօդուածները պահուում են խմբագրատանը 6 ամիս, իսկ յետոյ ոչնչացնուում են: Զեղագիրը յետ ստանալու համար պէտք է ուղարկել ճանապարհածախոր: Փոքր յօդուածներն ու ստանաւորները չեն վերադարձնուում:

3. Գրուածքների վարձատրութեան չափը որոշուում է խմբագրութիւնը: Խմբագրութեան առանց պայմանների ուղարկուած ձեռագիրները համարուում են անվճարելի:

4. Խմբագրութիւնն իրան է վերապահուում ուղարկուած յօդուածները փոփոխելու կամ կրճատելու իրաւունքը:

5. «Մուրնի» համարը չստացուելու գէպքում պէտք է խմբագրութեանը տեղեկութիւն տալ ոչ ուշ, քան յաջորդ համարի լոյս տեսնելը:

6. Խմբագրութեանը զանազան հարցումներով դիմող անձինք պէտք է պատասխանի համար ուղարկեն նամակադրոշմ կամ պոստային բլանկ:

7. Հասցէ փոխելու համար պէտք է ուղարկել 40 կոպէկ: Հասցէի փոփոխումը պէտք է ստացուի իւրաքանչիւր ամսի 10-ից ոչ ուշ, որպէսդի առաջիկայ համարն ուղարկուի նոր հասցէով: Նոր հասցէի հետ պէտք է այտնել նաև հին հասցէն:

ԱՐԾԻՒԻՆ ՄԱՀԸ

(ՀԵՐԵԴԻԱ)

ԵՐԲ որ արծիւնյաւերժական ձիւներէն վերէ բարձրացած,

Լայնատարած իր թևերուն աւելի օդ կ'ուզէ գտնել
Եւ արեգակն աւելի մօտ աւելի ջինջ կապոյտի
մ'մէջ,

Տարցնելու համար շողիւնը թաղծագին իր բիբել-
ըուն:

Վեր կ'ամբառնայ: Ու կը ծըծէ ամբողջ հեղեղ մը
կայծերու:

Միշտ աւելի վեր, իր խըրոխտ թըսփիչն հանդարտ
ուռեցնելով,

Կը սըլանայ դէպի մըրիկն ու փայլակը զինք կը
քաշէ.

Բայց շանթն ահա մէկ հարուածով անոր երկու թև
փշբեց:

Զարադուշակ աղաղակով, կը դարձդարձի, ընդքարշ
տարուած՝

Մեծ յորձանքէն, ու սլրկըւած, վըսեմ ումազով մը
խըմելով

Բոյցն համասփիւռ, կը մըլսըրձի անդունդին մէջ
փայլակնացայտ:

Երնէկ անոր որ Փառքի կամ Ազատութեան սիրոյն
համար,

Հըպարատութեանը մէջ ուժին և արբեցութեան մէջ
երազին,

Կը մեռնի այսպէս, մահով մը շըլացուցիչ ու կար-
ճառեւ:

Ա. Զօլանեան

ԱՆՐՈՒ

„ՄԵԿԸ ՇԱՏԵՐԻ ՀԱՄԱՐ”

Մի աղջկայ օրատետրից¹⁾

ԳԷՇՐԳ.

Ես չեմ կարող քոնը լինել: Ես աշխատեցի կամքիս ուժով
անցնել մեզ բաժանող անգունդը: Խղճւր: Ես ոյժ չունիմ սահ-
մահարելու իմ զգացմունքները: Քեզ հետ իմ կեանքը կը լինէր
յաւիտենական կեղծիք... Ահա թէ ինչու ևս հնուանում եմ քեզ-
նից... Հեռանում եմ ընդմիշտ: Գէ՜շրգ: Իմ սէրը դէպի քեզ
աւելի բուռն է, քան ապրելու ցանկութիւնս: Թո տանջանքը
ես չեմ կարող տանել—այն էլ առանց մեղքի տանջանքը: Ես
զո՞ւ եմ մեր հասարակական կարգերի... ոչ առաջին և ոչ վեր-
ջին զո՞նը,—զես երկար ժամանակ ոչ վերջինը... Ես չափազանց
թոյլ եմ այս հոկայտական պայքարը տանելու համար—և չափա-
զանց մենակի: Բայց կատարիր իմ վերջին խնդիրը, Գէ՜շրգ: Իմ
ամենավերջին խնդիրը... Կոռուիր այն Գաղափարի համար, որի
պատճառով ես կորչում եմ:—Կոռուիր իմ յիշատակի համար,
Գէ՜շրգ:

Ուղարկում եմ քեզ իմ օրագրի վերջին թերթերը: Նրա
խրագանչիւր խօսքը իմ հոգու մի մասնիկն է... կարսդ ես այն
հրատարակել կեղծ անուան տակ:

Եւ եթէ այն սակաւաթիւ մարդկանց մէջ, որոնց ձեռքը
կ'անցնի իմ սրբութիւն սրբոցը, կը զանուեն գէթ մի բանիսը,
որ ծաղրով ու արհամարհանքով չեն շպրտի այն մի կողմ... այդ
էլ բաւեկան է ինձ համար...

Մնաս բարեաւ, Գէ՜շրգ:

Մխիթարի՛ր իմ խեղճ ծնողներին:

1) Vera „Eine für Vieles“ aus dem Tagenbüchle eines Mädchens գիրը ա-
հազին աղմուկ հանեց եւրոպայում, իբրև կանանց իրաւունքների պաշտպա-
նութեան նուիրուած մի զեղարուեստական երկ:

Ռւզարկում եմ քեզ մի վերջին հրաժեշտ, հիւսուած իմ սիրուց ու տանջանքներից:

Քո հաւատարիմ Վերա:

*

Սեպտեմբերի 18-ին

...Ես գարթնեցի կէս զիշերին: Զարթնեցի զիշերային արհաւարքների և խռովեցնող երազների քաօսից: Արգէն մի քանի օր է,որ ես չունիմ թարմացնող ու անդորր քուն:

Կատաղի փոթորկիր անձրեի կաթիլներով ծեծում էր իմ պատուհանի ապակիները... միակերպ և անմիտ ձայներ... Անթափանցելի խաւարը բանդի պատերի պէս ճնշում է ինձ: Խաւարը սիրելու համար ալէտք է լինել կամ չափազանց երջանիկ կամ անստհան դժբաղդ: Ցրտից դոզդողալով ես վեր կաշայ անկողնիցս և վասեցի ճրագը: Ես հաճոյքով դիտում էի, թէ ինչպէս լոյսի շողերը, թափանցելով խաւարի մէջ կուռմ են նրա հետ, աշխատելով վանել նրան...

Ես նստում եմ գրասեղանիս առաջ՝ զլուխս պաշարուած գիշերային երազների յարուցած խոհերով: Ես կը ցանկանայի լինել կատարելապէս ազնիւ... ճշմարիտ, անչափ ճշմարիտ զէպի ինձ: Ես իմ ամբողջ էռւեեամբ ձգտում եմ դէպի այդ ճշմարտութիւնը: Ի՞նչ օգուտ խորամանկութեաբ հիւսուած կեղծիքներից, ի՞նչ օգուտ այն լուրով պատրանքներից, որ ըընը րոյշ հոգատարութեամբ սնւում են կեղծիքի մթնոլորտում: Արգեօք, այդ սիստեմատիկ ինքնախարէութիւնը կը տայ ինձ մի կաթիլ երջանկութիւն կամ մի կտոր ինքնագոնութիւն, որը սակայն կազմում է մեր երջանկութիւնը: Կեղծիքի ծանրութեան տակ ճշմարտութիւնը աւելի և աւելի խորն է թափանցում մեր հոգու մէջ և ակու շինում:

Ճահիճներն ու ցածր տեղերը ինձ սոսկում և զգուանք են պատճառում: Ես կամենում եմ թարմ, մաքուր և պարզ օդ շընչել: Ես կամենում խօսքերով արտայայտել այն ամենը, ինչ ինձ ճշմարտութիւն է թւում: Ես կամենում եմ յետ բաշել մերկութեան ծածկոյթը, պոկել գտղտնի շղթաները, որոնք ճնշում են անհատի ազատ դարձացումը... Ես ուզում եմ փորձել այն՝ ինչ պէտք է լինիմ, և բիւրեղացնել իմ նախնական էութիւնը: Միթէ ես աւելի լաւ, աւելի մաքուր և աւելի՝ բարձր կը լինիմ, եթէ ծածկեմ ինձանից իմ գարշելիութիւնները, եթէ նրանց քօղարկեմ իմ առաջ, արդարացնեմ, պատճառարանեմ: Եւ միշ-

թէ ես աւելի ստոր և աւելի վաստվար կը լինիմ, եթէ զգամ
և գնահատեմ իմ լաւ յատկութիւնները:

Թահանան կարող է մերձենալ սրբութիւններին առանց
պղծելու նրանց...

Ես մօտեցայ լուսամուտին և հայեացքս մխուեց անդորր
և համբ խաւարի մէջ: Եւ մտածմունքներիս կծիկը սկսեց կա-
մաց-կամաց բացուել զլխիս մէջ, թել թելի յետից... Ես հա-
մարեա մարմնապէս էի այդ զգում: Հարկաւոր չէ զլուխ ցաւե-
ցնել կեանքի առօրեայ հարցերի համար, դրանով նոր և նոր
կասկածներ են ծնւում: Մտքի սղոցը մանրացնում է կեանքի
արժեքները:

Ես անտանելի բնաւորութիւն ունիմ, որ հետևանքը է հա-
րուստ և կուշա կեանքի: Զկայ ոչ ուրախութիւն և ոչ ցանկու-
թիւն: Լիութեան և բաւականութեան մէջ մաշտում են մեր հո-
գեկան ոյժերը, որոնք լափում են իրար: Նրանք թմրում են
պարապութիւնից, ինչպէս որ խոփը ժանգոտում է անդործու-
թիւնից: Ահա ինչու շատ անգամ ես ասում եմ ինքս ինձ, որ
եթէ ես ստիպուած լինէի աշխատել, եթէ կարիքը ստիպէր ինձ
որևէ գործի կալչել, եթէ ես ծանօթ լինէի վաղուան հոգափ հետ,
ես, թերեւ, աւելի թարմ, աւելի առոյզ և աւելի ուրախ լինէի:
Ես կը վերածնուէի, նորից կը երիտասարդանայի և այսպէս
չէ խեղդուի անլոյս, աշնանային յոռետեսութեան մէջ:

Բայց այս կոշտութիւնը իր մշտական անրաւականութեան
հետ միապին, այս բուրժուական մոլի վայելքները, սպանում
են ոչ միայն լուրջ աշխատանքի կարողութիւնը, այլ մհացնում
են նոյնիսկ ցանկութիւնը: Եւ սեփական անկարողութեան և
աննպատակ գոյութեան դիտակցութիւնը վերին աստիճանի
դառն է:

Ահա թէ ինչու հասարակ ժողովրդի մէջ այնքան շատ է
ոյժը, եռանդը և երջանկանալու կարողութիւնը և այնքան սա-
կաւ են թոյլ նեարդերը: Նրանք ժամանակ չունիս իրանց հո-
գին շուռ տալու, հետազոտելու, բաղադրիչ մասերի փերլուծե-
լու, դասաւորելու և իւրաքանչիւր նեարդի թրթուացումներին
հետեւելու: Վայելքներից տկարացած մեր դասակարգը—ներվայ-
նութեան հայրենիքն է: Եւ այս վիճակը անուանում են՝ դիւ-
րազզացութիւն, նրբութիւն, տարբերականացում: Նրանով պար-
ծենում են, նրան շահագործում են, նրանով հարստութիւն են
գիգում: Մեր գեղարուեստը մեր նեարդերի քայլայման որրանն է:
Մեր ժամանակակից կեանքը ամրողապէս հիւանդութեան
սերմերով է ցանուած: Մեր զգացմունքների բոլոր արտայայ-
տութիւնները լիցուն են նեարդային տեսդով: բայց նրանց

մէջ չկայ րուսն ոգեսրութիւն, որովհետև ոգեսրութիւնն ոյժի
արտայայտութիւն է:

Ես կը ցանկանայի գուրս գալ բարդ ու խճճուած զրու-
թիւնից և ապրել պարզ ու բնակոն կեանքով...

*

Սեպտեմբերի 20-ին

Ես ինձ շատ անգամ չափաղանց մենակ եմ զգում: Եւ այն
ոչ թէ իմ միայնութեան ժամերին, այլ երբ գանուում եմ օ-
տար ու անտարբեր մարդկանց շրջանում: Միայնութեան այս
զգացմունքը ընկնում է ինձ: Այդ ժամանակ մարդ իրան այն-
պէս կտրուած է զգում ամեն ինչից և համարում է իրան մի
անպէտք մասնիկ... մի հիւէ, որ տարւում է տիեզերքի ան-
հունութեան մէջ... անսպասպան, անօգնական:

Երբեմն էլ քիչ է մնում երեսի վրայ ընկնիմ և երեխայի
պէս հեկիկամ:

Իմ սիրելի ծնողները չնայելով իրանց մեծ սիրուն գէպի
ինձ, անկարող եղան աղատել ինձ ճնշող տառապանքից: Նոյն
իսկ Գէորգի ներկայութիւնը հազուագիւտ ժամերում հազիւ էր
կարողանում իմ մենաւորութեան զգացմունքը ցրուել: Նրա սէրը
խորն է և ուժեղ, բայց նա լայնածաւալ չէ: Այդ սէրը ձգտումէ
մաշել իմ անհատականութիւնը իրա ջերմութեամբ և ձուլել
իմ էութիւնը իր էութեան հետ: Եւ սիրոյ այդպիսի ձըգ-
տումը ստիպում է ինձ կասկածել թէ նա ուժեղ է: Երբ
երկու հոգիներ չեն կարող կապուել իրայ հետ, մնալով ած-
բողջ, աղատ և ինքնուրոյն, չեն կարողանալ և հասկանալ ու
լրացնել միմեանց, չեն կարողանալ մերձենալ միմեանց իրանց
բազմակողմանի ամբողջութեամբ, այն ժամանակ փոխադարձ
հակումն էլ չի կարողանալ տալ այն բարձր երջանկութիւնը,
որ գերագոյն համերաշխութիւնից է ծնունդ առնում: Եւ
այն, ինչ հնարաւոր է սովորական հոգիներին, շատ ան-
գամ հնարաւոր չէ լինում հաղուագիւտ և սուր անհատակա-
նութիւն ունեցող անձերի համար: Մարդիկ, որոնք մեծ տեղ
են բռնում, չեն կարող իրար մօտ նստել: Նրանք կը ճնշեն
միմեանց, անձնազուրկ կ'անեն, կը սպանեն իրանց զարգաց-
ման հնարաւորութիւնը: Նրանք պէտք է կորցնեն իրանց, որ
յետոյ գանեն միմեանց:

Գէորգը կ'ուզենալ ձուլել ինձ իր եսի հետ, կ'ուզենար
ինձ իր առարկան, իր ոյժի խաղալիքը, իր սեհեակի զարդը
դարձնել:

կան կանայք, որոնք իրանց երջանկութիւնը զբա մէջ են գտնում, նրանք հրաժարում են իրանց բոլոր առանձնայատ- կութիւններից և արողջապէս լուծում են սիրած մարդու մէջ։ Կանոնց այս խաղաղ հազարդութեան տիսուր հետհամարդն է՝ տղամարդու իշխող մորալը, նրա ձգուումը դէպի գերիշխանու- թիւնը և իր արիապետութեան գիտակցութիւնը։ Կանացի թու- լութեան վրայ է հիմնում տղամարդն իր կարծեցեալ ոյժը։ Բայց սա հէնց մի թոյլ հիմունք է, և տղամարդկանց հռչակաւոր ոյժը, որով նրանք արդարացնում են իրանց անժուժկալութիւն- ները, արդէն վագուց առասպելների կարգն է անցել, որին մենք այլիս չենք հաւատում։ Միայն այն ժամանակ կարելի է մեծ ոյժ և առողջ սերունդ ունենալ, երբ ոյժը ոյժի վրայ է հաստատուած։ Այժմ մենք անհամար խոչընդուների առաջ ենք կանգնած, որոնց պէտք է յաղթահարել։ Կանայք իրանց ազա- տագրական ձգտումներով ահազին աղմուկ են բարձրացնում, գլուխները խփում արիւնլուայ անում, և միայն շատ հաղուա- գիւտ գէպքում է նրանց յաջողուում պատից մի փոքրիկքար պո- կել։ —Դրա համար հարկաւոր է աւելի ուժեղ կործանելնիւթը։ —Մեր ամքողջ հասարակական կարգը պէտք է այնպէս օգը թռչի, որպէս յարգը փոթորկի ժամանակ։

*

Սեպտեմբերի 21-ին։

Գէորգը հեգնում է իմ բոլոր գաղափարները՝ չափա- զանց գիտակցող մարդու ընորոշ ժպիառվ։ Նա շատ ան- գամ ինձ հետ վարւում է, որպէս իրեխայի կամ խաղալիքի հետ։ Շոյում է իմ մազերը, ականջներս բաշում է, աչքերս համրուրում է, խօսքերս հանաքի է տալիս։ Իմ վրդովմունքը նրան բաւականութիւն է պատճառում։ Նա նոյն իսկ չի զգում, որ զրանով ինձ վիրաւորում է։ Նա չի զգում նաև այն սուր խայթոցները, որոնցով լիցուն է իմ իուորերը։ Նա կարծես զրահով պաշտպանուած լինի ամենաչնչին հարուածների դէմ անգամ։ Դրանով նա ինձ զիսաթափ է անում։ Երէկ ես համը զայրոյթով բայցում էի նրա հետ թիսգարառուէ փողոցով։

—Ես փիլիսոփայող կին չեմ ուկում։ —ասաց նա. —այն էլ բաւական է, որ նա նորավէպ գրել զիտէ և պատուասիրու- թիւն ունի։

—Ռւբեմ ևս մտածելին էլ ոլէտք է մոռանամ։ Այսպէս չէ։
—Վրայ բերեցի ես գրգուած։
—Այս, սիրելիս։

Նրա խաղաղ անզորութիւնը դառնացրեց ինձ:

—Շատ լաւ, բայց զու կարող ես քո վճիռը փոխել: Մենք պաշտօնապէս դեռ նշանուած չենք,—ասացի ես կատաղութեամբ:

—Բայց, իմ անուշիկ, մենք ծածուկ ենք նշանուած և այդ աւելի մեծ նշանակութիւն ունի.—վրայ բերեց նա:

Ես լոեցի կոտրուած սրտով, հազիւ զսպելով արտասունք ներս:

Իսկ նա ասաց քննչութեամբ ու բարութեամբ.

—Ե՞նչ փոյթ մեղ այս յիմար աշխարհը, երբ մենք այսպէս սիրում ենք իրար:

Նա իրաւունք ունէր:

Երբ մենք սիրում ենք իրար:

*

Սեպտեմբերի 24-ին:

Ես սիրում եմ գրել գիշերը, երբ իմ շուրջը ամեն բան քնած է առասպելական անզորութեամբ: Այդ ժամանակ ես ինձ մենակ չեմ զբում, ինձ հետ է իմ սփոփանքը—իմ անհաւասիրութեան գիտակցութիւնը, որը կորցնում եմ ամբոխային ժխորի մէջ: Այսուհեղ ես դառնում եմ սովորական, հասարակական մերժենաց և ինձ ձնշում եմ բուրժուական նեղ համազգեստով... Այստեղ ինքս ինձ հետ եմ, ապրում եմ սեպտեմբեռն հետեւ կենարով, ականջ եմ դնում իմ զոյութեան իւրաքանչիւր խօսքին, որ խեղտում է կեանքի աղմուկի մէջ: Գիշերը տալիս է ինձ վսեմ կարելիութիւնը աշխուժօրն խօսելու ինքս ինձ հետ, այն խորախորհուրդ գաղտնիքների մասին, որոնք բախում են հոգուց:

Այս ինքնամփոփման մէջ մեծ եսասիրութիւն և ունայնասիրութիւն կայ: Կարծես մարդ գնում է ինքն իրան իր սեփական մոռքերի, զգացմունքների, դիտողութիւնների, խօսքերի շրջանակի մէջ... Ամեն մի շրջանակի նպատակն է բարձրացնել և գեղեցկացնել իր բովանդակութիւնը: Նոյն իսկ իր անձի առաջ մարդ էստետիքական կարիք է զգում սահմանելու իր գարշելիութիւնն ու ոչնչութիւնը:

Տարօրինակ է, որ շատ անզամ ուրիշների կոուտութիւնն ու ստորութիւնը պարզում են մարդու առաջ իր սեփական արժանիքները: Ուրիշի կեղտի մէջ մարդ, կարծես, ինքը մարդուում է: Ֆրանսիական առածնասում է¹¹ Il faut toujours un plus petit, que soi! Ես այդ այսօր զգացի:

Ես փողոցում պատահեցի Կարա Ֆրիորիխուն: Վեց ա-

միս է, ինչ նա ամուսնացել է: Նրա ականջներում խոշոր աղամանդներ են ճօճում: Նրա այտերը և մազերը մի տեսակ կարմիր գոյն են ստացել: Շրթունքների ծալքերը աւելի խորն են գնացել: Նա ճնշող մտերմութեամբ իր թեր անցկացրեց իմ թեով և սկսեց ինձ պատմել մեր ամուսնական կեանքից միջնադէպեր—ցոփութիւն, անամօթ պղծութիւն, որից իմ սիրութակն ու վրայ էր լինում:

—Ես իմ իդէալիս հասայ.—վերջացրեց նա իր պատմութիւնը.—Ես այժմ հարուստ եմ, ունիմ իմ սեփական ննջարանը: Իմ ամուսինը արդէն քառասուն տարեկան է և յայտնի Դօն Ժուան է եղել! Ես երեխայ չեմ ունենայ! Օ՛, ես երջանիկ եմ, շատ երջանիկ:

Կատաղութիւնը տիրեց ինձ: Ես կ'ուզենայի նրա երեսին խփել, հայհոյանքներ թափել: Նա ինքն ամբողջովին անառակութեան մարմնացում էր ինձ թւում:

Քաղաքավարութեան սահմանից դուրս չգալու համար սառն հրաժեշտ տուի և բաժանուեցի նրանից:

Երբ ես ճնշեցի դէպինա ունեցած զզուանը—սկսեցի մտածել Գէորգի մասին—և իմ սիրաը լցուեց մաքուր, Ջինջ և պարզ զգացմունքներով: Եւ իմ գիտակցութեան վրայով անցաւ իսկական, կատարեալ երջանկութեան ալիքը:

*

ՍԵՊԱԿԱԺՐԵՐԻ 25-ԻՆ:

Գէորգը հրեշտակի նման բարի է դէպի ինձ: Նրա խիստ խօսքերի յետևում շատ անգամ սիրոյ և քնքշութեան փրփրացող ալիքներ են ծածկուած լինում: Նրա ամեն մի խօսքը, ամեն մի մտածմունքը ցոյց է տալիս նրա ոէրը դէպի ինձ: Նա կը կամենար ինձ փաթթել իր կեանքով, որպէս փափուկ տաք վերարկուով: Նրա աչքերը շատ խորն են նայում իմ աչքերի մէջ... Եւ ես զգում եմ, որ նա սաստիկ ցանկանում է թափանցել, հետազօտել իմ հոգու բոլոր անկիւններն և իմանալ իմ բոլոր գաղտնիքները:

—Թո մէջ ոչ մի խորիթ բան չպիտի լինի ինձ համար, Վերա, —յաճախ ասում է նա ինձ,—ոչ մի միտք չպիտի լինի քո մէջ, որ ես չիմանամ:

Շատ անգամ նրա հայացքից երևում է, որ նա, կարծես, հետևում է ինձ, մի բանից վախենում է, կսոկածում է: Այն ժամանակ նա անդադար ինձ հետևում է, կշում է իմ ամեն մի խօսքը, ամեն մի շարժումը, իմ դէմքի արտայայտութեան

փոփոխութիւնը։ Ես ինձ ճնշուած եմ զգում, տեսնելով նրա կասկածութիւնը, ինքն էլ առնջւում է։ Մի անգամ հարցրի նրան. «Դու ինձ հաւատում ես, Գէորգ»։ Նա յանկարծ տիրեց և ասաց. «Երբեմն!» Եւ համբուրեց ձեւքս. Բայց նրա վրայ մի ինչ որ յոգնածութիւն էր նկատում։

—Ես վատ մարդ չեմ, Գէնրգ. —ասացի ես.
—Ես այդ գիտեմ, սիրելիս, այլապէս ես քեզ կը սիրէի։
—Էլ ինչու ես, ուրիշն երկմտում։
—Ես վախենում եմ, որ մի օր կը կորցնեմ քեզ!
—Բայց, Գէնրգ, այդ անկարելի՞ է։

Ես բազուկներս փաթաթեցի նրա պարանոցով և համբուրեցի նրան։ Այդ առաջին համբոյրս էր։ Իսկ նա ինձ այնպէս ամուր սեղմեց իր կրծքին, այնպէս վայրենի ու կատաղի ձեռվ..որ, կարծես, այլ ևս չէր ուզում գրկից բաց թողնել։ Նրա գրկախառնութիւնը, կարծես, յուսահատութեան բըռնկում լինէր։ Այդ բանկման յիտեցից ես նշմարեցի անզուսպ ցանկութեան տենդային սարսուռ։

Ինձ համար անբացատրելի մնաց, թէ ի՞նչպէս այդ վայրկեանին ես կարողացայ այնպէս պարզ և սուր և սառը կերպով խորհնել։

Նա կամենում էր ինձ տիրել՝ աւելի ամուր և անքակտելի կերպով շղթայելու համար։ Այդ բանն ինձ վշտացնում էր։ Ամենաբարձրը, որ ես կարող էի նրան տալ, նա նուաստացրեց իր մտքում իբրև նպատակ։ Բայց ես այնքան ոյժ չունեցայ, որ կարողանայի ճնշել իմ մէջ ամօթի զգացմունքը և ասել նրան այդ բանը։ Ո՞րքան մենք մանր, վախկոտ և թոյլ ենք մեր կեանքի ծանր ըոպէշներում։

Մենք մեր աչքերը փակում ենք ճշմարտութեան առաջ, ինչպէս երկչոր երեխաները խիստ հայեցքի առաջ։

*

Սեպտեմբերի 26-ին։

Շատ, շտատ ստութիւններ են ծածկուած «ամօթի զգացմունք» կոչուող հասկացողութեան տակ։ Հէնց նոյն իսկ ինքը — ամօթի զգացմունքը, եթէ հեռացնենք նրանից արհեստական փայլը, ոչ այլ ինչ է, եթէ ոչ ձգտում դէսլի անճշմարտութիւնը։ Դժուար է որոշել, թէ ինչ աստիճան թոյլատրելի է այդպիսի անճշմարտութիւնը։ Կան լոյսից վախեցող

ճշմարտութիւններ, անհատական ճշմարտութիւններ, որ խուսափում են ուրիշների հայեացքներից:

Նոյն իսկ մեր սրտի ընտրեալի առաջ, աւելի արժանաւոր և աւելի փորձուած, մենք խայտարդեատ հազուստով ծածկում ենք ոչ միայն մեր մարմինը, այլ և մեր հոգին: Մենք մեր ընտրեալի առաջ կապնած ենք գաղտնիքներով փաթաթուած: Մենք պէտք է մեր դէմ կրիւ մղենք, որ կարողանանք մեր սիրոյ հետ միասին բանալ նրա առաջ նաև մեր մարմինը Բայց յաճախ մեր ամբողջ կեանքում մենք ծածկում ենք նըրանցից, ինչպէս նաև ինքը մեզանից, մեր հոգու մերկութիւնը...

Ամօթի զգացմունքը մեր ձեռքով սնուած կեղծիք է: Առաջին մարդիկը չգիտէին, թէ ինչ է ամօթը: Մերկութիւնը նրանց համար բնական էր: Երեխանները նոյնպէս չունին ամօթի զգացմունք:

Իսկ մենք, խելացի, քաղաքակրթուած մարդիկս, մենք օգուում ենք մերկութիւնից:

Ինձ թւում է, անառակութիւնը հազուստի հետ միասին է աշխարհ եկել:

*

Սեպտեմբերի 28-ին:

Այսօր առաւօտեան ես Գէորգի հւատ միասին գնացի Դօրնը բախախ: Մենք անստառով էինք անցնում: Խաղաղ էր և ոչ մի մարդ շուրջը: Միայն չորացած տերեներն էին խշխշում մեր ոտների տակ: Արևի ճառագայթները թափանցում էին ճիւղերի արանքից և պարում էին զորշ գետնի վրայ: Մենք քայլում էինք հանդարտ, ճանապարհից հեռու, ձեռք-ձեռքի տուած: Մեր շուրջը ինչոր ջերմութիւն, պարզութիւն և մանկութիւն էր տիրում: Մեղանից և ոչ մէկը չէր ուզում ասօրեայ զրոյցով խանգարել այդ ժամի վեհութիւնը.

Երբեմն Գէորգը կամացուկ սեղմում էր իս ձեռքը: Ես զգում էի, որ նա այդ ըսպէին մի լաւ և բնորյշ բանի մասին էր մտածում, այդ երեսում էր ձեռքի սեղմելուց:

Այդ տեսակ ըսպէսերում մենք ապրում ենք ընդհանուր կեանքով: Մեր մէջ չկայ ոչ մի օտար զգացմունք, ոչ մի գաղտնի մտածմունք: Նոյն իսկ զգայնական ցանկութիւնը լըռում է: Անսահման հաւատարմութիւնը, սիրոյ խորը զգացմունքը մետաքսէ թելով կապում են հոգին հոգու հետ: Ինձ թւում էր, թէ ես եկեղեցում եմ գտնուում: Ես կը կամենայի ընկնել ծնկաչոք և ծալել բազուկներս ազօթելու համար: Իմ

մէջ զարթնեց իսկական և ճշմարիտ բարեպաշտութիւնը, իսկ յետոյ ձգտում՝ լինել բոլորովին մաքուր և բարի, անսահման բարի և սեփական երջանկութիւնը գոհել ուրիշների համար, ձգտում դէպի անձնաղոնութիւն... Այսպիսի բովանդակում սիրում են բոլոր մարդկանց... և ամեն բան աշխարհիս երեսին սրտի մօս է թւում... և կեանքի բոլոր մեղեդիները ճնշում և երգում են... Մարդկային բոլոր զեղեցկութիւնները հաւաքւում են միասին և հոսում սիրոյ հեղեղի հետ միասին: Մի մարդ, որ երբիցէ սիրել է, չի կարող բոլորովին այլանդակուել: Այնքան ապնւութիւն, վիճութիւն և մաքրութիւն է պարունակում իր մէջ ճշմարիտ սէրը: Նա լուսաւորում և տաքացնում է մեր գոյութիւնն ամենամութ և ծածկուած անկիւններն անգամ:

Ծառ անգամ ինձ անհասկանալի է թւում, թէ ինչպէս ես իմ կեանքի 20 տարին կարողացայ ապրել խաւարի մէջ—ապրել առանց նպատակի, օր-օրի յետելից... և ինչպէս առհաշապարակ դոյութիւն ունեի առանց Գէորգի... Այն ժամանակ օրերս անցնում էին տաղտկալի և մեռած: Այն ինչ մեր երկու տարուայ սիրոյ ամեն մի վայրկեանը յոյս է ծնում, ամեն մի ժամը—մի նոր զգացնութիւն, իսկ ամեն մի օրը ապացի հակադիր պատկերը ներկայացնում: Ամեն մի վիշտ լցուում է զեղեցկութեամբ... Նոյնպէս և ուրախութիւնը: Ես խղճում եմ այն անհաջան և խեղճ մարդկանց, որոնց առաջ փակուած է այս գրախաւը...

Այդ բոպէին Գէորգը միևնոյն բոնն էր զգում: Մենք նստեցինք գաշտում, փոքրիկ հողաթումբի վրայ, սեղմուեցինք իրար և սկսեցինք անցեալը մտարերել, և շատ մանրամասնութիւններ մենք յիշեցինք մեր առաջին և երկչուտ բարեկամութեան ժամանակաշրջանից:

Մենք աշխատում էինք գտնել մեր սիրոյ առաջին սերմերը: Ամառային մի տաք գիշեր էր, երբ մենք սուածին անգամ պատահնեցինք միմեանց: Վալցկամերգուտում... զբոսանքի ժամանակ... Լուսինը փայլում էր—մենք չճանաչեցինք միմետնց, նոյն իսկ նախապաշարուած էինք մէկ-մէկու զէմ... Յետոյ մի ինչոր անբացարեկի հակում կապեց մեզ իրար հետ մեր ընդհանուր յատկութիւնների միջոցով և խիստ զինեց մեզ իրար զէմ, մէր մէջ եղած տարբերութիւնների պատճառով: Մեր սիրոյ ծնունդը կոիւ էր... յամաս դիմադրութիւն և փառաւոր յաղթանակ:

Մենք ծիծաղում էինք, յիշելով այն ժամանակը, երբ մեզ բաժանում էին պայմանական պատճէնները և սորկացնում

զանագան ձևականութիւնները, երբ նա ինձ «համեստափայլ օրիորդ» էր անուանում, իսկ ես նրան՝ «պարոն դոկտոր»:

Մեզ համար ծիծաղելի էր յիշել և մեր առաջին երկչուտեսակցութիւնը (rendez-vous). ես վախից ամբողջովին դողուտ էի, իսկ նրա աչքին երևում էին բամբասասէր ծանօթների ստուերները...

Այդ ժամանակուանից մեր մէջ շատ բան է փոխուել: Մենք մի կողմ ենք դրել արտաքին համեստութեան զգացմունքը: Անհոգ և համարձակ մենք դնում ենք մեր սիրոյ ճանապարհով:

Եւ եթէ իրականան Գէորգի յոյսերը, ամենաշատը մի տարուց յետոյ մենք կը պատկանենք իրար... ընդմիշտ...

Աշխարը մեղ համար միայն հիմք է, գետին, որի վրայ մենք կառուցանում ենք մեր կեանքի գեղեցիկ շէնքը...

*

Սեպտեմբերի 29-ին:

Ծնողներս գաղանի կերպով կուռում են իմ սիրոյ դէմ: Սկզբում միայն կծու ակնարկներ էին: Իսկ այժմ արդէն ասպարէղ է եկել բարոյագիտական մահակը: Իմ թանկագին ծընողները, չնայելով դէպի ինձ ունեցած սիրուն, այնքան կարճատես են, որ կարծում են, թէ հարուստ ամուսինը կը բախտաւորեցնէ իրանց զաւակին:

—Մէր ասած բանը յիմարութիւն է, ասում է հայրս.— դատարկ խօսքեր, վիպական զատարկաբանութիւն: Եթէ երկար նշանուած մնաս, սիրուդ գիրեզման կը փորես: Մայրդ և ես դեռ նոր էինք ծանօթացել, երբ նշանուեցինք—և մենք երջանիկ եղանք...

—Բայց դու մի բախտաւոր գիտուած է, ի՞րկչուութեամբ նկատում եմ ես:

—Զայնդ,—վրայ բերեց մայրս իր սովորական կոպիտ եղանակով: Թեղ համար հաճելի կեանք ստեղծեցիր, սէրը ինըն իրան էլ կը գայ: Դատարկ մսուրի առաջ ձիերը կը սկսին իրար կը ծել:

Այս տեսակ ֆիլիսոփերական խօսակցութիւնների ժամանակ իմ ամբողջ մարմնի միջով մի սառառու է անցնում:

Եւ երբ իմ հայրը վերջացնում է իր խրառները հետեւել խօսքերով. «Մի մոռանալ, որ մենք քեզանից խելացի ենք, և որ ամենագլխաւորն է, աւելի փորձուած», ես առարկում եմ վճռողաբար. «Ես էլ եմ կամենում փորձառութիւն ձեռք բերել»:

Այս տեսակ ընդհարութիւններից խուսափելու համար ես ու գէորգը, մեր առօրեայ կեանքի հետ միասին, ապրում ենք նաև գաղտնի կեանքով... Մեր այս հրկմիտ կացութիւնը կը վերջաշնայ այն ժամանակ, երբ Դէորգը միջոց ձեռք կը բերէ ամուսնական կեանքի համար: Եւ այն ժամանակ իմ ազատ ընտրութեան իրաւունքը ստանալու համար՝ ես եռանգուն կերպով կը կուտեմ, եթէ իհարկէ կոփւն անհրաժեշտ լինի: Եւ ամեն բան կը զոհեմ դրա համար... Ամեն բան... Եւ եթէ սիրեցեալ դստերը մերժեն, այն ժամանակ իս սէրը կը նուաճէ, ձեռք կը բերէ այն ինչ որ նրան մերժում են: Ես կարիքից չեմ վախենում: Ես չեմ վախենում փիզիքական զրկանքներից... Նոյնպէս աշխատանքից, պատասխանատուութիւնից, պարտականութիւններից: Ես իմ ամբողջ էութեամբ ձգտում եմ գէպի լուրջ և բովանդակալից կեանքը: Իմ մենակութիւնը ինձ դարձել է վաղաժամ հասունացած, ուժեղ և ինքնուրոյն: Ես ուզում եմ իմ ոյժերը գործադրել... անել այն ինչ կարող եմ:

Արտաքին կեանքի վտանգները ինձ չեն սարսափեցնում: Եթէ ես իմ սեփական գաղտնի ճանապարհներում, իմ հոգու լարիւրինթոսում չմոլորուիմ—արտաքին կեանքը ինձ զինուած կը գտնի: Նրան չի յաջողուի ինձ ֆիլիստեր դարձնել, երբէք, երբէք: Աւելի լաւ է նաւը խորտակուի բաց ծովում, կատաղի ու դաւաճան ալիքների մէջ, քան թէ խաղաղնաւահանգստում: Ես չունիմ ոչ վախ և ոչ զղջում: Դրանք ինձ համար դատարկ հիմքերից զուրկ բառեր են:

Շատ կարելի է, որ իմ համոզմունքների սուր արտայայտութիւնը զլկում է ինձ շատ և շատ ուրախութիւնից: Շատ կարելի է, որ իմ հաստատակամութիւնը ինձ համար տանջանքների պատճառ գառնայ: Գուցէ այլ կերպ լինէր, եթէ մի եղբայր ունենայի: Այն ժամանակ ես բոլորովին ուրիշ ուզութեամբ կը զարգանայի: Ես այն ժամանակ աւելի շուտ պատուակ կը լինէի, քան թէ պատ: Զէ որ կինն իր հոգերանական—Փիզիքական կազմով ծնուած է աւելի շուտ պատուակ լինելու:

Սակայն կնոջ հոգու մէջ մի քանի լարեր կան, որ տղամարդու ազգեցութեան տակ միայն երիտասարդ հասակում կարող են հնչել: Հօրս հետ կապուած եմ խորը և երկիւզած սիրով, բայց մեր հոգերանական կեանքի տարբերութիւնը հէնց սկզբից անկարելի դարձրեց նրա ազգեցութիւնը ինձ վրայ: Իսկ որեւէ ուրիշ տղամբդու հաստրակութիւնից ես բոլորովին ծածկուած եմ եղել: Երկու սեռերի բարեկամական ազատ յարաբերութիւնը մինչեւ այժմ էլ արգելուած է և դրա համար էլ

համարում է գայթակղեցուցիչ, վտանգաւոր և փշալից: Մարդ կարող է զրանուվ իր վարկը զցել. բամբասանքների տակ ընկնել: Եւ օրիորդի մաքրութիւնը—նրա ամենաթանկագին գանձը—հասարակական կարծիքի առաջ կ'արատաւորուի: Ո՞րպիսի խղճալի վկայական այդ մաքրութեան համար: Բայց սիրելի կարճատես ծնողները, որ մեծ եսանդով արգելում են իրանց աղջիկներին որևէ տեղամարդու հետ, բոլորվին բնական են համարում, երբ նրանք պարահանգէնիներում՝ կիսամերկ գրութեամբ մէկ գրկից դէպի միւսն են թըռչում, և երբ նրանց ականջին ամենազգուելի խօսքերն են շնչում: Սա, իհարկէ, բարոյականութեան պահանջներին անհամապատասխան է, բայց համապատասխան է սովորութիւններին: Հէնց բանն էլ դրանում է:

Բաժանման այս տեսակ սիստեմը մասամբ մեղաւոր է, որ երկու սեռերի փոխագարձ յարաբերութեան ժամանակ առաջ է գալիս լարուած մոմենտ և անբարոյականութեան շեշտակի հարուած: Երանի այն սերունդին, որ աւելի լաւ և առողջ ժամանակներ կը տեսնի:

*

Հոկտեմբերերի 2-ին:

Այսօր ես Գէորգի հետ մի փորբիկ վէճ ունեցայ որ մի քանի ժամուայ տարածայնութեան առիթ տուեց: Իմ սիրելի Գէորգը քիչ էր մնում, որ խելագարուելի խանդից: Հանս Վալդաու, որ նրանից մի քանի տարի առաջ, պարերի գասերի ժամանակ սիրահարուած էր ինձ վրայ, համարձակուեց իմ ձեռնը համբուրել: Գէորգը չէր կարողանում ներել նրա այդ յանցանքը և ինձ պատասխանատուութեան էր հսթաբկում:

—Իմ նշանածը չպիտի թոյլ տայ օտար տղամարդուն իր ձեռքը համբուրելու... հասկանում ես:

Ես աշխատում էի նրան հանգստացնել: Սակայն իզուր: Զայրոյթով լցուած նրա բառերը հեղեղի նման թափնում էին գլխիս:

—Դու կոքէառութիւն էիր անում նրա հետ. դուք փոխագարձաբար իրար էիք նայում. զու նրա հետ արգէն մի անգամ սիրային յարաբերութիւն ես ունեցել: Ասա դու ինձ միայն պարզը, եթէ այդ գատարկագլխին գերազատում ես ինձանից... Ասա դու ինձ միայն...

Եւ այդ ուղղութեամբ դեռ երկար շարունակուեց վէճը: Տղամարդու բնակալ և իշխող բնաւորութիւնը պարզ երեսում էր նրա զայրացած խօսքերի մէջ:

Ես գուցէ սաստիկ բարկանայի, եթէ Գէորգն հէնց նայն խոկ այդ խանողավառ զայրոյթի ժամանակ այնքան քաղցր չեղաւր...

Չկայ մի կին, որ բաւականութիւն չզգայ, տևանելով, որ իր սրտի ընտրեալը տանջւում է՝ դէպի իրան ունեցած սիրուց:

Ես ուղղակի հրձւում էի, տեսնելով նրա անսեղի կատաղութիւնը:

Մի քանի ժամից յետոյ նա արդէն բեկուած սրտով ներողութիւն էր խնդրում: Այն ժամանակ ես խոստավանեցի ինչ որ զգում էի: Նա չժպտաց: Նա հեղութեամբ համբուրեց իմ ձեռքը: Նրա հայեացքը տիսուր էր:

*

Հոկտեմբերի 4-ին:

Ես վարձեալ չեմ կարողանում քնել: Մթութեան միջից իւրաքանչյուր ուժում երկիւղի բաօսական զգացմունքները և իմ ժամբերի հետ շաղկապուելով մի խանճճաղանձ շղթայ են կաղմում:

Ես վառեցի ձրազը և վերցրի զրիչս, կամենալով ցըռել ինձ ճնշող ոյժերը: Եւ ահա ես նստած եմ, գատարկ, անմիտ բաներ եմ զրում, աշխատելով խացնել մերթ յուսահատութիւնը և մերթ կարօսը, որ կտոր-կտոր է անում իմ սիրտը...

Եթէ Գէորգը զգար իմ փափագը և գար ինձ մօտ... հէնց հիմա, այս զայրկեանին: Եթէ նա կամացուկ գուռը բաց անէր և անունս շշնջեր... Իր ընկոյշ և փաղաքշող ձայնով... Նրա խօսքերը շատ անգամ նմանւում են համբոյրների... Ի՞նչպէս նրան զէմ կը զագէի, նրա գիրկը կ'ընկնէի և գլուխս կը թագցաէի նրա կըծքի վրայ... Ի՞նչպէս ես ներքուստ կը հըրձուէի նրա զրկում... Ի՞նչպէս ես նրա համբոյրները կ'ուզենայի ծծել ինձ թւում է, թէ ես այդ լուպէին նրան անձնատուր կը լինէի: Երբեմն ներքին անհրաժեշտութիւններ են պատահում: Այդ լուպէին ես չէի կարողանայ ընդդիմանալ: Ամբողջ հոգովս ձգտում եմ դէպի անսահման անձնազոհութիւն, կամենում եմ արբենալ խենթ սիրով: Ինձ թւում է, թէ իս նեարդ զերի վրայով մրջիւններ են սոզում:

Ես կամենում եմ գըկել իմ բարձը, թաղել երեսս նրա մէջ և լաց լինել

Իմ կըքի բանկումները յանկարծակի են, անկախ, որպէս իմ էութիւնը: Ես ուժասպառ եմ լինում ճնշող կարօտի ծանրութեան տակ:

Ես տաճւում եմ իմ շրջապատի ժառանգական նախապաշտմունքներից...

Ես զրնգացնում եմ շղթաներս, ոյժ չունենալով նրանց թօթափել...

*

Հոկտեմբերի 5-ին:

Այսօր առաւօտեան, երբ ես արդէն սովորական, նորմալ դրութեան մէջ էի—այդ վաղ ժամին անակնկալ կերպով յայտնուեց Գէորգը. նա, առանց բաղսելու սենեակիս գուռը, ներս վազեց: Ես առաւօտուայ զդեստով էի և պատրաստում էի մազերս սանրելու: Նա ոչ ներողութիւն խնդրեց և ոչ էլ իր սովորական բարի լուսն ասաց. այդ ըոլորի փոխարէն նա զրկեց ինձ, սեղմեց իր կրծքին և պինդ համրուրեց շրթունքներս...

—Վերա, եթէ գիտենաս, թէ ի՞նչպէս էի փոխադում քեզ տեսնել այս զիշեր:

Ես անկարող եղայ մի րառ արտասանել: Այդ ըոպէին ես հաւատում էի հրաշքների: Եւ իտկապէս: Այսպիսի զուգագիւղութիւնը բացատրում է նըանով, որ մեր զդացմունքները՝ արտաքին միանման դէպքերի ազդեցութեան տուկ, մի տեսակ ուղղութիւն էին սուսցել:

Գէորգը չէր կարողանում իրան զսպել. ես նրան այդպէս ոչ մի անգամ չէի տեսել: Նա մեծ հրճուանկով շոյում էր իմ մազերը. միւս ձեռքով նա պինդ բռնել էր իմ մերկ բազուկը: Նրա այտերը այրում էին: Նրա հայեցքը ինձ կլանում էր: Միևնույն ժամանակ նա վիրաւոր գազանի նման տնքում էր: Ես կամացուկ ձեռքս մօտեցրի նրա ճակատին:

—Ի՞նչ պատահեց բեզ, Գէորգ, հարցրի ես:

—Ուրախութիւն, Վերա, մի մեծ ուրախութիւն, մրմրնաց նա:

—Տարօրինակ ուրախութիւն է: Ինչի՞ վրայ ես այդքան ուրախանում:

—Դու այժմ ինձ ես պատկանում Վերա, ինձ, միայն ինձ, —ձչաց նա և նորից ջղածգորէն ինձ զրկեց:

Եւ երբ ես նրա զրկեց ազատուելով, խնդրեցի աւելի պարզ ասել բանն ինչումն է, նա յայտնեց, որ ինքը այսօր ազիւնկտ է նշանակուած և որ մենք կարող ենք պսակուել... Հէնց այսօր, վաղը—որքան կարելի է շուտ...

Ես պարզ կերպով լում էի սրտիս բարախումը... Սարսուն անցաւ իմ ամրողջ մարմնով... Իմ ամբողջ էութիւնը լը-

ցուեց անսառհման հրջանկութեամբ... Բայց դա միայն մի վայրկեան տեսք:

Ես հազիւ կարողացայ միայն արտասանել. — ճիշտ ես առում, Գէորգ:

— Դու, կարծես, ուրախ չես. — Նկատեց նա և նորից ըստ կըսեց ինձ համբուրել: — Իմ կի՞ նո. իմ սիրելի, պաշտելի կի՞նս. — շնչում էր նա:

Ի՞նչ հրաշալի էր արտասանում նա «կին» խօսքը: Նրա ձայնի մէջ լսում էր տղամարդու ամրողջ ոյժն ու քնքշութիւնը: Բայց միևնույն ժամանակ լսում էր նաև անսահման տիրապետելու, յաղթելու հրճուանքը:

Այդ բովէին ներս մտաւ մայրս: Հենց առաջին հայեացքից ես նկատեցի, որ նա անբաւական է Գէորգի վաղաժամ այցելութիւնից:

Նրա կշտամբանքներից նախազգուշանալով, ես բղաւեցի. — Գէորգը աղիւնկու է նշանակուած: Վաղը մենք պսակում ենք, — աւելացրի ես մեքենայարար, առանց մտածելու իմ տսածի վրայ:

Մայրս գունատուեց, գրկեց ինձ ու Գէորգին և վշտալի հնաղանդութեամբ խրատական մի ամրողջ ճառ արտասանեց, ինչպէս այդ անում են մայրերը այսպիսի դէպքերում: Բայց նրա խօսքերի մէջ իրենում էր մեծ սէր և նոյնպէս ծածուկ հոգս ու թախիծ: Սա մի նշանաւոր, հանդիսաւոր և պաթետիկ մումնատ էր: Ես գլուխու դրի Գէորգի կրծքին և, չգիտեմ ինչու, լաց եղայ: Մայրիկը թաշկինակով աչքերս էր սրբում: Գէորգը զըսպեց իրան և սկսեց քնքոյշ ու բարի խօսքեր ասել: Վերջապէս մենք սկսեցինք վիճել հարսանիքի օրուայ մասին և ոչ մի կերպ համաձայնութեան չէինք գալիս: Այդ բոլորը այնպէս ծրագրուած էր — վայելուչ, ինչպէս ընդունուած է բուրժուական լնտանիք ներում...

Եւ երբ ես մենակ մնացի, միայն այն էի զգում, որ ես հոգեպէս թոյլ ու ճնշուած եմ և որ իմ սպասած երջանկութիւնն ինձ խարեց: Անօգուտ ես խառնեցի իմ հոգու բոլոր ծածկուած անկիւնները, աշխատելով գտնել ուրախութեան զոնէ մի նըշոյլ... Եւ ես ամաչում էի, որ նպատակիս համելու բովէին՝ ողմորութիւնն ինձանից հեռացաւ...

(Կը շաբունակուի)

* *

Մութ պարտիզում սրտատրով, սիրատենչ
իմ նագելուն սպասում եմ այս գիշեր.
— Եշուկ ընկաւ ահա վարդի, ծաղկանց մէջ,
Շուրջս փռուան աբրեշումի զառ փէշեր.
Իմ նագելուն քնքնւշ շունչը ինձ շոյեց.
Կարօտավառ հպարտ կըծքին փարուեցի.
Ծովմաղերի անուշ բոյրը ծաւալուեց.
Աստղաշերին համբոյընելս վառեցի.
Շըթունքներէս ջերմ արխւնը կաթկաթեց
Եւ բաղդաւոր, և երջանիկ լացեցի...
— Վայ քեզ, թշուառ, երագների խեղճ տղայ,
Ոչ ոք չկայ, ոչ ոք չունիս քեզ մօտ դայ...

* *

Քնքնւշ տաւարակս, դու անծանօթի,
Գու օտարի պէս մօտովս անցար.
Ի՞նչ եղաւ քեզի, որ վառ կարօտի
Ծովարցունքներդ այգակս շնւա մուցար:
Գնա, մոռացիր և բաղդը քեզ հետ.
Ում հետ որ կ'ուզես, թռիք ու գնա,
Շինիր քու բունը, ում հետ որ կ'ուզես,
Թնդ տունս մնայ տիսնւր, վերանայ:
Թնդ օձախիս մէջ կրակ չշողայ,
Մարած տանս մէջ թնդ օռնայ քամին.
Թնդ վայէ քամին չոր գլխուս վերայ,—
Ես չեմ հաւատում կնոջ երդումին...

Աւ. Հասհակեան

ԳԻՆԱՆԴԻԱՆ

Ֆինլանդիա *) կոչում է այն երկիրը, որ տարածում է Եվրոպական Ռուսաստանի հիւսիս-արևմտեան անկիւնում: Այդ երկիրը իր անունը ստացել է բնակիչների անունից՝ «Fin» կամ «Finn» բառից և երկիր նշանակող «Land» բառից, որով և կազմուել է «Fin-land» կամ «Finn-land» անունը: Իրանք բնակիչները իրանց երկիրը կոչում են «Suomi կամ Suomenmaa», այսինքն Սուօմի երկիր:

Ֆինլանդիան բռնում է 371,48 քառ. կիլոմետր տարածութիւն և իր ամբողջութեամբ քարաժայուային բարձրութիւն է ներկայացնում: Հիւսիսից Սքանզինավեան լեռների շարունակութիւնը կազմող մի փոքրիկ լեռնաշղթայ ուղիղ դէպի հարաւագալով բաժանում է բաղմաթիւ մանր ճիւղերի և տարածւում է ամեն կողմ և աւելի հարաւագալով գովազում է փոխում է փոքրիկ հարթութիւնների:

Ամենամեծ բարձրութիւնը 400 ոստաչափ է ծովի մակերևոյթից։ Այդ բարձրութիւնները, ինչպէս սասացինք, մանր շղթաներ են, որոնցից աջքի ընկնողն է Մանսէլկէ։

Հնումը Ֆինլանդիան համարեա ամբողջապէս սառցապատէ եղել: Սառուցի ահագին կտորները ժայռերից ցած սահելով փշտել են ժայռերի մասերը և կազմել աւաղային կամ կաւային հող: Ներկայումն հողային մասերը աւելի շատ են հարաւային կողմում, մասնաւանդ հարթութեան վրայ:

Ծնորհիւ իր աշխարհագրական դիրքերին Ֆինլանդիան աւելի լաւ է ուսովում մանաւանդ հարաւային մասերում։ Ամառ թէ ձմեռ ժամանակ առատութեամբ փչում են հարաւային տաք հոսանքներն Բալտիկ ծովից։ Պէտքէ ասել որ առատ խոնաւութիւնը Ֆինլանդիայում անձրկի փոխարկուելով չի ծրծ-

*) О^днота^ил и^м з^еб^от^ик^ив^ал а^зи^ши^ти^л ф^іл^із^ун^іх^ри^г. Протопоповъ „Финляндія“, Майковъ „Шутев. по Финл.“, Ноавіусъ „Торг. снош. Финл.“, И. Андреевъ „Финляндія“ і^м ф^іл^із^ун^іх^ри^г.

ւում երկրի ներսը, այլ մնում է քարային մակերևոյթի վրայ և կազմում մանր մունր լճեր ու ճահիճներ, որոնց թիւը 4000-ից անցնում: Ֆինլանդիայի ամբողջ տարածութեան մօտ $120/0$ ծածկուած է ջրով: Լճերից նշանաւոր են՝ Էնարէ, Նեսի-Երվի, Պէյենէ և Սայմա, Վերջինս Ֆինլանդիայի ամենամեծ լիճն է:

Դետերը ընդհանրապէս քիչ են, իսկ եղածներն էլ շատ քիչ բացառութեամբ արագածոս են, սըրնթաց և նաւարկութեան համար անպէտք: Գետերից նշանաւոր է Թոռնէօն՝ Շվեդ-Նորվեգիական սահմանի վրայ, Կիւմէն, որը 1741—1809 թիւը ոռւաց և Ֆինլանդիայի սահմանն էր կազմում, Վոօքսա՝ Իմմատրա ջրուէժով: Այդ բոլոր գետերը, ինչպէս ասացի, անյարմար են նաւարկութեան համար, բայց օդտակար են ջրաղացների և գործարանների համար:

Նաւարկութեան նպատակով շատ մեծ խնամքով ջրանցքներ են փորուած, որոնցից նշանաւոր է Սայմեան ջրանցքը, որը փորուել է 1856 թուին և միացնում է Սայմա լիճը Ֆինեան ծոցի հետ:

Ֆինլանդիայի կլիման համարեա չոր է, մանաւանդ հիւսիսային մասերում, որտեղ տաք քամիները չեն համանում. այլ ընդհակառակը այգաեղ փշում են հիւսիսային Սառուցեալ ովկիանոսի ցուրտ քամիները: Զնայած դորան, Ֆինլանդիայի կլիման աւելի բարեխառն է, քան նոյն լայնութեան տակ գտնուած ոռւսական նահանգների կլիման: Միջին ջերմութիւնը հաւասարում է՝ 5° հ— 10° , իսկ հիւսիսում ցրտութիւնը համառ է՝ 48° C.: Զմիռը սովորաբար տեսում է 6—8 ամիս:

Ասացինք որ նրա մակերեսոյթը համարեա ամբողջապէս ժայռային է: Բայց պէտք է նկատել և այն, որ երկրի մի մասը ծածկուած է անտառներով, որոնք ժամանակի ընթացքում երկրի հողը աւելի լաւայատուկ և բիրրի են դարձնում:

Երկրի հիւսիսային մասերը ծածկուած են հիւսիսային երկրներին յատուկ մամուռով: Դրանից հարաւ սկսւում են անտառները, որոնք մեծ տեղ են բռնում և տարածում են համարեա ամրող երկրում դէպի հարաւ: Ամբողջ երկրի $2/3$ մասը միայն անտառներն են բռնում: Բոլոր ծառերն էլ փշատերեն են, սոճիներից, եղևնիներից և այլ նման ծառերից: Պատահում են և ուռենիներ: Հարաւ արևմտեան մասում այդ ծառերը փոխուում են և տեղ տեղ պատահում են չինարի, լորենի կաղնի և այլն:

Իսկ հարաւային գաշտային հարթութիւնները ծածկուած են մարգագետիններով և արտերով:

Տնային կենդանիներից նշանաւոր է հիւսիսային եղջերուն, որը ընտանեցրուած է և լծում են սահնակներին:

Ֆինլանդացիները իրանց երկրի անունով իրանց կոչում են Suomalaiset, այսինքն սուօմալացիներ: Ֆինլանդացիները կամ սուօմալացիները Ֆինլանդիա են եկել 800 թ. Ք. յ.: Դոքա հաւանական է որ ազգերի գաղթի ժամանակ եկել են միջին Ասիայից և բնակուել Վոլգայի ու արևմտեան Դվինայի մէջ, որտեղ աճելով բնականաբար խոտացել և ընդարձակուել են դեպի այդ կողմը: Այստեղ էլ ինարկէ դուրս են վանել բնիկ ժողովրդին, ըստ ամենայն հաւանականութեան այժմուայ լափանդացիներին, որոնք ժամանակի ընթացքում քչացել են, իսկ մնացորդները քաշուել են դէպի հիւսիս, որոնց հետքերը հրեսում են այժմ:

Ֆինները ապրելով այդտեղ ամենից առաջ ծանօթացել են շվեդների հիւս: Կարծում է, որ թէկ VIII և IX դարեարում արդէն այդտեղ նորա պատահում են շվեդներին, բայց իսկական շվեդական կառավարութեան հետ ծանօթացել են 1362 թուին:

Մարդարանական հետազոտութիւնները ֆինների վերաբերել են այն եղրակացութեան, որ գոքա կազմում են մի առանձին Ֆինն-ուգորեան ցեղ, որի մէջ են մտնում ունդացիները, վագուները, չերեմիսները, էստերը, և այլ շատ ցեղեր, որոնք այժմ էլ ցրուած են Եւրոպական Ռուսաստանի հիւսիսային և միջին շատ նահանգներում: Այժմ Ֆինլանդիայում եղած ֆին ցեղը բաժանում է երկուսի. Ժաւաստներ կամ արևմտեան ֆիններ և կարելներ կամ արևելեան Փիններ:

Ժաւաստները (մօտ 1,200 հազ.) կարճահասակ են, ամրակազմ, մեծ և երկար գլխով, փոքրիկ աչքերով, երկար քթով, զարգացած կզակով: Երեսի գոյնը սպիտակ է, երբեմն միայն զեղնաւուն: Մազերը շէկ են, բեղերն ու միրուքը նոոր: Ֆինլանդացու արտաքինին համապատասխան է և նրա ներքինը՝ բարոյական: Նրանք լուրջ են, հակուած դէպի միայնութիւնը: Աչքի են ընկնում իրանց աշխատելու ընդունակութեամբ: Ապրելով կենդրոնական արևմտեան մասում նրանք կազմում են բնակչութեան մեծ մասը և տիրապետող ոյժ են կազմում ամբողջ երկրում, բայց զուրկ են այն ընդունակութիւններից, որ ունեն կարելները: Տաւասթները մոռացել են իրանց ազգային-անցիւալը և չունին ժողովրդական այն յիշատակարանները, առասպելներն ու աւանդութիւնները, որոնցով աչքի են ընկը նում կարելները:

Կարելների (մօտ 800 հազ.) գէմքը սուր է, մազերն ու աչքերը մութ են, կզակը աւելի քիչ է զարգացած։ Նոքա աշ-քի են ընկնուռ իրանց առևտրական և ճանապարհորդական ընդունակութեամբ, բայց համեմատարար անհոգ են և աւելի քիչ գործունեայ։ 1741—43 թ. Թուաստանիդ այստեղ է անցել ճոր-տութիւնը, որ մինչև այժմ իր հետքերն է թողել այս ժողովրդի մէջ։

Բայցի այս երկու գլխաւոր ցեղերից կան և այլ ֆինն ցե-ղեր, որոնցից յայտնի են սաւօններն ու էստերը, որոնք ապ-րում են կենդրոնական և հիւսիս—արևմտեան ափերում։ Նը-րանցից սաւօնները իրանց որոշ ընդունակութիւններով և մա-նաւանդ կենցաղով յիշեցնում են կարելներին, բայց աւելի զարգացած են և աշխատասէր. իսկ էսթերը—զարգացած, նախաձհոնող և անկախասսէր մարդիկ են։

Ֆինլանդական հեղինակներից մէկը Զ. Թոփելիուսը իր «Ֆինլանդիան ԼIX դարում» գրուածքում՝ նկարագրում է իր հայրենակիցներին հետեւալ կերպով։ «Ընդհանուր ընորոշիչ գծերն են հանդիսանում՝ անխորտակելի, տոկուն, կրաւորա-կան ոյժը, խոնարհութիւնը, հաստատակամութիւնը։ Նրա հա-հակառակ կողմերն են՝ գանդաղ, հիմնաւոր, խոր մտածողու-թեան պրոցեսը, որից և ուշ ծնող, բայց անսամձելի զայ-րոյթը, հանգստութիւն մահուան տագնապում, զդուշութիւն երբ տագնապը անցած է. սակաւախօսութիւն, որը փոխուու-է յետոյ անսամն խօսքերի հեղեղի, հակումն սպասելու, ծած-կելու, բայց ապա յաճախ հակառակ վռագում։ Հաւատ գէպի այն ինչ հին է և յայտնի, կասկածանք գէպի նորը, ճշշ-տութիւն գէպի պարտականութիւնը, օրէնքը. սէր գէպի ազատութիւնը, հիւրասիրութիւնը, ազնութիւն և խոր ձգու-տումն գէպի ներքին ճշմարտութիւնը, պատած անկեղծ, բայց աւանդական խօսքերով, Աստուծոյ վախով, Ֆիննը ճա-նաշւում է իր պահեցողութեամբ, փակուածութեամբ և անխարքզանութեամբ։ Փամանակ է պէտք, որ նա դաս-նայ դիւրահաւատ, բայց այն ժամանակ նա դասնում է հաւա-տարիմ ընկեր։ Նա յաճախ յետ է մնում, յաճախ կանգ է առ-նում ճանապարհ մէջ... Լսում է այնտեղ, որտեղ լաւ կը լինէր՝ խօսէր, բայց ժամանակին խօսում է այնտեղ, որտեղ լաւ կը լինէր՝ լոէր։ Նա աշխարհի մէջ ամենալաւ զինուորն է... Նա երբեմն տեսնում է ոսկին ոտի տակ, բայց չի համոզւում վեր-ցնել. Նա աղքատ է մնում այնտեղ, որտեղ ուրիշները հարցու-տանում են։»

Բացի գիններից Ֆինլանդիայում կան և շվեդներ, ոռուսներ և գերմանացիներ:

Վերջին վիճակագրութեան համաձայն Ֆինլանդիայում կա՞մ մո՞ 3 միլիօն բնակիչ: Ըստ ազգութեան այդ բնակիչները հետևեալ կերպով են բաժանվում:

Ֆիններ՝	2,169,000	Գերմանացիներ՝	1,790
Շվեդներ՝	341,500	Լավլանդացիներ՝	1,150
Ռուսներ՝	7,000	Բողաներ՝	1,551

Սրանցից ոռուները բացառապէս ապրում են քաղաքներում և պարապում են մանրավաճառութեամբ, պարտիզաննութեամբ և արհեստներով:

Գերմանացիները զլխաւորապէս ապրում են Հելսինդֆորսում և Վլըբորգում: Այնտեղ նրանք պարապում են վաճառականութեամբ:

Հրէաները, 1889 թ. կանոնադրութեամբ միայն մի քանի քաղաքներում իրաւունք ունեն ապրելու: Այդտեղի լրագիրները նոյն իսկ որոշ ազիտացիա են անում ընդդէմ հրէաների: Մի երեսյթ, որ նսեմացնում է գինլանդական, քաղաքակըրթութեան անունը:

Լավլանդացիները ապրում են հիւսիսում և պարապում են զլխաւորաբար ծովային կենդանիներ որսալով և նոջերուալպահութեամբ:

Բողաները իրանց յատուկ սովորութեամբ դեռ թափառական կեանք են վարում, այն ել զլխաւորապէս արևելեան մասում:

Ֆինլանդիայում գիւղական հասարակական շէնքերը, հասարակական հաստատութիւնները, գպրոցները աչքի են ընկանում իրանց չափազանց մաքրութեամբ: Ամենահասարակ գիւղացու տունը ներկայացնում է չտեսնուած արդ ու զարդով: Այդտեղ իսկոյն աչքի է ընկնում ֆին գեղջկուհու խնամոտ ընդունակութիւնը: Սենեակը կահաւորուած է պարզ, յատակը ներկուած է, աթուներն ու սեղանները շարուած են կարգով: Սեղանների վրայ դրուած է ժամացոյցը և այլ զարդարանքներ: Այսպէս է հողատէր գիւղացու տունը, իսկ հողագուրի գիւղացին ընդհակառակը մինչեւ այժմ էլ տանջւում է մասը, անձուկ և կեղտոտ խրճիթներում: Վատ է և քաղաքային բանուորի վիճակը:

Հագուստի մասին որոշ ոչինչ չէ կարելի ասել: Տղամարդիկ հազնուում են եւրոպական սովորակուն զգեստ, իսկ գիւղացիները ազգային յատուկ և աշխատանք չարգելող հագուստ: Հիւսիսային մասում լավլանդացիները հագնուում են զանազան մորթիներից կարուած շորեր: Կանայք ընդհանրապէս սիրում են սև հաղնել և գլուխներին էլ թաշկինակ կապել:

Ֆինլանդիայում պէտք է նկատել որ բնակչութիւնը աւելի լաւ է կերակրում, քան Ռուսաստանում: Սև հաց, ձուկ, գետնախնձոր, միս, իւղ—սովորական մնունդ է կազմում իւրաքանչիւր ֆինլանդացու համար: Մանաւանդ շատ են գործ ածում ձուկ և կաթ ու կաթից պատրաստած ուտելեղէններ:

Աւելի լաւ են կերակրում մանաւանդ քաղաքներում: Նըրանք գործ են ածում սուրճ, որ առանց խորութեան հասակի ու տարիփի, խմում են օրեկան մի քանի անգամ:

Համարեա բոլոր քաղաքներն ու գիւղերը կապուած են իրար հետ պոստային հաղորդակցութեամբ: Արօ, Թաւաստգուս և Վ.Ը. քաղաքների ճանապարհները շինուած են 1556 թ. Այդ ճանապարհներոց շատերը շինուել են շվեդներինախաձեռնութեամբ: Ճանապարհները աչքի են ընկնում մաքրութեամբ, և ջրանցքների շնորհիւ ցեխ չի գոյանում, որովհետեւ ջուրը ծըծւում է այդ ջրանցքների մէջ: Բացի դրանից տեղային ժողովուրդը պարտաւոր է տարէնը մի քանի անգամ մաքրել այդ ճանապարհը, մանաւանդ ձմեռը, երբ ձիւնը ծածկում է ճանապարհները:

Երկաթուղային գծերը տարէց տարի հսկայական քայլեր են անում: Ճանապարհները պատրաստուած են շատ խնամքով, բայց գնացքները գանդաղաշարժ են: Խոսիւ հսկում է ուղարկուած ապրանքները չկորչելու վրայ:

Նաւագնացութիւնը նոյնպէս սպակաս չէ զարգացած: Նաւերը կանգնում նն ամենահասարակ նաւակայաններում անգամ և վերցնում են ամեն տեսակ իրեր, ապրանքներ փոխադրութեան համար:

Ֆինլանդիայի համարեա ամեն մի գիւղ պոստ է մըտնում: Պոստը բաց է համարեա ամբողջ օրուայ ընթացքում: Փող կամ որևէ ծրար ստանալու համար ոչ մի հաստատութիւն կամ երաշխտուրութիւն չէ սպահանջւում: Մի երեսյթ, որ պարզում է ժողովուրդի բարոյական կողմը, բարոյական հոգին: Պոստի կողմից Ֆինլանդիան առաջ է կանգնած Ռուսաստանից: այսպէս, օրինակ, 1892 թ. կազմած վիճակագրութեան համաձայն, հետեւալ պատկերն ենք առանում:

Անդրիա

Շվեդիա Ֆինլանդ. Ռուս.

Մի պոստային հիմնարշ-				
կութեան ընկնում է	16, 1	167,0	675,	3532,4. քիլ. տարած.
» » Բնակչին 1956		1829	4495	18895
Միջին թուռվ փոստա-				
յին ուղարկած իրերը				
100 մարգու վրայ	5,302	1367	424	177

Բացի պոստից այստեղ համարեա ամեն մի բնակարանի մէջ մտցրած է հեռախօս։ Ֆինլանդիայում հեռախօսը աւելի անհրաժեշտութիւն է ներկայացնում քան Անգլիայում կամ Ֆրանսիայում։ Ամեն մի քաղաքում հեռախօս կայ, որից օգտուելու համար ամբողջ տարին պէտք է վճարել 42—25 ր։ Հեռախօսով միացած են նաև բազմաթիւ բաղաքներ, աւաններ, խանութիւներ, գործարաններ և այլն։ Հեռախօսը գործածական է մասնաւոնդ ձմեռուայ ցրտի և աշնանային ու գարնանային ամպերի պատճառով։

Այստեղ պէտք է նկատել, որ Փինլանդացին շատ ուրախ բնաւորութեան տէր մարդ է։ Նա առանձնապէս սէր է տածում դէպի երգեցողութիւնը, մասնաւանդ ժողովրդական երգերը, որոնք գործածական են միայն արևելեան ժամում, իսկ արևմտեան մասում սովորութիւնը չկայ և վաղուց տեղի է տուել նոր երգերի։

Ֆիննական ամենամեծ ժողովրդական երգարանն է «Կալեվա», որը իր մէջ պարունակում է 22,805 տուն ժողովրդական երգ։ Կայ և մի այլ երգերի ժողովածու՝ Kanteletar անունով։ Kantele մի յատուկ ազգային նուագարան է, որով նուագում են այդ երգերը։ Իսկ տար կը նշանակէ աղջիկ, որից կազմում է Kanteletar, այսինքն Kantele-ի աղջիկ։ Աւանդութիւնը պատմում է, որ այդ նուագարանի շինողը երգիչների թագաւոր Վէյնէմոյնէն է և իրը թէ նուագարանը այնպիսի բաղցը ձայներ է հանում, որ բոլոր կենդանիները և նոյն իսկ օդային ջրային ու հողային ոգիները հաւաքւում են լսելու նոքա լսելով նուագարանի գեղգեղանքը բոլորն էլ արտասւում են, որից և արտասւում է ինքը, երգիչների թագաւորը, բաղդաւոր Վէյնեմոյնէն։

Պարապմունք.

Ֆինլանդացիները միւս ազգերի պէս ժամանակի ընթացքում սկսել են օգտուել իրանց երկրի բնական բերքերով։

Ֆինլանդացիք այժմ էլ պարապում են երկաթէ հանքեր մշակելով: Դեռ հնումը՝ ինչպէս յիշուած է Kaleval-ի մէջ, իւմարինին հերոսը դարբին էր և երկաթից զանազան գործիքներ էր պատրաստում, մանաւանդ որսորդական և պատերազմական գործիքներ: Բնակիչները այդ երկաթը սկզբում ձեռք էին բերում լճերից, իսկ աւելի ուշ ժամանակներում, մանաւանդ շվեդական գերիշխանութեան ժամանակ, սկսում են գործ ածիկ և լիաներից ձեռք բերածը: Դիռ ժէ դարում սկսում են հիմնել երկաթագործարաններ: Առաջին երկաթէ հանքը բացուել է 1540 թ. Նիւլանդիա նահանգում Օեամօ անունով: 1616 թ. պետական գանձարանի ծախքով կառուցուեց ձուլիչ վառարան և դարբնանոց Սվալտոյում: Այդ դարուց սկսած կարճ ժամանակում մօտ 10 երկաթագործ գործարաններ հիմնուեցան: Յաջորդ դարում ոռուշվեդական պատերազմների ժամանակ այդ գործարաններից մի քանիսը զաղարեցին, բայց հետեւալ դարում (XIX) այդ գործարանները աւելի ևս կատարելագործուեցան: Այդպիսի գործարանները քանի գնում աճում են. 1895 թ.-ին արտադրել են 48,538 տոնն երկաթ:

Այստեղ բացի երկաթից մշակում են և պղինձ, անագ և մասսամբ արծաթ: 1757 թ. բացուեցան Օրփարվեան բովերը: Ներկայումս անագի ամենամեծ բովն է Պիւրկիարանտան: Անագի կողմից Ֆինլանդիան նշանաւոր է Ռուսաստանում, որովհետեւ վերջինիս ոչ մի մասում անագ չէ գտնվում: 1850 թ. մինչև 1893 թ. ընդամենը 45 տարուայ ընթացքում հանուած է 5,195 տոնն պղինձ (322,090 ֆ.) 425 տոնն անագ (22,350 ֆ.) և 7,600 կիլոգրամ արծաթ: (մօտ 464 ֆ.):

Լավլանդիայում Սվալո գետի հովտում կան նոյնիսկ ոսկու բովերը: Այդտեղից 1870—1895 թ. ընդամենը 25 տարուայ ընթացքում իւրաքանչիւր տարի հանուել է 4,100—57,00 գրամ ոսկի, միջին թուով տարին 15,900 գրամ: Այդ հանուած ոսկին արժէ 1.325,355 ֆինն. մարկ¹⁾, որ հաւասար է մօտ 503,635 ըուբլու:

Մետաղ շինող սեքենայագործարանը հիմնուել է առաջին անգամ 1837 թ. Ֆիսկարում և 1895 թ. ընդհանուր գործը հասել է 22,400,000 մարկի, որը կը լինի 8,519,000 ր.: Այդ գործարաններում բանող բանուորների թիւը հասնում էր 8918 մարդու գեռ 1895 թ.:

Ֆինլանդական ժողորդի ամենամեծ պարապմունքը պէտք է համարել անտառային արհեստը: 1895 թ. եղել են այդպիսի

1) Ֆիննական մարկը=սուսական 38 կոպ.

427 արհեստանոց և կտրուած է եղել $14^{1/2}$ միլիօն գերան, որ արժէ 40,500,000 մարկ և որը կը լինի 15,390,000 ր.: Գլխաւոր արհեստանոցներն են Վլբօրգ, Բիերներերդ և Կոտկա քաղաքներում: Բիերներերդը ընկած է Քումօ գետի ծովի թափուելու տեղում, իսկ Կոտկան՝ Քիւմենի գետարերանում: Այդ գետերով ծառերը հաւաքւում են արեւտեան և միջին Ֆինլանդիայից և ամրաբում այդտեղ: 1895թ. են այդ արհեստանոցներում գործում էին 12,000 բանուոր: Այդ նոյն թուին արհեստանոցները տուել են 16 միլիոն մարկ արժողութեամբ արտագրութիւններ. որը կը լինի 6 միլիօն ըռւըլուց աւել:

Սկզբում արգէն ասացի թէ որբան ընդարձակ են անտառները Ֆինլանդիայում: Հէնց այդ հանդամանքն է, որ անտառային արհեստը այդպիսի զարգացման է հասել և պէտք է ասել որ քանի գնում աճում է աւելի մեծ չափով:

Ֆինլանդիայում անտառը կտրաւում է որոշ կանոնով, ուրոշ սիստեմով, և ոչ թէ այնպէս վայրի վերոյ ինչպէս մեզանում: Անտառը բաժանում են բազմաթիւ կտորների և իւրաքանչիւր տարի կտրում են մի բաժանմունքը: Մինչև յաշորդաբար բոլոր բաժանմունքները կարտել տեսում է տասնեակ տարիներ, որի ընթացքում նոյն յաշորդութեամբ էլ կրկին աճում են և բանում կտրած տեղերը: Ահա այս է պատճառը, որ չնայելով անտառային արհեստի հսկայական աճելուն, այնուամենանիւ անտառները չեն վերջանում և նոյն իսկ առաջուանից չեն էլ քչանում:

Ծովափերին կան գերանների և տախտակների ամբարներ: Բոլոր քաղաքներում համարեա զետերի և ջրանցքների միջոցով այդտեղ են հաւաքւում անտառներից կը տրած ծառերը, որտեղից և շոգենաւերով արտահանուում են արտասահմանեան երկիրները: Այս արհեստը արտահանութեան ամենամեծ մասն է կազմում: Ամբողջ արտահանութեան $45^0/_{\circ}$ ը միայն փայտեղէն է:

Բացի այդ, ընակիչները ծառերից ժողովում են կուպր, լիէֆ, բևեկնի իւլ և այլն: Մրանք ամբողջ արտահանութեան $1,50^0/_{\circ}$, են կազմում:

Անտառային այդ բերքերով սկսել են զբաղուել անյիշատակ ժամանակներից: XVII դարում կուպրը վաճառականութեան ամենաշահաւել ապրանքն էր:

Հողագործութիւնը Ֆինլանդիայում գանդաղ է աճել, որովհետեւ հողի պակասութիւնը խոչնգուտ է հանդիսացել: Բնթերքողը արգէն գիտէ թէ ինչպիսի անյարմար մակերեսոյթ ունի Ֆինլանդիան:

Վաղուց աշխատասէր Փինլանդացին ճգնել և ճգնում է իր քրտինքով ջրել և բերրի դարձնել հայրենի երկրի քարաժայուերը: Տարիներ շարունակ նա հազիւ է կարողացել հաւաքել և մաքրել ժայռերի կտրտուածքները և յարմար հող պատրաստել: Տարիներ շարունակ նա իր բազուկներով կռւում է կիսուած քարերի հետ և, չնայած այդ տաժանելի չարչարանքին, շատ քիչ է յաջողուել: Բայց ֆիննը յուսահատուել չգիտէ, այլ շարունակում է գործել: Նա շարունակ աշխատում, մաքրում է քարերը, հեռացնում է ժայռային կտրտանքները: Բայց նա այգքանով չէ բաւականանում, նրան հարկաւոր է հող, որտեղ պիտի ձգի իր յուսատու սերմերը և ահա նա շուտով ըսկըսում է կռուել ճահիճների հետ, որոնցով բաւական հարուստ է ֆիննի հայրենիքը: Նա տմեն տեսակ միջոցներ ձեռք է առնում միայն թէ կարողանայ ցամաքեցնել ճահիճները, և նրան յաջողուում է այդ:

Բացի գրանից, նա յանձն է առնում և մի այլ աշխատանք: Անտառի որոշ մսւսերը կտրտում է, թողնում է այդպէս մի տարի և ապա վասում է ծառերի մնացորդները: Վերջիններս այրուելով փոխուում են մոխրի: Ապա արօրով հերկում է հողը մի քանի անգամ և յետոյ սերմում: Մի քանի տարի ևս և հողը բերրիանում է: Այդպիսի տեղերը աւելի ևս հաստատուն և մտսամբ բերրի դարձնելու համար երկրորդ տարին խիտ են ցանում: արմատները և թափթփուած տիրենները ժամանակի ընթացքում փթում են և հողը լաւայատուկ դարձնում: Թէ որպիսի չարչարանք է կրում ֆինլանդացին դաշտային աշխատանք անելուց—այդ անսանիի է: Խսկ թէ որքան՝ քիչ և ստանում՝ այդ երեսում է նրանից, որ ամբողջ երկրի $8,20/_{\circ}$ -ն է միայն կարելի հերկել:

Ճահիճների ջուրը ցամաքեցնելու համար նա ջրերը ժաղովում է արհեստական ջրանցքների մէջ, որով կրկնապատիկ օգուտ է ստանում: Ճահիճի տեղը շուտով արտի կամ մաքաղեանի է փոխարկում, իսկ կառուցած ջրանցքներով նա հեշտութիւնք փոխադրում է իր խուրձերը, խոտը, անտառից կաըրտած գերանները և այլն: Բայց չնայած այս ըոլորին, երկիրը այնուամենայնիւ առատ չէ վարձատրում վաստակասէր Փինն գեղջուկին և նա կրկին քաղցած է մնում: Հացահատիկների պակասութիւնը յաճախ սով է առաջացրել ազգարնակութեան մէջ, որի ամենասուկալի օրինակն էր 1867 թ. սովը, որին զոհ գնացին 100,000 հոգի:

Հացահատիկներ ցանում են պլխաւորապէս հարաւային մասերում: Մնացած մասերում հացահատիկները փչանում են,

մասաւանդ գարնանային ցրտից Հարաւային մասում ցանում են աշնանային հաճար (օձմայ թօյք) և այլ գարնանային հացաբոյսեր: Իսկ աւելի հիւսիսում ցանում են գարի և կտաւհատ (լեռ):

Ֆինլանդացիները ճարպիկ ծովագնացներ էլ են: Բազմաթիւ լճերն ու մօտիկ ծովերը նրանցից փոքր հասակից սկսած հմուտ ու վարժ ձկնորսներ են պատրաստում: Որսած ձուկը ոչ միայն իրանք են գործ ածում, այլ և արտահանում են: Նոյնիսկ արտահանութեան 1,5⁰/օ-ը ձկներն են կազմում: Երկրի հիւսիսային ինակիչները՝ լավլանդացիք որսում են ծովային փոկ և նման կենդանիներ, որոնց մորթը նմանապէս արտահանում են հարեան երկրները:

Երկրի մէջ բամբակից պատրաստում են զանազան գործուածքներ ու կտորներ, որ արտահանում են այլ երկրներ: Ամբողջ արտահանութեան 13⁰/օ-ը այդ գործուածքներն ու կը-առըներն են կազմում:

Գործարանային կեանքը սաստիկ եռում է մասաւանդ երկրի հարաւային մասում: Այդ կողմից աչքի է ընկնում Արօ քաշաքը, մասաւանդ նաւագործարաններով և մեքենայագործարաններով:

Առատ մարգագետինների շնորհիւ անասնապահութիւնը ֆինլանդիայում իր զարգացման ամենաբարձր աստիճանի վրայ է գտնուում: Այդտեղ զլիւաւորապէս պահում են մեծ եղջիւրաւոր անասուններ և ոչխար: Հիւսիսային մասի բնակիչները պահում են և հիւսիսային եղջերուներ: Կաթնատնեսութիւնը շատ զարգացած է:

Բաւական է օրինակ բերել Հուրկիյօկկայի իւղագործանը, որ մեծ նշանակութիւն ունի ֆինլանդական իւղագաճառութեան համար: Այդ գործարանը հիմնուել է 1895 թ. և այժմ բերում է 1,000,000 մարկից աւել եկամուտ (մօտ 380,000 ը.): Այդ գործարանը գոյութիւն ունի մինչև այժմ և ունի կօսպերատիւ կազմութիւն: Սկզբում այդ գործարանը ստանում էր կաթը և ինքը իւղ պատրաստում: Բայց ներկայումս ստանում է միայն կաթի քաշած երեսը: Իւրաքանչիւր ընկեր ունի որոշ մատեան, որտեղ իւրաքանչիւր անգամ նշանակում է բերուած երեսի չափը, իսկ չաբաթը մէկ անգամ առանձին առանձին տոկոսների վերածելով ամսի վերջում հաշիւ են տեսնում:

Գործարանը ունի 500 մասնակցող ընկերներ: 1904 թ. գործարանը ունեցել է 200,000 մարկ դուտ արդինք, որից

իւրաքանչիւր անգամ ստացել է 400 մարկ օգուստ, (152 թ.) իսկ 1905 թ. յունիսին 28,000 մարկ:

Այդպիսի գործարաններում պատրաստուած իւղը անցնուած է Անգլիա, որտեղ մրցուած է նոյն իսկ դանիական իւղի հետ: Այդպիսի գործարանները հանդիսանուած են նաև որպէս ուսումնարաններ: Այդտեղ գործը ղեկավարուած են կանայք, որոնք կարճ ճամանակուած հմուտ մասնագէտներ են դաւանուած:

Պիտի ասել, որ հնումը այդ մասնաճիւղերի մէջ ֆինները շատ յետ էին և միայն ձգտուած էին, որքան կարելի է մշակել երկիրը և ընդունակ զարձնել երկրագործութեան: բայց 1867 թ. մեծ սովոր ստիպեց նրանց միաժամանակ զարգացնել և կաթնային գործը: Մինչև 1860 թուականը կաթնատնտեսական գործը ֆիննանդիայուած այնքան զարգացած չէր և միայն արտահանուած էր Ռուսաստան, այն էլ մեծ մասամբ Պետերբուրգ:

Բայց 1867 թ., երբ իւղի գինը Պետերբուրգուած սաստիկ իջաւ, նրանք փորձեցին արտասահման տանել, որտեղ փորձը յաջող անցաւ և իւղը մեծ գնով վաճառուեց: Մինչև այժմ ֆիննանդիան իւղային առեւտրով մրցել և ձեռք է բերել ոչ միայն անգլիական շուկան, այլ և ձգտել է գերազանցել Դանիայից: Եւ նա քիչ-քիչ յաջողել է և հինգ ներկայուած իր նպատակին հասնելու վրայ է:

Այդ մրցուած պատճառ է դառնուած որ աճի իւղագործարանների թիւը: Այսպէս օրինակ Ռուսիան նահանգուած կային:

1885 թ.	00	գործարան	1891 թ.	249	գործարան
1889 »	96	»	1892 »	339	»
1890 »	152	»	1893 »	485	»

Այդ տարուանից երկրի ամեն անկիւնուած մէկ մէկու յետեից բացուեցան նման հաստատութիւններ, որոնք սկզբուած բանեցնուած էին ձեռքով, ձիով, ջրով և ապա զոլորշով և համարեաբուրն էլ շինուած են շվեդական մեթոդով:

Իւղի արտահանութիւնը տարէց տարի աճել է և աճուած է: Այսպէս օրինակ 1875 թ. արտասահման է տարուած 4,804,509 քիլո իւղ. իսկ ապա արտահանուած է:

	Ռուսաստան	Արտասահման
1880 թ.	2,742,054 քիլօ	6,544,321 քիլօ
1890 »	2,388,274 »	8,016,232 »
1895 »	831,000 »	14,115,054 »

Արդէն այս պատկերից ընթերցողը տեսնում է թէ որքան աւելի մեծ չափով է արտահանուել ֆինլանդական իւզբ, որի գործածութիւնը, կամ աւելի լաւ ասած՝ վաճառը Ռուսաստանում իջնում է, իսկ արտասահմանում ընդհակառակը քարձրանում է աւելի մեծ չափով:

Համարեա միաժամանակ աճում է և պանրի արտահանութիւնը, որ ներկայ ժամանակում հասնում է տարեկան 500,000 քիլոի:

50 տարի առաջ Ֆինլանդիան այդպիսի բերքեր արտահանում էր հազիւ 15 միլ. մարկի, այսինչ ներկայումս այդ չափը հասնում է 150 միլ. մարկի, որ կը լինի 57 միլ. ըուրիշ: Բայց դեռ ևս աճում է օրէցօր այն էլ հսկայական քայլերով:

Կաթնային բերքերի արտահանութեան կողմից Ֆինլանդիան պարտաւոր է այն բնիկ ընկերակցութիւններին, որոնց կարելի է պատահել ֆինլանդական համարեա քոլոր գիւղերում: Այստեղ ոչ մի համայնք չկայ, որ չունենայ մի որևէ ընկերակցութիւն: 1905 թ. ապրիլին Ֆինլանդիայում գործող ընկերութիւնների թիւը հասնում էր 468-ի: Ահա այս հանգամանքն ինկատի ունենալով, տեղային կառավարութիւնը նոյն իսկ պարտաւորեցուցիչ օրէնք է սահմանել, որի համաձայն քոլոր ուսումնարաններում աշակերտին ծանօթացնում են այս կամ այն տեսակի ընկերակցութիւնների գործունէութիւնն և որ գլխաւորն է նրա ծրագրի հետ:

Կրօնը եւ ժողովրդական սկզբնական ուսումն:

Հսումը Փինները կապաշտ էին, բայց գաղթելով այդ կողմերը նրանք սակաւ առ սակաւ տունրական և այլ շփումն են ունենում մանաւանդ շվեդների հետ, որտեղից կաթոլիկ կրօնը մուտք է գործում Փինների մէջ: Բայց շուտով հրապարակ է գալիս բողոքական կամ լիւթերական կրօնը և սկսում է այն մեծ մրցումը, որ տեղի ունեցաւ վերջին դարերում եւրոպայի հիւսիսային և կենդրոնական մասերում: Հրապարակ են գալիս զանազան մարդիկ, գլխաւորապէս հոգևորականներ, և սկսում են կրօնական վէճերը: Բայց բողոքականութիւնը յաղթող է համսդիսանում շնորհիւ մի քանի բանիմաց և հոչակ վայելող մարդկանց, որոնք կրթուել էին Գերմանիայում լիւթերի մօտ: Այդ ժամանակ արտասահմանում կրթուած շատ Փինն գիտուններ սկսում են թարգմանել հին և նոր կտակարանները և տարածում ժողովրդի մէջ: Դրանց շնորհիւ գրագիտութիւնն էլ բանի գնում զարգանում է: Ժա-

մանակի հոգևորական քարողիչների բուն նպատակն է լինում ժողովրդին այնպիսի յարմարութիւն տալ, որ ինքը կարողանայ կարգալ և հասկանալ կրօնական գրքերը, Կարճ ժամանակում ամրող մինչանդիան համարեա բողոքական է դառնում:

Հիւսիսային մեծ պատերազմի ժամանակից յունադաւանութիւնն էլ սկսում է քիչ առ քիչ մուռք գործել, բայց այնուամենայնիւ Ֆինլանդիան մնում է բողոքական:

Ֆինլանդիայում եկեղեցին մեծ ազատութիւն է վայելում: Այդ երեսում է ժամանակ ծխական պաստորների ընտրութեան ժամանակ, որ կատարուում է բոլորովին դեմոկրատիական ձևով: Ընտրողական իրաւունքը պահուած է որոշ փոփոխութիւններով: Ծխական եկեղեցիների պաշտօնեաները համարեա բոլորն էլ ընտրուում են այդ ձևով: Նրանք ստանում են համապատասխան որոշ արգիւնք: Ամենաստորին պաշտօնեան ստանում է 1000 մարկ (380 ր.) միւս տնտեսական պիտոյքների հետ: Գլխաւոր պաստորները ստանում են 2000—10000 մարկ, որ կը լինէր 760 ր.—3800 ր. և երբեմն էլ նոյն իսկ աւելի:

Պաստորի ընտրութեան ժամանակ պակաս նշանակութիւն չեն տալիս և նրա կնոջը: Անա թէ ինչու: Իւրաքանչիւր ծխատէր պաստոր ունի իր առանձին գրասենեակը, որտեղ գրուած են հոգեոր թերթեր, հոգեոր գործեր իրանց լրացուցիչ մատեաններով: Ընդհանրապէս իւրաքանչիւր շաբաթ երեկոյ ծխականները դիմում են այդտեղ որոշ գործով: Մէկը ուզում է փոխուել մի այլ ծխական համայնքի մէջ, իսկոյն նրա անունը արձանագրուում է այդտեղ յատուկ մատեանում: Միւսին երեխայ է ծնուել կամ բարեկամն է մեռել, այդ բոլորը յայտնում է մատեան մտցնելու համար: Այդտեղ շատ յաճախ գալիս են երիտասարդները՝ անձամբ խորհուրդ հարցնելու և վկայական կամ հրաման ստանալու, մօտիկ օրերում ամուսնաւլու համար: Իսկ որ ամենագովելին է, այդտեղ են գալիս գիւղացիները խորհուրդ հարցնելու այս կամ այն կարիքի մասին: Այս բոլորի մէջ քահանան բոլորովին հաւասար է ծխականի հետ: Իսկ այդ միենոյն ժամանակ պաստորի կամ քահանայի կինն էլ է զբաղուած յատուկ գործով: Նա էլ ունի իր առանձին ընդունարանը, որտեղ ընդունում է ծխական կանանց: Վերջիններս հերթով զիմում են նրան ու խորհուրդ հարցնում իրանց յատուկ կարիքների մասին:

Պաստորի գործունէութեան գլխաւոր կէտերից մէկն էլ այն է, որ նա պարտաւոր է ամուսնանալ ցանկացողներից ու

բոշ վկայական ստանալ, որը եւրոպական բառով կոչւում է կոնֆերմացիս: Պաստորի պարտքն է հսկել նաև այսպէս կոչուած «գիտութեան գլորոցի» (Skriftskolot) վրայ: Այդ գլորոցը որոշ դասարաններ ունի 4 շաբաթուայ դասընթացով, որտեղ նախապատրաստում են 15—18 տարեկան երիտասարդներին: Օրէնքով որոշ գրագիտութիւն է պահանջւում, որից յետոյ միայն իրաւունք է տրւում ամուսնանալու:

Ընդհանրապէս հոգևորականները այստեղ մեծ գործ են կատարում, հսկելով «ընթերցանութեան ընսութեան» (läsförhörg) վրայ: Դրա համար ծխերը բաժանւում են զանազան խմբերի, որոնցից իւրաքանչիւրը բաղկացած է լինում 15—20 ծխոց: Այդ խմբերի հետ սկսում է քննութիւնը, որի արդիւնքը առանձին առանձին նշանակւում է յատուկ եկեղեցական մատեաններում:

Կրօնական հանդիսակատարութիւններից կը յիշեմ կիրակիօրեայ հանդէսը:

Կիւրակի առաւտեան ժամի 10-ից արդէն ժողովուրդը հաւաքւում է փայտաշէն եկեղեցու բակը: Այդտեղ ծխականները խօսում են օրուայ հարցերի մասին: Այդ ժամանակ եկեղեցու բակը քաղաքային այգու կամ որևէ զրուավայրի տպաւորութիւն է թողնում: Այստեղ վաճառում են զանազան ուտելիութէններ: Շուտով հնչում են և զանգակները, որից ժողովուրդը հաւաքւում է եկեղեցի, որտեղ կարգով նստում են պատրաստ նստարանների վրայ: Եկեղեցին համարեա անշուք է, միակ զարգարանքն է Քրիստոսի մարդեղութեան պատկերներից մէշէկը: Եկեղեցու արևմտեան մասում՝ կանգնած է խումբը: Սկըզբում սկսում են երգել որոշ աղօթքներ, ապա քահանան կատարում է պաշտամունքը: Վերջը նա կարդում կառավարչական նոր կարգադրութիւններ, հոգևոր ատեանների որոշ վճիռներ և այլն:

Նաբաթուայ ընթացքում, ճաշերից յետոյ, պաստորը և ծըխականները հաւաքւում են մի որևէ գահին և այդտեղ կարդում են մի գլուխ Աստուածաշունչից, որի մասին և վիճաբանում են ու խորհրդակցում:

Ընթերցողները արդէն ահմանում են թէ հոգևորականութիւնը ինչպիսի գեր է խսդում ժողովրդի կրթութեան գործում:

1856 թ. Աղեքսանդր Ա կայսրը մինալանդիայի համար մի կանոնագրութիւն է հրատարակում, որը բացառապէս գլորոցներին էր վերաբերում և որի գլխաւոր կէտերն էին. ա) սկզբնական ընթերցանութիւնն ու գրագիտութիւնը պիտի առաջ դնային նոյն կերպով, այսինքն ալէտք է աւանդուէին տըՓեարուար, 1906.

ներում, հոգեորականների հսկողութեամբ. թ) զբանից լարձը ուսման համար պէտք է յատուկ զպրոցներ շինուէին. դ) այս վերջին զպրոցները զիւղական հասարակութեան համար պարագիր չեն, այլ կամքով, իսկ ցանկացողները որոշ նպաստ էին ուսանում կառավարութիւնից. դ) Այդ տեսակ թէ գիւղական և թէ քաղաքային զպրոցները ենթարկւում էին միայն ժողովրդին. Հոգեորականնութիւնը այսուհետ ոչ մի դեր չպիտի խաղալ:

Այդ դործի համար պաստոր Միգնէուսը յանձնարարութեամբ արտասահման է զնում՝ նոր մանկավարժական զպրոցներն ուսումնասիրելու համար. Շուտով նա վերադառնում է, բերելով Շուէյցարական մեթոդը: Իր ծրագրի մէջ Միգնէուսը պնդում էր որ ֆիզիքական աշխատանքը անհրաժեշտ է: Այս ասաջարկը չնդունուեցաւ Սենատի կողմից և զբապատճառով գործը գլուխ եկաւ միայն 1866 թ. մայիսի 11-ին մի քանի փոփոխութիւններով: Մի քանի տարուց յետոյ մշակւում է մի նոր լրացոցիչ կանոնադրութիւն, որի համաձայն զիւղական հասարակութիւնները պարտաւոր էին զպրոցներ ունենալ և առանց բացառութեան ուսման տալ իրանց որդիներին:

Ֆինլանդական ոկլունական ուսում տարածող զպրոցներից արժէ յիշատակել քաղաքային դպրոցները:

Կանոնադրութեան համաձայն քաղաքները պարտաւոր էին ունենալ այնքան դպրոց, որքան կարիք կայ, այսինքն սրտեղ կարողմանային սովորել այն բոլոր երեխանները, որոնք յարմարութիւն չունեն զիւղական ուսումնարաններում սովորելու: 70 ական թուականներին բոլոր քաղաքները դպրոցներ ունեին:

Քաղաքային զպրոցները երկու տեսակ են. ա) Ստորին (lägre folkskolor), որոնք բացառապէս 7—10 տարեկան երեխանների համար են. թ) Բարձր (högre folkskolor), որոնք 10—14 տարեկան երեխանների համար են: Առաջին տեսակի դպրոցները երկսեռ են, իսկ երկրորդը միասեռ: Բայց երկրորդ տեսակի դպրոցներում ևս կան բացառութիւններ, երբ կամ կարգացողները քիչ են կամ միջոց չկայ առանձին ուսումնարան շինելու:

Ստորին դպրոցները սովորաբար 2 դասարան ունեն, որոնցից առաջինը պարտաւորական դասարան է, իսկ երկրորդը երկու տարրուայ դասընթաց: Վերջին կամ բարձր դպրոցները բաժաններում են երկու մասի, այսինքն երկու դասարանի: Դըրանցից իւրաքանչիւրը առանձին երկու տարրուայ դասընթաց

ունի. իսկ երբեմն էլ բոլորովին բաժանուած են և դառնում են առանձին չորս միամեայ դասընթաց: Կանոնադրութեան համաձայն աշակերտների թիւը պատրաստականում 40-ից չպիտի անցնի, իսկ միւս դասարաններում 60-ից:

Պալով ծրագրներին, պիտի ասել որ երկուսն էլ որոշ չափով բաղմակողմանի են: Ստորին դպրոցներում աւանդում է կրօն, ֆիճններէն, գրութիւն, թուաբանութիւն՝ երկրաշափական ձևերով հանդերձ, զծագրութիւն, երգեցողութիւն և մարմամարդութիւն: Իսկ բարձր դպրոցներում, բացի վերև յիշած առարկաներից, նաև ծանօթութիւն հայրենի գրականութիւնից, աշխարհագրութիւն, պատմութիւն, չափագրութիւն, բուսաբանութիւն և կենդանաբանութիւնը: Աղջիկները պարապում են ձեռագործով, իսկ տղաները այգեգործութեամբ և այլ արհեստներով: Այս վերջիններին կարող են մասնակցել և աղջիկները, բայց ոչ պարտապիր:

Պատրաստական դասարաններում պարապմունքները լինում են 2—4 ժամից ոչ աւել, իսկ միւս դասարաններում 4—6 ժամ: Ուսումնական տարին տևում է 32 շաբաթ և ծննդեան տօներով բաժանուած է երկու կէսերի (օմեստր):

12 տարեկանից բարձր աշակերտները, որոնք առանձին յարմարութիւններ չունեն սովորել տուած դասը կամ պատրաստել տուած գրութիւնը, կարող են մնալ երեկոյեան դպրոցում, որի համար առանձին սենեկաններ են յատկացրուած:

Վարձարութեան չափը պիտի ասել շատ չնշին է: Առենամեծ չափն է 2 մարկ (76 կոպ.) իւրաքանչիւր կիսին:

Բաղաքային ուսումնաբանի հետ ծանօթանալով՝ գիւղական ուսումնաբանները բոլորովին հակապատկեր է թւուեց: Քաղաքում դպրոցները կոչւում են ստորին և բարձր: Իսկ գիւղերում բոլոր դպրոցները բարձր են: Սրա ամենագլխաւոր պատճառն այն է, որ բաղաքում բանուոր բնակիչը շատ գժուարութիւն է կրում իր երեխային գրագիտութիւն սովորեցնելու, այն ինչ գիւղում, ինչպէս տեսանք, հոգենորականութեան հսկողութեամբ նախապատրաստում է գեղջուկ երեխան բարձր դպրոցի համար:

1897 թ. Սէյմի տուած կանոնադրութեամբ ուսումը գիւղերում պարտադիր է և 3 տարուաց ընթացքում երեխան կարողանում է պատրաստ լինել բարձր դպրոցի համար: Այդ կանոնադրութեամբ այնպիսի մասերի պիտի բաժանուեն բոլոր գիւղական համայնքները, որպէսզի բոլոր երեխաները կարողանան դպրոց յաճախել: Այնտեղ որտեղ 30 աշակերտ կայ հասարակութիւնը պարտաւոր է նոր դպրոց հիմնել: Իսկ հթէ

աշակերտների թիւը 50-ից անցնում է, այն ժամանակ պէտք է հրաւիրէ և նոր ուսուցիչ:

Աղքատ հասարակութիւններին որոշ նպաստ է արևում: Այդ նպատակով 1897 թ. սէյմը բաց է թողել 50,000 մարկ կամ 19000 ը.: Բացի դրանից հասարակութիւնը կարող է 60/օ-ով փող վերցնել պետական գանձարանից: Երբեմն նոյն խոկ ծախում է անտառի որոշ մասը և ամբողջապէս յատկացնուում այդպիսի համայնքների:

Այդպիսի գպրոցներում միաժամանակ կարելի է պարապել երկու սեռի հետ, եթէ միայն զրանց թիւը 50-ից չէ անցնում:

Գիւղական այդ բարձր գպրոցների դասընթացը նոյնն է ինչ բաղաքային գպրոցներում: Ուսումնական տարին ուեսում է 36 շաբաթ, իսկ դաս օրեկան լինում է 5—6 ժամ: Վարձատթիւնը նոյնպէս չնշին է 1 մարկ (38 կ.) ամրող կիսամիակին: Վարձի կէսը յատկացնուում է ուսուցչին, իսկ կէսը ուսումնարանին:

Վարձատթութիւնից ազատ են այն բոլոր աշակերտները, որոնք կամ աղքատ են և կամ հեռու են աղքում ուսումնարանից: Բայց չմոռանամ առել, որ կան նաև բոլորովին ձրի գպրոցներ: Այդպիսի գպրոցների թիւը 1894/95 ուսումն. թուին եղել է 220/0:

Շաբաթուայ մէջ գիւղական ուսուցիչը երկու կամ երեք անգամ ճաշից յետոյ լրացուցիչ դասեր է տալիս գպրոցաւարտներին: Այդպիսի լրացուցիչ դասերի համար նաև վարձատթութիւն ստանում է 250 մարկ (կամ 90 ը.), եթէ պարապաժժամերի թիւը հաւասար է 150-ի: Նման լրացուցիչ դասեր 1897 թ. եղել են 40 գպրոցներում:

Համալիսա բոլոր գպրոցների մօտ գրադարան-ընթերցարաններ կան, որտեղ հաւաքում են այն բոլոր գրքերը, որոնք թոյլատրուած են զրաքննչից: Բայց գրանից, պէտք է յիշել և այն գրադիտական ուսումնարանները, որոնք գտնում են հոգևորականութեան հոկուրութեան տակ:

Այդպիսի գպրոցներ կան ամբողջ Ֆինլանդիայում: Բոլոր գիւղերը բաժանուած են շրջանների: Թեմակալ հոգևորականի կարգադրութեամբ 2000 բնակիչը պիտի ունենայ մի ուսուցիչ, որ շրջում է բաժանմունքները և իւրաքանչիւր շըրջանում մնում է 6—8 շաբաթ, հաշուելով տարին 40 շաբաթ: Կան նաև նման շրջիկ ուսուցչուհիներ, որոնք կատարում են նոյն գերը իհարկէ նոյն կարգով: Բոլոր շրջիկ ուսուցիչները գլխաւորապէս դուրս են գալիս Թաւաստգոսի սեմինարիայից:

Այդտեղից գուրս են գալիս նաև ուսուցչուհներ: Միայն 1896 թ. այդ սեմինարիան տուել է 13 ուսուցիչ և 47 ուսուցչուհի:

Այդպիսի շրջիկ ուսումնարանների թիւը տարեցտարի աճում է: Միայն 1896 թ. բացուել է 108 նուան ուսումնարան: Այդ ուսումնարանների վրայ հսկում է գլխաւոր պաստորը (Kyrkoherde) իր օժանդակ վերակացուների միջոցով: Այդպիսի դպրոցներ պիտի յաճախեն 7 տարեկան այն բոլոր երեխաները, որոնք չեն կարողանում սովորել տանը և որևէ այլ դպրոցում:

Այս շրջիկ դպրոցները բազկացած են երկու բաժանմունքներից, որտեղ շաբաթուայ ընթացքում աւանդում է:

Ա. բաժանմ. Բ. բաժանմ.

Ընթերցանութիւն	11	8
Սրբազն պատմ.	5	8
Հաւատոյ հանդանակ.	4	6
Գրութիւն.	3	3
Հոգևոր երգեցող.	6	6
Թուաբանութիւն	—	3
	29	34

Հոգևորականութեան հսկողութեան տակ կան նաև բազմաթիւ կիւրակնօրեայ դպրոցներ: Սոքա բաւական տարբերութիւն են ներկայացնում այն կիւրակնօրեայ դպրոցներից, որպիսիները ընթհանրապէս հասկանում ենք մենք: Այդտեղ բացառապէս աւանդում են բարոյական, առողջապահական և կրօնական առարկաներ:

Գիւղական այս կամ այն դպրոցների ուսուցիչները և ուսուցչուհները, ինչպէս ասացինք, սովորում են հոգևոր սեմինարեաներում, որոնց թիւը 4 է: Սեմինարիաներում տեսական դասընթացքը տևում 3 տարի, իսկ գործնականը մի տարի: Բոլոր սեմինարիաներին կից կան և ստորին ժողովրդական դպրոցներ, որտեղ նորաւարտները պարապում են գործնականութ:

Այդ ուսուցչական սեմինարիաներում աւանդում են, կրօն, հանրամատչելի հոգեբանութիւն, մանկավարժութիւն, տարրական մարդակազմութիւն և առողջապահութիւն, ֆիններէն, շվեդերէն, ֆինլանդական պատմութիւն և ճիւղագրութիւն, աշխարհագրութիւն, մաթեմատիկա, բնական պատմութիւն,

գծագրութիւն և նկարչութիւն, գեղագրութիւն, երգեցողութիւն, նուազածութիւն և մարմնամարզութիւն:

Ուսումնական սեմինարիայում միայն կրօնն է հոգեորականութեան հոկողութեան տակ, իսկ մնացած առարկաները գտնուում են հասարակութիւնից ընտրուած լիազօր հոգաբարձուների հոկողութեան տակ: Սրանք թուով Յ են և պարտաւոր են ստիպել ծնողներին երեխաներին ուսումնարան տալու, այլև ներկայ են լինուած երեխմն դասերին և ըննութիւններին:

Սկզբնական կրթական հաստատութիւններից ինձ մնում է յիշել գիւղական ճեմարանը, որը եթէ ոչ առաւել գոնէ պակաս նշանակութիւն չունի ֆինանզացի գիւղացու համար: Այդ տեսակ ճեմարաններ յաճախում են մեծ, տարիքաւոր գիւղացիներ: Այդ տեսակ ճեմարանների ուսումնական տարին տեսում է նոյեմբերի 1-ից մինչև մայիսի 1-ը և շաբաթական աւանդում է.

Կրօն	2 ժամ	Թուարանութիւն	5 ժամ
Ֆիններէն և Փին. գրակ. 10	»	Ֆին. ընդհ. կազմակ. 1	»
Քաղաքագիտական պատմ. 4	»	Ասողջապահութիւն	1 »
Աշխարհագրութիւն	2 »	Նկարչութիւն	3 »
Բնական պատմութիւն	4 »	Հաշուապահութիւն	2 »
Գիւղատնտեսութիւն	1 »	kantele-ի նուագած.	2 »
Անասնաբուժութիւն	1 »	Ֆիզ. զան. աշխատ. 14	»
Կաթնատնտեսութիւն	1 »	Խոհարարութիւն	
Երգեցողութիւն	2 »	(միմիայն կանանց)	18 »

Այս ցուցակից արդէն պարզ է թէ Փինն ժողովուրդը որքան գիտակցօրէն է վերաբերում գէպի իւր առօրեայ տընտեսական գործերը: Այսուեղ նա այլևս չէ մնում՝ շուարած, իրբ հիվանդանում է իր գործող անսունը: Նա իր տնտեսական պարապմունքի տեսականը արդէն սովորում է այդ ճեմարաններում:

Ընթերցողները թող չմուանան, որ շատ շատերը իրանց կրթութիւնը և գլխաւորապէս մասնագիտական ուսումնուած են կաթնատնտեսական ընկերակցական (cooperativ) հաստատութիւններում, որոնց մասին համառօտ կերպով արգեն յիշեցինք առաջ:*

*) Մասնագիտական դպրոցներ 1900 թ. կային. 2 բարձր և 14 ստորին գիւղատնտեսական դպրոց, 5 այգեգործական, 3 ձի պայտելու, 1 բարձր և 14 ստորին կաթնատնտեսական դպրոցներ, 17 անասնաբուժական

Եղբայրակենք սկզբնական կրթութեան մասին մի ոռւս գիտնականի հետևեալ խօսքերով. «Փին ժողովրդական գըտշը ոչ թէ երեխաներ է տալիս, որոնք որոշ գրքեր են կարգում, այլ քաղաղացիներ, որոնք գիտն թէ ինչով են պարտական հայրենիքին, ինչպիսի կարիքներ ունի հայրենիքը, աշխատանքի ինչպիսի ձևը կարող է օգնել նրան ծառայելու համար։ Այդ պատճառով նոքա խոր գիտակցութեամբ և բուռն կերպով սիրում են իրանց հայրենիքը, որ նրանց համար ամեն ինչ է։ Նորա շահերի հետ համաձայն է ազնիւ ֆիննի իւրաքանչիւր քայլը և գորա մէջ ոչ միայն ընութեան պայմաններն են ահագին ծառայութիւն մատուցանում, որոնք միշտ բնիկ ֆիննի մէջ զարգացրել են ինքնուրոյնութեան գաղափարը, այլև ուսումնարանի ազդեցութիւնը, որին հոգի են ներշնչել լաւագոյն անձնաւորութիւններ։ Նրանք երեխաների մէջ կրթել են աշխատասիրութիւն և աղևութիւն։»

Իւրաքանչիւր ֆինն մանուկ գիտէ և վառ սիրում է մի ֆինն բանաստեղծի ոտանաւորը. «Եթէ որևէ է մէկը կը խախտի հիմնական օրէնքները, վերցրու զէնքը, Ֆիլլանդիայի քաղաքացի։»

Ֆինլանդիայում 7—15 տարեկան մօտ 500000 երեխայ կայ, խոլ նրանցից չէ սովորում միայն 40/օ-ը։

Միջնակարգ դպրոցներ

Ֆինլանդական միջնակարգ դպրոցները բաժանվում են երկու մասին։

Ա. Տղամարդկանց բաժին. սա բաժանվում է երկու ճիւղի 1) դասական դասախոսութիւններ և 2) բէալական դպրոցներ։ Դըրանք երկում էլ ունին 8 դասարան։ Երկու մասում սովորողները ընդունվում են համալսարան, որոշ ըննութիւն տալուց

դպրոցներ։ Մի գիւղատնտեսական դպրոցին ընկնում է 33, 523 բնակիչ, այն ինչ Խուսաստանում այդ թիւը հասնում է 700,000-ի։ Դնու չենք հաշւում հոգագործական և անտառային արհեստագործական դպրոցները։

յիտոյ։ Միջնակարգ դպրոցները բոլորն էլ պետական են, բայց
կան նաև մասնաւոր նման դպրոցներ։

1) Դասական ճիւղում աւանդում է.

	Ա.	Բ.	Գ.	Դ.	Ե.	Զ.	Է.	Լ.	Դասարաններ
Կըօն	2	2	2	2	2	2	2	2	
Ֆիններէն	4	2	2	2	1	1	1	1	
Շվեդերէն	8	4	4	4	2	2	2	2	
Լատիներէն	—	6	6	6	6	6	6	6	
Ռուսերէն	—	—	3	3	2	4	4	4	
Ցունարէն ոչ պարտադիր . . .	—	—	—	(2)	(4)	(4)	(4)	*	
Գերմաներէն	—	—	—	3	3	3	3	3	
Ֆրանսերէն ոչ պարտադիր . . .	—	—	—	—	(3)	(2)	(2)		
Աշխարհագրութիւն և պատմ. . .	4	4	3	3	3	3	3	3	
Մաթեմատիկա	6	5	5	4	4	4	4	4	
Ֆիզիկա	—	—	—	—	—	2	2		
Բնական պատմութիւն	—	2	2	2	2	2	—	—	
Տրամաբանութիւն	—	—	—	—	—	1	1		
Գեղագրութիւն	2	2	—	—	—	—	—	—	
Երգեցողութիւն	2	1	1	1	1	(1)	(1)	(1)	
Մարմամարդութիւն	2	2	2	2	2	2	2	2	
						30	30	30	
Շարաթական	30	30	30	30	30	(31)	(31)	(31)	

Բէտական դպրոցներում աւանդում են։

	Ա.	Բ.	Գ.	Դ.	Ե.	Զ.	Է.	Լ.	
Կըօն	2	2	2	2	2	2	2	2	
Ֆիններէն	4	2	2	2	1	1	1	1	
Շվեդերէն	8 *	4*	4*	4*	2*	2*	2*	2*	*
Ռուսերէն	—	2	3	3	3	3	3	4	
Գերմաներէն	—	4	4	3	2	1	1	1	
Ֆրանսերէն	—	—	—	—	4	4	2	2	
Անդերէն	—	—	—	—	—	2	2	2	
Աշխարհագրութիւն և պատմ. .	4	4	3	3	3	3	3	3	
Մաթեմատիկա	6	5	5	5	6	6	6	6	
Ֆիզիկա և քիմիա	—	—	—	—	—	3	3	3	
Բնական պատմութիւն	—	2	2	2	2	2	1	1	
Գեղագրութիւն	2	2	—	—	—	—	—	—	
Նկարչութիւն	—	—	2	3	2	2	1	1	
Երգեցողութիւն	2	1	1	1	1	(1)	(1)	(1)	
Մարմամարդութիւն	2	2	2	2	2	2	2	2	
	30	30	30	30	30	30	30	30	
						(31)	(31)	(31)	

*) Փակագծում դրուած դասերը պարագիր չեն։

*) Այդ երկու ծրագիրն էլ առաջ է բերուած շվեդական մասում եղած դպրոցների ծրագրից, ուստի և գերակշռող ոյժի ներկայացնում շվեդերէնը, իսկ Փինլանդական մասում այդ աղիւսակը մնում է նոյնը, միայն Փիններէնը և շվեդերէնը փոխում են իրանց տեղերը։

Բ. կանանց բաժինն—Կանանց բաժինը ունի մի մաս, ուր բաղկացած է 2 պատրաստական և 5 հիմնական գասարաններից: Այզտեղ աւանդուում է:

	Ա.	Բ.	Գ.	Դ.	Ե.	Զ.
Կրօն	3	2	2	2	2	2
Ֆիններէն	6	5	3	2	2	2
Շլիլերէն	—	4	2	2	2	2
Գերմաներէն	կամ ֆրանսերէն	—	6	5	5	5
Ֆրանսերէն	կամ գերմաներէն	լրաց.	կուրս.	—	—	—
Աշխարհագրութիւն	և պատմութիւն	4	4	4	3	3
Մաթեմատիկա	—	3	4	4	4	3
Բնական գատմութիւն	և առողջապահութ.	—	—	2	2	3
Գեղագրութիւն	—	2	2	2	—	—
Նկարչութիւն	—	—	—	2	2	2
Չինագործ	—	3	2	2	2	—
Երգեցողութիւն	—	2	2	2	1	1
Մարմնամարզութիւն	—	3	3	3	3	3
	26	28	30	30	28	27
					(30)	(30)
						(30)

Բերած աղիւսակներից ընթերցողները տեսան թէ իւրաքանչիւր առարկայ ինչ չստով են անցնում: Բայց միւս առարկաները մի կողմը թողնելով, ընթերցողների ուշադրութիւնը կը հրաւիրէի «մարմնամարզութիւն» անուան դէմ գտնուած թուերի վրայ, որոնք պարզում են Փինլանդական գպրոցների իսկական արժանիքը:

Այդ գպրոցներում գասաւանդով բոլոր ուսուցիչները պէտք է ունենան համալսարանական դիպլոմ: Ովքեր չունեն՝ կարող են ձեռք բերել որոշ քննութիւն տալով, որ լինում է գրաւոր և բանաւոր:

Ուսուցիչները իրանց գասերի համեմատ ստանում են ոռծիկ: Նրանցից աւագ ուսուցիչը ստանում է 5,500 մարկ (մօտ 2000 ր.) շաբաթական 14 դասով, լեկտոր (լեզուի ուսուցիչը) 4000 մարկ (1500 ր.) 18 դասով. կոլլեգան (կրտսեր պաշտօնակից ուսուցիչ) ստանում է 2000—3000 մարկ (760—1300 ր.) 22 դասով:
Ուսուցչուհիները ստանում են.

Աւագ ուսուցչուհին՝ 2000—28000 մարկ (760—1060 ր.) իսկ վարժուհին՝ 1800 մարկ (685 ր.):

Ուսուցչուհիները իրանց կրթութիւնը ստանում են յատուկ կանացի գիմնազիաներում և բացի գրանից պարտաւոր են լրացուցիչ գասընթացներում քննութիւն տալ:

Աւագ ուսուցիչը և աւագ ուսուցչուհին կատարում են նաև վերատեսչի պաշտօն, նրանք են կառավարում ամբողջ

ուսումնարանը, ուսուցչական և մանկավարժական խորհուրդները:

Ուսումնական տարին համարեա բոլոր դպրոցներում ըսկուում է սեպտեմբերի 1-ից (մեր օգոստոսի 20-ին) և վերջանուում է մայիսի 31-ին (մեր 19-ին): Ամբողջ տարին ծննդեան տօներով երկու կիսամեեակի է բաժանուում: Ծննդեան տօնը տեսում է մի ամիս:

Աշակերտաները դպրոց են ընդունուում քննութիւն տալով: Խւրաքանչիւր կիսամեեակին վճարում են 20 մարկ (7 ր. 60 կ.): իսկ աշակերտուհիները վճարում են 40 մարկ (15 ր. 20 կ.):

Դասերը դասաւորուած են առաւօտեան 8—11 ժ.-ը և 1—3-ը: Դասի սկզբին կարդում են յատուկ ազօթք, իսկ շաբաթօրը վերջին դասից յետոյ կարդում են կիրակի օրուայ գիրքը: Զնայած որ ըստ կանոնադրութեան տօն և կիրակի օրին աշակերտներն ու աշակերտուհիները պարաւոր են եկեղեցի զնալ, բայց ներկայում խախտուած է այդ կանոնը, աչքի առաջ ունենալով աշակերտների կամ աշակերտուհիների չկամութիւնը:

Մեծ դասամիջոցը տեսում է 2 ժամ, որի ժամանակ աշակերտները պարտաւոր են դուրս զնալ դասարաններից: Պարզ եղանակներին նրանք դուրս են գալիս բակը, իսկ ցուրտ օրերին միջանցքը, որտեղ զբաղում են կամ մարմնամարզութեամբ և կամ այլ խաղերով: Բնական է, որ այդ միջոցում դասարանի օդը բոլորովին մաքրում է: Ընդհանրապէս պէտք է առել, մեծ ուշադրութիւն դարձնում աշակերտի Փիզիքականի վրայ: Նոյնիսկ փոքրերը բոլորովին ազատութիւն են վայելում: Գարնանը և աշնանը զբաղում են բուսաբանական մարգերում, իսկ ձմեռը սահում են սահնակներով և չմուշկներով: Ամառը զբօսանը են դուրս գալիս հեծանիւով և կամ նաւակներով: Տօն օրերին փողոցները լցւում են զբոսնող աշակերտներով և աշակերտուհիներով:

Քննութիւնները համարեա վերացնուելու վրայ են:

Դպրոցի ներքին կեանքը զորկ է ձեականութիւններից: Տարազը որոշ չէ, հսկողութիւնը թոյլ և բարեկամական: Դըպրոցական կանոնադրութիւնը թոյլ է տալիս յանդիմանել և զրկել ընկերների հետ խօսելուց: Դասերից յետոյ կարելի է իրրե պատիժ թողնել ուսումնարանում, բայց 2 ժամից ոչ աւել:

Այստեղ պիտի կանգ առնել մի երեսյթի վրայ, որի կողմից Փինլանդական աշակերտաւթիւնը իրաւունք ունի պարծենալու դա աշակերտական ընկերակցութիւններն են, որ կոչում են կոնվենտներ: Բոլոր կոնվենտներն ել կազմուած են բարձր դասարանցիներից: Ըստ ծրագրի, զրանց նպատակն է

մոհերմացնել սահներին սիմեանց հետ և դարդացնել բոլորի մէջ մի ընկերական բարի վերաբերմունք: Նրանք ունեն իրանց յառաւուկ ընկերական դատարանը, որտեղ դատում են ընկերների մեղանչումները: Վարչութիւնը ինքը շատ անգամ այս կամ այն աշակերտին յանձնում է ընկերական դատարանին, լաւ ըմբռունելով այդ միջոցի փրկարար դերը:

Աշակերտութիւնը հասնողով առաջ է տանում ինքնազարդացման գործը, որի համար հրատարակում է ձեռագիր թերթեր, ժողովներ է գումարում, զատավօններ է հրաւիրում և այլն: Իւրաքանչուր շարաթ մէկ անգամ ընդհանուր ժողով է լինում, որտեղ քննում է ուսումնարանական կեանքի վերաբերեալ այս կամ այն հարցը և աշակերտների կարիքները:

Վերջերս վարչութիւնը աշակերտներին յանձնեց դասեր դասաւորելու իրաւունքը, որով հին դասաւորութիւնը վորխուեցաւ: Այդ փոփոխման համաձայն դասերը սկսում են ժամի 9-ից և վերջանում են 4-ին:

Մօտ 15—20 տարի է ինչ այդ միասեռ դպրոցներից մի քանիսը միացել են երկսեռ դպրոց: Այդտեղ հէնց փոքր հասակից տղայ և աղջիկ կրթուում են միասին, որոնց մէջ ինարկէ բարեկամական կապ է ստեղծւում: Այդտեղ չը կան այն հրէշաւոր նախազգութիւնները և հետեանքները, որ ընդհանրապէս երևում են մեր դպրոցներում:

Համալսարաններ եւ համալսարանական կեանք.

Ֆինլանդիայի առաջին համալսարանը հիմնուել է Արօում 1640 թուին գհներալ նահանգապետ Պետրոս Բրագէի (1638—1640 և 1648—1654) օրով: Կառավարութիւնը, կըթուած և բարեխիղճ պաշտօնեաների կարիք զգալով, հիմնում է այդ համալսարանը: 1640 թ. մարտի 26-ին Շվեդիայի Խրիստինիա թագուհին ստորագրեց համալսարանի հաստատութեան թուղթը, իսկ նոյն թուի յուլիսի 15-ին փոխարքայ Պետրոս Բրագէն մեծ հանգիստվ բացաւ համալսարանը: Արօի Ռոթէվիուս եպիսկոպոսը նշանակուեցաւ առաջին պրոկանցլեր, այսինքն համալսարանի վարչութեան աւագ, իսկ պրոֆեսոր Պետրիուսը առաջին տեսուչ: Համալսարանի գլուխ էր կանգնած կանցլերը, որը ընտրւում էր համալսարանական վարչութիւնից: 1646 թուից կանցլերի պաշտօնը չնորհում են Պետրոս Բրագէին, որը վարում է այդ պաշտօնը մինչև իր մահը, 1680 թ.: Բացի այդ կառավարող անձնաւորութիւններից կայ և մի կառավարիչ մարմին, որ կոչում է կոնսիստորիա (consistorium academicum):

Այս մարմինը հանդիսանում է որպէս գատաստանական ատեան և կազմուած է բոլոր ուսուցչապետներից և տեսչից:

Այդ ատեանի գործը հնումը մանաւանդ շատ մեծ էր, ուրովինետև համալսարանի սեփականութեան մէջ էին մտնում և հողեր, անտառներ, որտեղ գործում էին բաւական թուով մըշակներ և մշտական բանուորներ:

Ակզրում համալսարանն ունէր 11 պլոփեսոր, որոնցից երկուսը ֆինն էին, իսկ 9-ը շվեդներ: Համալսարանը բաղկացած էր 4 ֆակուլտետից: ա) աստուածաբանական՝ 3 պլոփեսոր, բ) փիլիսոփայական 6 պլոփեսոր, գ) իրաւաբանական և դ) բժշկական՝ մի մի պլոփեսոր:

Առաջին տարին համալսարանն ունէր 44 ուսանող, իսկ հետեւեալ տարին 300-ից անցնում էր: Ուսանողները շուտով բաժանվում են «Հայրենակցութիւնների», որ 1643 թ. օրինաւոր կերպարանք է ստանում: Այդ «Հայրենակիցները» կառավարում էին տեսուչներով (Ինսպեկտօրъ), որոնց ընտրում էին իրանք ուսանողները իրանց ուսուցչապետներից:

Այդ հայրենակիցների խմբերը ունէին յատուկ գանձարան և յատուկ ընկերութիւններ (կօրպօրացիա): Նորեկ ուսանողները պարտաւոր էին ենթարկուել իրանց մեծ ընկերներին (seniores):

Առաջին փիլիսոփայական ֆակուլտետի մագիստրոսական աւարտման շարադրութիւնները (magisterpromotion) ներկայացրին 1643 թ. մայիսի 6-ին, որի ժամանակ մեծ հանդէս կատարուեց: Այդ օրուանից արդէն 3 տարին մի անգամ կատարում է այդ խորհրդաւոր հանդիսակատարութիւնը:

Համալսարանի կեանքում զանազան պաշտօնեաներ *) իրանց ջանքերը գործ են զնում հաստատուն և պահանջի համեմատ հողի վրայ դնել համալսարանը: Ապա փոքր Յովնան Գեղեիուս (պլոկանցլեր 1690—1718) ուշադրութիւն է դարձը՝ նում մանաւանդ կրթութեան ճիւղին վրայ:

Հէնց այդ ժամանակներում սկսում է Կարլ ԽII և ոռւաների պատերազմը, որը զինուորներ էր պահանջում: Ուսանողներին սկսեցին զօրախաղ սովորեցնել: Շատ ուսանողներ գէնքը ձեռներին մտնաւակցում են կոռւին:

1711 թ. հրդեհը լափում է Արօի մի մասը, որտեղ է

*) Դրանցից են. պլոկանցլեր Ռոթիվիուս (1640—1652), առաջին տեսուչ իսկել Պետրիուս, որը պլոկանցլեր էր 1652—1757, պլոկանցլեր Թերսերիուս 1658—1664 թ., Սեծ Յոնան Գեղեիուս (պոոկանցլեր 1664—1690):

լինում և համարսարանը: 1752 թ. կրկին վերաբացւում է համարսարանը և մինչդեռ 1750 թ. փառաւոր համդիսակատարութեամբ տօնում էին համալսարանի հարիւրամեակը, 1742 թ. կրկին պատերազմ է ծագում, որից համալսարանի զործունէութիւնը կանգ է առնում: Յաջորդ տարին վերստին բացւում է և սկսում են դասախոսութիւնները:

1808-1809 թ. պատերազմը կրկին իր աւելիչ նշանակութիւնն է ունենում համալսարանի վրայ: Ուսանողները և ուսուցչապետները խոհեմութեամբ մնում են Աքում, որի համար Աղեքրսանդը լը մեծ յարգանք է տածում դէպի այդ կրթական հաստատութիւնը: Նա հրամայում է ճանաչել համալսարանի բոլոր իրաւունքներն ու կարգերը, ինչպէս շվեդական տիրապետութեան ժամանակ: 1811 թ. հաշտութիւնից յետոյ համալսարանը հրաւիրում է և 6 այլ ուսուցչապետներ:

Հաշտութիւնից յետոյ համալսարանի կամցլերութիւնը անցնում է Նիկոլայ Պաւլեիչի ձեռքը, որի գահ բարձրանալուց յետոյ, իշխանութիւնը անցնում է Նորա ժառանգի ձերքը: 1827 թ. Աքոի^{1/3} մասը այրող և երկու օր տեղի հրդեհը ստիպում է կառավարութեանը համալսարանը փոխել Հելսինգֆորս, «Ալեքսանդրիան կայսերական համալսարան Ֆինլանդիայում» անունով: Շուտով կանցելրութիւնը անցնում է Փինլանդիական գործերը վարող նախարարի ձեռքը:

Հելսինգֆորս փոխադրուելուց յետոյ, 1828 թուից համալսարանի համար նոր կեանք է սկսում:

Համալսարանի մատենադարանը աւելի բարգաւաճ դրութիւն է սասանում:

Ուսանողները կատարեալ ազատութիւն են վայելում: Նրանք իրանք են կարգավրում քննութիւնները: Իւրաքանչիւրը կարող է քննութիւն տալ, եթե իր համար ցանկալի է: Բայց այստեղ չպիսի մոռանալ, որ նրանք աւելի քան բարեխիղճ են դէպի այդ արտօնութիւնը:

Համալսարանում երկու տեսակ քննութիւն կայ. ա) հասարակական քննութիւն (öffentliche examina) և բ) մասնաւոր հայեցողութիւն (enskilda tentamina), բայց չմոռանանք ասել, որ հասարակական քննութիւնը ներկայումս մի ձևականութիւն է ճանաչուած.

Աստուածաբանական ֆակուլտետներնում պաստոր լինել ցանկացողները պարաւոր են տալ այսպէս կոչուած աստուածաբանական աւարտման քննութիւն: (teologisk djemissions-examen).

Իրաւաբանական բաժիններում քննութիւնները բազմա-

տեսակ են: Պետական ծառայութիւն մտնողները մի քանի տեսակ քննութիւններ են տալիս:

- Ա. ստորին վարչական քննութիւն (lägre förvaltningstexamen)
- Բ. վերին » » (högre förvaltningstexamen)
- Գ. իսկական իրաւաբանակ. » (rättsetamen)

Իրաւաբանական դիտութիւնների կանգիտատի աստիճան (juris utriusque candidat) ստանալու համար տալիս են առանձին քննութիւն, որը հաւասար է երկրորդ և երրորդ քննութիւններին միասին վեցրած:

Կայ մի այլ քննութիւն, որով ստացւում է իրաւաբանական լիցենցիատի աստիճան (juris utriusque licentiat):

Բժշկական բաժիններում քննութիւն բոլոր բնագիտական, մարդակազմական և բնախօսական առարկաներից: Այստեղ ևս քննութեան համեմատ տրւում է երկու աստիճան՝ կանգիտատի և լիցենցիատի աստիճան:

Փիլիսոփայութեան համար տրւում է գիտական և կրօնական փիլիսոփայութիւնից, գերմաներէն, ֆրանսերէն կամ անգլերէն լիդուներից փորձութիւն՝ pro exercitio, պատմական փիլիսոփայութեան և լատիներէնից որոշ շարադրութիւն գրել՝ տուած որևէ նիւթի մասին (pro gradu):

Այժմ գանք ուսանողական կեանքին:

Համալսարանում ուսանողները լսում են բոլորովին ձրի: Քննութիւնները բաւական լուրջ են. ընդհանրապէս համալսարան են մանում միջին դպրոցներ աւարտողները, միայն մի քանի առարկաներից քննութիւն տալով: Տեսչի տուած տեղեկութիւնների համաձայն 1893—96 թ. ընդունուել են 1067 ուսանողներ, միջին թուով մի տարում 356 ուսանող:

Նորեկները ընդունուել են. աստուածաբանական ֆակուլտետ—99 հոգի, իրաւաբանական՝ 252 հոգի, պատմաֆիլոլոգիական՝ 300, և ֆիզիքօմաթեմատիկական՝ 416 հոգի: Դրանց հասակները բանել են 15—30 տարեկանը: 1893—96 թ. թ. ամբողջ ուսանողների թիւը համում էր 1909.

Ուսանողուհիները ևս բոլորովին նոյն իրաւունքներն են վայրլում, ինչ ուսանողները: Առևջին ուսանողուհին ընդունուել է 1870 թ., այդ օրուանից ուսանողանիների թիւը գնալով աճել է և 1898 թ. արդէն ուսանողուհիների թիւը 288-ի է հասնում: Ուսանողուհիները ընդունում են բոլոր ֆակուլտետներում, բացի աստուածաբանականից, որտեղ մինչեւ այժմ ոչ մի

գէպը չէ եղել: Զէ աեգելուած, այլ ուսանողուհիները իրանք չեն լնարում այդ ճիւղը:

Ուսանողները և ուսանողուհիները ունեն իրանց յատուկ գրադարանը 50,000 կտոր գրքերով:

Հէնց համալսարանի սկզբից ուսանողական կհանքը բարելաւ զարգացման ճանապարհի վրայ է գրուել: Ուսանողները ունեն ըրոշ տօներ, երբ նրանք խրախճանք են սարքում: Դըրանցից նշանաւոր է «մայիսիան՝ ուսանողական տօնը»: Ուսանողական մայիսիան տօներից նշանաւոր էր 1848 թ. մայիսիան տօնը, որը մեծ նշանակութիւն ունի ֆինլանդական ուսանողական պատմութեան մէջ: Այդ տօնին երկուեց իուներերգի «Հայրենիք» հիմնը, որից յետոյ հսկուոր Ֆրիդրիխ Սիդնէուսը մի փայլուն ճառ արտասանեց: Այդ օրուանից ուսանողութեան մէջ աճում է աղդայնական ոգին և 1851 թ. հրապարակ է գալիս այդ ոգու արդինքը: Այդ թուին պիտի տօնուէր նորդինստումի կանցլերութեան 25 տմեակը, որի ժամանակ հրաւիրուած էին և ուսանողները: Դրանցից 40 հոգի հրաժարուեցան մասնակցելու այդ տօնակատարութեանը, որով իրանց վրայ գրաւեցին պիտութեան ուշը: 1852 թուին իշխանութիւնը արգելում է հայրենակցական ընկերութիւններ կազմելը: իսկ որ զլխաւորն է, փակում է փիլիսոփայութեան ամբիօնը, այդ առարկան վատանգաւոր համարելով: Ներկայումս կան 6 հայրենակցական ընկերութիւններ, որոնք կառավարւում են ինսապեկտորներով: Հայրենակցական ընկերութիւնների նախական ձեր աւելի ևս կատարելագործուած կերպով ընդունուած է այժմ ուսանողութիւնից: Նրանք իւրաքանչիւր աարի մի անգամ տօնում են իրանց տօնը կապելով մի որևէ պատմական օրուայ հետ:

Իւրաքանչիւր հայրենակցութիւն ունի իր ծրագիրը, որը ժշակել են իրանք ուսանողները և հաստատել է տեսուչը: Իւրաքանչիւր ուսանող ոչ միայն անդամ է հայրենակցութիւններն, այլ և ամբողջ ուսանողութեան ուսորութեան, անդամ: Ուսանողական ընդհանուր ժողովներում ընտոււմ են այն բոլոր հարցերը, որոնք վերաբերում են ուսանողական գործին, կեանքին, մատենադարանին, դրամագլխին և այլն:

Այդ հայրենակցութիւնները ընտրում են երեք գիտնական աստիճան ունեցող անձնաւորութիւն, որոնցից տեսչի կարգադրութեամբ մէկը նշանակում է փոխ-կանցլեր, մէկը որպէս ուսանողութեան նախագահ, իսկ երրորդը որպէս փոխ-նախագահ: Բացի դրանից, ուսանողները ունեն 12 անդամից կազմուած մի ժողով, որը կարգադրում է բոլոր ընթացիկ գործերը: Տեսուչը

զրանցից 7-ին հաստատում է, որպէս իսկական անդամներ իսկ 5-ին որպէս փոխանդամներ: Նախագահը և փոխնախագահը չեն կարող ժողովի անդամ ընտրուել: Ժողովը իր միջից ընտրում է մի նախագահ, մի անտես և մի մատենադարձանապետ, բոլոր ծախքերը կամ օգուտը կարգադրում է ուսանողների անմիջական ընդհանուր ժողովով:

Ուսանողները մեծ յարգանք ունեն ժողովրդի բոլոր խաւերում: Նրանք շատ յաճախ համերգներ, ներկայացումներ, երեկոյթներ, վիճակախաղեր են տալիս, որից ստացած արդիւնքը կարգադրում են ընդհանուր ժողովի վճռով: Այդպիսի փողով նրանք շինել են ուսանողական տունը, որ բացուել է 1870 թ. նոյեմբերին: Ամբողջ շենքը բաժանուած է որոշ մասերի: Կայ մի մեծ դահիճ, որ յատկացրուած է ընդհանուր ժողովների և համերգների համար: Միւս փոքրիկ գանձնիճները յատկացրուած են հայրենակցական ժողովներին: Բացի այդ, այս շենքում ապրում են այն ուսանողները, որոնք քաղաքում ծնողներ չունեն:

Շատ յաճախ հաւաքւում են բոլոր այրենակցական ընկերակցութիւնները իրանց դրոշակներով: Նրանք ունեն և մի այլ մեծ ընդհանուր դրոշակ: Այդպիսի հանդիսով նըրանք դիմաւորում են նոր եկող որեւէ սպատուելի անձնաւորութեան: Մայիսի 1-ից նրանք սպիտակ գլխարկ են դնում, որոնց «կոկարդի» տեղ կպցնում են փոքրիկ ոսկեգոյն քնար: Չնայած որ մայիսի մէկը միայն ուսանողական տօն է, բայց այսուամենայնիւ նրանց միանում են և ընակիչներից շատ շատերը:

Այդպիսի թափորով նրանք հաւաքւում են քաղաքի կենտրոնը, որտեղ, սովորական ցոյցերից յետոյ, սպիտակ գլխարկների ովկեանը խաղում է դէպի ուսանողական տունը, երգելով աղգային-ուսանողական մեծ հիմնը:

ԹՈՒՐՔՈ-ՔՐԴԱԿԱՆ ԱՐՇԱԽԱՆՔԻ ՔՍԱՆԵՀՀԻՆԳԱ-
ՄԵԱԿԸ

1880—1905

(Նիւթեր հայոց նորադոյն պատմութիւնից)

I

Թուրքօ-քրդական նոր դէպքերը.—Մի քառորդ դոր տևած.—Գործեր և գործիչներ.—Ներսէս պատրիարք, Խրիմեան Հայրիկ, Կամարական, —Captain E. Clayton, —Վանայ Ալբանացի վալին, —Շէմպիինան և շէյխ իւրադուլան, —Մար-Շիմոն, —Միմոն Զիլինգերեան, —Ռողերութիւն դէպի Օսմանիան Քիւրզստան:

Ատրպատականի թուրքօ-պարսկական սահմանադլախ վրայ այս օրերս տեղի ունեցող դէպքերը սկսել են ուշագրաւ լինել և քաղաքական հանգամանք ստանալ: Թուրքօ-քրդական այդ խլուումները ներկայ աղէտալի օրերում մեզ հայերիս համար էլ մեծ կարևորութիւն ունենալով՝ արժէ պատմական մի հայեացքի առարկայ դարձնել այդ կրկին անգամ բանկուած լուրջ խնդիրը:

Մօտաւորապէս 25 տարիներ անցել են այն թուականից, երր 1877/78 թ. սուսո-թրքական վերջին պատերազմի հերոսներից Շէյխ Իրազուլլահը առաջին անգամ ըստ հրահանգի Սուլթան Համիլի տառնեակ հազարներով սիւնի քրդերից բաղկացած մի ստուար լաշի-լոզուզ բանակի գլուխն անցած Ռումիոյ կողմից սահմանը խուժեց և ուղղակի առաջ արշաւելով պաշարեց այդ հինաւուրց քաղաքը:

Պիտի այստեղ յիշել որ այդ ժամանակ է. Պոլսում պատրիարքական աթոռի վրայ լազմած էր այնքան արժանաւորապէս Ներսէս Վարժապետանանը, իսկ նրա ներկայացուցիչն էր Վասպուրական աշխարհում Խրիմեան Հայրիկը: Եւրոպական երկու մեծ պետութիւններից՝ Ռուսիան և Անգլիան՝ գեռ նոր նշանակել էին իրանց լաւագոյն ներկայացուցիչներին, որպէս մնացուն հիւպատոսներ, հսկելու 61-րդ աղէտալի և չարարատիկ յօդուածի իրազործուելու մասին. գրանք՝ հին հայազգի Փետրուար, 1906.

տոհմային ազնուական գնդապետ Կոստանդին Կամսարականը և անգլիացի Գէրտըն Էմիլիուս Գլէյթըն, երկուսն էլ բառի բուն նշանակութեամբը ընտիր, աղնիւ և իրանց պաշտօնի բարձրութեան վրայ կանգնած մարզիկ, որոնք չեն դադարում գիշերցիրեկ այխատել հայ ժողովուրդի տխուր և տառապալի վիճակի բարուորմանը մասին, որովհետեւ մեծ սովի տարին էր այն: Զմուռնանք այսուեղ յիշել նաև անցողակի կերպով որ Վասպուրականի ընդհանուր նահանգապետուն էր Շքոտրալի Հասան Բաշա Ալբանեացին, որը դարիս ոկրուում օսմանեան պետութեան Ալբանիյում տիրապետութեանը զէմ ապստամբուելով՝ յետոյ պարաւութեան մատնուած՝ իր ամբոցը իր ամբողջ ընտկիչներով օղը հանող հաչակաւոր Դէրէ-դէլէնլի Ալի Բաշայի ցեղից լինելով՝ գէպի օսմ սուլթանների գահը խոր ատելութեամբ տոգորուած մի մարդ էր, և իրը աքսոր ուղարկուուծ էր Վան: Դա բացէ ի բաց մի հայասէր պաշտօնեայ լինելով ամենայնիւ աջակցում էր հիւպատոսների մարզասէր ջանքերին՝ ժողովրդեան թշուառ վիճակը ըստ կարելոյն ամոքելու, և կարելի է ասել որ նրա օրով հինաւուրց հարստահարութիւնները ու զրկանքները, գոնէ վասպուրական երկրում, բաւականաչափ զըսպուած էին, իսկ նրանից յետոյ Վանը այլևս մի բարեխիղճ թուրք պաշտօնեայի երեսը չուեսաւ:

Այսաեղ Շէմպինանում^{*)} (թիւրքօ-պարսկային սահմանագլխի վրայ), որ Վանայ ընարդակ կուսակալութեան հետաւոր մի խուլ ու խաւար անկիւնն էր կտղմում այն ատեններ, հաստատած էր Շէյխ իրադուլլահը իր բնակութիւնը՝ վայելելով ամբողջ Հաքիմորի գաւառի բուրդ ազգաբնակութեան յարգանքըն ու համակրութիւնը: Մանաւանդ մեծ պատելազմից յետոյ (1877—78) նրա զիւզը մի օջախ, ազգային մի սրբավայր էր դարձել բոլոր քրդերի համար, որոնք հեռուից և մօտից խմբովին դիմում էին նրան իրանց վէճերը կարգուցրելու, հաշտեցնելու նրանց՝ տեղային կոփւներում ևայլն:—Շէյխը նոր էր վերադարձել իր գէպի Մէքկէ արած ուխտագնացութիւնից և անցնելով Կ. Պոլսից արժանացել էր նա Սուլթան Համիդի ընդունելութեանը ու ընծաններին, աւելցնենք՝ նաև հրահանգներին, քանզի համիուամական տէնդէնցիան արդէն սկսել էր այնատենաներ զօրանալ և տիրապետել Համիդի սրտում, իրը միակ միջոց օսմանեան խարիսուլ զահը ամրապնդելու՝ հանդէպ եւրոպական անախորժ միջամտութեանց և մանաւանդ անվերջ ու անվախճան բէֆօրմների անիծեալ ծրագիրներին:

^{*)} Շէմպինանի մասին տես «Մուրճ» 1905 թ. № 5—8: Երև.

Հանգիստաւոր շքով Շէյխը մուտ դործեց վան և տպա ու-
ղերուուեց Շէմզզինան: Իհարկէ զա մեծ նշանակութիւն ունեցող
անցք էր ըրդերի համար և մեծ ուժագնացութիւն սկսուեց
դէպի այդ տնկիւնը: Քրդերի արտասովոր համախմբումից
իրանց պետի մօտ ասորոց կաթուղիկոս Մար Շիմոնը անհան-
գոտացած և յիշելով մինույն ատենը 1842 թ. մեծ ջարդերը
քուրդ ցեղապեա Բէզզը-խան բէկին ձեռամբ կատարուած, փոյթ
էր տարել անմիջապէս տեղեկագիր ուղղել Ռուսաց և Ան-
գլիացոց կօնսուլներին, ինչպէս նաև Հայոց Առաջնորդին, ուշա-
գրութիւն հրաւիրելով այդ հանգումանքի վրայ: Բանը հաղոր-
դուեց կ. Պոլսի դեսպաններին և Ազգական Պոատրիարքարանին:
Անգլիական դեսպան Լորդ Դիւֆէրին հեռազրով հրահանգ տուեց
Դէփթրն Գլէյթընին անմիջապէս ուղեկորուել Շէյխի մօտ և
անձամբ ստուգել գործերի դրութիւնը Շէմզզինանում. իսկ
ոլ. Կամսարական բառական համարեց Քիւդիւկչի Սիմոն Զիլին-
գարեացին (որ այդ ժամանակ Տրապիզոնից հասել էր և Շէմ-
զզինան էր զնուու ընկուղի ծառերի վրայ գտնուած ուսերը
կտրելու գործով) յանձնարարել՝ խնդիրը ուսումնասիրելով մի
տեղեկագիր կազմել և ուղարկել նրան: Յօդուածագիլս էլ, որ
առևտրական գործեր ունենալով Քրդաստան պէտք է զնայի,
օգտուելով պատեհ տոթից, անգլիական հիւպատոսի ապահով
քարայրանին միացայ և մեկնեցինը վանից:

II

Խոշալու—Բաշկալատ.—«Կայծակ» վարդապետը, —Շէյխի մասին, —Քոչաննէս
—Մարշամոնի մօտ, —Ո՞վ է բոլոր ջարդերի բուն հեղինակը. —Տորիների և
Դիգերի քաղաքականութիւնը. —Անգլիական միսիան Ասորոց երկրում:

1880 թուականի ամառն էր, երբ վերջին հրաժեշտակ ող-
ջոյններ փոխանակելով ընտանեացս և բարեկամ ու ծանօթների
հետ՝ ճանապարհ ընկանք դէպի Բաշկալայ աւանը, որ Վանէն
իր 18 ժամ հեռաւորութեամբ Հաքիսարի (Ազբակից հարաւ)
նահանգի գլխաւոր կեղրոնն է 6 կամ 7 հարիւր տներով, հայ,
քուրդ և հրէայ: Ճանապարհը տնցնում է հինաւուրց Անձեւացեաց
գաւառով (այժմ Խօշար գաւառը), ուր աջ ու ձախ երեւմ էն
ցան ու ցրիւ հայութեան անցեալ փառքի ու կուլտուրայի մը-
նացորդ բեկորները, կիսաքանդ ամրոցներ ու պարիսպներ
վանքերի ու եկեղեցեաց փլատակնել, գիւղերի և աւանների
աւերակներ, խոշոր խաչաքարերով զարդարուն գերեզմանոցներ
և այլն և այլն: Անցնելով Խոշար գիւղի վրայի Գիւլում-Խա-

թուն կամուրջից, որ մի հինաւուրց քարաշէն գեղեցիկ շինուածք է ի յիշատակ Անձեւացեաց մի հայ իշխանութու բարեկործութեան, մենք վերջապէս համուռմ հնք Խոշար գիւղը, որ աւազակ բուրդերի մի որջ է, ունենալով ամեն յարմարութիւն անցու գարձ անող քարվաններին, ճամբորդներին կողոպտելուն:

Հասկացնելով հիւպատոսին գիւղի անապահովութեան մասին, նա տեղական միւտիւրից (պրիստա) գիշերապահներ պահանջեց և մենք հանգիստ քնել կարողացանք: Միւս որը Զուխի կէտուկը բարձրանալով երեկոյեան հասանք Բաշկալա: Տեսակցելով հայոց առաջնորդ Յովհաննէս վրայ. Բաղունիի (Կայծակ) հետ, որ աչալուրջ և քրդական զործերին լաւ հմառութիւն ունեցող մի մարդ էր, մենք տեղեկացանք որ իսկապէս Շէյխը գաղտնէ հրահանգներ է բերել Պոլսից և մի ինչ որ խուլ շշուկներ կային քրդական շրջաններում՝ մօտոյ արշաւանքի նման մի բան ոկսելու, բայց թէ ում վրայ, հայոց թէ ասորոց—դեռ չի որոշապէս յայտնւում:

Վարդատեալ խորհուրդ տուեց կոնսուլին նախ պատ Մար-Շիմոնի մօտ, որից տւելի ստոյգ տեղեկութիւններ կարելի էր ստանալ գործի զրութեան մասին: Ուստի և որոշեց մարշուուր փոխել և միւս օրը մենք ուղևորուեցինք Զուլամէրկ, որի մօտն է ասորոց կաթուղիկոսի բնակուած գիւղը Քոչհաննէս: Զաբ գետի գառիվայրին բարձրութեան վրայ շինուած այս աւանը 200 տուն զուտ ասորի բնակիչներով գեղեցիկ մի տեսարան է ընծայում իր բարձրաբերձ բարդի անտառներով և սիրուն, մաքուր խրճիթներով. իսկ կաթուղիկոսարանը բաւականին վայելուչ մի մեծ երկյարկանի բարաշէն տուն է, ուր մենք հիւրնկալուեցինք Մար-Շիմոնի հրամանով և պարագու պատշաճ պատիւններով: Այս լեռնական հոգեորականի պարզ և անպաճոյն կերպարանքը և նիստ և կացը մեծ տպաւորութիւն թողեց մեզ վրայ: Նա ոչ սինոդ ունէր իր կողքին, ոչ պրոկուրոր, ոչ քարտուղար և ոչ էլ գանձապետ. միայն մի քանի բարձրահասկ կտրիճ երիտասարդներ կային: Նրա շուրջը, որոնք զինուած էին սպիտակ կոթերով քրդական խանչաններով, և մեծ երկիւղածութեամբ թիկնապահութիւն էին անուռմ իրանց եկեղեցական պետին: Նա խօսակցում էր մեզ հետ թուրքերէն, իսկ հիւպատոսի թարգմանը նրա ասածները հաղորդում էր անգլիրէն: Հարցը քրդական խլրումների մասին էր իհարկէ: Մեծ եղաւ մեր զարմանքը երբ Մար-Շիմոն յայտնեց որ շէյխը նրան մի նամակով հրաւիրել էր մօտ օրերում իր մօտ տեսակցութեան և խորհրդակցութեան մի շատ կարևոր զործի մասին,

որին շուտով պէտք է ձեռնարկուէր բարձրագոյն հրամանով և հրահանդով:

—Իսկ դուք ի՞նչ պատասխանեցիք նրան, հարցրեց հիւպատոսը կաթուղիկոսից:

—Ոչինչ, միայն ասյչափ թէ մենք հինգ մէլիքներ ունենալով, որոնք կազմում են աղքային խնամակալութիւնը, հարկ է նախապէս զիմել նրանց, որպէսզի ժողովի միջոցով որոշուի նրա մօտ գնալու խնդիրը:

—Բայց ձեզ չի թւում որ ձեր այդ պատասխանը կարող էր ուղղակի վիրաւորել Շէյխին և գրգուէլ նրա թշնամութիւնը ասորոց դէմ, շարունակեց կոնսուլը:

—Այդպիսի մի բան կարող է պատահել, սակայն ես առանց մէլիքների զիտութեանը կարող չէի ինքս վճռել թէ հարկ է գուալ թէ ոչ: Յետոյ այս էլ կայ որ 1842-ին մեր ազգը սոսկալի կերպով տուժեց բրդերի կողմից եկած այդ տեսակ հրաւէրներին ականջ կախելով, որը ձեզ բաջ յայտնի պէտք է լինի կարծեմ, պատասխանեց Մարշիմոն:

—Ի՞նչ կարող է լինել Շէյխի նպատակը քրդերին իր մօտ համախմբելով, հարցրեց կրկին հիւպատոսը:

—Անկառակած նա որևէ զիտաւորութիւն պէտք է ունենայ մի արշաւանք գործելու ի վրէժ այն անդաջողութեանց, որ նա կրեց Զալալէդինի հետ միասին անցեալ պատերազմում, սոսկալի շարդ ուտելով Բայազիկում գեներալ Տէր-Դուկասովի բանակից:

—Արշաւանք գործել, բայց դէպի ուր և ուժ վրայ:

—Ինձ համար բոլորովին պարզ է որ նա կը յարձակուի Վանայ վրայ. Զալալէդինի և իւրագուլը Բայազիկուց առաջ վանում ուխտել էին, յաղթական վերադառնալիս պատերազմի դաշտից, այլ մեծ հայաշատ քաղաքը սրի և թալանի ենթարկելով նիմայատակ քարուքանդ անել: Բայց հակառակը լինելով յաղթահարեալ ու զիխակոր եղած մազապուրծ յետ դարձան, ուր (Վանում) Սուլթանի յատուկ հրամանով հասած բաշան Զալալէդինին թունաւորելով սատկցուց, իսկ իւրագուլահին էլ հրահանդ տրուեց՝ Մէքէ ուխտի գնալու: Ահա այդ վրէժըն է որ նա այժմ ուղում է կատարել:

—Բայց չի որ այդ դէպքում նա ուղղակի կառավարութեան հետ դէմ առ դէմ գործ կ'ունենայ բանի որ Սուլթանը չի կարող նրան թոյլ տալ իր հպատակներին կոտորելու:

—Բնդակառակը, ես բոլորովին վստահաբար կարդ եմ ասել ձեզ, պ. հիւպատոս, որ Սուլթանի կառավարութիւնը նրան չարգելելով հանդերձ, ուղղակի կամ անուղղակի էլ

կ'օգնէ Շէյխին իր այդ վատ և սոսկալի նպատակը իրագործելու: Ո՞վ էր մեզ՝ ասորիներիս 1842-ին չարաշար կոտորել տուղղը—Սուլթան Մէջիդը. ով էր 1862-ին Լիբանանում Մայօնիթ քրիստոնեաներին ու Կիլիկիայում հայերին ջարդել տուղղը—Սուլթան Ազիզը. վերջապէս ով էր գեռ երկու տարի առաջ Ռումելիայում (Բուլղարիա) տասնեակ հազար քրիստոնեաներին արիւն արցունքի գետերու մէջ բնաջինջ անել տուղղը—Սուլթան Համիդ. գուք տեսնում էր, ուրեմն, պ, հիւպատոս, որ Օսմանեան սուլթանների բնորոշող քաղաքականութիւնն է ջարդել, կոտորել և հետզետէ բոլորովին բնաջինջ անելիրանց քրիստոնեայ հպատակ բոլոր ազգերին էլ հաւասարապէս: Քըրդերը առաջ հինաւուրց շէշխանէ հրացաններով կոտորում էին մեզ անդէն, անպաշտան քրիստոնեայ հպատակ ազգերիս և ժողովուրդներիս, իսկ այժմ նրանք զինուած են յոտից ցղլուխ այնալի, մարտինի և 16 հարուածանի վէնչխաւոր փառաւոր հրացաններով. ով տուեց նրանց այդ նոր, եւրոպական կատարելազործածած ընտիր զէնքերը, ով, իթէ ոչ Սուլթան Համիզը. և ինչ նպատակի համար. աւելորդ է ասել:

Հիւպատոսը որ օսմանեան պետութեան ջատագով ու պաշտպան Բիկոնսֆիլդեան պահպանողական կուսակցութեան յարած մի թունդ տորի էր, մատայուզուեց և սկսեց բեխերը ոլորել ու մօրուքին շոյել. տեսնելով որ աշխարհի հեռաւոր խուլ ու խաւար անկիւններում ապրող այս լիոնական եկեղեցականը այնպէս պարզ և ազդու մի ճառով լուսարանել էր օսմանեան սուլթանների իսկզբաննէ անտի հետևած արիւն-արցունքի քաղաքականութիւնը, որ այնքան ձախորդ, զժրադդ և մահարեր հանդիսացել էր Արևելքի հինաւուրց քրիստոնեայ, խաղաղ, կոլտուրական քաղում ազգերին ու ժողովուրդներին և այնքան անպատուարեր ու անտանելի եւրոպական մեծ, քաղաքակրթուած և հզօր ազգերի և պետութեանց անուան ու համբաւին, և այնքան յանդիմանութիւն ու նախատինք էր բերում նրանց անզգայ սրտերին ու մեռած, թմրած խղճին եթէ, ունէին:

Մի ակնթարթում նա ըմբռնեց քրդական խլբառմների և շարժումների բուն իսկ իմաստն ու նշանակութիւնը, նպատակն ու ահռելի հետևանքները, և նա սթափուեց, զարդնեց, որպէս խորը քնով խռմբացնող մի մարդը, որի փակուած աչքերի վրայ է ընկնում յանկարծ կիզիչ արևել մի լուսասփիւս ճառագայթը: Եւ ես կարող եմ ասել որ Վիլսոնը թագուհու այդ աղնիւ ներկայացուցիչը խորապէս խղճահարուելով այն օր աղաշարեց, և նա թքեց տարիների հետևած լիրը, անխիզ,

քաղաքականութեան երեսին ու ոկտեց ազատական կուսակցութեան յարել, որի նպատակն է տապալել իսլամական այս ամենի աշխարհաւեր բռնապետութիւնը, համաձայնութիւնն կայացնելով Ռուսիոյ հետ, որի անդադար կրկնուող ջախջախիչ հարուածների տուկն էր որ ուժից սպառուեց, ընկաւ և իր այսօրուայ կազմակուծեալ վիճակին հասուա Արևելքի այս մեծ կարմիր գազանի երկիրը, դատապարտուած ու մահամերձ գրութեան մէջ սպասելով իր սոսկալի վախճանին:

Մենք վեց օրի չափ մնացինք Քոչաննէսումն և հիւպատուալ շարունակ տեսակցում էր Մար-Շիմոնի հետ, տեղեկութիւններ հաւաքելով յեռնական ասորիների ներկայ դրութեան ու վիճակի մասին և ծանօթանալով այդ կորդուաց անառիկ անեղ ուարերի խորշերում դարերից իվեր ամփոփուած ու կղզիացեալ քրտական վայրագ ցեղերից ամեն կողմից շրջապատուած ու պաշարուած հինաւուրց մեծ ազգի մնացորդ բեկորների հետարքրական պատմութեան, կեանքի, ստվորութեանց, նիստ ու կացի, զբաղմանց, նրանց ցաւերի և պահանջած՝ անմիջական գարմանների խնդրոցն հետ: Իբր հետեանք Գէրզըն Գէյթընի այս տեսաւկցութեան հետեանքն էր որ մի քանի տարի յետոյ Կէնտհըրարիի արքեպիսկոպոսը մի առանձին միսիա ուզարկից լեռնական ասորոց մէջ գործելու, ընծայելով Մար-Շիմոնին մի մամուլ իր ամբողջ կազմով, կաղմարարութիւն և այլ արհեստական գործիներ. սուկայն անգլիական այս միսիան հնթարկուեց սուլթանի կատաղի հակառակութեան ու հալածանքին և, տորիների մինիստրութիւնից պաշտպանութիւն չգտնելով, վերջապէս ստիպուեց փոխադրուել Ռւրմի, ուր շարունակում է իր գործունէութիւնը ի վերածնութիւն այդ ժողովուրդին:

Ականատես:

(Կը շարունակուի)

ԿԱՐԵ ՄԱՐՔՍԸ ԵՒ ՄԱՐՔՄԻԶՄԸ *)

I

Մարսի կեանքը, սոցիալ-բարաքական, հրապարակախօսական գործունէութիւնը և զրական վաստակները:

Segui il tuo corso e lascia dir le genti!

Հետեիր ճանապարհիդ, և թող մարդիկ խօսեն, ինչ ուզում են:

Դանիև,

3.

Մարքսի պասսի և ակտիւ աշխատանքները:—Նրա հրապարակախօսական գործունէութիւնը:—Նա ուռւ քննադատում է Գեղմնիայի բուրժուազիայի և կառուվարութեան, ապա դրանց և պլուեստարիատի փոխարձ յարաքերութիւնները:—Մարքս-էնգելսի քաղաքական սկզբունքի այժմէական նշանակութիւնը:—Ժողովուրդը և թագաւորը:—Մարքս-էնգելսի բանակուիւր քաղաքական բաղիկալիդմի դէմ:—Դերմ. բանուուրների խումբը և զեմօկրատական ընկերութիւնը Բրիտանում:—Մարքսի դասախոսութիւնը՝ «Պարձուաշխատանք և կառլիտալ»:—Նրա մի այլ դասախոսութիւնը՝ «Ազատ տոհմարի մասին»:

Խիստ բեղմնաւոր ընթացք է ունենում Մարքսի մի քանի տարիների կարծ ժամանակամիջոցը, որ նա անցըել է Բրիտանիում, իր մտերիմ ընկերոջ՝ էնգելսի հետ միասին: Մարքսի երկու կարգի զբաղմունքները, —որոնք թէև միմեանցից տարբերուում էին, բայց մէկը միւսին օժանդակուում էր, —քանի դընում, այնքան ծաւալուում և ինտենդիւ չափեր են ընդունում: Նա անընդհատ շարունակում է իր մամնազիտական պարագամունքները —անդուլ եռանդով ուսումնասիրում պատմութիւն, փիլիսոփայութիւն, մնաեսագիտութիւն և սոցիալիզմ: Դանքա պատմիւ (կրաւորական) աշխատանքներն էր: Սակայն միւս կողմից աճում

*) Տես «Մուրճ» № 1

և բազմակաղմանի է գարւում նրա սոցիալ-բաղաքական, հրապարակախօսական և գրական-գիտնական գործունեութիւնը: Դա էլ նրա ակտիւ (դրական) աշխատանքն էր: Երկուսը միասին—պասսիւ ու ակտիւ աշխատանքները կարլ Մարքսի—առաջ էին ընթանում անշեղ ու զուգահեռաբար: Առաջին միջացով նա ընդունում էր, պատրաստում իմեւապէս, իսկ երկրորդ միջոցով, նա արտադրում էր եւ պատրաստում; կազմակերպում մեծ խնամքով այն գասակարգի համար, որի ազատագրութեան գործին Մարքսը նուիրեց իր ամբողջ անհատական կեանքն ու հասարակական գործունեութիւնը:

Մենք արդէն ծանօթացանք նախորդ գլխում՝ Մարքսի Բրիսելում անցրած կեանքի ու գործունէութեան սկզբնական շրջանի հետ: Մարքսի, ինչպէս և էնգելսի հրապարակախօսական գործունէութիւնը տեղական օրգանի («Deutsche Brüsseler Zeitung») մէջ, նրանց կարգացած գասախօսութիւնները գերմանական բանուրական խմբի և գեմոկրատական ընկերութեան ժողովներում, վերջապէս այն անհաղին ծառայութիւնը, որ նըրանք արել են այսպէս անուանուած «Արդարների գաշնակցութեան» («Der Bund der Gerechten») համար, այդ բոլորը պատկառելի տեղ են բռնում Մարքս-էնգելսի 40-ական թուականներին ունեցած ընդհանուր գործունէութեան մէջ:

Մարքսի աշխատակցութիւնը «Deutsche Brüsseler Zeitung» օրդանում (հրատարակութեամբ մի ալբուսական էմիգրանտ սովորացի) Ալգալբերտ ֆոն Բորնշտեն (անունով), սկսած 1847 թ. սկզբներից, շուտով այն հոչակը տուաւ այդ թերթին, որ նա դարձաւ երրորդ յայտնի գեմոկրատական թերթը ամբողջ Եւրոպայում և գասուեց «Northern Star» (չարտիստների օրգանը Անգլիայում) և «Réforme» (ֆրանսիական գեմոկրատների օրգանը Փարիզում) թերթերի շարքը:

Մարքսը մի շարք յօդուածներով, յաճախ պոլիսիկական բնաւորութեամբ, քննադատում է ժամանակակից Գերմանիայի քաղաքական վիճակը, շօշափելով բուրժուազիայի եւ կառավարութեան, գրանց երկուսի և պրոլետարիատի վոխուարձ յարաբերութիւնները, ու այն ժամանակուայ յեղափոխութեան բնաւորութիւնը: Մարքսը սուր իրոնիայով ծաղրում է մի շարք սոցիալիստուտովիսանների (Ճակարլ Գրիւն, Հայնցեն և ուրիշները) իլլիւզիաները, որոնք չեն հասկանում այն պատմական անհրաժեշտութիւնը, որ «բանուոր գասակարգը պէտք է իր սեփական շահերի տեսակետից նախ ապահովէ բուրժուազիայի յաղթանակը արաօլիւտիզմի և ֆէոլալիզմի դէմ»: Միւս կողմէից Մարքսը նոյնքան սուր ու խայթող դրչով քննա-

դասում է գերմանական բուրժուազիային, որի դասակարգացին քաղաքականութիւնը կրելով յեղափոխական անունը, ստացել է արդէն իսկ բէակցիօնէր տակտիկայի բնաւորութիւն. նա (բուրժուազիան) մոյլ ու անդիմագիր էր թագաւորութեան և ինձերական տարրի հանդէպ և չլարողացաւ հարկաւոր չափերով օգտուել բանուորութեան արմատական ոյժերից:

Մարքսն ու էնգելսը յիշեալ թերթի մէջ մի փայլուն յօդուածով (12 սեպտեմբերի 1847թ.) ջրում են քաղաքական ուսուլիկաների և ուսուլիստ-սոցիալիստների այն նայիւ կարծիքն ու հաւատոր, որով նրանք բողոքում էին լիբերալ բուրժուազիայի դէմ, թէ ինչու նա էզօխատ է, չէ մտածում ժողովը բարեկեցութեան մտսին: «Ժողովուրդը, — ասում են Մարքսըն ու էնգելսը, — կամ այս լայնածաւալ ու առածգական արտայատութեան վոխարէն աւելի որոշակի ասելով՝ պրոլետարիատը, չէ հարցնում ամենավայրէ արգեհօք ժողովը բարեկեցութիւնը բուրժուայի համար էական թէ երկրորդական տեղ է բնում, արգեհօք բուրժուաները ուզում են պրոլետարիատին թուգանօթի կերակուր գարձնել թէ չէ: Պրոլետարիատը չէ հարցնում՝ ինչ են ուզում՝ բուրժուաները, այլ ինչ են պրատատը, ինչ պէտք է տնին նրանք: Նա հարցնում է՝ արգեհօք ներկայ քաղաքական գրութիւնը՝ բիւրօկրատիայի տիրապետութիւնը — կամ թէ չէ այն, ինչ լիբերալներն են ձգուում՝ բուրժուազիայի տիրապետութիւնը՝ նրան (պրոլետարիատին) աւելի շատ միջոցներ պիտի հայթնայթէ իր նպատակներին հասնելու համար: Դրա համար պրոլետարիատը միայն կարիք ունի Անգլիայի, Ֆրանսիայի և Ամերիկայի պրոլետարիատի քաղաքական գիրքը համեմատելու գերմանականի հետ, որպէսզի տեսնէ, որ բուրժուազիայի տիրապետութիւնը ոչ միայն նոր զէնքեր է տալիս պրոլետարիատի դէմ կոռուելու համար, այլև շնորհում է նրան մի լուսովվին այլ զիրք՝ օրինական կուսակցութիւն զառնալու զիրք»¹²⁾:

Որքան այժմէական նշանակութիւն ունին Մարքս-էնգելսի 40-ական թուականներին արտայայտած այս խօսքերը մեր (համառուսական) կեանքի համար: Նոյն քաղաքական յեղաշըրջումն է տեղի ունենում ներկայ Ռուսաստանում, ինչ կատարուել է այն ժամանակուայ Գերմանիայում: Ռուսաստանի զիտակից պրոլետարիատը մահացու կոիւ մղելով ինքնաւկալական-բիւրօկրատական բեժիմի դէմ, ունի եւրոպական պրոլետարիա-

12) Fr. Mehring, «Die Geschichte der deutschen Sozialdemokratie», եր. 335—336.

տից աւանդուած այն միջազգային քաղաքական պարզ դաւանանքը, որ իր պատմական երկարատև ու անհաշտ թշնամութուրժուազիայի՝ դէմ կուելու և նրան յաղթելու համար, անհրաժեշտ է ամենից առաջ, որ նա չքացնէ երկրի քաղաքական ինդիֆերենտիզմը, խորտակէ բռնակալ միավեսութեան ու կամսյական բիւրօկրատիայի կարծրացած ոյժը եւ ապահովէ բորժուազիայի դասակարգային տիրապեսութիւնը:

Մի այլ յօդուածի մէջ, գրուած նոյն թերթում, Մարքսն ու Էնգէլսը մերկացնում են ժողովրդի և թագաւորի սուր հակագրական յարաբերութիւնները, ուր ՚ի միջի այլոց ասում են. «Ժողովուրդը կազմում է թագաւորի համար քաղաքական բոլոր տարրերից ամենավտանգաւորը: Ոչ թէ այն ժողովուրդը, որի համար ֆրիգրիխ Վիլհելմը (ժամանակակից պրուսական թագաւորը. Բ. Ի.) խօսում է, որ նա մի քայլի և գրօշի համար արտասուալից աչքերով երախտապարտ է մնում. այդ կարգի ժողովուրդը բոլորովին անվանգ է, որովհետև զագոյութիւն ունի միայն թագաւորի երեակայութեան մէջ: Սակայն իսկական ժողովուրդը՝ պրոլետարները, մանր գիւղացիները և ամբոխը,—սա է, ինչպէս Հօրն (անգլիական փիլիսոփայ 16—17-րդ դարում. Բ. Ի.) ասում է՝ *puer robustus sed malitiosus—ուժեղ ու չարաձճի մանուկը*: Այս ժողովուրդը ամենից առաջ կը հարկագրէ ու կը պահանջէ նորին Մեծութիւնից մի սահմանադրութիւն՝ ընդհանուր ձայնատւութեան իրաւունքով, համախմբումների, մամուլի և այլ ազատութիւննեւ եւ երբ նա այդ բոլորն ունինայ, ապա կը գործադրէ դա, որպէսզի ըստ հսարաւորին շուտ խորտակէ թագաւորութեան և ոյժը, և յարդ ու պատիւը, և պօէզիան»¹³⁾:

Հազիւ կէս տարի անցած բառացի իրականանում է այդ մարգարէսութիւնը, այսինքն բոնկում է գերմանական յեղափոխութիւնը:

Ինչպէս նախընթաց և վերջին տողերից պարզ երեսում է, Մարքսը ժողովուրդ բառի տակ չի հասկանում ամբողջ խայտապէտ աղքարնակութիւնը, այլ նրա ամենաստորին խաւերը, այսինքն նրա հիմքը, կորիզը—իսկական պրոլետարիատը և պրոլետարացման պրոցեսին անդարձ ենթարկուած խաւերը:

Նոյնպիսի մի կարեռ բանակոիւ մզում են Մարքսն ու Էնգէլսը այն քաղաքական ըադիկալիզմի (արմատականութնան, որի յայտնի պարագլուխը համարւում էր Կարլ Հայնցեն) դէմ, որի ներկայացուցիչները մի որսէ երկրի րէակցիայի հիմնա-

¹³⁾ Ibid, Եր. 337

կան ու սկզբնական աղբյուրը համարում են այդ երկրի իշխանը, միապետը, փոխանակ ամրողջ բաղարական սխտեմը համարելու, սխտեմ, որի բէտկիցինէր բնաւորութիւնը պահում ու պահպանում է ոչ թէ անհաս միապետը, այլ ամբողջ հին հասարակական կազմը. ոչ թէ իշխանութիւնն է հասարակութեան ծագման աղբյուրը, այլ վերջինն է առաջնի ծագման աղբյուրը: Նշանակում է, եթէ հիմքը, սկզբնական աղբյուրը ենթարկւում է նոր փոփոխութիւնների, չի կարող այդ հիմքի վրայ կառուցուած որևէ հասարակական, քաղաքական կամ պետական ինստիտուցիա պահպանել իր բէտկիցինէր բնաւորութիւնը:

Քանի զնում, այնքան աւելի էր ընդարձակւում Մարքսի ընկերական շրջանը: Պատկառելի թիւ էին կազմում հրիւսել ապաստանած օտարադպի էմիգրանտներն ու տեղական յեղափոխական ոյժերը: Մարքսի օրով, նրա անմիջական ազգեցութեամբ առաջանում են երկու կարեոր և ժամանակին հմայք ունեցող ընկերութիւններ—զերմանիական բանուորների իրմանակցութիւնը և դեմոկրատական ընկերութիւնը: 1847 թ. օգոստոս ամսին հիմնում է գերմ. բանուորների ընկերութիւնը, ունենալով մոտ 100 անդամ, որոնք պատկանում էին բանուորութեան ամենաղարգացած ու յառաջազեմ մասին: Փոքր ինչ ուշ, նոյեմբեր ամսին, հիմնում է դեմոկրատական ընկերութիւնը, որ միջազգային ընաւորութիւնն էր կրում, ամփոփելով իր մէջ տեղական ու օտարերկրեայ գեմոկրատներին: Պատուաւոր նախագահ էր ընկերութեան գեներալ Մելինէն՝ Անտվերպենի ազգատարարը հոլանդացիների դէմ. նախագահն էր փաստարան Փոտրանդը՝ բելգիական ժամանակաւոր կառավարութեան անդամը: Փոխախագահներն էին՝ գերմանացիների համար Մարքսը, լեհների համար Լելեվել՝ առաջ անդամ լեհական ժամանակաւոր կառավարութեան, ֆրանսիացիների համար՝ իտալիացը, որ 1848 թ. փետրուարիան յեղափոխութիւնից յետոյ Տուլիերի նահանգապետը գարձաւ: Այդպիսով լեմոկրատական ընկերութեան առաջնակարգ ներկայացուցիչները այնպիսի մարդիկ էին, որոնք մի-մի խոշոր յեղափոխական դեր են խաղացել իրանց հայրենիքում:

Այն տնտեսագիտական դասախոսութիւններից, որ Մարքսը կարդացել է գերմանական բանուորների ժողովներում, մընացել է միայն մէկը՝ «Lohnarbeit und Kapital» («Վարձու աշխատանք և կապիտալ») վերնագրով, այն էլ ոչ իր լրիւ մասերով: Այդ փաքրիկ գրքոյնը, որ իրքի աղիտացիայի միջոց մինչեւ օրս շատ անգամ հրատարկուել է գերմանիքն և թարգմանուել մի քանի լեզուներով, նաև հայերէն, պարզ ցոյց է

տալիս, թէ ինչպիսի վարպետութեամբ է Մարքսը հասարակ բանուորներին զիւրըմբոնելի ձևով բացատրել տնտեսական խնդիրներն ու գաղափարները:

Փոքրիկ ըրոշիւրայի մէջ Մարքսը համառօտ գաղափար է տալիս տնտեսական հիմնական հասկացողութիւնների ու երեսյթների մասին: Վարձու աշխատանք, աշխատանքի վարձ, գին, ապրանք, արժէք, յաւելեալ արժէք, կապիտալ, առևտրական մըրցութիւն, աշխատազրկութիւն, ինդուստրական պահեստի գունդ և այլ գաղափարների ու երեսյթների մասին է խօսում Մարքսը:

Առօրեայ պարզ օրինակներով և մատչելի փորձերով Մարքսը բացատրում է բանուորներին, որ բանուորի աշխատանքի վարձը չէ կաղմում մի մասը նրա արտազրած ապրանքի, այլ կապիտալիստը վարձում է բանուորին, վճարելով նրան փողիր արդէն ունեցած գումարից: Մարքսը հարցնում է՝ ինչպէս պէտք է որոշել աշխատանքի գինը, և պատասխանում այնպէս, ինչպէս որոշում է իւրաքանչիւր ապրանքի գինը: Իսկ զերջինիս որոշումը հնթակայ է երրակի մըրցութեան: Նախ մըրցութիւն գնողների մէջ, որ արտայայտում է նրանց ունեցած պահանջի չափով. ապա մըրցութիւն վաճառողների մէջ, որ արտայայտում է նրանց չուկայ արտահանած ապրանքի քանակով, այսինքն նրանց առաջարկի չափով. վերջապէս մըրցութիւն զնողների և վաճառողների մէջ, որ արտայայտում է պահանջի (գնելու) և առաջարկի (վաճառելու) տատանումներով:

Ապա Մարքսն անցնում է կապիտալի հետագօտութեան: Կապիտալը հասարակական արդիւնաբերութեան մի յարաբերութիւն է, և իրաւ արդիւնաբերութեան յարաբերութիւն բիւրգերական (բուրժուական) հասարակութեան: Ապրանքների, փոխանակութեան արժէքների մի բանակ կապիտալ է կոչւում այն պատճառով, որովհետև նա որպէս մի ինքնանկախ հասարակական կարողութիւն, այսինքն որպէս հասարակութեան մի մասի կարողութիւն՝ պահպանում և ամում է կենդանի աշխատանքի ոյժի անմիջական փոխանակութեան միջոցով:

«Մի գասակարգի գոյութիւն—տառմ է Մարքսը,—որ ոչ մի բանի չի տիրում, բայց եթէ իր աշխատանքի կարողութեան, համարելում է կապիտալի անհրաժեշտ նախապայմանը: Կապիտալը չի կայանում նրանում, որ կուտակուած, առարկայացած աշխատանքը (հում նիւթեր, գործիքներ, մեքնաներ և այն թ. ի.) նոր արդիւնաբերութեան համար միջոց է ծառայում կենդանի աշխատանքին (բանուորի ոյժին, թ. ի.): Նա կայանում է նրանում, որ կենդանի աշխատանքը միջոց է ծա-

ույցում կուտակուած աշխատանքին, իր փոխանակութեան արժէքը պահպանելու և աճեցնելու համար»:¹⁴⁾

Սա մի փոքրիկ նմուշ է Կարլ Մարքսի երիտասարդական տարբիների տնտեսագիտական զրոյցներից, որ պարզ վկայում է, թէ ինչպէս «Կապիտալի» հեղինակը մատչելի լինելու արտայայտուել գիտէր նաև հասարակ բանուորների շրջանում:

Մարքսի ժամանակակից զործնական ագիտացիայից մնացել է մի ուրիշ հետաքրքրական դոկումենտ՝ մի ճառ ազատ տունտրի մասին, որ նա արտասանել է 1849 թ. յունուարի 9-ին Բրիտանիայում, գեծովկրատների ընկերութեան մէջ: Այդ նոյն ձառը պէտք է արտասանէր Մարքսը միջազգային անտեսագէտաների (1847 թ. սեպտեմբերին Բրիտանիա) համագումարում, որ սակայն չի յաջուղւում նրան:

Մարքսի գիրքը՝ ազատ առևտորի հարցի նկատմամբ, անմիջապէս բղխում է նրա՝ բուրժուազիայի և սլունտարիատի դասակարգային կոռու սկզբունքային հասկացողութիւնից ու ովիրքից. մի գիրք, որ նոյն չափով արժէք ունէր և էնդելսի համար: Յեղափոխական տեսակէտից Մարքսն ու էնդելսը նոյնքան էին համաձայն անպլիական ազատ առևտորի հետ, որքոն նրանք համաձայն էին գերմանական պաշտպանողական մաքսի (Schutzzoll) հետ: Մի երկրի թոյլ արդիւնագործութիւնը, ինչպատրիան (ինչպէս այն ժամանակ Գերմանիան ունէր) կարիք ունի սկզբներում պաշտպանողական մաքսի, որպէսզի նոյն երկրի բուրժուազիան զարգանայ ու ամրապնդու: Իր կապիտալիստական սահմանում, որպէսզի նա, այնունետեւ, ուժեղանայ իր սոցիալական ու քաղաքական զիրքի մէջ այնքան, որ կարողանայ միապետական-իշնկերական բէժիմը խորտակել և տեղի տալ բուրժուական դասակարգային տիրապետութեան:

Սակայն ընդհանուր առմամբ վերցրած պաշտպանողական մաքսի սիստեմը ունի պահպանողական, միջգեռ ազատ առևտորի սիստեմը՝ յառաջադիմական-նուաճողական բնաւորութիւն: Վերջին սիստեմը արտացնում է տնտեսական զարգացման թափը, աւելի է սրում բուրժուազիայի և պրոլետարիատի դասակարգային յարաբերութիւնը և զրանով փութացնում սոցիալական յեղափոխութեան գալուստը: Հենց այդ յեղափոխական տեսակէտից է, ասում ենք, որ Մարքսն ու էնդելսը ողջունել են անդիական հացանատիկների օրէնքի վերացումը և ազատ առևտորի մուտքը: Ապա թէ ոչ ինքը՝ բանուոր դասակարգը, մի առանձին տնտեսական շահ չունի նոյն իոկ ազատ

14) Տես. K. Marx, «Lohnarbeit und Kapital» եր. 28.

տուեարից: Մարքսը ցոյց է տալիս, որ անգլիական ազատ սիստեմի լիբերալ ներկայացուցիչները ցանկանում էին հայի դինը ձգել, որպէսզի դրանով իշխցնեն նաև բանորի վարձը: Ոչ թէ վարձը կը բարձրանայ, այլ կապիտալի շահը (պրոֆիտ), և իրաւ այնքան, որքան կը նկնէ կալուածային հասոյթը (Grundrente): Բոտ Մարքսի, կապատակիստական հասարակութեան մէջ ազատ առեւուրը ուժինչ չէ, բայց եթէ կապիտալի ազատութիւն: Ուրիշն ոչ թէ ազատ առեւուրը շօշափելի օգուաներ է տալիս բանուոր զասակարգին, այլ անինայ ենթարկում է նրան կապիտալիստական արդիւնաբերութեան եղանակի բոլոր նետեանքներին: Մակայն այդ ամեններին՝ պատճառ չէ, որ Մարքսը սկզբունքով պաշտպանէր պաշտպանողական մաքսը: Ճիշտ այնպէս, ինչպէս կմնատիտուցիօնալիզմ (սահմանազրականութեան) գէմ կռուել ամեններն չի նշանակում արսովիւտիզմի (միանեծանութեան) բարեկամ լինել:

«Անգլիական բանուորները—առում է Մարքսը—ցոյց են տուել ազատ առեւորի կողմանակիցներին, որ իրանք շատ լաւ են հասկանում գործարանատէրերի խաղերն ու ստախօսութիւնները: Եւ եթէ նրանք (բանուորները) այնուամենայնիւ միացել են լիբերալների հետ, ապա այդ միայն այն պատճառվ, որպէսզի դրանով խորտակել կարողանային ֆէոդալիզմի վերջին հետքերը և գործ ունենային միայն մի հատիկ թշնամու (բուրժուազիայի): Հետո: Բանուորները չեն սխարուել իրանց հաշուի մէջ, որովհետև հայանատիկների օրէնքների վերացումից յետոյ նրանց յաջողուել է անմիջապէս իրականացնել տասը ժամեայ աշխատանքի օրինադիմը (այսպէս կոչուած՝ Zehnstundenbill), որի համար բանուորները երեսուն տարի շարունակ կռուել են»:¹⁵⁾

Մարքս-էնգելսի այդ տեսակէտը ամենայն ճշտութեամբ պահպանուել է միջազգային սոցիալ-դեմոկրատիայի ծրագրում: Պաշտպանողական մաքսի համար՝ ազրարական արդիւնքների նկատմամբ, սոցիալ-դեմոկրատիան ոչ միայն ձայն չէ տալիս պարլամենտում, այլև իր հակառակազմի աշխատանքի օրինադիմը (այսպէս կոչուած՝ Zehnstundenbill), որի համար բանուորները երեսուն տարի շարունակ կռուել են»:

¹⁵⁾ K. Marx, «Rede über die Frage des Freihandels» եր. 8. (առա «Das Elend der Philosophie» գրքի II յաւելուած, եր. 176).

4.

Բրիւսելը՝ կոմունիստական շարժման կենտրոն։ — Մարքս-էնգելսի կենդբունաձիզ ոյժն ու աղջեցութիւնը։ — Մարքս-էնգելսի անխնայ կրիտիկան պրոլետարիատի իլիւպիօնիստ-ուստափիստ ներկայացուցիչների դէմ (օրինակ Վայտլինգ, Քրիգեն և ուրիշները)։ — Մարքս-էնգելսի յարաբերութիւնը «Արդարների գահնակցութեան» հետ։ — Վերջինիս կրկնակի համազումարները և Մարքս-էնգելսի միջոցով նրա վերածումը «Կոմունիստական գահնակութեան»։

Ամբողջ երկք տարրուայ ընթացքում՝ Մարքսը Բրիւսել եղած ժամանակ, բելգիական մայրաքաղաքը դարձել էր կոմունիստական շարժման մի եռուն կենտրոն։ Մարքսն ու էնգելսը կենդանի յարաբերութեան մէջ էին անգլիական չարտիզմի և ֆրանսիական սոցիալիզմի յեղափոխական տարրերի հետ։ Նրանք նամակագրութիւն ունէին մանաւանդ իւլիս Հարնայի «Northern Star» (չարտիստների օրգանի) խմբագրի և Ֆերգինանդ Ֆլոկոնի «Reform»-ի (ֆրանս. սոցիալիստների օրգանի) խմբագրի հետ։ Դեռ աւելի կարևոր էր նրանց նամակագրութիւնը «Արդարների գահնակցութեան» («Der Bund der Gerechten», Լոնդոնում) և էվերբեկի հետ, որ զեկավարում էր գահնակցութեան Փարլիզի համայնքը։

Մարքսն ու էնգելսը անխնիլի կապիր էին պահպանում և իրանց հայրենիքի՝ Գերմանիայի հետ, մանաւանդ իրանց ծննդավայր Հոննուսեան երկրի հետ։ Թիօլոնում ունիին նրանք բաւական թուով կողմնակիցներ։ Շուտով Լոնդոնից գալիս է Մարքսը էնգելսի մօա Վայտլինգը — «բանուորական սոցիալիզմի» նշանաւոր ներկայացուցիչը։ Շվեյցարիայից՝ Սկանդինավիան Զայլերը, վեստֆալինից՝ Եօգէֆ Վայդեմայերը։ Ամենից մերձաւորը, սակայն, որ տճապարեց Բրիւսել, դա վերհերժ Վոլֆս էր—պրոլետարիատի «Խիզախ, ազնիւ ու հաւատարիմ նախամարնչողը», որին Մարքսը նուիրել է իր «Կապիտալի» առաջին հատորը։

Սյավիսով հետզհետէ Մարքսն ու էնգելսը, մանաւանդ առաջինը, դառնում են այն կենտրոնական սուանցը, որոնց շուրջը խմբւում են կոմունիստական շարժման նուիրուած բոլոր յեղափոխական-դեմոկրատական անհատներն ու օրգանները։ Մարքսի բնակավայրը դարձել էր այդ բոլորի համար հմայող ու ձկողական կենտրոն։ Պրուսական կառավարութեան բոլոր ջանքերը՝ Մարքսին Բրիւսելից գուրս վրատելու համար, անհետեանը են անցնում, սակայն միւս կողմից առիթ են տալիս

Մարքսին դուրս գալու պլուստվերմանական հպատակութիւնից։ Մարքսի, ինչպէս և ինգելսի, զիտնական-կարինետային զբաղմունքներին սերտ յարակցած առաջ էին ընթանում նրանց գործնական ագիտացիան, կոմունիստական պրոպագանզը, հրապարակախօսական կենդանի գործունէութիւնը, մանաւանդ նշարանց տաք բանակոփելը իրանց բազմաթիւ քաղաքական հակառակորդների դէմ։ Շատ անգամ նրանց գործնական այդ բազմակողմանի ու բարդ աշխատանքը խանգարում էր նրանց մասնագիտական ինտենդին զբաղմունքներին։ Բայց և այնպէս հայրենազուրկ, քշուած ու հալածուած տիտանները անձնութաց չափով նուիրած էին գործնականին ու տեսականին միաժամանակ, չէին խորշում ոչ մէկից և ոչ միւսից, զիտակցելով միշտ, որ պրոլետարիատի վախճանական էմանսիպացիան (ազատագրութիւնը), որին ցման նուիրուած էին նրանք, պիտի պայմանաւորուած լինի տեսական հիմնաւորուած ու անխաղտ ուսմունքով եւ գործնական անլուկ ջանքերով, դասակարգային կոտուվ։

Մարքսն ու ինգելսը որքան անկեղծ ու ազնիւ բարեկամներ էին պրոլետարիատի ազատագրութեան նուիրուած և ընդմիշտ հաւատարիմ նախամարտիկներին, նոյնքան անհաշտ թշնամիներ էին նրանք պրոլետարիատի իլլիւզիօնիստ եւ ուստոպիստ, ասել է՝ նրա պատմական ազատազլութիւնը չհասկացող ներկայացուցիչներին։ Նրանք անողոք ու անխնայ կրիտիկացի էին հնթարկուած ամեն մի բնազանցական-մշուշապատ հասկացողութիւն և բէալական հիմքերից զուրկ ձեռնարկ, որոնք գրամագծօրէն հակասում էին նորազոյն պրոլետարիատի ազատագրութեան պատմական-գիտական հասկացողութեան և դասակարգային կոռու գաղափարին։ Այդ էր պատճառը, որ ժամանակակից դեմոկրատներից և կոմունիստներից շատերը, — մանաւանդ նրանք, որոնք այլ շրջանում ու դպրոցում են դարբնել իրանց աշխարհահայեցքը, — ոչ միայն չէին կարող Մարքս-ինգելսի մերձաւոր ընկերները դառնալ, այլև անկարող էին գիւրութեամբ մարսել նրանց թունաւոր ու ներզործիչ կրիտիկան։ Իլլիւզիօնիստ-ուստոպիստ սոցիալիստները դժգոհ էին գիտական սոցիալիզմի հանձարեղ հիմնադիրների սուր քննադատութիւնից, կարծելով որ դա իսանգարում ու վնասում է սոցիալիստական շարժման յաջող ընթացքին։ Մինչդեռ Մարքսն ու ինգելսը համոզուած էին, որ առանց պարզ ու հիմնաւորուած նպատակի, — մի բան, որ պիտի ամրապնդուի կրիտիկայի և անալիզների բովի մէջ, — անկարելի է անխաղտ ու յաւ-

րատե հիմքէրի վրայ դնել պրոլետարիատի ազատագրութեան գործը:

Այդպիսի ուսուպիստ էր Պրուդոնը, որի հետ Մարքսը իր հոչակաւոր բանակախն ուսնեցաւ, այդպիսի տաղանգաւոր և ուսուպիստ-կոմունիստ էր յայտնի Վայտլինգը, որ իր յարաքերութիւնները խզեց Բրիւսելի կոմունիստների հետ և անցաւ Ամերիկա, այդպիսի համոզմունքի կուլ գնացած ֆանտաստ էր, վերջապէս, Քրիստին, որի ամբողջ կոմունիզմը իսարսիսուած էր սիրոյ զգացմունքների վրայ: Վերջիններիս մասին կոմունիստները թոռոցիկ են բաց թողնում Մարքս-Էնգելսի հեղինակութեամբ, ուր նրանք սուր քննազատում են հասացած ազանդաւորների ուսուպիսական հասկացողութիւնը:

Սակայն կոմունիստները Մարքս-Էնգելսի բերանով քննազատում են նաև «Արդարների դաշնակցութեան» սուր քննազատները—

«Արդարների դաշնակցութեան» սուր քննազատները— Մարքսն ու Էնգելսը—դարձան միենոյն ժամանակ «Կոմունիստների դաշնակցութեան» («Der Kommunistenbund») հանձարեղ հիմնադիրները:

«Արդարների դաշնակցութիւնը» երգուեալ էսիդրանտ յեղափոխականների (սկզբներում բացառապէս գերմանացիներ) մի ընկերութիւն էր, հիմնուած Փարիզում: Նրա անդամները մեծ մասամբ ձեռնարհեստաւոր բանուորներ էին, մանաւանդ գերձակներ: Ընկերութեան յայտնի անդամները, որոնց անունները պահպանել է սոցիալիստական գրականութիւնը, եղել են Հայնրիխ Բաուէր, Շապիր, Եոզէֆ Մոլլ, Կարլ Պֆենդէր և Գէորգ Էկլարիուս: Վերջինս աւելի, քան միւսները, յայտնի էր իր ըմբռնողութեան խորութեամբ և բկրթական մակերեսոյթով: Նա աւելի պարզ ու անհամեմատ մարքսիստական հասկացողութիւն ունէր խոշոր կապիտալի մուտքի, յաղթանակի և նուաճութիւնների նկատմամբ՝ մանր կապիտալի յետ նահանջման ու ոչնչացման գնով, քան գրականական այնքան փայլուն տաղանդ ունեցող Վայտլինգը, որի սոցիալիստական հասկացողութիւնը երբէք հետու չանցաւ ուսուպիզմի սահմաններից:

«Արդարների դաշնակցութիւնը» կորցրեց իր զուտ գերմանական բնոյթը և ստացաւ միջազգային գոնսաւորում, երբ նրա կենտրոնը Փարիզից տեղափոխուեց Լոնդոն (1839 թ.) և իր երկրորդական ճիւղերը հիմնեց Բելգիայում, Շվեյցարիայում, Գերմանիայում: Դաշնակցութեան սեկցիաներին մասնակցում էին գերմանացիներ, չվեցարացիներ, սկանդինավացիներ, հոլլանդացիք, ունգարացիներ, չեխեր, հարաւային սլաւոններ, ռուսներ և անգլիացիներ:

Այն ընհանուր ոգին, որ բովանդակութիւն և ուղղութիւն էր տալիս «Արգարների դաշնակցութեան» գործունէութեան, կրում էր զուտ ֆրանսիական բանուորական կոմունիզմի և գերմանական վիլխոսփայութրան գրօշմը: Սակայն այնքան, որ քան աճում էր դաշնակցութիւնը քանակով, ուժեղանում իր աղդեցութեամբ, այնքան էլ նրա զեկավար ոյժերին բաւարարութիւն չէին տալիս ոչ ֆրանս. բանուորական կոմունիզմը և ոչ էլ Վայտլինգի աղանդաւորական կոմունիզմը: Եւ այնքան, որքան աճում ու տարածում էին Մարքս-Էնգելսի բանաւոր ու պրաւոր պրոպագանդայի հոչակն ու աղդեցութիւնը ժամանակակից սոցիալիստական և դեմոկրատական շարժումների վրայ, այնքան էլ «Արգարների դաշնակցութեան» կենտրոնական ոյժերը խիստ կարիք էին զգում ամրապնդելու իրանց ընկերութեան գործունէութեան տեսական հիմքերը:

1847 թ., երբ Մարքսը Բրիւսել, իսկ էնգելսը Փարիզ էր գտնւում, դաշնակցութեան առաջնակարգ անդամներից մէկը՝ ժամագործ Մոլլը, առաջարկում է Մարքս-Էնգելսին իր ընկերների անունից, մասնելու դաշնակցութեան մէջ, հաւաստիացնելով նրանց, որ դաշնակցութիւնը մտադիր է ձգել իր կոնսպիրատիւ ընառուորութիւնը և ընդունել նոր թէօրէտիկական (տեսական) տեսակէտներ: 1847 թ. ամառը տեղի է ունենում՝ դաշնակցութեան համագումարը Լոնդոնում, որին մասնակցում է էնգելսը, որպէս Փարիզի անդամների ներկայացուցիչ: Այդ համագումարում ոչ միայն փոխւում է «Արգարների դաշնակցութեան» անունը և կրում «Կոմունիստների դաշնակցութիւն», այլ կատարելապէս փոփոխութեան է ենթարկուում կազմակերպութեան էութիւնը—երդուեալների ընկերութիւնը դառնում է պրոպագանդայի ընկերութիւն: Կոմունիստների վերանորոգուած բունգը չըացնում է հին դաշնակցութեան բոլոր կոնսպիրատիւ տեսնդինցները: Ծրագրի մէջ, առաջին յօդուածում՝ «Կոմունիստների դաշնակցութեան նպատակը» վերնազրով, գրուած են ՚ի միջի այլոց հետեւեալ տողերը. «Բուրժուազիայի կործանումը, պրոլետարիատի տիրապետութիւնը, դասակարգերի հակառակութեան վրայ խարսխուած հին բիւրգերական հասարակութեան վերացումը և նոր հասարակական կազմի հիմնագրութիւնը՝ առանց դասակարգի և մասնաւոր սեփականութեան»: ¹⁶⁾

1847 թ. նոյեմբեր և գեկտեմբեր ամիսներին կայանում է գարձիալ Լոնդոնում կումունիստների երկրորդ կոնցրեսը, որին

¹⁶⁾ Fr. Mehring, «Die Geschichte der deutschen Sozialdemokratie», I հատ. կը. 352

մասնակցում է ոչ միայն էնգելսը, այլև Մարքսը։ Այդ կոնգրեսում արդէն կատարելապէս յեղաշրջևում է դաշնակցութեան հին կազմն ու ծրագիրը։ Երկրորդ կոնգրեսի գլխաւոր նպատակը կազմում էր բռնդի տեսական մտքերի ու գաղափարների հիմնաւորումը։ Մարքսն ու էնգելսը ներկայացնում են մի մասնիքեստի նախագիծ, որ ամբողջ տասնօրեայ նիստերում արծարծում և հիմնապէս լուսաբանում է կոնգրեսին մասնակցող բոլոր ներկայացուցիչների (գերմանացիներ, ֆրանսացիներ, անգլիացիներ, բելգիացիներ, շվեյցարացիներ) կողմից, վերջնականապէս ընդունում նախագիծը և յանձնաբարաւում Մարքս-էնգելսին հեղինակելու «Բունդի կոմունիստական մասնիքեստը»։ «Արդարների դաշնակցութեան» սենտիմենտալ նշանաբանը՝ «Բոլոր մարդիկ եղբայրներ են» փոխարինում է հատկեալ մարտական կոչով։ «Պրոլետարների բոլոր երիշների, միացէք»։ 1848 թ., վետրուար ամսին լոյս է տեսնում «Կոմունիստական Մանիքեստը» և անմիջապէս թարգմանուում նաև անգլիերէն, ֆրանսերէն, գանգիերէն և լիներէն։ Դրանով պատուաստում է նորագոյն զիտական կոմունիզմի (կարգասոցիալիզմի) ուժակելը։

5.

«Կոմունիստական Մանիքեստի» պատմական ժագումը։ — Նրա տեսական ոյժի հիմնական գրաւականը։ — Մանիքեստի էսական մոքերն ու առաջնորդող զաղափարները։ — Դասակարգային կուլի գաղափարը, պատմական մատերիալիզմի սկզբունքը։ — Բուրժուազիայի ծագումը, նրա յեղափոխական գերը։ — Բուրժուազիան և պրոլետարիատը, վերջինն ու միջին դասի զանազան խաւերը։ — Պրոլետարիատի յաղթանակը։ — Կոմունիստները և բանուորական կուսակցութիւնը, պրոլետարիատը։ — Բուրժուական և կոմունիստական հասարակութիւնը։ — Բուրժուական պարսւանքները կոմունիստների դէմ։ — Կոմ. Մանիքեստի համաշխարհային հռչակը։

1847 թուականից սկսած Մարքսն ու էնգելսը զեկավարողի գերում գրական մասնակցութիւն են ունենում եւրոպական ամբողջ կոմունիստական շարժման, գլուխ կանգնելով առաջնակարգ քաղաքներում կազմակերպուած համայնքների։ «Կոմունիստական դաշնակցութեան» հաւատոյ հանգանակը դառնում է Մարքս-էնգելսի հեղինակած «Կոմունիստական Մանիքեստը», որ այնուհետև մնում է ընդ միշտ անխախտ հիմնաբարը գիտական սոցիալիզմի։

Փոքր ինչ ի մօտոյ ծանօթանանք այդ փոքրածաւալ (ընդումենը 32 երես), քայց մեծիմաստ ու հռչակաւոր աշխատութեան հետ։

«Կոմունիստական Մանիքեստը» ամփոփում է իր մէջ կլասիքական ծեւակերպումներով այն բոլոր հետևանքներն ու եղակացութիւնները, որոնց Մարքսն ու Էնգելսը վաստակել են իրանց գործնական կոուի և տեսական ուսումնասիրութիւնների լութացքում:

Մարքս-Էնգելսի «Մանիքեստը» մի պատմական յիշատակարան, վավերագիր է առաջին կարգի. պատմական նոյն խոկ այն մտքով, որ նա անհրաժեշտորէն ծագել կարող էր միայն այն պատմական մումբնուում. երբ նա իրապէս լոյս է տեսել: Եթէ նա, այնուամենայնիւ, աւելի քան 50 տարի շարունակ պահպանել է իր թարմութիւնը, մաշելով այնքան շատ ծրագրների ու սիստեմների մի երկարամեայ շրջան. Եթէ նա, ասում ենք, ահազնասուկ յեղաշրջումների դարեշրջանում գեռաւելի ու աւելի համասիխու արժէք ու նշանակութիւն է ստանում երկրագնդի մարտնչող պրոլետարիատի շարքերում, ապա այդ համաշխարհային յաջողութիւնը միայն և բացառապէս պարտական է այն խորաթափանց հայեցքին, որով «Մանիքեստի» հեղինակները ծշտութեամբ ըմբռնել ու հանաչել են նորագոյն բիւրգերական (բուրժուական) հասարակութեան զարգացման պրոցեսը և խորին հմտութեամբ արայայտել ու բացատրել այդ պրոցեսը գեռ այն ժամանակ, երբ այդ հասարակութիւնը դեռ նոր էր ոտք զրել իր գոյութեան պատմական շէմբի վրայ:

Որո՞նք են մանիքեստի հիմնական մոռքերն ու առաջնորդող գաղափարները:

Մարդկային հասարակութեան ամբողջ պատմութիւնը եղել է կասակարգային կոխմների պատմութիւն: Փամանակակից պատմութիւնը կազմում է բուրժուազիայի եւ պրոլետարիատի դասակարգային կոուի պատմութիւնը: Դասակարգային համախմբումներն ու կազմաւորումը համարւում են արդիւնք տնտեսական որոշ արդիւնաբերութեան ու բաշխման (բաժանման) յարաբերութիւնների, որոնցով պայմանաւորւում են նաև դաստկարգային տիրապետութեան յարաբերութիւնները: Տընտեսական արդիւնաբերութիւնը և նրանից անհրաժեշտորէն հետևող հասարակական կեանքի կազմաւորումը ամեն մի պատմական դարեշրջանի՝ կազմում է նոյն դարեշրջանի քաղաքական և ինտելեկտուալ (ժուառական) պատմութեան հիմնաքարը: Դասակարգային կոիւները եղել են շահագործուող ու շահագործող ու տիրապետող դասակարգերի կոիւներ՝ մարդկային հասարակութեան զարգացման զանազան առարկանների վրայ: Մակայն նոյն այդ կոիւներ է արդիւնք

ըիւրգերական հասարակութեան օրով այն աստիճանին, երբ շահագործող ու ճընշուած զասակարգը՝ պրոլետարիատը չի կարող այլևս շահագործող ու ճնշող զասակարգից՝ բուրժուազիայից իրան ազատազրել, առանց միաժամանակ ազատելու ընդումիշտ ամբողջ հասարակութիւնը՝ շահագործութիւնից, ճըն շումներից եւ դասակարգային կոիներից:

Մանիքեստի առաջին հատուածի մէջ՝ բուրժուազիա և պրոլետարիատ վերնագրով, Մարքոն ու Էնգելսը համառուսաբար ուրուագծում են բուրժուազիայի պատմական ծագումը, որպէս արգիւնք պատմական զարգացման երկար ընթացքի՝ օդակուած մի շարք արդիւնաբերական և հաղորդակցական յեղաշրջումներով:

«Բուրժուազիայի զարգացման աստիճաններից իւրաքանչիւրը—ասում է Մանիքեստը—առաջնորդուիլ է քաղաքական համապատասխան յառաջադիմութեամբ. Նա եղել է մի ճնշուած դաս աւատական (Փէօդալական) տէրերի տիրապետութեան ներբոյ, ապա զինուած և ինք զինքը կառավարող ասոցիացիա (խմբակցութիւն) կոմունայի մէջ. այստեղ ինքնանկախ քաղաքային հանրապետութիւն, այստեղ՝ երրորդ հարկատու դասը միապետութեան մէջ, այնուհետև մանուֆակտուրայի ժամանակ հակառկշիռ տարրը ազնուականութեան դէմ՝ տոհմային կամ աբսոլիւտիստ միապետութեան մէջ. վերջապէս մեծ ինդուստրիայի և համաշխարհային վաճառանոցի շրջանում՝ նորագոյն իրաւական-ներկայացուցչական պետութեան մէջ, բուրժուազիան մարտընչել և բացառապէս իրան է գրաւել քաղաքական տիրապետութիւնը. Արդի պետական ոյժը լոկ մի յանձնաժողով է (յանձնաբարուած մարմին), որ հոգում ու վարում է ամբողջ բուրժուած դասակարգի ընդհանուր գործերը»:¹⁷⁾:

«Կոմ. Մանիքեստը» սուր շեշտումներով ուրուագծում է այն վերին աստիճանի յեղափոխական դերը, որ խաղացել է բուրժուազիան իր պատմական կեանքում: Նա իր քաղաքական տիրապետութեամբ անխնայ տրորել ու ջախջախել է առենքան, ինչ Փէօդալական, նահապետական, իդիլիական բնաւորութիւն ունի: Հին ու միջին զարերի կրօնական ու քաղաքական իլլիւզիաներով քօղարկուած շահագործութեան փոխարէն, բուրժուազիան նոր զարերում հրամարակ է հանում իր քացէիրաց, անամօթ, անմիջական և արինարամ՝ շահագործութիւնը: Բժիշկին թէ իրաւաբանին, կղերին թէ բանաստեղծին, գիտութեան մարդուն և այն բուրժուազիան դարձրել է

17) K. Marx und Fr. Engels, «Das Kommunistische Manifest» եր. 11.

անխափիր իր վարձկան աշխատաւորները։ Բուրժուազիան իր հարիւր տարուայ դասակարգային տիրապետութեան ընթացքամ տւելի մեծ ու մասսայական, կոլոսալ չափերով է ձեռք բերել արդիւսարերութնան ոյժեր, քան հին ու միջին դարերի բոլոր սերունդները միասին վերցրած։ Բնութեան ոյժերի, մեքենաների նուածումները, քիմիայի զորմագրութիւնը ինդուստրիայի և հողագործութեան վրայ, շոգենաւը, երկաթուղիները, էլեկտրական հեռավթելերը, ամրող աշխարհամտաերի բերքի և գետերի նաւագնաց գարձնելը, — նախկին որ զարում կարելի էր երազել, որ այսքան արտագրողական (productiv) ոյժեր կան թագնուած հասարակական աշխատանքի ծոցում։

Սակայն արդի բիւրգերական հասարակութիւնը, որ ստեղծագործել է արդիւնաբերութեան և հաղորդակցութեան այնպիսի հզօր միջոցներ, նման է այն կախարգապետին, որ անկարող է այլնու իշխել այն ստորերկրեայ վիթխարի ոյժերի վրայ, որոնց նա կեանքի է կոչել։ Այն զէնքերը, ոռոնցով բուրժուազիան կործանել է ֆէոլալիզմի հոյակապ չէնիրը, այժմ՝ ուղղուել են հէնց իրա՞ բուրժուազիայի դէմ։ Սակայն բուրժուազիան ոչ միայն կոել-կոփել է այն զէնքերը, որոնք նրան մահ են սպառնում, այլև արտագրել է այն մարդկանց, որոնք պիտի կրեն այդ զէնքերը — գրանք են նորագոյն բանուորները, պրոլետարները, որոնք միայն այնքան են ավորում, որքան նրանք աշխատանք են զանում, և անքան աշխատանք են զանում՝ որքան իրանց աշխատանքը անեցնում է կապիտալը։

Այնուհետև նոյն հատուածում Մանիֆեստը ամփոփ գծերով նկարագրում է պրոլետարիատի ծագումը, ինչպէս յետոյ նոյնը ընդարձակօրէն հետազօտել են Մարքս-Էնգելսը իրանց աշխատութիւնների մէջ։

Այն բոլոր դասակարգերը, որոնք կանգնած են այսօր բուրժուազիայի դէմ յանդիման, գրանցից միայն պրոլետարիատըն է իսկական ու իրական յեղափոխական դասակարգը։ Մինչդեռ միւս դասակարգերը այլասերւում են և կործանւում մեծ ինդուստրիայի յաղթական նուածումների ազգեցութեան տակ, ինքը՝ պրոլետարիատը, նոյն ինդուստրիայի անմիջական և հարազատ արդիւնքն է, ծնունդն է։ Մանք արդիւնագործը, մանք առեւրականը, արհեստաւորն ու գիւղացին — գրանք բոլորը կուռւմ են բուրժուազիայի դէմ, որպէսզի իրանց գոյութիւնը, իբրև միջին դասի խաւեր, պահպանեն խորտակումից։ Նըշանակում է նրանք յեղափոխական չեն, այլ յետազիմական (բէակցիօններ), որովհետև նրանք աշխատում են յետ դարձնել պատմական անիւը։ Իսկ մուրացիլ պրոլետարիատը

(Lumpenpro'etariat) — հին հասարակութեան ամենաստորին խաւերի այդ բացասական փթութիւնը — կարող է պրոլետարական յեղափոխութեան ժամանակ երբեմն առաջ նետուել շարժման մէջ, սակայն նա, ըստ իր ամբողջ կենցազական վիճակի, տւելի շուտ պատրաստակամ կը լինի յետադիմական ինտրիգաներին գոհուելու, իրան ծախելու:

Մինչև այժմ եղած ըոլոր շարժումները (յեղափոխական) ծագել են փոքրամասնութիւնից (մինօրիտէտ) կամ յօգուտ փոքրամասնութեան շահների: Պրոլետարական շարժումը, ընդհակառակը, կազմում է ահազին մեծամասնութեան (մայօրիտէտ) ինքնուրոյն շարժումը յօգուտ ահազին մեծամասնութեան շահների: Պրոլետարիատը, ժամանակակից հասարակութեան ամենաստորին խաւը, չի կարող ինքն իրան բարձրացնել, առանց բոլոր խաւերի — ամբողջ պաշտօնական հասարակութեան — վերնաշչները օդը ցնդեցնելու: Պրոլետարիատի գասակարգային կոիւը բուրժուազիայի դէմ ամենից առաջ ազգային կոիւ է, ազգային ոչ ըստ իր բովանդակութեան, այլ ըստ իր ծերի: Ամեն մի երկրի (և ամեն մի ժողովրդի) պրոլետարիատ պէտք է բնականաբար նախ իր հաշիները վերջացնէ իր սեփական բարժուազիայի հետ: Պրոլետարիատի զարգացումը առաւել կամ պակաս չափով մի քօղարկուած քաղաքացիական կոիւ է գոյութիւն ունեցող հասարակութեան ծոցում մինչ այն առտիմանը, երբ բաց է ի բաց կրօնկուէ յեղափոխութիւնը և պրոլետարիատը՝ բուրժուազիայի ուժդին խորակուածով, կը հիմնէ իր տիրապետութիւնը: Բուրժուազիայի անդարձ անկումը նոյնքան է անխուսափելի, որքան անխուսափելի է պրոլետարիատի յաղթութիւնը:

Սրանը են «Կոմունիստական Մանիֆեստի» առաջին հուտուածի հիմնական գաղափարները:

Երկրորդ հատուածի մէջ «Պրոլետարներ եւ Կոմունիստներ» վերնագրով, Մանիֆեստը որոշում է կումունիստների ճշգրիտ դիրքն ու վերաբերմունքը գէպի առհասարակ պրոլետարները:

«Կոմունիստները — առում է նա — չեն կազմում մի առանձին կուսակցութիւն՝ միւս բանսուրական կուսակցութիւնների հանդէպ: Նրանք չունին ամբողջ պրոլետարիատի շահներից տարբերուող առանձին շահներ: Նրանք չեն առաջադրում առանձին կարգի պրինցիպներ և ըստ դրանց ձեակերպում (modelո) պրոլետարական շարժումը: Կոմունիստները տարբերուում են պրոլետարական միւս կուսակցութիւններից միայն նրանով, որ նրանք մի կողմից զանազան ազգային կոիւների ժամանակ

բարձր են պահում համայն պլութետարիատի ընդհանուր շահեր՝ անկախ ազգութիւններից, և կռւում յանուն նրանց. իսկ միւս կողմից կոմունիստները պաշտպանում են ընդհանուր շարժման շահերը զարգացման այն զանազան աստիճանների վրայ, որ կտրել անցել է բուրժուազիայի և պլութետարիատի միջև եղած կռիւը: Նշանակում է կոմունիստները կազմում են բոլոր երկրների բանուրական կուսակցութիւնների՝ գործնաշահնապէս ամենավճռական և առաջավար մասը: Նրանք պրոլետարական մնացած մասսայից բարձր են կանգնած իրանց տեսական ըմբռնողութեամբ՝ այն պայմանների, որ ունի պրոլետարական շարժումը»:¹⁸⁾

Հստ մանիքեստի, նոյնն է կոմունիստների և միւս բոլոր բանուրական կուսակցութիւնների մերձաւոր նպատակը—պրոլետարիատին դատակարգ դարձնելը, բուրժուազիայի տիրապետութեան խորտակումը, բաղաքական ոյժի նուաճումը պրոլետարիատի միջոցով:

Մանիքեստը ցոյց է տալիս մատերիալիստական տեսակետից, որ կոմունիստների տեսական մտքերը երբէք չեն հիմնուած այնպիսի իդէանների կամ պրինցիպների վրայ, որոնք գտնուել են աշխարհի այս կամ այն վերանորոգչից, այլ որ այդ մտքերը ծագել ու աճել են աւելի շուտ գոյութիւն ունեցող դասակարգերի կոտրի իրական յարաբերութիւններից:

Կոմունիստների՝ մասնաւոր սեփականութիւնը վերացնելու ձգտումների դէմ առարկում են բուրժուական իդէօլոգները, որ իբր գրանով վերանում է առհասարակ անձնական ազատութեան, գործնէութեան և անկախութեան հիմքը:

Բայց չէ որ ներկայ հասարակութեան մէջ—ասում են կոմունիստները այդ առարկութեան դէմ—մասնաւոր սեփականութիւնը փաստապէս վերացուած է $\frac{9}{10}$ մասի համար. հէնց մասնաւոր սեփականութիւնը գոյութիւն ունի նրանով, որ նա վերացուած է $\frac{9}{10}$ -ական մասի համար: Սեփականութիւնը, իր այսօրուայ կազմով, ներկայացնում է հակառակ վրութիւնը կապիտալի և վարձու աշխատանքի: Կապիտալը անձնական ոյժու կարողութիւն չէ այժմ, այլ հասարակական: Նա մի հանրական արդիւնք է և կարող է միայն հասարակութեան շատ, անգամ բոլոր անդամների համայնական գործնէութեամբ շարժման մէջ զնուել: Եթէ այդ մասնաւոր սեփականութիւնը դառնայ հասարակութեան բոլոր անդամների պատկանելիութիւնը, ապա գրանով ոչ թէ անձնական սեփականութիւնն է վերած-

18) K. Marx und F. Engels, Ibid., ել. 18

ուու հասարակականի, այլ վերածում է սեփականութեան հասարակական բնոյթը, երբ նա կորցնում է իր լատակարգային բնոյթը:

Մանիքեստը հետևեալ խօսքերովն է որոշում բուրժուական և կոմունիստական հասարակական կարգերից մի քանիսի տարրերութիւնները: «Բուրժուական հասակութեան մէջ կենդանի աշխատանքը (բանտորի ոյժը: Բ. Ի.) կազմում է մի միջոց կուտակուած աշխատանքը (կապիտալի բաղկացուցիչ մասերը՝ մեքենաներ, գործիքներ, հում նիւթեր և այլն Բ. Ի.) աճեցնելու: Իսկ կոմունիստական հասարակութեան (կարդասոցիալիստական հասարակութեան, Բ. Ի.) մէջ, ընդհակառակը, կուտակուած աշխատանքը կազմում է մի միջոց, բանուորների կեանքի պրոցեսը երկարացնելու, բարեկեցիկ և նպաստաւոր գարձնելու համար: Բուրժուական հասարակութեան մէջ անցեալը տիրապետում է ներկայի վրայ, մինչդեռ կոմունիստական հասարակութեան մէջ ներկան տիրապետում է անցեալի վրայ: Բիւրգերական հասարակութեան մէջ կապիտալը ինքընակախ է և անձնական, մինչդեռ զործունեայ անհատը զուրկ է անկախութիւնից և անձնական ինքուրոյնութիւնից»:¹⁹⁾ Նըշանակում է ըստ կոմունիստական գաւանանքի՝ «աղատութեան վերացում» ասածդ ուրիշ ոչինչ չէ, բայց եթէ բուրժուական ազատութեան (անարխիստական մրցութեան և շահագործութեան) և բուրժուական անձնաւորութեան (անաշխատութեան և ձրիակերութեան) վերացում:

Ապա Մանիքեստը պատասխանում է կոմունիստների դէմուլցուած զանազան պարաւանքներին, որ իր նրանք ուզում են վերացնել ընտանիքն ու հայրենիքը:

Թէ ինչ հայեացք են ունեցել գիտնական սոցիալիզմի հիմնադիրները և ինչ դիրք ունի այժմ միջազգային սոցիալ-գենոկրատիան այդ վերոյիշեալ և զրանց նման մի շարք երկոյթների ու սկզբունքային ինսդիրների վերաբերմամբ, զրանց մասին կը խօսնիք մենք գեռ շատ յետոյ, երբ անցնենք մարքսիզմի էութեան:

Մանիքեստի երրորդ հատուածը՝ «Սոցիալիստական եւ կոմունիստական զրականութիւն» վերնագրով, նույիրուած է սոցիալիստական զանազան հոսանքներին, որոնց մասին մենք սիստեմատիկաբար կը խօսնեք գարձեալ յետոյ, երբ խօս՞ լինի նախամարքսիստական շըշանի մասին:

Նոյնը պիտի ասենք և չորորդ յատուածի մասին «Լուսնինիստ-

¹⁹⁾ Ibid, ել. 20

ների դիրքը դէպի զանազան լինդիմալլական կուսկացովթին-ները» վերնազրով: Թէ ինչ սկզբունքային դիրք ունի սոցիալգետութիւնական գործնական-քաղաքական հոգի վրայ դէպի իր զանազան քաղաքական հակառակորդները—իրանից հեռու կամ մօտ կանգնած կուսակցութիւնները—դա կը տեսնենք մեսք յետոյ:

Մանիփեստը հղուափակում է իր պատմական փիլիսոփիայութիւնը հետեւեալ խօսքերով: «Կոմունիստները խուսափում են իրանց կարծիքներն ու դիտաւորութիւնները ծածկելուց: Նըստանք յայտարարում են բաց ու համարձակ, որ իրանց նպատակները կարող են իրականանալ միայն մինչ այժմիան հաստրակական կարգերի ուժին խորակման զնով: Թող տիրապետող դասակարգերը գողան կոմունիստական յեղափոխութեան տուաջ, այդ միենայն է: Պրոլետարները չունեն դրա մէջ ոչինչ կորցնելու, բայց եթէ իրանց շղթաները: Նրանք պիտի դրաւեն մի ամբողջ աշխարհ: Պրոլետարներ բոլոր երկրների, միացէք»: 20)

«Կոմունիստական Մանիփեստը»—քառասոնական թուական-ների կոմունիստների հասարակական-քաղաքական դաւանանքը —իր լոյս տեսնելու օրից (1848 թ. փետրուարի սկզբին) սկսած դարձաւ նորագոյն բանուորական շարժման հիմնաքարը, կըց իր վրայ այն երկարամեայ շրջանի պատմութիւնը, ինչպիսին ունեցաւ ինքը՝ միջազգային սոցիալդեմոկրատիան և դարձաւ վերջինիս ծրագիրը այնպէս, ինչպէս «Կապիտալը» դարձաւ նրա պիտութիւնը:

«Այսօր Մանիփեստը դարձել է—ասում է Ֆ. Մերինգը— համայն սոցիալիստական գրականութեան մէջ ամենատարածուած ու ամենամիջազգային արտադրութիւնը. այն ընդհանուր ծրագիրը, որի անունով ազատակամ պարտաւորւում են բոլոր երկրների միլիոնաւոր բանուորները՝ Միբիրիայից մինչև Կալիֆորնիա, առաջ վարելու իրանց դաստակարգի ազատագրութեան մեծ կոլիւը»: 21)

Խիստ խոշոր ու եղակի է Մարքս-Էնգելսի՝ Մանիփեստի հեղինակութեամբ արած ծառայութիւնը: Մի այնպիսի ժամանակ, երբ Եւրոպայի բանուորութեան առաջաւոր մասի դաստակարգային ճակատագրի հետ խաղում էին զանազան աղանդաւոր ուտոպիստ—կոմունիստներ, Մարքսն ու Էնգելսն էին, որ պրոլետարիատի մտածողութեան եւ գործնէութեան համար

20) Ibid. երես 32.

21) Fr. Mehring, «Geschichte der deutschen Sozialdemokratie» համ. 1 եր. 371

մի ուղիղ շատիղ գծեցին եւ մշակեցին նրա տեսական ուսմունքի եւ զործնական տակտիկայի հիմնական ուղղութիւնը:

Եթէ Մարքսն ու Էնդելսը—ճիշտ նկատում է Վ. Լիրկնեխտը—ուրիշ ոչ մի բան չստեղծագործէին, այլ յաւէտ կուլ գնային այն յեղափոխութեան, որի նախընթաց օրը նրանք այնքան մարգարէական նախատեսութեամբ լոյս աշխարհ հանեցին Մանիքեստը,—այնուամենայնիւ միայն դրանով (Մանիքեստով) իսկ նրանք անմեռ ու անմահ անուն կը վաստակէին»: 22)

6.

40-ական թուակ. յեղափոխութիւնը ցամաքային Եւրոպայում.—Մարքսը Փարիզում, ապա Քեօյնում.—Մարքսի քաղաքական-յեղափոխական օրգանը.—Վերջինիս ունեցած գերն ու ծառայութիւնը,—Մարքսի օրգանը Փարիզի փետրուարեան յեղափոխութեան մասին.—Գերմանական բէակցիան, պետական կազմի խնդիրը.—Գերմանայի պատմական յանցանքը.—Կոիւ Ռուսաստանի դէմ.—Լեհական, իտալական, ունգարական հարցերը:—Լեհաստանի անկախութեան նշանակութիւնը.—Պանսլավոնական շարժումը.—Մարքսի հրապարակախօսութեան արժէքը:

1848 թուականը համարւում է բուրժուազիայի յեղափոխական պատմութեան ամենանշանակալից ու արժանայիշատակ տարիներից մէկը: Յեղափոխութիւն ոչ միայն իր իսկական կլասիք հայրենիքում—Թրանսիայում, —որ մաշել է 1789 և 1830 յեղափոխական դարագլուխ կազմող տարիները, այլի ցամաքային Եւրոպայի խոշոր քաղաքական միջնավայրերում՝ Գերմանիայուն, Աւստրիայում:

1848 թ. փետրուարի 22-ին, «Կոմունիստական Մանիքեստը» լոյս տեսնելուց փոքր ինչ յետոյ, բոնկլում է Ֆրանսիայի (18 տարի անհանգիստ մնալուց յետոյ) փետրուարեան ուժեղ յեղափոխութիւնը և իր անդիմադրելի շոբնդն ու արձագանքը նետում մինչև այդ ժամանակ միջնավայրերում՝ Գերմանական հողը:

Բրիւսելում, Մարքսի բնակավայրում, տեղի է ունենում աղմկալից դեմոնստրացիա: Բելգիական կառավարութիւնը, որ մինչև այդ ժամանակ մերժել էր պրուսական կառավարութեան պահանջը՝ Մարքսին Բելգիայից հեռացնելու համար, այս պամ յետ չմնաց պրուսական կառավարութիւնից. Մարքսին ձերբակալած հեռացրեց նա Բելգիայի սահմաններից: Մարքսը

22) W. Liebknecht, «Karl Marx zum Gedächtnis», ել., 9:

աճապարեց Փարիզ, ուր հրաւիրեց նրան իր ընկեր Ֆլոկոնը՝ «Réforme» արմատական-գեմոկրատական օրդանի շէֆ խմբագիրը, որ այդ ժամանակ ժամանակաւոր յեղափոխական կառավարութեան անդամ էր ընտրուել: Բնորոշ է հանրապետական կառավարութեան դեմոկրատ անդամի Մարքսին ուղղած նամակը, ²³⁾

«Բայց ու հաւատարիմ Մարքս!

Ֆրանսիական հանրապետութեան հողը ապաստարան է ազատութեան բոլոր բարեկամների համար: Բանակալութիւնը հալածել է ձեզ, բայց ազատ Ֆրանսիան կրկն բաց է անում իր դաները ինչպէս ձեզ, այնպէս էլ այն բոլորի առաջ, որոնք կուռմ են այն սուբր գործի համար, որ միացնում է բոլոր ժողովուրդներին: Ֆրանսիական կառավարութեան ամեն մի ներկայացուցիչ պէտք է իր պաշտօնը վարէ այս մտքով և ուղղութեամբ: Եղբայրական ողջոյն:

Ֆերդինանդ Ֆլոկոն, անդամ ժամանակաւոր կառավարութեան»:

Մարքսը սիրով հետևում է այդ հրաւէրին, իհարկէ: Բայց նրան վիճակում չէր երկար մնալու Փարիզում: Գերմանական հողի վրայ ևս րոնկում է անպարտելի յեղափոխութիւնը և կլանում իր մէջ լեգիօններով մարտնչող ոյժեր: Նոյն թուականի մարտի 13-ին Վիեննան, իսկ 18-ին Բերլինը դառնում են մարտական-սովորական հուրիստող դաշտեր: Մարքսը ու էնգելսը, որոնց համար այնքան թանգ է եղել իրանց հայրենիքի պլութեարիատի քաղաքական ազատազրութիւնը՝ բռնակալ րէժիմի ճիրաններից, իսկոյն աճապարում են Գերմանիա, յեղափոխական շարժման տղն տալու համար: Մարքսը էնգելսի հետ գերմանիա են գալիս ոչ միայն միւս գերմանացի յայտնի կոմունիստները, այլև Փարիզ ապաստանած բաղմանիւր էսիգրանտ բանուրիներ:

Համատարած յեղափոխութեան շրջանում «կոմունիստական զանակցութիւնը» կորցնում է արդէն իր գոյութեան իմաստը: Անդամների սահմանափակ քանակը և մեկուսացած դրութիւնը անկարող էր այլքս զեկալարել յեղափոխականացած մասսայի մարտական բնթացքը: Եւ վերջապէս յեղափոխութեամբ հէնց ինքը բանուր գտատկարգը հնարաւորութիւն է ստանում հրապարակական պրոպագանդա անելու—իւրաքանչիւր բանուրութիւն իր հայրենական միջնավայրում:

Մարքսն ու էնգելսը, ապա նրանց միւս անբաժան ընկեր-

²³⁾ «Karl Marx», Festausgabe von «Wiener Arbeiterzeitung» եր. 6.

ները՝ Վիլհելմ Վոլֆ, Ֆերդինանդ Վոլֆ, Էրնստ Դրոնկէ, Ֆերդ. Ֆրայլիգրատ, Գէորգ Վերթ—դրանք բոլորը կենտրոնա-նում են Քեօն և կաղմում նոր հիմնուած թերթի՝ «Neue Rheinische Zeitung»-ի խմբագրութեան անդամները, որոնց շէֆ խմբագիրը գտնում է Մարքսը:

40-ական թուականների սկզբին Մարքսը համարում էր նոյն քաղաքում հրատարակուող նմանօրինակ («Rheinische Zeitung») անուն կրող օրգանի խմբագիրը՝ իրեւ բուրժուական արմատական իլէօլող, իսկ նոյն թուականի վերջում Մարքսը հրատարակ է դալիս հոկայական մետամորֆոզներ կրելուց յետոյ—իրեւ պըռութարական կոմունիստ իլէօլող, Մանիքեստի նման երկի հանձարեղ հեղինակ:

Թերթի առաջին համարը լոյս է տեսնում 1848 թ. յունիսի 1-ին:

Մարքսի առհասուարակ հրատարակախօսական գործնէութեան ամենափոյլուն շրջանը կաղմում է «Neue Rheinische Zeitung» օրգանի կարճ ժամանակայ (1848 թ. յուն. 1—1849 թ. մայիսի 19-ը) հրատարակութիւնը: Երկար կանգ առնել այդ թերթի ամրող պատմութեան—կարճ, բայց հարուստ պատմութեան վրայ, մեզ շատ հեռու կը տանէր. սակայն մենք պարտաւոր ենք համառոտակի յիշատակել այստեղ կարևոր և ուշպը բունքային արժէք ունեցող այն խնդիրները, որոնց վերաբերեալ գրել ու պայքարել է Կարլ Մարքսը:

«Neue Rheinische Zeitung» օրգանը միաև լինի թերթն է եղել, ըստ էնդեւսի վկայութեան, որ ժամանակակից գենոկրատական շարժման մէջ պաշտպանել է պրոլետարիատի դասակարգային շահերը և անխտիր ու անողոք կոռւել յանուն այդ շահերի բուլոր հակապրոլետարական տարրերի, կուսակցութիւնների գէմ:

Սակայն նա միակն է եղել նաև, որ այնքան ջերմ ու խրախուսող մասնակցութիւն է ունեցել ժամանակակից յեղափոխական շարժման, մասնաւանդ գերմանական յիշափոխութեան մէջ: Մի կողմից իր կրակոտ ու վառվուն յօդուածներով, միւս կողմից իր կենդանի ագխոտայիշով ու պրոպագանդայով, իրեւ տեղական գենոկրատական ընկերութեան պարագլուխ, Մարքսը ունեցել է Քեօնում ամենաբեղմնաւոր ու անկուլ գործնէութեան տարիներից մէկը՝ 48—49 թուականին: Մարքսի օրգանը սուր ու ջախջախիչ կրիտիկայի օրիեկտ էր ընտրել ոչ միայն գերմանական աբսոլիւտիզմը, Պրուսիայի իւնկեր-բիւրոկրատական րէակցիան, այլև առհասուարակ ամեն մի միջադդային յետաւոլիմական-բոնակալական ըայլ, որ գործում էր ժամանակակից եւրոպական քաղաքականութիւնը: Զի եղել մի «ազգային-բա-

դարական» արժէքասոր շարժում՝ ու լնողիք, որի վերաբերմամբ արտայայտած չլինի Մարքսի օրգանը իր սկզբունքային գիրքը՝ Զի եղել, մանաւանդ, ժամանակակից եւրոպայում մը յեղափոխական շարժում, որի գոյութեան իմաստը չքննած և պատմական արժէքն ու նշանակութիմը դրդահատած չլինի Մարքսի մարտական-ռազմական օրգանը:

Փարիզի բանուորները խոշոր հարուած են կրել—կոչում է «Neue Rhenische Zeitung», խօսելով Փարիզի փետրուարեան յեղափոխութեան մասին—րայց նրանց հակառակորդները ևս պարտուել են: Բիրտ ու կոպիտ բանակալութեան ակընթարթային յաղթական ցնծութիւնը կատարուեց փետրուարեան երազանքների և խարուսիկ յոյսերի խորտակման գնով: Ֆրանսիական ազգը խոր անդունդով բաժանուեց երկու անհաշտ մասերի ունետքների ազգ և բանուորների ազգ: Այդ անդնդախոր վիճը չոչէտք է առիթ տայ ֆրանսիական գեմոկրատներին կարծելու, որ պետական կազմի համար մղուելիք կոփւները անընդանդակ են և իլլիւզիօնական: Այն կոլլիզիօնները (բաղխում, ընդհարում), որոնք սուաջանում են բուրժուական հասարակութեան ծոցից, ըէալ յարաբերութիւններից, չպէտք է առանց այլ նայութեան լին ձգել, անուշաղիք թողնել, այլ կոռւնկով լուծել նրանց: Ամենալաւ պետական կազմը համարում է այն, որի մէջ հասարակական հակառակութիւնները ոչ թէ ջնջում, ոչ թէ զօրով, արուեստապէս կաշկանդում են, այլ ընդհակառակը ազատ կռուով ու մարտումներով յանգում են իրանց ընական լուծման:

Մարքսը ունենալով սլովեսարական դասակարգային իդէոլոգիա և միշտ այդ տեսակէտից վերաբերուելով դէպի հասարակական երևոյթներն ու քաղաքական խնդիրները, սովորութիւն ունէր բիւրգերական շահների տեսակէտից նաև ցոյց տալու, թէ որ աստիճան վատնդառը ու կործանիչ է բոլոր պրոգրեսիստ տարերի համար ֆէօդալիզմի-արսօլիւտիզմի ըէակցիան: Այդ էր պատճառը, որ Մարքսը ոչ միայն իր փաստական հեղինակութեամբ տուն էր տալիս ժամանակակից կոմունիստական-պրոլետարական շարժման, այլ և բիւրգերական գեմոկրատիան—յեղափոխական բուրժուազիայի արժատական իդէոլոգները—դասեր էին վերցնում նրա քաղաքական յօդուածներից:

Մարքսի օրգանը քննադատում է Հանգեմանի մինիստրութեան ըէակցիօնէր ձգտութիւները յօդուած արտոլիւտիզմի: Նա կոչ է ուղղում Բերլինում գումարուած ժողովի խորհրդակցութիւններին մասնակցող ձախակողմեան գեմոկրատների հաս-

ցէին՝ չխաբուել փոքրիկ պարլամենտական-սահմանադրական կարկատանքից, տանուել չտալ երբէք գեմովատական պողիցիան:

Գերմանիայի պետական կազմի և նրա արտաքին քաղաքականութեան նկատմամբ «Neue Rheinische Zeitung»-ը ունից է հետեւել ծրագրային առուր ու անխաղտ տեսակէար. «Գերմանիայի անբաժան (այսինքն ոչ ֆեդերատիւ) հասարակապետութիւնը, կոիւ Խուսաստանի դէմ, Լեհաստանի անկախութեան վերականգնումը»:

Մարքսը սուր քննադատել է Ֆրանկֆուրտի ձախակողմեան բանակի, ֆեդերատիւ հասարակապետութեան գաղափարն ու ձգտումները Գերմանիայի նկատմամբ:

«Գերմանիայում—ասում է Մարքսը—ցենտրալիզացիայի (կենտրոնացման) կոիւր ֆեդերատիւ կազմի հետ, համարւում է մի կոիւ նորագոյն կուլտուրայի և ֆեօդալիզմի մէջ: Նոյն իսկ բիւրգերական տեսակէտից նայելով խնդրին, Գերմանիայի սերտ ու անհակասական սիրութիւնը առաջին պայմանն է, որպէսզի հնարաւոր լինի մինչ այժմ եղած թշուառութիւնից ազատուել և ազգային հարատութիւն ձեռք բերել: Եւ վերջապէս ի՞նչպէս կարելի է նորագոյն սոցիալական խնդիրները լուծել 39 անդամանատուած մանր-մունք պետութիւնների մէջ»:²⁴⁾

Այս տողերից պարզ երևում է, որ Մարքսը բոլորովին հակառակ է եղել Գերմանիայի քաղաքական ֆեդերատիւ կազմին՝ և իրաւ ոչ միայն պրոլետարական, այլ և բիւրգերական տեսակէտից՝ բուրժուազիայի տնտեսական-քաղաքական շահերի տեսակէտից ժամանակակից Գերմանիայում:

Մարքսի օրգանը խիստ մերկացնող ոճով քննադատում է Գերմանիայի արտաքին դարաւոր տիրանոշակ քաղաքականութիւնը: Նա՝ պրուսկերմանական բէակցիան, եղել է լուլոր յեղափոխական շարժումների մէջ, ազգերի ազատազրական գործում ամենաանամօթ ու նախատալից գերակատարը՝ սկսած ամերիկական անկախութեան կրուից և քրանչիական յենափոխութեան օրերից մինչև իտալական եւ լեհական խրոխտամբութեան անզորմ ճնշումները: Այժմ, երբ իրենք՝ գերմանացիք, թոթափում են սեփական ծանր լուծը, պէտք է փոխեն նաև իրանց արտաքին քաղաքականութեան ընթացքը դէպի այն ժողովուրդները, որոնց շատերի ճնշման ու շղթայակապ դարձած վիճակի պատճառներից մէկը հէնց ինքը Գերմանիան է:

²⁴⁾ Fr. Mehring, «Geschichte der deutschen Sozialdemokratie» հատ. II էր-107—108.

«Neue Rheinische Zeitung»-ը պահանջում է վճռաբար յեղափոխական կոիւ միջիլ Ռուսաստանի դէմ: Միայն վերջինիս գէտ մզած կարև է, որ կարող է մի կոիւ համարուել յեղափոխական Գերմանիայի կողմից: մի կոիւ, որով Գերմանիան կը մարրէ իրան իր անցեալի մեղքերից: իր զաւակները զոհելու գնով, նա կը դառնայ քաղաքակրթութեան պաշտպանն ու նախանձախնդիրը, ստրկացած ժողովրդի ազատաբարը: Մարքսի օրգանը անդադար յիշեցնում է, որ ոռւսական բռնակալութեան գոյութեամբ միշտ պիտի վասնգուած լինի յեղափոխական շարժումը Գերմանիայում:

Ռուսաստանի դէմ մզուելիք յաջող կոուփ հետ անժիշտապէս կապուած է Լեհաստանի անկախութիւնը. իսկ վերջինս, անդայման, մի անհրաժեշտութիւն է կազմուած եւրոպական յեղափոխութեան շահերի տեսակէսաից, որի յաղթական ընթացքը պայմանաւորուած է սուսական կոլոսի անդարձ խորասակումով:²⁵⁾ Հենց այդ է պատճառը, որ 30—40-ական թուականներին լինական հարցը այնքան մեծ ժողովրդականութիւն ու համակրանք էր վայելուած արեմտեան եւրոպացում: Ժամանակակից գեմոկրատիան խիստ մեծ կենսական շահ ունէր լինական հարցի նսպաստաւոր լուծումից, ժամանակ զերմանական գեմոկրատիան: «Այնքան,—ասում է Մարքսը—որքան մենք (այսինքն Գերմանիան) լեհերին ճնշենք, որքան մենք Լեհաստանի մի մասը մեր ձեռքը գրաւենք, այնքան էլ պէտք է մենք կախման ու շղթայուած վիճակի մէջ մնանք Ռուսաստանից և սուսական քաղաքականութիւնից, և այնքան էլ, հետևաբար, չենք կարող կործանել մեր երկրի նահապեատական-ֆէօղալական արսօլիւտիզմը»: 25) Մարքսը կծու հարուածներով պարսաւում է պրուսական իշնկեր-թագաւորութեան աւարառու և յափշտակիչ քաղաքականութիւնը լեհաստանի վերաբերմամբ: Ծամ Մարքսի Լեհաստանի աւերիչ յափշտակութիւնը՝ Ռուսաստանի, Աւստրիայի և Պրուսիայի միջոցով, կազմել է եւրոպական «Սուրբ զաւնակցութեան» («Die heilige Allianz») իսկական շաղկասպոդ օդակի:

Այդպէս, Մարքսի օրգանը ազգերի անկախութեան և քաղաքական ինքնուրոյնութեան պարօլ էր արծակում 40-ական թուականների վերջերին: Նա յայտարարում էր՝ Լեհաստանը լիների համար, իտալիան՝ իտալացիների համար, Ռինզարիան՝ ունգարացիների համար: Նա խիստ պախարակում էր ժամանակակից պանուլատօնական շարժումը, (որից Մարքսը ազատ էր համարում լեհական ազատազրական շարժումը) որը, կամ դատարկ ցնորդ ու բանդագուշանք էր կամ թէ չէ սուսա-

²⁵⁾ Ibid, եր. 110.

կան աւերիչ կնուաբը: Մամսաւորապէս էնգելսը սուր իրօնիայով քննադատել է թերթի էջերում պանուլաւիզմը և դրան փառաբանող այն մանիփեստը, որ ուղղել է մեծ անարխիստը՝ Բակունին, 1848 թ. Պրագում գումարուած սլատօնների կոնգրեսին: Պանսլաւօնական շարժման կուլ են գնացել այնպիսի ժողովուրդներ, որոնք կամ ըստ իրանց պատմական դիրքի անհրաժեշտորէն հակայնդափոխական տարրեր են՝ ինչպէս օրինակ հարաւային սլաւօններն են, կամ թէ, ինչպէս ոռուններն են, գետ շատ հեռու են յեղափոխութիւնից և այդ պատճառով գոնէ գետ առայժմ առաջնապէս հակայնդափոխական տարրեր են:

Այստեղ յիշածներս կազմում են մի փոքրիկ նմուշ այն հրապարակախօսական, յիղափոխական, քաղաքական կոլուսալ գործնէութիւնից, որ ունեցել է Մարքսի օրգանը՝ ասել է ինքը Մարքսը, ինչպէս և էնգելսը, մի տարուայ ընթացքում: Ժամանակակից բոլոր պազային թէ միջազգային հրատապ հարցերը՝ իրանց պատմակամերայրական լուսարանութեամբ և ընկալատական անալիզներով տեղ են րռնել «Neue Rheinische Zeitung» օրգանում: Դեռ այսօր էլ այդ թերթի պարզաբանած ծանրակշիռ քաղաքական խորհրդներն ու արծարծած գաղափարները պահպանել են իրանց թարմութիւնը՝ պատմական արժէքով և ուսուցող նշանակութիւնը՝ ամեն մի ժուրնալիստի ու հրապարակախօսի համար:

Մարքսի օրգանի 300 համարներում տմ'փոփուռած հատուկուր փշրանքները ժամանակակից յեղափոխական շարժման և քաղաքական զրութեան վերաբերեալ՝ անհամեմատ շատ բան են ասում մեզ, քան բիւրգերական պատմարանների այն ժամանակուայ վերաբերեալ գրած հաստափոր գրքերը: Ինչո՞ւ Որովհետեւ ոչ ոք չէ կարողացել այնպիսի նըրութեամբ ըմբռնել իրերի եւ երեւոյթների, շարժումների եւ հարցերի պատմական արժէքն ու բաղարական խմատը, և այդ բոլորին կենդանի արտայայտութիւն տուել խորին հմտութեամբ,—ինչպէս Մարքսն է կարողացել ու արել:

Մարքսը ունեցել է հանճարեղ հրապարակախօսութեան բոլոր գերազանց կողմերը:

Թէ ինչ բաղարական նախատեսումներ են ունցել Մարքսն ու էնգելսը այդ յեղափոխական շրջանում, որոնց պատագայ իրականացումը չէ արդարացրել իրերի պատմական զարդացման պրոցեսը, զրանց մասին մենք կը խօսենք շատ յետոյ, երբ գործ կ'ունենանք մարքսիզմի կրիաթիկոսների հետ:

Բ. Իշխանեան

(Կը շարունակուի)

ԻՐԻԿՈՍԻ ԿՐՈՒՆԿՆԵՐԸ

(Die Kraniche des Ibykus)

ՅԻԼԼԵԲԾ

Դէպի իսթմեան սուրբ հանդէսը¹) մեծ համբաւ,
Ռւր ժողովւում էին անթիւ հէլլէններ՝
Տեսնելու մարտն երգիչների և արշաւ,
Հնթանում էր իրիկոսը²) երկնասէր:
Աղոլլոնը պարզեատրած էր նըրան
Անուշ բերան, քաղցրիկ երգի մի քանքար,
Եւ ձեռն տռած փոքրիկ, թեթև դաւազան՝
Ռգեորուած գնում էր նա ճանապարհ:

Ահա արդէն հեռաստանում երեաց
Սարալանջին Ակրոկորինթ³) վերամբարձ,
Եւ սըրտատրոփ ու երկիւղած նա մըտաւ
Պոսիդոնի մայրի-անտառ խըտաթաւ:
Ամեն տեղ լուս, ոչ մի շըշուկ, ոչ մի ձայն.
Կըռունկների երամներն են միայն
Շարան-շարան, շըզթայի պէս միացած,
Զըւում հեռու՝ դէպի գարուն նորաբաց:

«Ո՞վ մըտերիմ դուք երամներ օդապալ,
Որ ուղեկից էիք ինձ հետ միասին,
Էրնէկ բարի նըշան լինէք ինձ համար.
Իմ բաժինը յար և նըման է ձերին.

1) Հին յունաց համազգային տօնախմբութիւն, որ կատար-
առամ էր Կորինթոսի մօս:

2) Յայն բանաստեղծ:

3) Կորինթոսի միջնաբերդ:

Ես էլ ձեզ պէս՝ ելած հեռու վայրերից՝
Մի հիւրընկալ ապաստան եմ որոնում.
Թաղ մեզ պաշտպան լինի Զիսը¹⁾ երկընքից,
Որ պանդրիստին տղէտից զերծ է պահում։»

Եւ նա ուրախ ուղղում է իր քայլերը
Առաջ, գէպի անտառային²⁾ խորքերը։
Յանկարծ ահա ճամբին երկու մարդասպան
Մի նեղ շաւզում կանգնում են գէմ-յանդիման։
Նա պատրաստ էր ընդդիմանալ թրշնամուն,
Բայց թուլացաւ խեղճի ձեռքը և ընկաւ.
Վարժ՝ քընարի միայն լարեր լարելուն՝
Իր աղեղը լարել անզօր զբանուեցաւ։

Նա կոչում է տոտուածներին և մարդկանց, —
Աղաչանքին չը կայ լրսող և մի անձ, —
Յուսակըտուր կանչում է նա, հառաչում, —
Նըրա ծայնը արձագանքըն է կըրկնում։
«Ուրեմն այստեղ լրքուած պիտի ես մեռնեմ,
Հայրէնիքից հեռու, օտար աշխարհում,
Եւ չար ձեռքով անթաղ³⁾ պիտի կորընչեմ՝
Ալրէժ չտուած և քէն ու ոխ իմ սրբառում։»

Եւ նա ընկաւ՝ մի ծանրը վէրք իր կըրծքում։
Յանկարծ աղմուկ կըոռւնկների թևերից.
Նա լրսում է — էլ աչքերը չեն տեսնում —
Օդը դողաց սարսափելի կըռինչից։
«Ո՞վ կըոռւնկներ, որ թրչում էք երկնասպար,
Երբ ոչ մի ձայն էլ չը յիշէ իմ անուն,

¹⁾ Զիսը նաև հիւրասիրութեան Աստուած էր և պանդրիստների պաշտպան։

²⁾ Անտառը նուիրուած էր Պոսէյզոն աստծուն։

³⁾ Անթաղ մնալը յոյների համար ամենամեծ դժբախտութիւն էր։

Եղէք դուք իմ մահուան վըկայ անաչառ։»
Ասաց, մարեց աչքի լոյսը — մըտաւ քուն։

Մերկացըրած մարմինը շուտ գըտնուեց.
Թէև անչափ յօշոտուած էր վէրքերով,
Բայց անյապաղ երգչին դէմքից ճանաչեց
Կորինթացի բարեկամը՝ տեսնելով։
«Այսպէս պիսի տեսնէի քեզ, սիրելի!»
Իմ իղձըս էր — սոճեայ¹⁾ շըքեղ պըսակով
Զարդարել քո վեհ ճակատը պանծալի՝
Լուսաւորուած փառքի պայծառ շողերով։»

Գոյժըն հասաւ ահա բոլոր հիւրերին՝
Պոսիդոնի տօնին ի մի ժողովուած.
Ողջ Յունաստան ողբաց ողբով դառնադին,
Եւ ամեն որ նոյն վըշտով էր համակուած։
Եւ մոլեգնած ամբոխն ահա խրոնըւեց
Պրիտանիների²⁾ տուաջ, վըրէժ է կամոչում,
«Վըրէժ երգչի հոգու համար,» — նա գոչեց.
«Զարագործի արիւնըն ենք պահանջում։»

Բայց ուր վընտրել նըրա հետքը և ի՞նչպէս
Ովկեանսում ալեկոծուած բազմութեան՝
Ամեն կողմից թափուած շըքեղ այս հանդէս՝
Գըտնել նըրա սկ երեսը մոլեկան։
Աւազակ էր, որ շընչում է անարգել,
Թէ թըշնամի՝ դըրդուած մի կոյր նախանձից —
Միայն Հելիոսն³⁾ այդ կարող է վըկայել,
Որ աշխարհը լուսաւորում է բարձրից։

Գուցէ նոյն իսկ այս բոպէին համարձակ
Շըրջում է յոյն բաղմութեան մէջ անվեհեր,

¹⁾ Յաղթող երգչին պարգևում էին սոճեայ պսակ։
²⁾ Պրիտանիներ — դատաւորներ։ ³⁾ Այսինքն՝ արեգակը։

Եւ, մինչ նլրան փընտրում է վրէժ դըժընդակ, նա քաղում է իր յանցանքի պըտուղներ, կամ տաճարի գուցէ շեմքում նա կանգնած՝ Աստուածներին պիղծ բերանով անարգում եւ ամբոխի ալիքի հետ խառնըւած՝ Խըրոխաւալով դէսկի թուարոն²⁾) է դիմում,

Ուր շարեշար իրար վրայ կուտակուած՝ (Նեցուկները հազիւ հազ են դիմանում) Հեռու և մօտ երկիրներից ժողովուած Յոյն ազգերը խընըւում են, ըսպասում. Որպէս ծովի ալիքներ, խուլ աղմուկով Վըխտում էին, և շարքերը անհամար Խըտանալով և անընդհատ աճելով Բարձրանում մինչ երկրների ջինջ կամար:

Ո՞վ կը համրէ այս ցեղերը բազմազան՝ Այստեղ սիրով հիւրընկալուած միտքան. Ամեն տեղից եկել են՝ ճոխ Աթէնքից, Աւիլայից և Փոլիսից, Սպարտայից, եւ ափերիցն Ասիայի հեռաւոր, եւ էգէյեան կըզգիներից փառաւոր եւ լըսում են ուշիուշով ու լըոին Անեղ պարի¹⁾ սարսափելի մեղեդին:

Խըտահայեաց, լուրջ, վազեմի կանոնով Դամնգաղաքայլ և չափածոյ ճեմելով Բեմի խորքից երնում է նա և անցնում եւ թատրոնի շուրջ մի սլաոյտ կատարուած՝ Դա հոգեղէն կանանց քայլ չէ բընաւին, Մահկանացու զերգաստանումչեն ծընուած. Մարմինները հըսկայ հասակ ունէին,

1) Յունաց թատրոններում 10-20 հավար և աւելի ժողովուրդ կարող էր տեղաւորուել:

Որ մարդկային հասալից էք գերազանց:

Մինչև ազգեր ծածկուած են ու քօղերով,
Եւ շարժում են իրանց վըտիս ձեռքերում
Կիրոնները՝ գողողող, աղօտ բոցերով.
Չը կայ արիւն չոր ու ցամաք այտերում,
Եւ գրլիներին մազեր չը կան փարելի,
Ճակատներին չեն ծածանւում գանգուրներ,
Այլ միմիայն ու օձեր են ահռելի՝
Հանած իրանց չար, թունաւոր լեղուներ:

Շըրջան կապած՝ որոտաձայն երգեցին.
Թընդաց թատրոն այն համերգիցըն ուժովին,
Որ թափանցում է խոր սիրտը և խոցում,
Ոճրազործի շուրջ հանգոյցներ ոլորում:
Որոտում է էրինների երգն ահեղ,
Թընցնում է միտք, աչքի լոյսը խաւարում,
Որսառում է, չորացընում է ուղեղ,
Եւ քընարը համբանում է և լըռում:

«Երանի նրան, ով ազատ է մեղքերից
Եւ մանկական հոգի ունի մի ամբիծ—
Մէնք նրանից վըրէժ չունինք տակաւին.
Թոնդ նա ազատ գլուայ կեանքի իր ուղին:
Բայց վայ նըրան, ով որ գործեց վայրաբար
Ծանըր յանցանք ըսպանութեան գազրելի.
Նըրան պիտի մենք հալածենք անդադար,
Մէնք, ծընունդներս գըժոխային խաւարի:

Եւ կարծում է, թէ կ'ազատուի վախուստով.
Բայց մենք ունինք զօրեղ թեեր, կը հասնենք

¹⁾ Պարը յունաց թատրոնական ներկայացումների անբաժան մասն էր: Ներկայ գէպօւմ պարը կազմուած է վրէժինորութեան աստուածուհիներից (էրիննիներ):

Եւ ցանցի մէջ ոտքերը պինդ փաթթելով
Բոլոր ուժով նըրան վայր կը տապալենք.
Նըրան անվերջ պիտի քըշենք մենք այսպէս.
Ոչ մի զրդում նըրա հետ չի հաշտեցնի.
Պիտ հալածենք նըրան մինչև Այիդէս¹),
Այնտեղ էլ մենք նըրան ազատ չենք թողնի»

Լըռեց պարը, ահեղ երզը դադարեց.
Եւ թատրոնում անգորութիւն տարածուեց,
Գերեզմանի, մահուան ճընշող լըռութիւն,—
Կարծես ներկայ լինէք աստծոյ գոյութիւն:
Հանդիսօրէն և վաղեմի կանոնով
Թատրոնի շուրջ մի պտոյտ է կտարում
Եւ համրաշայլ ու չափածոյ ճեմելով
Անհետանում դարձեալ բեմի խորքերում:

Ճըշմարտի և պատրանքի մէջ երերուն՝
Ամեն մի սիրտ կասկածում է և դոզում
Ու ենթարկում այն սոսկալի զօրութեան,
Որ դատելով, իբրև արթուն պահապան,
Անմեկնելի, անհամնելի, անքըննին,
Մեր վիճակի սև կըծիկըն է հիւսում,
Արեգական լոյսից ծածկուած բընաւին,
Տեսանելի միայն սըրտի խորքերում:

Յանկարծ ահա աստիճանից լըսուում է,
Թէ ինչպէս մէկ հանդիսական զոչում է.
«Նայիր, նայիր, Տիմոթէս, վերեւում
Իբիկոսի կըռունկներն են սըլանում:»
Երկնակամարն յանկարծ մըթնեց, սեացաւ.
Եւ ամբոխը նայեց վերև ու տեսաւ—
Երկընքովը կըռունկները երամով
Շարան շարան չըսում էին կըռինչով:

¹⁾ Պժոլսք:

«Ի՞նչ. Իբիկնաս:» — Եւ թանկաղին այս անուն
Ամեն մէկի սըրտին նոր վիշտ է բերում:
Ինչպէս ծովի մըրբը կայոյգ ալիքներ,
Բերնից բերան անցնում էին այս խօսքեր.
«Իբիկնալ, որի՞ն ամենքն են ողբում.
Որի՞ն սպանեց չարագործը անտառում.
Ի՞նչ խմաստ կայ այս խօսքի մէջ. ի՞նչ նրշան
Ունի չըւող կըռունկների այս երամ:»

Եւ դեռ կըրկնում երեքկնում են հարցերը,
Եւ կայծակի ասես փայլից սըրտերը
Նախազգացին. «Այստեղ է նա, մարդասպան!
Էրինների ահա արդար դատաստան:»
Խոնարհ երգչի սուրբ վըրէժը լուծուեցաւ.
Չարագործը մատնեց իրան շըփոթուած.
«Քըռնել նըրան, ումնից խօսքը դուրս թրոնաւ,
Եւ այն մէկին, ում այն խօսքն էր ասուած:»

Բայց ով այն խօսքն յանկարծ թըրոցրեց բերանից,
Կ'ուզէր կըրծքում գաղտնի պահել ամենքից!
Սակայն իզուր. դէմքով գունատ, այլայլուած
Իսկոյն մատնեց իր ոճիրը կատարած:
Պըհտանների առաջ տարան երկուսին,
Բեմը դարձաւ մի իսկական դատարան.
Չարագործը խոստովանուեց ամենքին,
Գործակցի հետ ըմպեց բաժակ դառնութեան:

Թարգմ. Հետոն Մանուկյանի:

ԱԳՐԱՐԱՑԻՆ ՀԱՐՑԸ ԵՒ ՆՐԱ ԼՈՒԾՈՒՄԸ ՌՈՒՍԱԱ-
ՏԱՆՈՒՄ

I

Բոլոր հերթական հարցերից, որոնց լուծումով
պէտք է զբաղուի ապագայ Պետական Դուման, ամենա-
կարևորը և ամենաանյետաձգելին՝ ազգարային հարցն է:
Նրա կարևորութիւնը առաջ է զալիս նրանից, որ նրա-
նով շահագրգոռուած է ազգաբնակութեան ⁴ ₅ մասը,
այսինքն մօտ 85 միլ. հոգի:

Ռուսաստանը բոլոր ուրիշ եւրոպական երկիրներից
ամենամեծ իրաւունքը ունի հոդագործական երկիր կոչ-
ուելու: Նրա արդիւնագործութիւնը (ինդուստրիան), չը
նայած կառավարութեան գործ զրած բոլոր ջանքերին,
չի կարողանում այնքան զարգանալ, որ հնարաւորութիւն
ստանայ, գոնէ մասամբ, կլանել այն բանսուրական ձեռ-
քերը, որ արտադրում է ամենայն տարի աղգաբնա-
կութիւնը և դուրս նետում շուկայ. և այդ աւելացած
բանուրական բանակը ստիպուած է իր ոյժերը գործա-
զրել հողի մշակութեան վրայ:

Միւս կողմից; ռուսաց ինդուստրիան, չկարողա-
նալով իր ապրանքները սպառել դրսում և մքցել ուրիշ
երկրների հետ, պէտք է բաւականանայ միայն իր
սեփական երկրով—ներքին շուկայով: Իսկ որպէս-
զի այդ շուկայի յուսով ինդուստրիան զարգանայ՝
պէտք է նրա արտադրած ապրանքները մեծ թուով
գնողներ ունենան, որ կախուած է ազգաբնակու-
թեան մեծամասնութեան՝ գիւղացիների գնելու կա-
րողութիւնից կամ նրանց սպառողական ոյժի զարգա-
ցումից, այսինքն՝ գիւղացու նիւթական ապահութիւնից և
նրա կուլտուրական պահանջների զարգացման աստիճանից.

իսկ գիւղացու հիւթական կարողութեան աստիճանը անմիշապէս կապ ունի նրա հարսառութեան միակ աղբիւր՝ հողի քանակի և մշակման ձևի հետ:

Մինչդեռ շնորհիւ սակաւհողութեան և գիւղատընտեսուկան տեխնիկայի ստոր աստիճանին, ոռուս գիւղացին հազիւ հազ է քարշ տալիս իր «կիսասով» կեանքը:

Յայտնի է որ սակաւահողութիւնը Ռուսաստանում, համելով «հողային սովի» աստիճանին և առաջ բերելով հողային կրիզիս, արտայայտուեց այնպիսի սարսափելի խտունակութիւններով, որոնց մենք ականատես էինք անցեալ տարի: Հրաբուխը այժմ, կարծես, ժամանակաւորապէս հանդարտուել է: Բայց այդ կարծեցեալ հանգստութիւնը կարող է գաւաճանական լինել: Գիւղացու համբերութիւնը արդէն հատէլ է: Նա ինքը իր ձեռքն է վերցրել այդ հարցի լուծումը և ինքն է ուղում վճռել նրան: Գիւղացին պարզ ասում է կալուածատէրերին. «Այս որոշներեւ համ զեմլի, ուլի մայ ասը որորնեշմը» (կամ աւելացրէք մեզ հողի կտոր, կամ մենք ձեզ կը կոտորենք):

1902 թուի ազգարտյին շարժումը, որը Պլեկի օրով հանգստացրուեց այնպիսի գազանային միջոցներով, այս սարսափելի դրամայի միայն նախերգանքն էր, իսկ առաջի գործողութեան մենք ներկայ էինք անցեալ տարի: Թէ ի՞նչ է սպասում Ռուսաստանին երկրորդ գործողութեան մէջ և ինչնիվ պէտք է վելջանայ այս դրաման—դժուար է երեակայել անգամ:

Միայն մի բան պարզ է որ կառավարութիւնը իր աննպատակայարմար գործունէութեամբ և անհեռատեսութեամբ տալով ազրարային հարցին այդպիսի սուր բնաւորութիւն, անկարող է այժմ միայն ճնշող միջոցներով բնական հոսանքի առաջն առնել: Ազրարային հարցը սուր կերպով գրուած է և պէտք է վճռուի այս կամ այն ձեռվ. այդ է պահանջում թէ ընդհանուր պետական շահերը և թէ Ռուսաստանի ներքին հանգստութիւնը:

Այս անհրաժեշտութիւնը լաւ հասկացել են Ռու-

սաստանի բոլոր քաղաքական կուսակցութիւնները, որոնք իրանց ծրագրներում տուանձին ուշադրութիւն են դարձնում այս հարցի վրայ:

Միայն կարծես կառավարութիւնն է, որ արմատական միջոցների մասին չի էլ մտածում, և ելք հողագործութեան և երկրաշխնութեան զլաւոր կառավարիչ պ. Կուտալերը փորձեց այդ հարցին մօտենալ լրջօրէն՝ բիւրօկրատիան նրան ստիպեց հրաժարական տալ...

II

Ազրարային շարժումը Ռուսաստանում հետևանք է զիւղացիների սակաւհողութեան, կապալագների բարձրութեան, նրա պայմանների կամայականութեան և, վերջապէս, գիւղատնտեսական բանուղների վարձելու հարցի անորոշութեան: Եւ իսկապէս, եթէ մենք լուրջ ուսումնասիրենք այս վերջի տարբիների: շարժումները կը նրկատենք որ Ռուսաստանի զանսագան անկիւններում այս երեք պատճառներից մէկն ու մէկը առաջնակարգ տեղ է բոնում: Այսպէս, միջին Ռուսաստանում ազրարային շարժման զլաւոր պատճառն է սակաւհողութիւնը, արևելեան և հարաւային Ռուսաստանում երկրորդ պատճառը՝ կապալագների բարձրութիւնը, իսկ արևեմտեան Ռուսաստանում երրորդը՝ գիւղատնտեսական բանուղների իրաւական անորոշութիւնը: Գիւղացիների սակաւհողութիւնը նոր չէ որ զգացում է Ռուսաստանում. նա գոյութիւն ունի հէնց զիւղացիներին ճորտութիւնից ազատելու օրից: Սակաւահողութիւնը զլաւորապէս բացատրւում է 1861թ. ազատազրական օրէնքի մի բանի թերի կողմերով:

Ամեն մի քաղաքական կամ տնտեսական նորմուծութիւն կրում է այն բնաւորութիւնը, որ համապատասխանում է ժամանակի կառավարչական կազմի մէջ տեղի ունեցող հասարակական դասակարգերի ոյժերի համաշափութեան: Եւ դրա համար էլ ամեն մի ըեֆորմ

կրում է այն ուղղութիւնը, որը ցանկալի և ձեռնառու է այդ ժամանակում գերիշխող դասակարգին։ 60-ական թուականներին (ինչպէս և այժմ) կառավարչական բոլոր գործերի վրայ իր ազգեցութիւնը ունէր ազնուականութիւնը, որը և համարեա միակ հոգատէրն էր։

Գիւղացիներին ճորտութիւնից ազատելու սկըզբնական յենակէտը և նրա իրագործման պատմութիւնը կարող են ծառայել իրքի փայլուն տպացոյց այն բանին, թէ որքան յուսալի և անաշառ լուծում կարող են ստանալ բանուորների և զիւղացիների գրութիւնը բարուոքելու նպատակով ուրիշ դասակարգերի ձեռքով մշակած միջոցները։

«1861 թ. «Պոլոժենիայի» կազմելու նախապատրաստական աշխատութիւնների պատմութիւնը, ասում է պրոֆ. Մանուկիով, զիջողութիւնների մի պատմութիւն է, որը քայլ առ քայլ խել են կալուածատէրերը օրէնսդրական այդ մեծ ակտի ստեղծողներից։*), Գիւղացիներին հողագուրկ անելու կողմնակիցները, շարունակում է յարգելի պրոֆ., պարզ կերպով յայտնում էին, որ զիւղական ազգաբնակութեան հողի «պակաս» ապահովութիւնը անհրաժեշտ է կալուածատէրերի տնտեսութիւնները բանուորական ոյժով ապահովելու տեսակետով։»

Եւ կալուածատէրերը հասան իրանց նպատակին, սահմելով այդ բեփորմաները խմբազրող յանձնաժողովին մէկը միւսի յետելից անել զիջումներ։

Ինչպէս յայտնի է, 1861 թ. «Պոլոժենիէ»ի իրեն յենակէտ էր վերցրուած այն միտքը, որ պէտք է զիւղացիներին ազատել ճորտութիւնից, տալով նրանց այնքան հող, որը կարող լինէր բաւարարեցնել նրանց պահանջները։ Բայց, ինչպէս մենք կը տեսնենք, այս նախնական միտքը իրականութեան մէջ այնքան փոփոխութիւններ և կրճատումներ կրեց, որ զիւղացուն մի կրա-

*.) Поземельный вопросъ въ Россіи.

կից ազատեց և դցեց մի ուրիշի մէջ։ Հողատէրերը՝ մի կողմից զգալով զիւղացիներին ճորտութիւնից ազատելու պետական անհրաժեշտութիւնը, միւս կողմից հնագանդուելով Կայսրի ցանկութեան, աշխատեցին ազատել նրանց այնպէս, որ այդ ձեռնուու լինի իրանց համար։

Առաջ կալուածատէրերը աշխատեցին որոշել մի յայտնի «նորմալ» հողաբաժին (նադէլ), երբ նրանց այս բանը չաջողուեց և «Պոլոժենիկն» խմբագրող յանձնաժողովը մնաց այն սկզբունքի վրայ, որ հողաբաժինները պէտք է պահպանեն իրանց մինչև 1859 թ. չափերը, այն ժամանակ հողատէրերի օպպողիցեան իր բոլոր ոյժը լարեց, որպէսզի այս սկզբունքը սահմանափակի՝ գոնէ նրա կեանքի մէջ իրագործելիս Եւ նրանց յաջողուեց այս անել։ Ամեն տեղի համար, բացի տափաստանի շերտի (стенная полоса), սահմանուեց «ամենամեծ» և «ամենափոքր» հողաբաժիններ, որոնք պէտք է ընդգրկէին գոյութիւն ունեցող նադէները։ Եւ այն կալուածներում, ուր գոյութիւն ունեցող հողաբաժինը աւելի մեծ էր քան այդ տեղի համար սահմանուած «ամենամեծը», հողատէրը իրաւունք ունէր կտրել իր օղափն այդ աւելորդը։ Իսկ այնաեղ, ուր զիւղացիք ճորտութեան ժամանակ օդուում էին աւել փոքր հողաբաժինով քան այդ տեղի համար որոշուած «ամենափոքր» նադէլը, կալուածատէրը պարտաւոր էր լրացնել այդ պակասորդը։ Բայց որովհետեւ այսպիսով շատ կալուածատէրեր կարող էին կորցնել իրանց կալուածքի մեծ մասը, և որպէսզի դրա առաջը առնուի մտցրուեց հետեւալ վերապահումները։

Այն գէպքերում, երբ հողաբաժիններ հանելով, հողատիրոջ կալուածքի տարածութիւնը կարող էր $\frac{1}{3}$ -ից (տափաստանի շերտի համար $\frac{1}{2}$) աւելի պակասել, կալուածատէրը ոլարտաւոր էէր լրացնել զիւղացու հողաբաժինը մինչև «ամենափոքր» նադէլի չափը։ Իսկ երբ կալուածատէրի անմիջական հողատիրութիւնը այդ նորմաներից աւել էր, նա պարտաւոր էր ամեն մի հոգու համար

որոշած հողաբաժինների լրացման համար տալ այնքան հող, որպէսզի իր ձեռքում մնացածը չիջնի վերև յիշած չափերից, այսինքն՝ ^{1/2}-ից։

Միւս կողմից կալուածատէրը իրաւունք ունէր գիւղացիների հողաբաժիններից իր օգտին կտրել նոյն խոկ այն դէպքերում, երբ վերջինի նադէլը աւել չէր քան սահմանած «ամենամեծ» հողաբաժինը։ Այս այն դէպքերում էր, երբ, գոյութիւն ունեցող հողաբաժինները պահպանելու ժամանակ, կալուածատէրի մասը կը կազմէր ^{1/3} (^{1/2})-ից պակաս։ Այսպէս ուրեմն թոյլատըրուում էին դէպքեր, երբ գիւղացու հողաբաժնի չափը չհամնելով մինխմումի անդամ, մնում էր «ամենափոքր» նադէլի չափից էլակակաս։

Ի՞քն բատ ինքեան հասկսնալի է որ հողատէրերի համար զիւղացիական այդ «ամենամեծ» և «ամենափոքր» հողաբաժինների չափերը որքան փոքր լինէին այնքան ձեռնուու էր։

Եւ մենք տեսնում ենք որ «ամենամեծ» հողաբաժնի չափը «Պոլոսենիէր» խմբագրող յանձնաժողովի գործունէութեան երկրորդ և երրորդ շրջանում և, վերջապէս, «Պոլատէնիէր» վերջնական քննութեան ժամանակ հնթարկուում են հետզհետէ կրճատումների։ Իսկ ինչ վերաբերում է «ամենափոքր» հողաբաժինին, նա սկզբում հնթագրուած էր «ամենամեծի» ^{2/5}, իսկ վերջնական խմբագրութեամբ նա Մալօրոսիայի նահանգներում հասցըրուեց «ամենամեծ» հողաբաժնի ^{1/2}, իսկ միւս նահանգներում ^{1/3}.

«Ամենամեծ» հողաբաժնի չափը կրճատելու շնորհիւ ստացուեց այնպիսի դրութիւն, որ գիւղացիների նախկին նադէլի զգալի մասը կտրուեց և անցաւ կալուածատէրերին։ Մինչդեռ այս վերջին դէպքերը սսվորական էին, հակառակը—երբ կալուածատէրը պէտք էր գիւղացու հողաբաժինը աւելացնի «ամենափոքր» նադէլի չափին հասցնելու համար—կրում էր բացառիկ երկոյթների բնաւորութիւն։

Բայց ուս հարցի միայն մի կողմն է, կայ և մի ուժիշը, որը գիւղացու համար ունէր առելի կործանիչ ազգեցութիւն, և որի պտուղները քաղում է դեռ ներկայ սերունդու:

Բանը այն է, որ հողատէրերը իրաւունք ստանաւ լով վերոյիշեալ զէպքերում կտրել գիւղացիների հողաբաժններից իրանց համար մաս, օգտուում էին այս հանգամանքից և վերցնում էին հողի թէ ամենալաւ և թէ գիւղացու համար ամենաանհրաժեշտ և մեծ զին ունեցող մասերը, զնելով այսպիսով գիւղացիներին կապալով հող վերցնելը իրանց կամայականութեան տակ: Դիւղացին այժմ յաճախ ոտիպուած է այդ «Կարուածքները» կալուածատէրից կամ զնել կամ վերցնել կապալով, ինչ բարձր գին էլ որ նշանակելու լինի, որովհետև առանց այդ կորուածքների նա չի կարող եօլայ զնալ: Բացի այդ, պէտք է նկատել որ այսպիսի հողամասերը յաճախ կազմութեն այնպիսի կտորներ, որ զիւղացին՝ իր անասունները արօտատեղի գուրս բերելու կամ ջրելու համար՝ պէտք է անցնի նրանցով: Այդ «կտրուածքները» զըտնուելով գիւղացիների հողերի կից կամ մէջը ծառայում են գիւղացիներից տուգանքներ ստանալու աղբիւր, երբ վերջինների կովը կամ ձին ընկնում է այնաել:

Վերև յիշած վերապահումների շնորհիւ ճորառութիւնից ազատուած գիւղացիների հողաբաժնները ընդհանուր առմամբ ոչ միայն չտելացան, այլ նոյն խակ զգալի կերպով կրծատուեցին: Մենք ձեռքի տակ չունենք բոլոր նահանգներին վերաբերուող թուեր, որպէս զի կտրողանայինք տոել թէ հր չափով է տեղի ունեցել այդ կրծատումը, բայց որ այս վերջինս տեղի է ունեցել՝ այդ փաստ է: Այսպէս, օրինակ, պրոֆ. Իվանիւկովի հաշուով 8 միջին նահանգներում գիւղացիների $11\frac{1}{2}^0/0$ ճորտութիւնից ազատուելուց յետոյ մնաց հողաբաժններով ոչ ապահովուած, $34\frac{1}{2}^0/0$ բաւարար ապահովուած, հաշուելով այդպիսիներ 4 դիսեատին հողաբաժին ստացողներին, և $54^0/0$ նորադ ապահովուած, հաշուելով այս-

պիսիների 2 դեռ. ովտկաս հողաբաժիններ ստացողներին: *)

Դիւղացիների սակաւահոգութեան միւս կողմից հազարացին «Պոլսժենիէլ» այն յօդուածները, որոնք թոյլ էին աալիս գիւղացիներին հողատէրեցի հետ փոխառաջ համաձայնութեամբ հրաժարուել հողաբաժինի մի մասից. զիւղացիների համար կործանիչ ազգեցութիւն ունեցաւ նա մանաւանդ «Պոլսժենիէլ» 123 յօդ., որի շնորհիւ կարուածատէրեցը նայնպէս գիւղացիների վոխառաջ համաձայնութեամբ կարող էին տալ վերջիններին օրի ամենամեծ կամ հրամանագրուած (յեզով) հողաբաժնի մի չորորդ մասը, որից յետոյ նազէլնի հողի միւս մասը անցնում էր կալուածատէրին. այնուհետև կարուածատէրի և նրա նախկին ճորտի մէջ վերջանում էին բոլոր հաշիւները:

Գիւղացիներից շատերը, համոզուած լինելով որ պէտք է յետոյ նոր հողաբաժիններ արուեն և որ վերջի վերջոյ բոլոր հողերը պէտք է անցնեն նրանց ձեռքը, լայն չափերով օգտում էին «Ճրի» հողաբաժին ստանուածատէրի և նրա նախկին ճորտի մէջ վերջանում էին:

Այդ համոզմունքը սուս զիւղացու մէջ գեռ մինչեւ այսօր էլ կենդանի է:

Մի կողմից այս սխալ համոզմունքը, միւս կողմից էլ գրամով հարկատուութեան նորութիւնը, հողաբաժինների չափազանց թանգ գնահատութիւնը և, վերջապէս, հողատէրերի ճնշումը ունեցան այն հետևանքը, որ այդպիսի «մուրացկանական» (Խաղենսկի) կամ «որբական» (Сиротскі) հողաբաժին ստացող զիւղացիների թիւը հասաւ 37 նահանգներում մի պատկառելի թուի, այն է 600,000 հոգու *) մի քանի նահանգներում կազմելով զիւղացիների 50% (օր. Սամարայի նահանգում):

Ուշագրաւ է այն հանգամանքը, որ այսպիսի դիւ-

*) Իվանիւկով եր. 315.

*) Արք. Խօսկի «Զեմլյա և այլ լեզու» Ա, ստ. 41
Փետրուար, 1906.

զացիների մեծամասնութիւնը պահւում է այն նահանգ-ներում, ուր հողի առատութիւն է և կարելի է հողը հեշտութեամբ կապալով վերցնել: Եւ որովհետեւ զիւ-զացիների ազատման ժամանակ թէ հողի գինը և թէ կապալավարձը շատ աւելի պակաս էին, քան կառավա-րութեան կողմից հաղաբաժինների նշանակած զները (օր. Սամարայի նահանգում այդ գները 5 անգամ պա-կաս էին վերջիններից) հասկանալի է որ զիւզացիները զերագասում էին կապալով վերցնել հողեր, քան նագել սատարակ այդպիսի ժանր սպացմաններով կալուածատէր-երից:

Բացի այդ զիւզացիների մի ստուար մասը, այն է. կալուածատէրերի ծառաները (дворовые люди) և զանազան հանգամանքներից ստիպուած մեշտան զատա-կարգին անցածները բոլորովին հող չստացուն: Միայն առաջինների թիւը հանում է 720,000 մարգու:

Այսպիսով, ուրեմն, հէնց ճորտերի ազատման օրից սուած եկաւ զիւզացիների մի ստուար բազմութիւն, որը կամ բոլորովին զրկուած էր հողից կամ ստացել էր անբաւարար և փոքր հողաբաժին:

Երկրորդ սխալը, որը թոյլ տուեց «Պոլոժինիէլ» խմբագրող յանձնաժողովը և որը նոյնպէս շատ աննը-ոպաստ աղդեցութիւն ունեցաւ զիւզացիների տնտեսու-կան դրութեան վրայ այդ՝ հողի գնահատման ձևն էր: Բանը նրանում որ նոյն յանձնաժողովը ընդունեց այն սխալ (ինչպէս յետոյ կը պարզենք) հայեացակէտը, թէ զիւզացին որքան քիչ հող ստանայ, այնքան շատ աշխատանք կը գործ դնի ամեն մի գեսեստ, հողի վրայ, այնքան յաւ կը մշակի հողը, և հետեապէս այնքան մեծ արդիւնք կը ստանայ: Այսպէս օր. առաջի գեսեատինը կարող է աւելի արդիւնք տալ քան երկրորդը, երկրոր-դը աւելի քան երրորդը և այնու Այսպէս էլ անհաւասար կերպով զնահատում էր հողի իւրաքանչիւը գեսեա-տինը: Առաջի գեսեատինը աւելի թանգ քան երկրորդը, երկրորդը թանգ քան երրորդը և այնու Եւ այս գները

տճում էին ոչ համեմատական չափով (պրոպրցիանալի-
հօ): Հողերի այս ձև գնահատելու շնորհիւ ստա-
ցուեց այն, որ հողաբաժինը որքան փոքր էր, այնքան
թանգ էր հստում նրա իւրաքանչիւր գեսեստինը: Այս հան-
գամանքից էլ նոյնպէս օգտում էին հողատէրերը, աշ-
խատելով որքան կարելի է փոքր հողաբաժին տալ: Յոյց
տալու համար թէ շնորհիւ այդ բանի ինչ զանազանու-
թիւն էր առաջ դալիս գների մէջ, բաւական է բերել
հետեւալ թուերը. Միմբիրովի նահանգում ամենամեծ
հողաբաժին ստացողին իւրաքանչիւր գեսետինը նըս-
տում էր 30—36 ր., իսկ ամենափոքր ստացողին 45—
51 ր.:

Յօդուածի այս մասում մեր զիխաւոր միաքը—յոյց
տալ որ սակաւհողութեան զիխաւոր պատճառը 1861 թ.
րեֆորմների թերի և անարդար օրէնսդրութիւնն էր,—
ողաբաժանելու համար համեմատենք այստեղ նախկին
կալուածատիրական գիւղացիների դրութիւնը նրանց հա-
րեան պէտական և թագաւորական տան գիւղացիների
դրութեան հետ: Այս վերջինների նկատմամբ բեֆորմնե-
րը իրագործուեցին ճիշտ այնպէս, ինչպէս որ առաջուց
նախատեսնուած էր, առանց որիէ կրծատութիւնների: Մը-
րանք ստացան այն բոլոր հողաբաժինները, որոնցով
նրանք օգտում էին մինչև բեֆորմները: Եւ սրանց
նադէնները ընդհանուր առմամբ տեղի մէծ են նոյն
իսկ նախկին կալուածատիրական գիւղացիների ամենու-
մեծ նադէնները: Բերենք մի քանը թուեր այս բանը
ողաբաժանելու համար: Ընդունելով պետական գիւղա-
ցիների ստացած միջակ նադէլը իբրև նորմա, որը կա-
րող է գոհացում տալ գիւղացու ընդանիքի կարիքնե-
րին, պրօֆ. Խողսկի հաշւում է որ նախկին կալուա-
ծատիրական գիւղացիներից (ընդամենը 10,608,100)
13,9^{0/0} (**$1\frac{1}{2}$ միլ.**) ստացել է այդ նորմայից աւել.
43,5^{0/0} (**$4\frac{1}{2}$ միլ.**) միայն բաւարար նադէլ և **42,5^{0/0}**

(համարեա նոյնքանը) անբաւարար ^{*)}: Հետևեալ աղիւսակը, սրը բերում ենք Բրոկհառովի բառարանի «Թիւղացին եր» վերնագրով յօդուածից (722 եր.) աւելի լաւ կը պարզի այդ զանագանութիւննը:

Ծունչ	առատ	բաւարար	պակաս
	0/0	0/0	0/0
Պետ. և թագ.	10,670,600	50,7	35,7
Կալուածատ.	10,608,100	13,9	43,5

Եթէ սրան աւելացնենք և այն որ տուաջինների հոգացին տուրքի չափը $2-2\frac{1}{2}$ տնդամ աւելի պակաս էր սահմանուած քան նոյն նահանգներում նախկին կալուածատիրական զիւղացինների յետպնման վճարները, հասկանալի կը լինի թէ ինչ մեծ անարդարութեամբ է վճռուել այս վերջինների վիճակը:

«Զի կարելի չէիշել», ասում է պրոբֆ. Մուհուկլու վը իր վերե յիշած աշխատութեան մէջ, որ հաղատիրական դասակարգը կը ունի է պատմական պատասխանատութիւն 1861 թ. բեֆորմների համար, և զրա համար էլ արդարացի է, որ նա այս պակասութիւնները ուղղելու մէջ ընդունի նիւթական մասնակցութիւն: «Այն որ հողատիրական դասակարգը, շարունակում է յարդելի պրոֆ., ճորտութեան իրաւունքի վերացման ժամանակ ստացաւ մի ստուար մաս այն հողից, որը գոնուում էր զիւղացինների ձեռքում և որոնցով նրանք օդուում էին, — պատմական փաստ է և մինոյն ժամանակ պատմական անբարեխղճութիւն, որը պէտք է ուղղել»:

Յաջորդ համարում մենք կանգ կ'առնենք ազրարային հարցը վճռելիս կառավարութեան քաղաքականութեան վրայ:

Երուանդ Սարգսեան

^{*)} Իրոֆ. Խօճկի стр. 243

ՀՆԻՐՄԱՏԵՍՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԵՏԵՆԻԽՈՍՈՒԹԻՒՆ

Ա. Վ., Արդյունաբերության և գործարքագույշ, «Մանկական պարտեզ», ձեռնարկ մայրի և գաստիարակչուհիների համար, նոոսաներով և նկարներով: Թիֆլիս, 1905, զինը 3 ո.

Մեր շնորհալի մանկապարտիզապանուհու այս ընտիր երկը նշանակալից ժամանակ է մտնում մեր աղքատիկ մանկավարժական աշխարհը: Այն, մեր մանկավարժական զրականութիւնը համարեա թէ չըբաւրութիւն աստիճանի է հասած: Հիւսիսային գառնաշունչ քամին փչոց ու քնքոյց բողբոջները մի ակնթարթում գետին տապալեց... Տիկին Արդութեանի «Մանկապարտէզը» հիմայ, մեր կրթական գործի վերածնութիւն խորհրդաւոր օրերում՝ գալիս է մեր ժողովրդի կրթութեանը մի կարևոր նպաստ մատուցանելու: Զափազանց մեծ պահանջ էր զգացւում մի այսպիսի ձեռնարկի, որ հնարաւորութիւն տար հայ ընտանիքին իր զաւակներին մայրենի լեզուով զաստիարակելու:*) Այս նպատակին աւելի կարծ ճանաւորաբնով հասնելու համար տիկին հեղինակը մի պարտականութիւն էլ զգացել էր, այն է՝ պարտիզպանուհիների դասընթացներ կազմակերպելը ֆրէօքելեան գաղափարները գործադրողներ նախապատրաստելու համար: Ափսոս որ արիւնուա օրեւը այս գեղեցիկ զիտաւորութիւնն էլ յիտաձգեցին: Այժմ մենք ունենք չափազանց շատ օրիորդներ միջնակարգ ուսումով, որոնք այդ դասընթացն անցնելով կարող էին ընտանիքներում մանկական խմբակներ կազմել և այս գեղեցիկ զրադունքով թէ օգտակար լինել և թէ ինքնուրոյն գործունէութիւն ունենալ:

Ուղիղ է և համակրելի հեղինակի այն ըմբռնումը, որ մանկապարտէզը իսկապէս մեծ ընտանիք է և եթէ այն կատա-

*) Այս պահանջը ես իրեն մանկավարժ ու հայր զգալով՝ չորս տարի առաջ պատրաստեցի մի «Մանկապարտէզն ընտանիքում» խորագրով ձեռնարկ: Նիւթական միջոցի բացակայութեան պատճառով այս էլ զատպարտուեց ծարւած միարու: Այդ գրքի ներածութիւնովը, որ լոյս տեսաւ «Հասկերի» 1—4 համարներում՝ մանկական խաղի ու աշխատանքի իմաստն ու խորհունդը հարցանէր ծնողներին պարզելու համար: Ուրախ եմ որ այս գործը ձեռնհաս մարդ յաջողցը եց:

բում է այդ գերը, ուրեմն կանգնած է ուղիղ ճանապարհի վրայ։ Այս հաստատութիւնը ունեցել է և ունի հակառակ հոսանքներ իսկապէս այն պատճառով, որ նրա հետեւրդներից շատերը տառացի հասկանալովն ըստ գաղափարները, կոյք պահպանողականութեամբ ընթանալով միացրել են մակապարտէզի թարմ ոգին և մանկան անկիւնոցի հն վերածել այդ համակրելի հաստատութիւնը։ Առողջ մանուկը արթուն ժամանակ շարունակ խաղում ու պարապում է։ Պէտք էր դիտել ու հասկանալ այդ զբաղմունքների ոգին ու խորհուրդը և կազմակերպել աւելի նպատակայարժար խաղ ու պարապմունք՝ մանկական կեանքի այդ նշանակալից օրերը պատահականութեան չդատապարտելու համար։ Եւ այս մեծ զործը կատարեց մանկասէր ֆրէօրելը։ Նա առում է. «Ես վերադարձնում եմ մանուկներին այն, ինչ որ նրանցից առել եմ», այսինքն՝ իր ամբողջ սիստեմը նա հիմնել է իր արած զիտողութեանց վրայ։ Մանկապարտէզի բուն աղբիւրը ուրեմն հարազատ է և վճիռ, պղտորողները նրան հնասկացողներ են։

Ֆրէօրելի բանիմաց հետեւրդները հետզհէտէ թարմացնում են մանկապարտէզը զբականութիւնից, գեղարուեստից ու բնութիւնից առած նորանոր նիւթերով և վարպետի մտքից չանցած տարբերով ճոխացնում են այս խորհրդաւոր հաստատութիւնը։

Ֆրէօրելի հիմնական գաղափարն այն է, որ մանուկը իր խաղակերպ զործունէութեամբ արտայայտում է մարդկութեանն կուլտուրական նախնական ընթացքը։ Մանկական խաղերն ու պարապմունքները մարդկութեան կուլտուրական ճիգերի պատ ու համառոտ վերաբարպրութիւնն են ներկայացնում։ Ահա այս ելակետից պէտք է մենք մօտենանք Ֆրէօրելի սիստեմի գնահատութեանը, մի կողմ թողնելով նրա բնագանցական-հողերանական բացատրութիւնները, որոնց հոգերանական հիմունքը սակայն, հակառակ թէորեան, այնքան էլ խախուտ չէ, որքան կարծում է հեղինակը։ Առարկաների նման ու հակազիք յատկութեան շնորհիւ է, որ մենք կարողանում ենք ըմբռնել նրանց էութիւնը, եթէ ոչ՝ նրանցից մեր ստացած ապաւորութիւնները մշուշապատ կը մնային։

Արդ՝ զալով մանկապարտէզի նիւթերի սիստեմին՝ ես նոյնպէս ընդդէմ լինելով մեքենայական դասաւորութեանը՝ չեմ կարող սակայն համաձայնուել հեղինակի հետ, երբ նա բոլորովին ընդդէմ է զբաղմունքների բնական դասաւորութեանը։ Այն, կարելի չէ, որ մանուկը իր կեանքում զրուած լիներ այնպիսի պայմանների մէջ, որ նրա աճման հետ միասին նրա վրայ ապրող առարկաները հետեւղաբար ընթանային պարզից դէպի-

բարդը, բայց և այնպէս՝ ուսուցման գործում այդ առաւորութիւնների ընթացքը մենք չենք կարող պատահականութեան թողնիլ: Մանուկը կեսնրից բերում է նույնիւթեր, իսկ մենք պարտական ենք այդ նիւթերը մշակել հոգերանական ցուցմունքներին համապատասխան: Աւելի պարզ կը լինէր այս սիստեմը մանաւունդ ոչ մասնագէտ մայրերի համար, եթէ տեխնիկական խաղերի որոշ զգուազների վերածուէին՝ կուլտուրական պատմական ընթացքը ու զգեցոյց ընդունելով: Ամենից փոքրիկների համար այդ պարապմունքներից կը նշանակուէին նախ առանց գործիքների ձեռագործները, տուա հետազնետէ գործիքների պարապմունքները: Խոկ ինչ վերաբերում է տեխնիքական խաղերին՝ պէտք է բնորոշուէին նրանց մէջ երեք տարրեր՝ ըմբռունողութիւնը զարգացնող ձեւեր, ճաշակը զարգացնող ձեւեր և գործնական կեանքից (արհեստից ու արուեստից) վեր առած ձեւեր և ըստ այնու այս նիւթերի համախմբման վերաբերեալ ցուցմունքների տրուէին:*

Հեղինակի շարժական խաղերին վերաբերեալ հայեացակէտը պարզ չէ. մի տեղ (141 եր.) նա գրում է. «Որսորդ խաղացող մանուկը տարւում է խաղով, ինքն իրան մուանում է, նա մանուկ չէ, որ ներկայացում է որսորդ, այլ իրօք իրան երեակայում է հասակաւոր որսորդ: Շարժական խաղերը իրանց սիւժէտը պիտի վերցնեն մարզու միայն ֆիզիքական յատկութիւններից և բնութիւնից և տակաւին չշօշավիեն մաքեր ու զգացումներ»: Եւ 143 երեսում՝ «Մանուկն ունի անդիմազրելի ձրդառում—նմանուել ամեն բանի, ամեն ինչ վերածել գրամայի:» Ուրեմն ինչպէս կարելի է այս խաղերում չշօշավիել մարդեր ու զգացմութենելու: Ո՞չ, մանուկը նոյնիսկ անշունչ առարկաներին մաքեր ու զգացմունքներ է վերաբրում և նրանց հետ յարաբերութեան մէջ է մանում նաև կարեկցութեան, ինդակայութեան ու ընկերական սիրոյ զգացմունքներով:

Հեղինակի որոշ չափով ազատ վերաբերմունքը վարպետի

*) Ուշադրութեան արժան է իտալական մանկապարտէզի ողին՝ զգայարանքներն ու ճաշակը զարգացնելու առանձին շեշտով. տեսողութեան համար խառնում են թափանցիկ գործանակների մէջ զոյնզգոյն հեղուկներ, մանկապարտէզի բոլը առարկաները ծիածանի պէս երփներանդ են, ուզութիւնները որոշելու համար առանձին վարժութիւններ ունեն Լսողութեան համար գործեր են անում բաժակների, զանգակների հնչիւնների վրայ: Շօշափելերը զարգացնելու համար խուփ աչքերով իրերի ձեւերը, մեծութիւնը ուրոշել են տալիս, ծանրութիւնը, ջերմութիւնը համեմատել տալիս: Հոտհատելիքը վարժեցնում են համեմունքով, նոյնը ճաշակը:

սիստեմի զործագրութեանը համակրելի է, օրինակ՝ գոյները նա ցոյց է պալիս վորանակ գնդակների՝ բնական ծաղիկների վրայ, բայց երբ նա երորդ նույնը փոխանակ 8 խորանարդից՝ 10 ից է բաղադրում, այդ՝ ըստ իս' սխալ ընթացք է: Թուառանութեան համար 10 առարկայ միւս խաղերն էլ կը ներկայացնեն (առանձին էլ պէտք չկայ ոչ միայն շտապելու, ոյլ փորբներին 10 հաշիւը սովորեցնելու). բանս այն է, որ այդ 8 խորանարդները առաջանում են մի մեծ խորանարդից 3 հատուածով: անալիզի եւ սինթեզի գաղափարներն են խսկապէս, որ այստեղ ինկատի պէտք է առնուին:

Ընդհանուրապէս ասած՝ նեղինակի ընտրած տեխնիքական խաղերի ու պարապմունքների նիւթերը ճոխ ու բազմակողմանի են, բայց պակասում են այլ ձեռնարկներում ընդունուած կոր ձեւերով փայտէ մարմինները շնութեան համար, թելով, աղեղներով (ժետաղեայ) ու ջոխիներով խաղերը: Կարեոր էին նաև ցուցմունքներ հիւսելու և թուղթ ծալելու վարժութեան համար, ամեն մարդ այդ բաները չի իմանալ:

Նկարչութեան վերաբերմամբ գիտուութիւնն այն է, որ աւելի լաւ կը լինէր «մանկական նկարչութիւնից» ոկտել, այն բաներից ամերիկական միթուով, որ նրանց զրագեցրել են ընտանիքում՝ կենդանիների ու այլ առարկաների մի քանի գծերով ընորոշելով: Մանկական աշխարհին այս սիրելի նկարչութեան ձևնարկ կայ արգէն: Հեղինակի մանկադարսէկում զործագրուում է այս: *)

«Պատմութիւններին» վերաբերեալ խորհրդածութեան մէջ հեղինակը թէկ ուղիղ հայեցակէտ ունի հերիաթների նկատմամբ, սակայն իտկական մանկական հերիաթներ նա չէ տուել: Ցիշը է ի միջի այլոց Աղաեանցի հերիաթները, բայց օրինակ՝ ոչ Պախատարը, ոչ Եղիպահներին, Ռոլիկները... չեն մտած այդ պատմութեանց շարքը: Կենդանիների կեանքից վեր առածների մէջ կան բաւականին թուով ընտիրներ, բայց և մասամբ ձգձուածներ ու քիչ արժէք ունեցողներ:

Ուրախալի է, որ Մարշ եւ երգեր հատուածում տեղ բանին են նաև մեր անգիր ու զրաւոր բանահիւսութիւնից նիւթեր թարգմանականների հետ: Այս նիւթերից № 3, 5, 20, 25, 27 կամ իբրև այս հասակին անհամապատասխան կամ շատ տեսնդենցիօգ կարելի էր դուրս թողնել:

*) Տես այս մասին եանժուլի գրուածքը:

Մին էլ՝ ըստ իս լաւ կը լինէր քաղետախտակները ուղղահաեց պահել տալ, այս զիրքով զգութիւնը նախապատրաստելու համար:

Այս ձեռնարկի տմհնասիրուն զարդն է բանահիւսական քածնը երգեր շարժական խաղելով հատուածը: Այս տեսակի խաղերը մանուկների սրտից բղխած, մանկական սրտով սիրած խաղերն են: Մարդկանց, կենդանիների ու թռչունների կեանքց վնջուած այս չընադ, գունագեղ երևոյթները իսկ որ կարող են չնորհալի պարտիզանունում ձեռքում մանկապարտէզը իսկական դրախտի փոխարկել մանուկների համար անմոռանալի օրերով լցնել նրանց կեանքի այս արագասահ երջանիկ շրջանը: Այս հատուածի մէջ թագաւորում է բուն ժողովրդական մանկական բանահիւսական ոգին, որին այնպէս սիրուն, այնըստ անուշ, գողարիկ արտայայտութիւն է տուել մեր անզուգական Աղայեանցը:

Այսո գալիս է պարելզիրի, փոքր հատուածը, որի մէջ դարձեալ մեր բաւն ժողովրդական մատիւները և այս մոտիւներով բանահիւսածներն են համով-հոտով:

Վերջապէս՝ տեղ են բանում խաղերն առանց՝ երգերի՝ մեր մայրական տան դասերը՝ իբրև մշակուած արտայայտութիւններ մակական գողորդիկ թոթովանքի:

Այս գրքին յաւելուածի ձեռվ կցուած են 72 համ եւրոպական նիշերով ձայնագրուած մանկական երգեր, սրոնք անշշուշտ շատ կը նպաստեն այս գեղեցիկ եղանակների ներմուծմանը մեր ընտանիքներում:

Ասելիքս երկարացաւ, ուստի հարկ կը լինի մնացած խճանկիրների մասին միայն մի քանի զիսողութիւններ անելով բաւականանալ, պատճել փորբիկներին սիրած զրադմունքներից զրկելով հակամանկավարժական միջոց է: Ալզ տողերը թերես պատահարար ոսպրատ են և նեղինակի մանկապարտէզի դաստիարակչական սիստեմի հետ կազ չունին: Ֆրէօբելը հակառակ էր պատիճներին: Դործածում են օտարազգի գժուար բառեր դասաւանդութեան մէջ: Կան մի քանի տեղ շփոթած բառեր՝ թեք, ուղղահայեաց, կոր գծեր միենոյն բանը չեն: Դասաւանդութեան լեզուն աւելի պէտք է մշակել, որպէսզի բոլորովին զուտ մանկական դասնայ: Պատկերների միջոցով կարելի չէ երկրագնդի, զլորուսի, ծովի և այլն մասին գաղափար տալ և պէտք էլ չկայ այս հասակում: Ինչու ուր հնարաւորութիւն կայ, ամեն մի մանկան առանձին առանձին մարդեր չտալ ցանել-խնամելու. համար: Կենդանիներ խնամելու պէտքն էլ կարեւոր էր վեց հանել:

Ահա տիկ, Արզութեանի «Մանկական պարտէզի» համառոտ նկարագիրը, որ աւարտելուց յետոյ ձեզ եմ դիմում, հայ մայրեր, զրկեցէք ձեր ընտանիքը մի այլ բանից և ձեռք բե-

րէք այս ընտիր գիրքը, ձեր մանուկների երջանկութեան աղբիւրներից մին: Բայց ափսոս, որ «Մանկական պարտէզը» մեծածախք գիրք լինելով՝ մատչելի չպիտի լինի հէնց այս հայ մայրերից շատ շատերին, որոնք որ բուռն ցանկութիւն կ'ունենային այն ձեռք բերելու իրանց սիրասուն զաւակների համար: Գոնէ բաղմաթիւ ընտանիկան մանկապարտէզներ կազմակերպուէին:

Այս ձեռնարկը գործածելու համար պիտոյքները շինել տաւրը կամ ձեռք բերելը դժուարութեան կը հանդիպէր: Ցանկալի էր որ մէկը ձեռնարկէր էժանազին ժողովածուների պատրաստութեանը: ¹⁾

Յ. Տէլ. Միլակնան

Die Verfassung des persischen Staates. (Պարսկաստանի ոկտական կազմը).
Berlin, 1904, von Dr James Greenfield.

Այս ստուար գիրքը իր տեսակի մէջ միջազգային իրաւունքի պատմութեան էջերում իր աեղն է գրաւում. առաւել ևս գերմանական գրականութեան մէջ, ուր անդիմականի ու ֆրանսիականի համեմատութեամբ այնքան քիչ բան կայ նույիրուած Պարսկաստանի բաղաքական և տնտեսական կեանքի ուսումնասիրութեանը:

Այս աշխատութեան մէծ առաւելութիւնը կայանում է նըրանո մ որ հեղինակը ծանօթ լինելով թէ արիներին և թէ արևմտեան լեզուներին, ձեռքի տակ է ունեցիլ մինչև այժմ այդ մասին լոյս տեսած գրեթէ բոլոր աշխի ընկնող աղբիւրները. մամնագէտի համբերատարութեամբ կարդացել է Շարդէնի, Ժուրդէնի, Մալքոլմի և այլոց միծահատոր աշխատութիւնները, Կըրպէնի ճանապարհորդական սրամիտ դիտողութիւնները, հայկական և պարսկական գրաւոր աղբիւրները և քաղել այդ բոլորից կարեոր եղածը կարճ ու ամիով կերպով: Ապա որ-

1) Այս առիթով այցելեցի հեղինակի մանկապարտէզը՝ ձեռնարկում արտայայտուած գաղափարների գործադրութիւնը իրականութեան մէջ տեսնելու համար: Տպաւորութիւններս գեղեցիկ էին: Մանուկների խաղերի ու պարապմունքների մէջ ես տեսայ աշխոյժ ինքնուրոյնութիւն: Ափսոս որ զուտ հայկական մանկապարտէզ չունենք: Այս առիթով տեղեկացայ, որ տիկինն ինքը պատրաստել է պիտոյքներ, որոնց ամբողջ ժողովածուն սակայն շատ անմատչելի կը լինէր ծնողների մեծամասնութեան: Ուստի առաջարկեցի ամեն մէի հասակի համար առանձին ժողովածու կազմի:

պէս բնիկ պարսկահայ աւելացրել է այդ բոլորի վրայ իր յատուկ ուսումնասիրութիւնները և անձնական գիտողութիւնները, լրյա սփոկելով միանգամայն երկրի ներկայ կացութեան վըրայ:

Ամբողջ աշխատութիւնը կրում է իր վրայ գիտնականին վայել օբեկտութեան դրոշմը. նկարագրելով Պարսկաստանի տնտեսական և քաղաքական քայրայման տիսուր վիճակը, հեղինակը տալիս է մեզ միայն փաստեր՝ եզրակացութիւններ դուրս բերելու, առանց իր կողմից յարձակուելու այս կամ այն իրողութեան վրայ, Ըստհակասակը, առանձին ջանքով աշխատում է գովել այն, ինչոր գովասանքի արժանի է. օրինակ, վերջին երկու Շահների ազատամիտ ձգառնները երկրի բարենորագութեան վերաբերեալ:

Այս գրքի հայերէն թարգմանութիւնը, չնայած իր մասնագիտնական լինաւորութեանը, օգտակար կը լինէր ընթերցողի համար:

Ներկայ յօդուածովս կը բաւականանամ. միայն յիշել գրքի համառօտ բովանդակութիւնը, գլխաւորապէս երկրի կրթական և տնտեսական վիճակի մասին եղած ստատիստիկական տեղեկութիւնները. Այդ գրքի ամրողջ յառաջարանը, որը վերաբերում է Նասրէդղին Շահի բարենորոգչական ձգտումներին և նրա յաջորդի օրով տեղի ունեցած անցքերին, արդէն տպուել է անցեալ տարուայ «Մուրճ»-ում:

Գիրքը բաղկացած է չորս գլուխներից.

1. Պետութեան կազմը և կարգաւորումը.

2. Թագաւորութիւնը.

4. Կառավարչական օրգանները և

4. Ցաւելուած, որ իր մէջ պարունակում է երկրի ընդհանուր վիճակի մասին տեղեկութիւններ—լուսաւորութեան, առողջապահութեան, առևտուրի, երթևեկութեան, ֆինանսների և այլն:

Իրանի 1,645,000 քո. մզոն տարածութեան, վրայ տպառում է 9 միլիոն ազգաբնակութիւն հետևեալ կերպով. հայեր 50,000 (որոնցից 80—90% երկրագործներ են, իսկ միացածը արհեստաւոր, վաճառական և գինեգործ). Ասորի նեստորականներ թուով 25,000, ապրում են մեծ մասամբ Խոյի և Ռումիոյ դաւաներում—ճարպիկ երկրագործներ և թափառական խաչազողներ: Հրէաներ թուով 26,000 չքաւոր և արհամարտուած. պարապում են երկրագործութեամբ և մանր առևտուրով: Պարսկա կամ գերբեր, հին կրակապաշտ պարսիկների մնացորդներ, որոնք հակառակ իրանց դէմ մղուած կատաղի հալածանւ-

քին, շարունակում են պաշտել Զբաղաշտի կրօնը, թուռվ ընդամենը 9,000 հոգի: Ազգաբնակութեան մնացած մասը պարսկէներ են: Երկրի բնակչութեան 55%՝ը գիւղացիներ են, 22%՝ը կամ 909 հազար հոգի թափառական և վրանաբնակ ցեղեր, իսկ մնացած 23%՝ը կազմում են արհեստաւորները, մասը ուժեծ առետրականներ, մշակներ և այլն:

Շիա իսլամական օրէնքի հարազատ աղբիւրը կազմում է զուռամնը. յետոյ զանազան դարերից մնացած շիա իմամների սրբազն աւանդութիւնները, որոնք հետզհետէ մշակուելով Հեծրէ 602-թուին վերջնականապէս հրատարակուել և սանկցիա են ստացել:

Դատարաններ երկու են, հոգնոր և աշխարհական: Մէկի կամ միւսի զերակլշուռութիւնը կախումն է այս կամ այն իշխանութեան ազդեցիկ լինելուց:

Հրապարակային կրթութիւնը բացառապէս գտնուում է հոգևորականների ձեռքին: Գրել կարդալը խիստ աարածուած է պարսից մէջ և ամեն մի մզկիթ նիրկայացնում է մի գարոց: Հարուստները ուծ մասամբ իրանց զաւակներին կրթում են տանը զաւատիարակիչների ձեռքով: Պարսից բարձր անուանուած կրթական հաստատութիւնները յայտնի են մեղրէսէ անունով. բարեպաշտ բարերարներից հիմուած հոգնոր սեմինարներ են գրանք, ուր պատրաստում են բարձրաստիճան հոգևորականներ, ուսանողները կամ թելելէները ուսանում են այդտեղ իսլամուկան աստուածաբանութիւն, արարերէն, տրամարանութիւն, քերականութիւն, բժշկութիւն և այլն (յայտնի գարոց ներում արար հեղինակների ձեռնարկներով):

Այդպիսի մեգրէսէնների թիւը քաղաքներում շատ են: Նասրէդին Շահից սկսած Պարսկաստանում բացւում են եւրոպական իմաստով գարոցներ, ներկայում այդպիսի գարոցների թիւը երեխ 10-ից աւելի է, աւելի քան 3000 աշակերտներով: Այդ տեղ աւանդում են արարերէն, պարսկերէն, ֆրանսէրէն, շատ աելքերում նաև ագլերէն ու սուսերէն, թուարանութիւն, պատմութիւն, աշխարհագրութիւն, ֆիզիկա և այլն: 1900 թ. Թէհրանում արտաքին գործերի նախարարութեան կողմից բացուած է մի բարձր գործոց, յատկապէս մարդիկ պատրաստելու արտաքին գործոց ծառայութեան համար:

Լրագրութիւնը Պարսից մէջ սկսուել է 1850 թուից, երբ առաջին «Իրան» անունով թերթը հրատարակուեցաւ մեծ գեղիր Միրզա Թաղի խանի ձեռքով. ներկայում Պարսկաստանում հրատարակում են 10-ից աւելի թերթեր, մեծ մասամբ

պաշտօնական շարաթաթերթեր, ուր կրիտիկան ու պանֆլետները տեղ չեն գտնում:

Տնտեսական կացություն: Հոգային սիստեմը Յ կարգի է.

1) Պետական կամ արքայակատկան հողեր (խալիսէ).

2) Մասնաւոր մարզկանց հողեր (արբարի) և

3) Գիւղացիների սեփականութիւն համարուող հողեր (խորդէ մելիքի):

Սակաւ առարելութեամբ ոչ մէկի վիճակն էլ միւսից լու չէ և ազգարնակութեան մհծամասնութիւնը որպէս ճորտ (թէն օրէնքով գիւղացին աղատ է համարում) դատապարաւած է այս ու այն անկուշտում աղայի, պետութեան գործակաների և ազրուկ հոգեռականների հարստանարութեանը: Ուզդրովի և անուղղակի հարկերը, տուգանքներն ու վեշքեջները խեղճ գիւղացուն մինչև մուրացկանութեան գուռն ևն տանում: Հնում՝ պարսիկ գիւղացին մշակում էր իրան պատկանող հողաբաժինը և կամ տիրոջից վարձու վերցրած գետինը, և զրանից որոշ բաժին հանում կալուածատիրոջ համար. իսկ մի տեղից միւս տեղ տեղափոխուելու համար իրաւունքը կախուած էր իր աղատ կամքից: Սասանեան հարստութեան, մանաւանդ արարական արապետութեան ժամանակ, հողերի մհծամասնութիւնը գիւղացիների ձևոքից գուրս զալով, անցաւորապէս սեփականութիւն ազնուականութեանը—զանազան մոնղոլ, սելջուկ ու թաթար աղամների, որնոք առողջ որմէ պատասխանաւութեան շահագործում էին իրանց սայաններին: 18-դարում ուղղակի իշխում էր ճորտայրն սիստեմը և կալուածատէրերը իրաւունք էին համարում նորինիկ սպանելու իրանց հպատակներին, համարելով իրանց հողի և ջրի, ապա ուրեմն, և բնակիչների տէրը:

19 զարում կաջարեան միտպեաները աշխատեցին քիչ բարւոքել գիւղացու զրութիւնը և բարեմտտ նասրէզզին Շահի հրամանով գիւղացին կրկին իտշլիշին ճանաչուեցաւ (աղատ փոխելու իր բնավայրը). ստկայն իրօք զրութիւնը գրեթէ նոյնը մնաց և այսօր գիւղացին կրկին տասապում է աղայի ձեռքում և նրա արդար բողոքը կինդրունական իշխանութեան. հեռաւորութեան և կաշառակերութեան նորհիւ խեղդում է:

Գիւղական առաքերի մէջ ոչ մի միօրինակութիւն չկայ, այլ զա կամայականութեան շնորհիւ առաբեր է եղել աարբեր ժամանակների և տարբեր տեղերի համար: Այսօր հարկերը զրեթէ նոյն ձեռք են վերցնուում, ինչպէս Սեփեւ վիտեան ժամանակ, օրինակ Մազանդարանում եկամուաը բաժանուում է օ մասի, մէկ բաժինը տրւում է հողին, մէկը ջրին, մէկը սերմացուին, մէկը աշխատանքին և մէ-

կը արօրին.—սրանից երկու բաժինը վերցնում են հողատէրերը որպէս հողի և ջրի տէր, իսկ մնացած Յ-մասը մնում է գիւղացուն, որից նա պիտի հոգայ սերմացուն, տաւարը և այն, ուրիշն աւելի պակաս քան կէսր:

Այս կոմիկական և միանգամայն բնորոշ սիստեմը այս կամ այն կերպով իշխող է ամրող Պարսկաստանում:

Արտի՛նարերութիւն եւ ճանապարհների նաղորդակցութիւն

Արգիւնարերութիւնը այսական տնտեսութեան շրջանումն է գտնուում. ամեն ինչ պրիմիտիւ է, նուրբ և արժան ձեռագործներ արտադրելու պայմանները պակասում են. մեքենաներ և գործարաններ գրեթէ չկան. երկիրը հարուստ է բնական բերքերով, սակայն անմշակ. իսկ մշակելու համար հարկաւոր եղած գործիքները ու հում նիւթը տեղափոխելու համար ճանապարհներ չկան. կեանքի ու գոյքի տպահովութեան բացակայութեան շնորհիւ եւրոպացին ևս դժուարութիւններ է կրում այստեղ ոքեև լուրջ ձեռնարկութիւն անելու: Երկրի յառաջանակ մասամբ խանգարում են նաև երկու շահազըրգուուած պետութիւնների միմեանց հետ ունեցած մըցութիւնը, որոնք աշխատում են չքացնել միմեանց ազգեցութիւնը. օրինակ Նասր. Շահի 1872 թ. անգլիացի ձեռնարկու Ռեյտերին ճանապարհների համար շնորհուած խիստ կարեոր և ընդարձակ ծրագրով կոնցեսսեան, խորտակուեցաւ ոռւսաց զիուլումատիայի շահերի առաջ, և մինչեւ 1910 թիւը Շահը ոչ մի զլիսաւոր ճանապարհ շընելու արտօնութիւնը ուրիշին յանձնելու իրաւունք չունի:

Պարսկաստանում կամսնաւոր շոսէ ունին միայն միքանի յայտնի կէտերը միացնող ուղիները. օրինակ, Մեշէդ-Ասխաբադ, շինուած պարակներից, Ղազվին-Ռէշտ-Փիրաբազար, Ղազվին-Թէհրան և շուտով կը լինի Ղազվին-Համադան և Զուլֆա-Թաւրիզ-Ղազվինեան գծերը—ուռւսաց կողմից: Անգլիայի կողմից էնվագ-Սպահանի քարավանի ճանապարհը, այսպէս կոչչուած Լինչի փողոցը, Շուշտէր-Սուլթանարադ, Ղում-Թէհրան միացնող գծերը և այլն:

Աւելի անկանոն վիճակի մէջ է ջրային հաղորդակցութիւնը. միակ նաւարեկելի գետը Կարունն է համարում, ուր երկու պարսկական նաւեր կան: Պատերազմական նաւերը Պարսկից ծոցում ընդամենը երկու են. մէկ մեծը (600 թոն) և մի փոքրը. իսկ կասպից ծովի վրայ պատերազմական նաւեր պահելու իրաւունք չունին:

Բարեկարգ վիճակի մէջ են գտնուում փոստերն ու մաք-

սերբ, որոնք 1902 թուից յանձնուած են բելգիացիներին. զրանց կամհնում են յանձնել նաև անցտպրեն ու հարկերը:

Հետազիրը հաստատուել է Պարսկաստանում առաջին անգամ անցեալ դարու 50-ական թուականներին կառավարութեան ձեռնարկութեամբ. ստկայն ժի քանի կարևոր գծեր հիմնելու համար աջակցել են անգլիացիք, անցկացնելով միաժամանակ իրանց համար հետազրական գծեր Պարսկաստանի վրայով մինչև Հնդկաստան: Արտահանութեան գլխաւոր առարկաներն են՝ գորգ, չոր մրգեղին, մետաքս, բամբակ, շալ, օպիուս, մարգարիտ, կենդանիներ, մեղր, իւզ, վարզի ջուր և այլն:

Ներմուծուող ապրանքներն են՝ ցորեն, սաւթ, շաքար, արծոթ, բրդի և բամբակի գործուածներ, անօթեղին և այլն:

Ներմուծուող ապրանքները մի քանի միլիոնով տւելի են, քան արտահանուալ: Մի քանի տասնեակ տարիներ առաջ բաւականաչափ սոկի կար երկրում, իսկ այժմ միայն արծաթն է շրջանառութեան մէջ:

Պարսկաստանից արտահանուող ապրանքների մեծամատնութիւնը Ռուսաստանն է մանում, ինչպէս և արտաստանմանից ներմուծուող ապրանքների մեծամատնութիւնը սուսականն է. այսպէս, օրինակ, գիս 1899 թուի ստատիստիկայով Պարսկաստանից Ռուսաստանն է մահել 21,696,000 բուրլու ապրանք և Ռուսաստանից Պարսկաստան 17,859,000 բուրլու: Վերջին տասնեակ տարիներում, մանաւանդ մաքսային նոր պայմաններ կապելուց յետոյ, սուսաց վաճառականութիւնը հսկայական քայլեր է անուում. ստկայն չպէսաք է մուսանալ որ հարաւային Պարսկաստանում անգլիական առևտուրը գերակշռում է սուսականին: Բելգիացիներից կազմած մի ստատիստիկայի համաձայն 1901—1902 թուականներին զանազան երկներից Պարսկաստան ներմուծուող տարեկան ապրանքները հետևեալ կարգի և արժեքի էին.

Ռուսաստան	11,375,558	թուման	Աղքանիստան	268,851	թում.
Անգլիա	10,611,232	»	Գերմանիա	238,275	»
Ֆրանսիա	2,388,707	»	Մնացած երկները մի-		
Տաճկաստան	1,251,517	»	ասին	577,055	»
Աւստրո-Ավստրիա	1,208,046	»			

Ներմուծուող ապրանքների ընդհ. գումարը=27,919,241 թումանի: Եթէ սրա հետ հաշուենք հարաւից Կարուն գետի միջոցով ներմուծուած ապրանքների արժեքը, տարեկան 300,000 թումանի, և զրամահատութեան համար ստացուած արծաթը

1,949,000 թումանի, կը ստանանք 1901—1902 տարուայ ընդհանուր թիւը 30,16 միլ. թուման:

Պետական եկամուտը, որ կազմում է զլխառորապէս զիւղական հարկերից և արքայապատկան հողերից, 1900 թուի հաշուի համաձայն համարում է տարեկան 1,400,000 ֆունտ, որի վրայ պիտի աւելացնել և անողղակի հարկերը ու փեշթչները:

Պետութեան ելքը լորդ Կրգոնի տուած ստահիստիկայի համաձայն 1888/89 թուին համում էր 4,223,347 թումանի, և որովհետեւ պարսից զրամի արժէքը այդ ժամանակից սկսած մինչեւ այսօր աւելի քան 60% ընկել է, ուրիշն ներկայումս ելքը աւելի պիտի բարձրացած լինի:

Պետական ծախսերի մեծամասնութիւնը արւում է ափեղցիք բաների համար, այսպէս, օրինակ, թոշակներ արքայադներին, ազնուականներին և հոգեորականութեան:

Միայն հարեմի և թիկնապահների համար ծախսում է տարեկան աւելի քան 500,000 թուման:

Հաշուած է Նասրէզին շահի կառավարութեան օրով պարագիտ հոգեորականութեանը տուել է տարեկան որպէս թոշակ 500,000 թումանի նուէր:

Եւ եթէ վերոյիշեալ ծախսերի վրայ աւելացնենք պետական պարագը, որ ներկայում 32 $\frac{1}{2}$ միլիոն բուրլու է համում և այս բոլորին էլ գանձարանը գատարէլ է, կը տեսնենք թէ որքան ողորմելի վիճակի մէջ է երկիրը ներկայումս և որչափ բայցայուած է նրա տնտեսական դրութիւնը:

Հարեմական խորը քնի մէջ մրամուզ, արտաքուստ եւրոպական դիվլոմատիայի և ներքուստ ազէտ ու ֆանատիկ կղերի ճիրաններում կաշկանդուած Պարսկաստանը ինքնուրոյն վերակենդանութեան ապացոյցներ գրեթէ ցոյց չէ տալիս:

Անդրկովկասը հիւսիսային Պարսկաստանին միացնող երկաթուղու գիծը շուտով պատրաստ կը լինի, որին կը հետեւ, երեսի, միւս կողմից հարաւային Պարսկաստանի հաղորդակցութիւնը անգլիական կարոնեաների հետ:

Կոլոնիական քաղաքականութիւնը և օտար կապիտալի մուտքը շահնշանի միջնադարեան երկրին՝ բոլորովին նոր կերպարանը պիտի տան:

ԴԵՌԱՀԱՍՄԵՐՆ ԽՆՁ ԿԱՐԻՎԱՆ *

(Յ. Տէր-Միքաքեանի)

59. Մուկուչի հիալիկը պ. Նեղվանովի, թարգ. Գ. Ա. Թ.
Թ. Հ. Հ. Բ. 1891, գին 15 կոպ:

Ոչ բելետրիստական և ոչ էլ բնապատմական գրուածքի
բնաւորութիւն ունի: Աւելի աղուէսի՝ քան հաւիկի մասին է
խօսուում: Առանձին արժէք չունի:

60. Նալ և Դամայանթի Ֆ. Շմիդտի: Թ. Հ. Հ. Բ. 1891.
գին 20 կոպ, 96 միշ, եր:

Սիրուն ու կրթիչ բովանդակութիւն ունի, որ արտայայ-
տուած է թեթև ու ընտիր թարգմանական լեզուով: Զերմ սի-
րով կապուած երկու ամուսինները՝ շնորհիւ Թալի չար ոգու
նախանձին՝ անպատմելի թշուառութեանց մէջ են ընկնում.
Նալ թագաւորը քուէսխազով իր խորթ եղրօրը տարւում է իր թա-
գաւորութեան հետ ամբողջ հարստութիւնը, ամբողջ ընտանի-
քով անտուն անտէր գառնում, կնոջը թողնում փախչում է,
զաւակներից հեռանում: Երկար ու ձիգ տարիներ ծանր տառա-
պանք կրելով թագաւորն ու թագուհին վերջապէս իրար գտնում
են ու նորից նախկին երջանկութեանը հասնում:

61. Նապաստակը, թարգմ. օր. Ն. Ղուլիջանեանի. Թ. Հ.
Հ. Բ. 1896, գինը 7, կոպ.

Ոչ բելետրիստական է և ոչ էլ բնապատմական: Դժուար
է հասկանալ այս գրքոյի իդէան:

62. Շատատ Ա. խարումովայի, թարգմ. օր. Ն. Փ. Մու-
կուա, 1896, գինը 25 կոպ.

Չափազանց բարոյակրթիչ տենդենցեա ունի. մանկանը
անընական բարեսրտութիւն է վերագրում: Գեղարուստական
արժէք չունի այս գրուածքը:

63. Ռինէ: Քրիստ. Շմիդտի, թարգմ. Վիշապազունի, 1878
129 միջակ եր.

Մի 12 տարեկան ազքատ պատանի հրաշքներ է գործում.
Ֆրանսիական յեղափոխութեան ժամանակ բանտից ազատում է
ոչ միայն մի գուքսի աղջկան (Ռոբէսպիէրը թոյլ էր տուել, ու-

*) ՏԵս «Մուը» № 1.
Փեարուար, 1906.

բովհետև գողերին մատնացոյց անելով՝ այս պատմին նրա աշքն էր մտել), այլև իր հօրը՝ խաքէութեամբ մի աղքատ մարդի բանափ մէջ նրա տեղը թողնելով։ Անձաշտկ, անբնաշեան զրուածք, բարոյական տեսակէտից էլ պարսաւելի:

64. Սովորակ և խոզարած Անդերսնի Թարգմ. Տ.Նաւասարդ պեանցի, 1882.

Այս վէպիկը Անդերսնի առաջնակարդ գրուածքներից չէ։

65. Սօվուակ և օձ Օստրովորսկու ժողովածուից, Թարգմ. Տ.Կոստանեանցի, Թֆլս, 1894, գին «Հարուսալ» և աղքատը» ու «Աստղէ գրամ» գրուածքների հետ 7 կոսկ.

Հաւատարիմ ծառային հրաշքով հասկանալի են դառնում կենդանիների լեզուն։ Մըջիւնի, ագռաւի ձագերին ու ձկներին լաւութիւն է առնում, սրանք էլ իրանց կողմից աջակից են լինում նրան թաղաւորի աղջկայ ձեռքին արժանանալու։

Ըստիր է.

66. Սիու-Լիէն, Տ.Կոստանեանցի այլ 4 չինական առասպեկտի հետ թարգմ. Թիֆլ, 1895. 104 էր, գին 15.

Դուստը իմանալով որ իր հօր ձեռքը պէտքէ կարեն խարիսխութեան համար, զնում թագաւորին պազատում է, որ նրանի տեղակ իրանը կտրեն, քանի որ ինքը կարող չէ կերակրել հիւանդ մօրը, թոյլ եղրօրը, փորբիկ քոյրիկին։ Թագաւորը շատ զիթաշրժում է, բայց քնքոյց աղջկայ սիրտը փորձելու համար հրամայում է նրա ցանկութիւնը կատարել։ Սակայն չէնց որ սուրը բաձրացնում են, թագաւորը կանգնեցնում է, Սիու-Լիէի հօրն էլ ազատում է և հրաման տալիս այնուհետև այդ հրապարակում այլևս ոչ ոքի պատժի չենթարկեն։ Ապա նոյն տեղը արձան է կանգնեցնել տալիս հիւանեալը արձանագրել տալով։ «Այտեղ Սիու-Լիէն, մանդարին իխունգի աղջիկը, պատրաստ էր իր կեանքը զահել հօր ազատութիւնն համար, որհնեալ լինեն այն հայրերը, որոնք այզպիսի գուստներ ունեն և օրհնամլ լինի այն հողը, որի վրայ աճում է այզպիսի սէրը»։

Շատ խոր տպաւորութիւն է գործում։

67. Փորքիկ Հեղինէն, հեղ.՝ թարգմ. Հովհ. Արարաջեանցի, Ալեքսանդրապոլ 1896. գին 5 կոսկ.

Դժուար է ասել, թէ այս զբքոյիլք ինչ խմաստ ունի։

68. Փայլուն կոպէկ, մանկական վէպ, Բառէնի, Թարգմ. Գր. Շախբուղաղեանի, Թֆլս, 1885. 93 էր, 25 կոսկ.

Արբէցող ծնողների գաւակ Դիկը մի օր ինձոր է գողանում, մի բարի ծերունի խրատում է, զղջում է։ Մի անգամ էլ մի հարուստից պղնձէ փող ստանալիս այս երեխան փայլուն կոպէկը ոսկի համարելով տանում է նրան վերազարձնելու հա-

մար: Մեծատունը զնահատում է այդ և նրան երջանկացնում: Դիկը այսրան բարձր բարյականի տէր է ղառնում, որ սովորում է թշնամուն էլ ներեւ:

Մի քիչ սխալ լարերի է գիպչում հեղինակը. բայց ոչինչ, արժէ կարգալ:

69. Օրերոնի ճրաշալի եղջիւրը: թ. հ. հ. ը. 1897. Գրիմի գունատիպ պատկերազարդ հերթաթներից. գին 40 կոտ.

Ասպիտ Հուգոն Բորդոյից հրաւէր է ստանում կայսրից պալատ գնալու, նրան նախանձորդ—ասողետ Ամոր ին կայսեր Շարլ որդու հետ ասածը կտրում են գիշերը: Հուգոն միամտաբար զարկում սպանում է Շարլին, Ամորին փախչում է և ապա դիմուլ տանելով կայսեր գանգատում է որ Հուգոն սպանեց: Թէս սա ասում է որ միամտաբար է պատահել, կայսրը յարձակում է վրան սպանելու համար և ապա, զիջանելով ասպետների թախանձանքին, նրան կենդանի թողնում է: Բայց և այնպէս այն պայմանով որ Բաղդատի խալիֆի վեպիրին գնայ սպանի այնտեղ և խալիֆի սեղանատամներից ու մօրուքի մազերից բերէ: Հ. շնորհիւ Օրերոնի՝ թղուկների իշխանի հրաշալի եղջիւրին համառ է իր նպատակին, զերութիւնից ազատում է նաև իր ազգականուհուն, Էսկարմոնդին, վերադառնում հայրենիք ու այն իշխանուհուն հետ ամուսնանալով երջանկանում միւնյոյն ժամանակ կայսեր շնորհը գտնելով:

Գեղեցիկ հեքիաթ է:

70. Փրիդոլին կամ՝ սէր և ատելութիւն Քր. Շմիդտի, Տիգր. Նաւասարդեանի, 1877. 64 միջակ եր:

Ուոշ շկոլայի ստերեօտիպ պլանով կտղմուած գրուածք է. մի կողմը անսահման չար դեկր, միւս կողմը հրեշտակներ:

Զարժէ այդպիսի գրուածքներ կարգալ տալ:

71. Փրիդոլին Շիլէրի, թարգմ. Ռաֆֆի:

Գրարար է թարգմանուած և քանի որ խօսք կայ դքսունու հու հետ «անվայել յարաբերութիւն» մէջ գտնուելու մասին, թէ և թարգմանիչը պատահներին է նուիրէլ այս գրքոյկը պէտք է մերժել այսպիսի նուէրները:

10—12 տարեկանների համար:

72. Ալպեան Շովիտ ի. Սովիրիի, թարգմ. ի. Յորութիւնեանցի: Թվլո. 1895, գին 20 կոտ.

Խեղճ որբուկ Թիզը բոլորից արհամարտուած, ծաղրի ու ծանակի առարկաց դարձուծ, ծիծուած՝ յուսահատ կեանք է վարում: Բայց բաղդը վերջը բերում է. այս որբուկը հարուստ

կենդանապահին հիւանդ, անովաշտպան գտնելով ինսամում է նրան, ազատում է նեղութիւնից և ինքն էլ փոխադարձարար բաղդաւորում:

Գեղեցիկ տպաւորութիւն է գործում:

73. Աղքատի բաղդը Անդրէսյի, նուէր մանուկներին, թարգմ. ռուսէրենից, գին 5 կոպ.

Նկարագրում է մի անտեր մանկան չարքաշ կեանքը, մաքաւումը կարիքի գէմ ու յաղթանակը: Պատկերի գոյները թէկ տեղ տեղ թոյլ են, բայց և այնպէս ամբողջութիւնը տպաւորիչ է:

74. Այծարած Մոնի հ. Սպիրիի, թարգմ. Ե. Յարութիւնեանցի, թֆլս., 1895. գին 15 կոպ.

Գրաւիչ կերպով նկարագրուած է Մոնիի և նրա այծի փոխադարձ սէրը, այծարածի մի սիսալմունքի մէջ ընկնելը, խղճի հանգստութիւնը կորցնելը, զղջալը և վարձատրուելը:

Եյդ մանկան հոգեկան տանջանքների նկարագիրը խոր տպաւորութիւնը կը գործէ հասակակիցների վրայ:

75. Աշխատութեան հրեշտակը, չինական առասպելներից, թարգմ. Տ. Պարոնեանցի, այլ 3 տուսապելների հետ 104 եր. գինը 15 կոպ.

Խելացի, բայց անհոգ հնդկական թագաժառանգը բանն այնտեղ է հասցնում, որ հարկադրուած է լինում զահը թափուր թողնելով փախչել: Բարի հրեշտակը զանազան կերպարանքներ առած՝ ուղեկցում է, սովորեցնում է չարքաշ կեանքի ու ազնիւ աշխատութեան: Ու երբ որ երկիրը եղրօր թագաժառանգի շնորհիւ մեծ յասահատութեան մէջ է ընկնում, հրեշտակը այս անգամ էլ գիւղացու կերպարանքով խոստանում է ժողովրդին՝ նախորդին՝ գտնել բերել: Հիմա այս թագաժառանգը ուղղուած լինելով՝ կրկին գահ է բարձրանում և իր հայրենի երկրի բարօրութեան պատճառ լինում:

Սիրուն գրուածը է:

76. Ապենիններից սինչեւ Անդերը Դէ Ամեչիսի, թարգմ. Գ. Վարդանեանցի, թֆլս., 1888, գինը 20 կոպ.

Տասներեք տարեկան որդին անասելի տառապանքներ կրելով Իտալիայից Ամերիկա է գնում, մօրը գտնում ու մահից ազատում է նրան:

Նիւթը շատ տպաւորիչ է, բայց ափսոս որ թարգմանական լեզուն խճողուած է ահագին քանակութեամբ զուտ գրաբար բառելով, որ գէթ այս հասակի ընթերցողներին չպէտք է տրուէին:

77. Արծուի դատաստանը Արշ. Թումանեանցի. Մոսկուա, 1894. 58 փոքրատ. եր. գինը 40 կոպ.

Ստորաբարշ ագուաւը ցանկալով մեծ փառքի տիրանալ, մտքումը զբնում է արծիւ թաղաւորին վիճայանալ: Կաչաղակի խորհրդով արծուին կաշառք է տանում, բայց անարգանքի արժանանում: Յետոյ երբ որ արծիւը զերի է ընկնում, ագուաւը հանգամանքից օգուտ քաղելով գնում է արծուի պալատի գործերը ձեռք առնում, նրա աղջկայ էլ ձեռքը խնդրում: Հաւատարիմ բազէները գնում են թաղաւորին գտնելու, իրանք էլ գերի են ընկնում:

Բայց վերջը արծիւն աղաւուելով՝ աղաւում է բազէներին, գալիս է գատապարտում աղուաւին, թևերը փետոել է տալիս ու իրան էլ բանտարկում:

Այլաբանութիւնը անդնական է թւում:

78. Բարեկամական զոհեր Ֆր. Շոֆմանի, թարգմ. Նիկ. Լալայեանցի, 1876. 157 փոքրադիր եր.

Զէկն ու Զոնը իրար մի բանի անգամ մահից, գերութիւնից փրկում են: Զոնը մինչեւ անգամ գտնում է կորած պապին, որ նրա ծնողներին թշուատացնողն էր եղել:

Զգձգուած, շինծու գործողութեան նկարագրութիւններ շատ կան:

Ուր որ հարկաւոր է խորասուզուել տպաւորութիւն գործելու համար՝ թեթև է անցնում հեղինակը:

79. Բարեկամամենը Սմիրնովայի, նուէր մանուկներին—թարգմ. սուսերէնից: Թֆլս. 1899. 24 մեծադ. եր. գինը 7 կոպէկ:

Քաղաքացի փչացաղ մանուկը ամառանոցում ընկերանում է մի բարի մանկան, շարունակ նրան նեղում է և մի անգամ էլ նրա կօշիկները պահելով նրա հիւանդութեան պատճառ է լինում, վերջը զղջում է:

Առանձին արժէք չունի:

Այս գրուածքին կից է, «Գողութիւն է արել» գրուածքը: Մի աշակերտուհի, արքեցող հօր աղջիկ, գասարանում հաց է գորդանում, աշակերտները հալածում են նրան ու պահանջում գուրս անել. բայց երբ որ լսում են թէ նրանք տանը հաց չունեն, խղճահարւում են:

Միննոյն արժէքի գրուածք է:

80. Գառնուկ եւ Հուսատոտիկ Շմիդտի, թարգմ. Ն-ի. թ. հ. հ. ը. 1882. գինը 25 կոպ.

Առաջին գրուածքում նկարագրում են մի աղքատ ու մի հարուստ ընտանիքի լարեկամական յարաբերութիւնները: Սկզբում երկուսն էլ անբաղդ են եղել, ապա երկուսն էլ երջանկացել:

Միջակ բան է:

Միւս գրուածքում որբ ընտանիքը նկարագրուում է թշուառութեան ետին աստիճանի մատնուած. և անխիղճ պարտատէրի ճիրանցերից ազատուում է շնորհիւ ոլատահականութեան:

Նախորդից աւելի յանձնարարելի է:

81. Գաղթականները: Հայ մանուկներին նոր տարուայ նուէր. փոխազր. Յակ. Ղազարեանցի: Թֆլս. 1964. 23 միջակ եր. գինը 10 կոպ.

* Երբեմ «մանկական բեմ» կամ թատրոնական դրուածք՝ առանձին արժէր չունի, բայց մանուկների վրայ տպաւորութիւն կը գործէ քոյր ու եղրօր զթասիրտ վերաբերմունքը գաղթականներին, որոնց տալիս են իրանց բոլոր խնայութութիւնը:

82. Երկու եղբայր Տիկ. Մօնգոմերիի, վէտիկ. թարգմ. Պ. Պ. Թֆլս, 1895. 236 միջակ եր. գինը 60 կոպ.

Երկու եղբայրներից մէկը շատ կամակոր է լինում, սովորական երեխայական չարութիւններ է անում, հօրից չէ սիրուում անհնազանդութեան պատճառով: Մի անգամ էլ ծառին հինկով՝ լիճը ընկնում, հիւանդանում, մեռնում է:

Մի անհամ ձգձգուած անխորհուրդ բան է. չգիտես ծնողներին թէ չար տղաներին խրատելու համար է գրուած:

83. Երկու եղբայր վերոյիշեալ չինական առասպեկներից:

Մի մանդարին երկու որդի ունէր. մէկը արտաքուստ տգեղ, ներքուստ բարի, ազնիւ ու անձնուէր, իսկ մինը՝ ընդհակառակը: Առաջինին եղրօր հետ ծնողներն էլ չին սիրում: Չար եղբայրն էլ այդ հանգամանքից օգուտ քաղելով՝ ինչ մեղադրանք ասես, բարդում էր խեղճի վրայ, մինչև անզամ լաւութեան տեղն էլ վատութիւն էր անում: Այսուհետեւ երբ վատը պետական գանձապահ դառաւ, իսկ բարին հաշուապահ, առաջին գումարներ վատնելով եղբօրը մանուան զատապարտել տուեց, յետոյ խնդրեց որ միայն աքսորեն: Խեղճը թշուառացաւ, բայց վատ եղրօրը չանիծեց, վերջն էլ՝ տասը տարի անցնելուց յետոյ՝ նրան մահից աղատեց: Վերջապէս ամեն գաղտնիք բացուեց, վատը վանը մտաւ:

Վեհանձնութեան հիանալի օրինակ է ներկայացնում այս սիրուն գրուածքը:

84. Զինուուր Յակոբ Հոփմանի, թարգմ. Տ. Կոստանեանցի, 1897. 24 եր. գինը 7 կոպ.

Մի զինուուր պատերազմի զաշտից իր անեցոց զլում է թէ գետնախնձորի շատ է կարօտել: Նրա տասներեք տարեկան որդին տեսնելով որ մայրը թոյլ չէ տալիս, գաղտուկ

մի պարկ լցնում է գետնախնձորներով ու հարիւրաւոր վերատեր կտրելով հասնում է հօր բանակատեղը։ Զօրատեսք հիանալով այս զեղեցիկ անձնուիրութեան վրայ՝ թէ որդուն է վարձատրում և թե հօրը, վերջը այս «Ձինուոր Յակոբը» գնդապետ է դառնում։

Մի աշխոյժ ու տպաւորիչ պատմուածք է Հոփանի այս երկը։

85. Շնտանիքի յոյսը Աննենուկայի, թանգմ. օր. Մ. Յ. Թֆլս, Հ. հ. ը. 1892. գինը 10 կոպ.

Մի ամբողջ խեղճ ընտանիք գերի է զառնում ու զոհւում 13 տարեկան զստեր կամայականութեանցը։ Բայց ինչու միւս զաւակները այդպիսի զրկանքներ կրէին մէկի հաճոյքների համար։

Ի՞նչ է ուզում տսել հեղինակը, պարզ չէ։

86. Թաւամնազ մեղու Աւենարիսուսի, թարգմ. օր. Ն. Տէր Մարկոսեանի, Թ. Հ. հ. ը. 1879 (սպառ), գինը 40 կոպ.

Հետաքրքրական ձևով նկարագրուած է մեղուների կեանքը։

87. Թողնորս, պատմութիւն երեխաների համար։ Գործ ֆր. Հոփմանի, թարգմ. Արշալոյսի, Թֆլս, 1877.

Այս պատմուածքն էլ գրուած է Հոփմանի ընդհանուր շաբանով. մի կողմը առաքինութեան, ազնւութեան տիպարներ, մի խօսքով՝ երկնային հրեշտակներ, միւս կողմը անընկճելի վատութիւն, աղերախտութեան տիպարներ՝ հրէշներ։ Խորթ մայրն ու եղբայրն ատելով ատում հալածում հն խեղճ որբուկնեն, հնայելով սրա անյիշաչարութեանն ու անձնուիրութեանը։ Միայն վերջը, երբ նրանք հիւանդանում, սրա խնամքին հն կարօտում, զղջումնեն։

Գեղարուեստ չկայ, թէման էլ մաշուած ու յանձնարարելի բան չէ։

88. Թողունելերի աշնանային տեղափոխութիւնը Բողդանովի, Թ. Հ. հ. ը. 1897. գինը 5 կոպ.

Հետաքրքրական է թռչունների կեանքի այս արկածաւեց ու վլտանգաւոր օրերի նկարագրութիւնը։

89. Թողունելերի հովանաւորութիւնը տես № 46.

90. Ժլաստ Սկրուջը (ծննդեան վէպ)։ Զ. Դիկլէնսոկի երկի համառօտութիւնն է, թարգմ. Ն. Զիգեսմոնցի։ Թֆլս, 1897. գորքադիր 40 եր. գինը 15 կոպ.

Այս համառօտութեան տպաւորութիւնը ազօտ է, թարգմանական լիզուն էլ թերակատար։

91. Իլիական Հովհարոսի, թարգմ. Գ. Վարդանեանի,
Թֆլո. 1886. գինը 1 ռուբ.

Արձակ ու ազատ փոխաղբութիւն է: Որովհեաև իու «գեռահասների» աղատ ընթերցանութիւնը» գրուածքում մանրամասն խօսել եմ փոխաղբութեան կերպերի մասին և օրինակ առել նաև Իլիականը, մասնաւրապէս հետաքրքրուողներին մատնացոյց եմ անում այդ հատուածը: Այստեղ միայն ափսոսանքս կարող եմ արտայայտել, որ բազմաթիւ գժուար թարգմանական բառերը դժուարացնում են պատանիներին այս ընտիր գրուածքի ընթերցումը:

92. Իմաստուն խորհրդատու: Տեղեկութիւններ տես № 75.

Զինական Շան թագաւորը հասարակ երկրագործի վիճակից այդ աստիճանին է հասել շնորհիւ իր բարեմասնութիւնների: Նա իր առաջին իու նախարարի հետ հիմնալի կերպով կառավարում է երկիրը: Մի օր թագաւորը ուղերով փորձել իրան շրջապատողների հոգիները՝ դիտմամբ մեղադրանքի է ենթարկում իր հաւատարիմ իու նախարարին և ինչ է տեսնում. 100 ից 4-ը հազիւ են համարձակում անմեղին պաշտպանել, մինչև անգամ նրա բարեկամները զբարտում են, օգուտ բազելու համար: Դատաւորը ծանրագոյն դատավճիռ է կարգում և ապա միայն գաղտնիքը բացում է և թագաւորը ամեն մէկի հետ վարում է, ըստ արժանոյն, իուին իր գահն է տալիս:

Հիմնալի է տպաւորութիւնը:

93. Ինչ է խօսում՝ սենեակը Աւենարիուսի, թարգմ. օր. Յարութիւննեանցի: 35 միջակ եր.:

Սենեակի փայտէ, թղթէ, երկաթէ և ապակեայ առարկաները լիզու են ենում և պատմում իրանց կրած փոփոխութիւնները, մատուցուած ծառայութիւնները:

Գէշ չէ: Թարգմանուած լեզուն անմշակ է:

94. Լերսան աղջիկը Ե. Սպիրիի, փոխագ. օր. Մ. Ա. նուէր մանուկներին: Թֆլո. 1902, 134 եր. գինը 20 կուգ.

Ալպեան լեռներից փոքրիկ որբուկին տանում են քաղաքացու տուն մտցնում, իրբե ընկերունի մի հարուստի հիւանդ փոքրիկ աղջկան: Օրիորդ վարժունին սաստիկ աշխատում է այդ գեղջկունու կեանքն էլ ընդունուած խիստ ձեւականութեանց ենթարկել, իսկ տանեցիք՝ ընդհակառակը: Լեսնցի աղջիկը այդ տան մէջ սովորում է քիչ կարգալ և ապա զիւղ վերադառնալով այն տեղ է շարունակում ուսումը:

Թէս անարուեստ գրուածք չէ, սակայն դժուար թէ, գեսահաս-

Ների հետաքրքրութիւնը շարժէ։ Սա կարելի էր խրատական գրուածք համարել գաստիարակների համար։

95. Լիր արքայ Օստրօգորսկու ժողովածուից, թարգմ. Տ. Կոստանեանցի։ 1884. Թֆլս, 42 փոքրդ. եր. գինը 5 կոպ.

Շեքսպիրի յայտնի տրագեդիայից է փոխադրուած, բայց շատ համառօտ է, տպաւորութիւնը գրուածքի պէս վայր ի վերոյ։

96. Խուսատուիկ։ տես № 80

97. Խարազի տղայ կամ երկու ախալէրացեղ, հէքիաթ Ա. Քամալեանցի։ Թֆլս, 1893. 98 մէծադր. եր. գինը 40 կոպ.

Խարազի աղէն (Ապաւէնը) աղրէւանում է թաղաւորի տղի (Փափաքի) հետ, մէծ անձնուիրութեամբ նրան երջանկացնում է։ Վերջն էլ Փափաքն է փոխադրձն անում։

Արկածալի, հետաքրքրական հէքիաթ է։ Այս անսահման անձնուիրութեան օրինակները տպաւորիչ են։

98. Խաչակիր մանուկները. պատմական վէպ, թարգու. Կոստ. Մարտիրոսեանցի։ Թֆլս, 1890. փոքրադ. 64 եր. գինը 20 կոպ.

Խաչակրաց պատերազմների ժամանակներից մի տարօրինակ իրողութեան նկարագիր է։ 5000 Ֆլանուացի մանուկներ մի հոգին պատանու առաջնորդութեամբ բուռն ոգեստութեամբ ճամբայ են ընկանում երուսաղէմը աղատելու զիտաւորութեամբ։ Անհաւատալի է թւում, թէ ինչպէս ծնողների, կառավարութեան կողմից այս ցաւալի «արշաւանքը» արգելքի չէ հանդիպել ու ըոլոր մանուկները տեղ չը հասած՝ թշուառացել են։ 2000 մանուկ ծովում են խեղուել, մնացածներն էլ հէնց մրանուայի ափերից գերիվաճաների ձեռք ընկնելով՝ վաճառւում են Աքրիկայի շահաստաններում։

99. Ծովինար, հէքիաթ Ա. Քամալեանցի, երորդ տպ. Թֆլս, 1893. 92 միջակ եր. գինը 20 կոպ.

Աշխարհակալ թագաւորի Մէծեկղար որդին զնում է իր երկու եղբայրներին գանհեռու, որոնք հակառակ իրանց հօր կտակին՝ մտնելով հարեան տէրութեան սահմանները՝ զոհ էին զնացել Ծովինար գեղեցկուհուն։ Մէծիկղարը շատ արկածներից յետոյ վերջապէս տիրանում է այն գեղեցկուհուն, որ սպանել էր ահագին քանակութեամբ իշխաններ, կտրիմներ՝ իր ձեռքին նրանց անարժան համարելով։ Մի կախարդ կին խաբէութեամբ փախցնում է Ծովինարին, բայց Մէծիկղարը աղբէրացած զեկրի միջոցով սորից գտնում է իր կնոջը։

Հեղինակի առաջնակարգ հէքիաթներից է։

100. Կեսարի դպրոց Հոգմանի: Նոր մատենադարան Փ. Թֆլս, 1897. 32 եր. գինը 10 կոպ.

Մի երես առած տղի կեսարքն է նկարագրում, ցոյց տալով թէ հօր թուլութիւնը ինչպէս փշացոնց նրան: Այս երեխան ուսումնաբանումն էլ անկարգ ու անհնագանգ մնաց և երբ հայրը առաջին անգամ նրան յանդիմանեց, նա թողից Աւոտրաւիտ փախաւ: Բարի նաւապետը նրան սաստում է առաջն օրերը, ծհծում է, բայց ցամաք ենիկով լաւ տեղ տալիս:

Ո՞ւր է «կեսանքի գպրոց»: Ուրիշ երեխաներ ի՞նչ օրինակ պէտքէ առնեն այս մանուկից: Գրքոյկի բովանդակութիւնը նրա այս փքուն անուան բոլորովին անհամապատասխան է: Այս գրուածքից գուցէ բան սովորեն ծնողները:

101. Կենդանին է արդիօր, նուէլ մանուկներին Մ. Վ. Արխանգելսկայայի, փխզր. Թֆլս, 1898. 24 մեծդր. գին...

Մի մանուկ, զեղագործի որդին, իր ընկերոջ համար սխալմամբ ձիու զեղն է զիւղ ուղարկում և ապա զիսի ընկնելով կայարան է վազում, որ համնի նրան փրկէ: Բայց որովհետեւ կնացքին չէ հասնում, նա շարունակում է վազել և մեծ գժուարութիւններից յետոյ հասնում է զիւղ ընկերոջը վտանգից ազատում:

Այսօրիսի բան թէն կարող էր պատահել, բայց այս պատմուածքը շինծու գրուածքի տպաւորութիւն է զործում:

102. Կոլումբ Լ. Տոլստոյի, թարզմ. Փ. Վարդանեանի: Թիֆլիս 1891, միջակ եր. գինը 15 կոպ.:

Պարզ ու հետաքրքրական ձեռք նկարագրութիւն է:

103. Կոլումբոսի առաջին օրերը Ս. Վալուեայի, թարզմ. արկ. Հ. Շահաղիզի, Ե. Նախիչևան, 1895, 48 եր. գինը 15 կոպ.

Հետաքրքրութեամբ կը կարգացուի: Տես նախընթաց համարը:

104. Կոլումբոս Իւ. Ամերիկայի զիւտը, հեղ? թարզմ. Ե. Տ. Ա. Թֆլս, 1891, Փքրզ. 94 եր. գինը...

Տես նախընթաց 102—103 համարները:

105. Կուզիկ Ղիլու, տես համար 75.

Զինական թագաւորը շրջապատուած է խարդախ ու կեղծաւոր նախարարներով, ժողովուրդը թշուառութեան մէջ է: Գահի ու ժողովրդի երեք բարեկամները մի պարզ ձկնորս են զտնում ու տանում պալատ: Թագաւորը տեսնում է, որ սա զտնում ու տանում պալատ: Թագաւորը տեսնում է, որ սա կեղծիքները բաց է անում, խիստ օրէնքներ է սահմանում: Մի

գիշեր մինչև անդամ թագաւորին պարխսպներից ներս չի թողնում օրինապահ լինելու համար: Այս բանի վրայ Լիէուի թշնամիներն ուրախանում են, բայց հակառակն է դուրս զալլիս, նա աւելի բարձրանում է իր միապետի աչքում:

Բնտիր է:

106. Հազարան բլբուլ, Գէկրա Յ արարուածով: Յարութ. Թումանեանցի: Թֆլս, 1903, 71 փոքր. եր, գինը 30 կոպ.:

Իսկապէս սովորական հէքիաթ է չափածոյ ձեռվ:

Արժէ կարգալ:

107. Հիւանդապահ աղջիկը Գ. Մոնպասանի միւս «Լոէժ» պատկերի հետ կազմուած: Թֆլս 1896, գինը 5 կոպ.:

Այս գրուածքի նիւթերը քրանս-պրուսական պատերազմի ժամանակներից է առնուած: Մէկը հաղուագիւտ անյիշաշարութեան կենդանի պատկեր, իսկ միւսը սարուափելի վրէժիւլնդրութեան: Շատ նպատակայարմար է եղել այս երկու գրքոյգի միասին կազմելը:

Խոր, ցնցող տպաւորութիւն են գործում:

108. Հնողու արադաղ հէքիաթ, Ուիդի, թարգմ ? Մոսկուա, 1886, 32 փոքր. եր, գինը 10 կոպ.:

Հնողու աքաղաղն ու խոզը անտառ ևն փախչում իրանց տիրոջ գանակից ազատելու: Համար: Այստեղ հաւաքւում են շատ կենդանիներ ու թոշուններ ու պատմում մարդկային անգըթութեանց մասին, որ լուսրին կերպակուր են զինում: Մահաւանդ ծաղրում է հնողու աքաղաղի մեծամտութիւնը:

Այլաբանութիւն է, Գէշ չէ:

109. Հրէայ Արները ոչինչ չէր տեսել Վիլհ. Հառվի: Թարգմ. օր. Շ. Տ. Թֆլս Հ. Հ. Ը. 1899, 17 փոքր. եր, գինը Յ կոպ.:

Մարօկայօյի սուլթանի շունն ու ձին կորել էին: Երբ ճամբին կանգնած Արներին հարցրին, սա առանց այդ կենդանիներին տեսած լինելու նրանց հետքերից եղբակացրել էր թէ կորած շունն ու ձին ինչպէս կարող էին լինել: Այս բանը պատճառ բանելով նրան սաստիկ տանջեցին ու տուգանքի հնաթարկեցին, կորածների տեղը չասելու պատճառով, բայց բանից դուրս եկաւ, որ խեղճը իրօք տեսած չէ եղել:

Թէկ մասամբ զուարճալի է, բայց առանձին արժէք չունի կրթական տեսակէտով:

110 Հաւատարիմ Մաւիտրի Վայլտների: Թ. Հ. Հ. Ը. 1891, գինը 10 կոպ.:

Մաւիտրին թագաւորական տունը թողնելով՝ խեղճ ճըգնաւորին է ամուսին լնտրում և մինչեւ անդամ նրա հետ մա-

հանալու ցանկութիւն է յայտնում: Աստուած այս չնաշխարհ հիկ սէրը տեսնելով՝ կենդանութիւն ու երջանկութիւն է չնորս հում նրանց:

Շատ հմայիչ վիպակ է:

111. Մայրական սէր Օստրօգորսկու ժողովածուից, Թարգմ.

Տ. Կոստանիանցի: Թֆլս, 1884, 19 եր, գինը 5 կոպ.:

Մի սուս պառաւ գեղջկուհի աղքատութիւնից հարկադըրուած գնում է քաղաք խոհարարութիւն անելու, իր աղջկան էլ զիւղը տղայ պահող թողնում: Երկու տարի անցնելուց յետոյ՝ նա աղջկանը շատ է կարօտում, ձմեռ ժամանակ ճամբայ է ընկնում, մօտակայ զիւղումն էլ զիշերը չսպասելով շտապում է գիւղ: Ճանապարհին նա բուքից ուշաթափւում է ու մահից հայիր աղատւում:

Տպաւորութիւնը թոյլ է:

112. Մանկական Ռտանաւորներ Ս. Դաւթեանի. Պոլիս, 1897. գինը 60 փ.:

Մի քանիսը միայն քիչ թէ շատ արժէք ունեն, իսկ մնացածները անճաշակ տափակ բաներ են:

113. Մ'հծագործութիւն, արևելեան աւանդութիւն: Թարգմ.

Մ. Ալեանակի: Հեղինակ ? Ն. Նախիջեան. 1896. գինը 10 կոպ.

Խոր տպաւորութիւն է զործում: Թարգմանութիւնը լաւ է, բայց գժուար բաներ կան:

114. Մ'ըցումն Հոգմանի: Թարգմ. Տ. Կոստանիանցի: Թֆլս, 1894, 16 եր, գինը 5 կոպ.:

Նկարչական ուսումնարանի երկու լաւագոյն աշակերտըն էլ յոյս ունէին 500 ո. մրցանակ ստանալու: Հարուստ ընկերը աւելի յոյս ունէր, բայց նա երկար տատանուելուց յետոյ՝ իր պատկերը ցուցահանդէս չէ գնում, որպէսզի խեղճ ընկերը միջոց ունենայ իտալիա գնալու՝ կատարելագործուելու համար: Վերջը ինքն էլ վարձատրւում է, մի հարուստ մարդ նրա պատկերը գնում է:

Տպաւորիչ է:

115. Նալի փորքատրը Մ. Ռոզնհայնի: Թարգմ. Յ. Լայեանցի: Թ. Հ. Հ. Ը. 1891. գինը 15 կոպ.:

Ճանապարհորդական նկարագրութիւն է, իրատական ուղղութեամբ գրուած:

Առանձին արժէք չունի:

116. Ողիսական Հոմերոսի, Թարգմ. Փ. Վարդանեանի: Թֆլս, 1886, գինը 1 սուրլի:

Տես № 91.

117. Ոսկի ասեղներ, հէքիաթ, թարգմ. դերմ. Գ. Աքիմ-
հանցի. 1878. 28 փոքրդ. եր.:

Մի հաշակաւոր դերձակի համբաւը լսելով խեղճ գերձակի
երեք որդկերանցնցից երկուսը զնում են նրա մօտը բան սովորե-
լու, բայց բաւականութեանց ետևից ընկնելով մարդ չեն դառ-
նում: Ապա զնում է երրորդը, հմուտ վարպետ է դառնում, այ-
սինքն՝ ոսկի ասեղներին տիրանում:

Տպաւորութիւն թողնում է: Լեզուն խառնուրդ է դրական
ու թիֆլիսի բարբառների:

118. Ուտենց Յովսէփը ի. Սպիրիի, թարգմ. ի. Յարու-
թիւնեանցի. Թփլս. 1891. 77 եր. գին 15 կոպ.

Մի հարուստ ու աղքատ (Յովսէփ) մանուկների բարեկա-
մութիւնն է նկարագրում: Առաջինի գառը կորչում է, գտնում
են երկրորդ ընտանիքի մանուկները, տիրոջը վերադարձնելով
վարձատրւում են: Աւելի մանրամասն նկարագրուած է գառն
կորցնող լիսայի (աղջկայ) խղճահարութիւնը մինչև ծնողներին
խոստովանուիլը:

Մանկական աշխարհայիացքը պարզօրէն նկարագրուած է:
Հնտիր է:

119. Որբ, նուէր ընթերցասէր մանուկներին: Թարգմ. Ան.
Թփլ. 1897. 14 փոքրդ. եր. գինը 6 կոպ.:

Անպաշտպան մնացած որբի տանջանքներն է նկարագրում,
բայց այնպէս անրնական, անժշակ կերպով, այնքան անվարժ
ձեռքով է թարգմանուած ու անխնամ տպուած այս գիրքը, որ
«ընթերցասէր» մանուկները կարող էին առանց այդ «նուէրին»
էլ «հօլա զնալ», թող հաւատացած լինեն այդպիսի նուիրատու-
ները:

120. Պառաւ ծիտը Դ. Մահն-Սիրիեակի, թարգմ. Եղի-
սարէթ Սարգսեանի: Թփլս, 1900. չ. չ. ը.:

Պառաւ ծիտի աներեսութիւնն է նկարագրում: Նա այս
վատ յատկութեանց համար էլ պատժւում է անրան մնա-
լով ու վերջը սատկելով:

Վատ չ:

121. Ուստամ եւ Զոհրաբ, թարգմ. Գ. Վարդանեանի:
Պատկերազրդ. 1889, գինը 20 կոպ.:

Հնտիր է:

122. Ուստոմ եւ Սոհրաբ թարգմ. Ա. Գիւլզադեանցի.
1893. գինը 60 կոպ.:

Ծանր ոտանաւորով է թարգմանուած: Երբե բառացի
թարգմանութիւն աւելի յանձնաբարելի է հասակաւորներին:

123 Ռուսական եւ Սալման: Գ. Բալասանեանցի: Թֆլս.
1896. գինը 25 կ.

Մեր հեղինակների պօէմաներից կազմուած կոմպիլիացիա
է: Տպաւորութիւն գործում է:

124. Սասունցի Դաւիթ հիւսեց պ. Ճաղաբրէկեան, գինը
20 կոպ.

Բովանդակութիւնը վերաբերում է մասամբ Առիւծածե
Մհերին, մեծ ժամանակաշրջան, վերջը Մհերին, որ անէծք է առ
նում հօրից անմահ մնալու և ժառանգ չունենալու:

Կարելի է առաջ դիսահամերին, միայն թէ Զէնով-Հոնանի
կնոջ վաւաշոտութեան վերաբերեալ մի քանի տաղերը խոտելի
են:

125. Սասունցի Դաւիթ, պօէմ Յովհ. Թումանեանի,
Հրատ. Ա. Իխիցեանի և ընկ. № 1 Թֆլս 1904, փոքրադ. 40 եր.
գինը 15 կոպ.:

Յատկապէս Դաւիթի քաջակործութեանց նորիրուած մի
սիրուն պօէմա է:

Շատ արժէ կարգալ:

126. Վարդ Ռէսլին Ի. Սպերիի, թարգմ. Ի. Յարութիւ-
նեանցի. Թ. Հ. Հ. Բ. գինը 10 կոպ.:

Մանկական գեղեցիկ յարաբերութեանց սիրուն նկարա-
զութիւն է:

127. Վարսենիկլ հեղ. (?), թարգմ. օր. Ե. Յարութիւ-
նեանցի, Երևան, 1881, 36 միջակ եր.:

Փոքրիկ քոյրիկը մեծ անձնազրութեամբ անտառում
փրկում է իր աւելի փոքր եղրօրն ու քրոջը:

Տպաւորութիւն թունում է:

128. Վրէժ, տես, № 107

129. Տիրոլցի աղջիկ Օստրօկորսկու ժողովածուից: Թար-
գմ. Տ. Կոստանեանցի: Թֆլս, 1894, 7 եր. մի այլ զրուածքի
հետ գինը 7 կոպ.:

Այս աղջիկը մանուկ հասակից Շուեյցարիա է զնացած
լինում ծառայութեան մտած, այնպէս որ իր հայրենի Բրեգնէց
քաղաքը նա արդէն մոռացած է լինում: Բայց երբ լսում է, որ
շուեյցարացիք վրայ են տալու այդ քաղաքին ու կործանելու,
զիշերով փախչում է իր հայրենի քաղաքը: Ժողովուրդը մինչեւ
հիմա էլ ամեն օր ժամը 12-ին յիշում է նրան, այն ժամուան
երբ այս հայրենասէր աղջիկը սպառնացող վատանգի մասին
լուր էր հասցըրուած եղել: Նրան միշտ յիշում է գիշերապահը,
որ 12-րդ ժամի աեղ նրա անունն է տալիս:

Արժէ կարգալ, գեղեցիկ ապաւորութիւն կը գործէ:

130. Տորբ-Անգեղ եւ Հայկանուշ-Գեղեցիկ Դ. Աղայեանցի: Ալքմանդրապլ 1903, 33 եր. գինը 5 կոպ.:

Մեր հաղուագիւտ ընափր գիւցաղներգութիւններից մէկն է: Թէ նահապեաւական կեանքի սիրուն կողմերը և թէ մեր «Սասմայ ծուերի» գիւցաղնական ազնիւ ովին արտափայլում է Տորբից ու Հայկանուշից և սրանց չըջապատող լիոնականների կեսնըց:

Տպաւորութիւնը հիմնալի է:

131. Փշրանք Լ. Կ. Կ. Մելիք Շահնազարեանցի: 1888, երջանկութեան ու թշուառութեան սիրուն ու գրաւիչ մանրիկ հակապատկերներ են:

132. Փորբիկ Մէզր եւ նրա մանուկները, գործ տիկ. Սարեատօնի, թարգմ. Դարձաւ Շահակեանցի: Թֆլո. 1877 96 միջակ եր. գինը 25 կոպ.:

Մէզի նաւաստի հայրը հեռու աշխարհում հիւանդանում է ու շատ ուշանում, մոյրը մեսնում է: Երկու որբուկներ՝ մի մանչկերպոյրիկ ու մի փոքր եղբայր՝ մնում այս տասը տարեկան աղջկան տպովը: Բայց Մէզը չի վճատում, յոյաը Աստծու վրայ զնելով՝ պահպանում է փոքրիկներին, իսկ երբ գրամը հատնում է, ոկում է իրանց ունեցած չունեցածը գրաւ զնել: Ապա բարի մարդիկ րիչ օգնում են: Մի փչացած գրացի աղջիկ, որ փախած էր մօր մօտից ու անբարոյական կեանք էր վարում, մտնելով այս անպաշտպան մանուկների շրջանը, այնպէս զգացում է նրանց միամիտ կրօնական զգացմունքներից, Աստծու վրայ գրած անսասան յոյսից, որ հետզհետէ ուզգում է, մտնում է նրանց զրութիւնը և օգնում: Բայց մի անգամ նա մանուկներին հետը զբօսանիք տարած լինելով Մէզի բացակայութեանը՝ նարբում է, և փոքրիկներին անխնամ թողնելով մրսկցնում է նրանց: Մանկիկի մահուանը պատճառ է լինում, իսկ նորէնի հիւանդութիւնն: Վերջը այս փչացած աղջկայ մայրը գտնում է նրան Մէզի շնորհիւ, վերջինս հայրն էլ վերադառնում է և բոլորը ազատում են նեղութիւնից:

Մանաւանդ Մէզի միամիտ արտայայտութիւնները ու վերերմունքը հիանալի տպաւորութիւն է գործում:

133. Քար սիրտ Վիլհ. Հուի, թարգմ. օր. Շ. Զ. Յ. Հ. Հ. Ը. 1899, 112 փորդ. եր. գինը 25 կոպ.:

Ածխաղործ Պետրոս Մունկը բնկնում է չար ու բարի ու գիների՝ Միխելի և Թվուկի ձեռքը: Նա Թվուկին չլսելով Միխելից քար սիրտ է ստանում իրենի տեղ, անխիզ մարդ գտնում ու թշուառանում է: Վերջը Թվուկը նրան նորից երջան-

կացնում է, սովորեցնելով թէ ինչպէս պէտք է յետ առնել կհնդանի բարի սիրտը: Հեքիաթի ձևով նախածնութիւն գրուածք է:

134. Ջրիստոնեայ ընտանիք: Հեղ (?). Թարգմ. գերմ. Աղ. տէր Մարուղեանցի: Երևան, 1876. 34 փոքրգ. եր.

Եապոնիայի թագաւորը հրամայում է քրիստոնեայ Տիտոսին ընտանիքով կոտապաշտութիւն ընդունել, բայց նա չի համաձայնում՝ չնայելով, սարսափելի սպառնալիքներին: Այն ժամանակ թագաւորը հրամայում է իրար ետեից՝ երեք օր նրա երեք զաւակներին, որոնք ծնողների օրինակներին հետեւ լով արիստութեամբ մարտիրոսութեան են զիմում: Թագաւորը նրանց անսասան հաւատը տեսնելով՝ ձեռք չի տալիս, ողաճում է ու վերջը զարմացած հօրը կենդանի մնացած զաւակներին ցոյց տալով՝ նրան վարձատրում է:

Թէև մանուկների բանած զիբը կարող էր անհաւատալի թուալ ընթերցողներին, սակայն ընդհանրապէս լաւ զրբոյկ է:

12—14 տարեկանների համար:

135 Ահմէջի տոպրակը, արևելեան զրոյց: Թարգմ. Ե. Լալանեանցի: 1881, գինը 10 կոպ.

Տոպրակի մէջ հաւաքած դանազան պիտանի ու անպէտք իրերը նմանեցնուն է նոյն օրինակ զիտութեանց:

Լաւ այլաբանութիւն է:

136. Աստուած զիտէ արդարն ու մեղատրը, բայց դատաստանը շուտ չի անում: Լ. Տոլստոյի: Թարգմ. Մ. Ա. հրատ. թ. հ. ը. 1891. 22 միջակ եր. գինը 7 կոպ.

Մի անմեղ մարդ ուրիշի մարդասպանութեան համար Սիրիի է գնում, ծերանալուց յետոյ բանուում հանդիպում է իսկական մահապարտին, նրա խօսուածքից ճանաչում է, բայց և այնպէս նրա նեղ տեղն ընկած ժամանակը նրան բարութիւն է անում: Վերջապէս այդ մարդասպանը գնում իշխանութեանը յայտնում է բանի էութիւնը, բայց շատ ուշ, որովհետեւ անմեղը չազատուած մեռնում է: Շատ տպաւորիչ է:

137. Դետնափորի երեխաները վարդ. Կօրօլենկօյի: Թարգմ. ոռուս. թ. հ. հ. ը. 1896. 78 միջակ եր. գինը 15 կոպ.

Դատաւորի որդին ընկերանում է մուրացիկ գետնափորի դաւակների հետ, մանում է նրանց զբութիւնը շարունակ օգնում է նրանց հօրից պատժելու վտանգը աչքն առած: Հայրը տեղեկանալով այն ամենին, գովում, խրախուսում է նրան:

Թէև բաւականին տեսդենցիօղ է, սակայն զեղարուեաւտական լինելով այդ կողմը այնքան էլ աչքի չէ ընկնում:

Jaga Nalbandian (f. Collin) «Bolgesang», digte nni drom og liv. (Ինգա Նալբանդյան (Գոլին), «Կոհակաերզ», բանաստեղծութիւններ երազի և կեանքի վրայ): 1905, Կոպէնհագէն:

Խմբազրութեանս ուզարկած այդ գողտրիկ հատորի հեղինակուհին դանեմարկուհի է, որ իր ճակատագիրը կապել է մի հայ մանկավարժի՝ պլ. Ս. Նալբանդեանի հետ: Դոկտոր Ս. Նալբանդեանը Լոզանի հայկական վարժարանի տնօրէնն է, «Գիտութիւն» ամսաթերթի խմբազիրը և մեր աշխատակիցը: Նրա օտարուհի ամուսինը առանձին համակրանքով է վերաբերում հայ բանաստեղծական գրականութեան, որից թարգմանութէն նմուշներ է զետեղել գանիական զանազան թերթերում և հանդէսներում: Դանիական լեզուին անձանօթ լինելով, բնականաբար, մենք անկարող ենք կարծիք յայտնել ափկնոջ բանաստեղծական շնորքի մասին: Ասկայն, ինչպէս տեղեկացանք, Կոպէնհագէնի թերթերում բաւական նպաստաւոր կարծիքներ են յայտնուած նրա ձիրքի մասին: Դանիական հասարակութեան համար առանձնապէս հետաքրքրական են այդ հատորի Armenianiske digte բաժինը, որի մէջ զետեղուած են տիկնոջ թարգմութեամբ: «Ո՞վ ինչ անոյշ», «Իմ սիրելի զաւակունքը», «Մայրիկո», «Դու զով խնդրես», «Ազատ Աստուած», «Երայր Արաքսի» և այլ հայկական երգեր:

Որքան մեզ յայտնի է, տիկինը շարունակում է հայ բանաստեղծութիւնների թարգմանութիւնը դանիական այլ և այլ թերթերում: Ցանկանում ենք աջողութիւն նրան իր համակրելի և օգտակար ձեռնարկութեան մէջ:

*.

ՆՈՐ ԱՏԱՑԱԾ ԳՐՔԵՐ

- 1) Հ. Առաքելիսան, «Մի ամիս արևելքում», ուղևորական ականարկներ, Թիֆլիս, 1904 թ., գ. 40 կ.:
- 2) Ս. Քամալեան, «Դալօ Ափօ և խաչան», բ. տպագրութիւն, Թիֆլ. 1906 թ., գ. 12 կ.
- 3) Ա. Կրիմովի, «Մահմեդական աշխարհն և նրա ապագան», թարգմ. Բարգէն վ., Վաղարշապտու 1906 թ., գ. 60 կ.
- 4) Արսէն վ. Ղատճեան, «Նախադիմ Հայաստանեաց եկեղեցու սահմանագրութեան», Ալէքսանդրապոլ, 1906 թ., գ. 7.:
- 5) «Մեր էժանագին գրադարանը» № 9. Մաթէօ Ֆալկոնէ, Մատնիչը, Լրտես. Ս. Պետերբուրգ, 1905 թ., գ. 7 կ.
- 6) Բէրել, «Կնոջ ներկայ և ապագայ դրութիւնը թարգմ. օր. Ս. Շահնազարեան, Թիֆլ., 1905 թ., գ. 10 կ.
- 7) Inga Nalbandian f. Collin (Nils Ellinger) Bolgesang, digte om drom og liv, Kobenhavn, 1905.
- 8) Կանոնագիր հայ աշխատաւորաց միութեան Բարիզի, 1905թ.
- 9) Վարուժան Դանիէլ «Սարսուներ», քնարական բանաստեղծութիւնք, Վինետիկ 1906 թ.:
- 10) Պրոֆ. Վ. Զոմբարտ, «Բանուորական հարց», թարգմ. Ար. Աբեղեանի, Թիֆլ. 1905 թ. գ. 40 կ.:
- 11) Հառուպտման, «Զուլհակներ», թարգմ. ոռու. տ. Ս. Արտեմեան, Պետերբ. 1905, 40 կ.:
- 12) Է. Վոյիչ, «Բոս», վէպ. թարգմ. Լ. Շանթի, Թիֆլ., 1906, 1 ր.:
- 13) Բ. Իշխանեան, Տնտեսական զարգացման Փազերը, արտատպ. «Մուրճից», Թիֆլ., 1906, գ. 15 կ.
- 14) Շահրիար, Արամի պսակը, արտատպ. «Մշտից», Թիֆլ. 1906, գ. 6 կ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Հայ-բուրժական համաժողավ.—Կատորաժների զիսաւոր պատճառը հայերի կարծիքն է.—Նոյնը բուրժերի կարծիքն է.—Քոչի հարցը բուրժերի լմբոնազութեամբ.—Նոյնը հայերի տեսակետով, —Թարամն վերադաշնելու հարցը հայերի առաջարկութամբ, —Նոյնը բուրժերի առաջարկութեամբ փոխարքայի եզրակացութիւնը, —Նոր առեւտրական դասեազգի Գերաննիայի հետ:

Հասարակութիւնն ուշադրութիւնը անցած ամսում կենտրոնացած էր հայ և թուրք պատգամաւորների ժողովների վրայ, Կովկասի փոխարքայի հրաւերով գումարուած։ Այդ նիստերում արաւայայտուեցին երեք կողմերը. վարչութիւնը, հայերը և թուրքերը։ Հասարակական կարեոր նշանակութիւն ունի արձանագրել այդ ժողովներում մի բանի հարցերի մասին յայտնուած բնորոշ մտքերը, ոչ ինարկէ սղագրական ճշտութեամբ, այլ ըստ էութեան։

Փետրուարի 20-ին փոխարքայի պալատում ոկտուած Անդրկովկասի հայ և թուրք ժողովրդի կողմից ընտրուած պատգամաւորների խորհրդակցութիւնը նպատակը ունէր՝ պարզելու երկու հարեան ազգերի արիւնահեղ ընդհարումների պատճառները և մշակելու իրական միջոցներ՝ փոխադարձ թշնամանքին վերջ գնելու։ Այդ նիստերին, իւրաքանչիւր կողմից 30 հոգի պատգամաւորներից բացի, մասնակցում էին. փոխարքայի օգնականներ՝ գեներալ Մալամա, գ. խ. Սուլթան-կրլմ-Գիրէյ և գեներալ Շիրինկին. Խորհրդի անդամներ՝ Գ. Խ. Պրիբել, գ. խ. Մեղմէդէկ և փոխարքայի դիւնաստան կառավարիչ Պետելսոն-նահանգապետներից՝ բարոն Ռատոշ-Գոն-Տրաուբենքերդ (Թիֆլիսի), կոմս Տիգենհառողէն (Երևանի) և Կալաչեկ (Գանձակի), արտաքին գործոց մինիստրութեան ահմանային յարաքերութիւնների պաշտօնիայ Կոխանովսկից և, յետոյ, պ. Զունկովսկից։

Նիստը բացեց ժամի 2-ից անց ինքը Փոխարքան հետեւալ ճառով։

«Ամբողջ տարին է ինչ տեսում է մուսուլմանների և հայերի մէջ խելացնոր կոտորածը. ամբողջ տարի իմ բոլոր ջանքերը վերջ գնելու այդ անկարգութիւնները կարողացան միայն

մի քիչ կղզիացնել չարիքը, միչ հանդարտացնել: Մի քանի անշամ ես գիտել եմ թշնամացած կողմերի հոգևորականութիւնն, առաջարկելով նրանց գործ դնել իրանց ազդեցութիւնը և ներգործել հաւատակիցների վրայ և հաշտեցնել նրանց, ցոյց տալով վարժունքի ամբողջ անբանականութիւնը: Սակայն չնայած նոյնիսկ տուած երդման խոստումներին, խաղաղութիւնը խախտում էր երրեմն հէնց նոյն օրը: Այժմ ես հրաւիրել եմ ձեզ, հայերի և միւսուլմանների ընտրուածներիդ, ոչ միայն նրա համար, որպէսզի գուշը ձեր խօսքով և ազդեցութեամբ ներգործէիք ձեր համացեղակիցների վրայ յօգուա խաղաղութիւնն, այլև նրա համար որ գուշը մշակէիք այն վարչական միջոցները, որոնք կարող կը լինէին իսկապէս օգուտ տալ: Շուտով սկսուելու է քոչը (սար բարձրանալը), այդ ժամանակը միշտ աչքի է ընկել ոճիրների և աւագակութիւնների մեծ քանակը: Մտածեցէք այդ հարցի կանոնաւորման եղանակների ժաման, սակայն որ գլխաւորն է, պարոններ, յիշեցէք մի բան՝ որ ձեր ժողովը արդիւնաւոր դարձնելու համար անհրաժեշտ է որ գուշը գործին վիրաբերուէք միանգամայն անաշառօրէնտ չարցն այն չէ թէ ո՞վ է մեղաւոր այս շփոթի մէջ, այլ այն թէ երկրի նիւթական բարօրութիւնը կործանող չարիքն դադարեցնելու համար ո՞ր միջոցներն են իրական: Այդ չարիքը ձեւընտու է միայն աւագակների և յեղափոխական կազմակերպութիւնների համար:

Զեր խորհրդակցութեան նախագահութիւնը ես յանձնեցի գեներալ-լեյտենանտ Ե. Դ. Մալամային, որ ձեր զբաղմունքները վերջանալուց յետոյ, կը ներկայացնէ ինձ ձեր խորհրդածութիւնները: Ցանկանում եմ ձեզ շուտով համաձայնութեան գալ»:

Գեներալ Մալաման յայտնեց պատգամաւորներին թէ յոյս ունի որ նրանք, իրեւ ազգաբնակութեան մօտ կանգնած մարդկիկ բոլորովին անկեղծօրէն այս խորհրդածութեան մէջ կը պարզեն իսկական պատճառները այն ցաւալի երևոյթների և ընդհարումների հայերի և մուսուլմանների մէջ, որոնց մասին խօսեց փոխարքան: «Մեզ չի հետաքրքրում, ասաց նա, այն հարցը թէ նվազեր էին այդ անցքերի մէջ մեղաւորները, որովհետեւ այժմ մենք քննութիւն չեն կատարում այն նպատակով որ մէկն ու մէկին պատճենք, այլ մեր նպատակը այն է որ հաստատ խաղաղութիւն սահմաններ երկու ժողովուրդների մէջ և փոխարձ թշնամական նոր բռնկումների ծագման հնարաւորութիւնների առաջն առնենք և այդնպատակով ժամանակին հարկաւոր միջոցներն ձեռնարկենք: Սակայն որպէսզի ուղիղ որոշենք այդ միջոցները, անհրաժեշտ է պարզել նաև ցաւալի երևոյթներ:

ըի պատճառները, որպէսզի նախ և առաջ հեռացնենք այդ պատճառները: Ուստի մենք պէտք է վճռենք հետեւեալ հարցերը, որժնք էին այն պատճառները, որոնք յարուցին թշնամանք և ընդհարումներ, ի՞նչպէս վերականգնել փոխադարձ վստահութիւնը և և ի՞նչպէս ապագայում ընդհարումների ծագման հնարաւորութեան առաջն առնել: Մալաման ցանկութիւն յայտնեց որ պատգամաւորների միահամուռ ջանքերը երկու ժողովուրդների մէջ հանգստութիւն հաստատէին. մի բան որ այքան կարենոր է հոկտեմբերի 17-ի տուած աղատութիւնից օգտուելու համար»:

Կառավարութեան տեսակետը պարզելու համար, հէնց այստեղ առաջ բերենք նաև փոխ. խորհրդի անդամ և նրա զիւանատան կառավարիչ Պետերսոնի կարծիքը: «Այսօր նիստը բանալով ինքը փոխարքան յայտնեց որ աւելի լաւ է չշօշափել մեղալուրների և պատճառների հարցը: Պէտք է խորհել և խօսել միայն ներկայի և ապագայի մասին: Շուտով կը սկսուի քոչը, և եթէ մինչև այդ խաղաղացում չի կայանալ, քոչի պայմաններում կոտորածը կը բանկուի նոր սաստկութեամբ: Ահա թէ ինչի վրայ պէտք է իրանց ուշադրութիւնը դարձնեն պատղամաւորները: Ինչ վերաբերում է անցեալին և պատճառներին—գրանք շաա թէ բիշ յայտնի են: Բագու կոտորածի մասին, որ սկիզբ դրեց բոլոր միւս կոտորածներին, կայ սենատոր կուզմինսկու մանրամասն և բազմակողմանի հետազոտութիւնը: Այնտեղ ցոյց են տրուած պատճառները, այնուհետև այլ վայրերում, հայթուրքական կոտորածների այլ միջնադէպքերի ժամանակ, ընդհանուր պատճառներին աւելանում են նաև առանձին ցեղական բնագգներ, վրէծի և ցուսկութեան զգացմունքներ և տարբեր դէպքերում ի հարկէ զեր էին կատարում նաև տարբեր պատճառների: Այդ բոլոր մանրամասնութիւնները պրատիկ այս խորհրդածութեան ժամանակ դժուար է, նոյն իսկ անհնարին և եթէ կամենաք աննպատակ»:

Պատճառների հարցի յարուցումը աւելորդ էին համարում սկզբում և թուրք պատղամաւորները: Բերենք մի բանի բնորոշ կարծիքներ այդ կողմից: Բազուի պատղամաւոր Հաջիեվ. «Մենք կարծում էինք թէ մեզ հրաւիրել են բացառապէս այն նպատակով որ վճռենք այն հարցը թէ ի՞նչպէս այսուհետև ապրմանք մեր հարեսն հայերի հետ, որովհետև ապրել այնպէս, ինչպէս այժմ՝ չի կարելի, ուստի մենք կարծում էինք թէ խօսք կարող է լինել ապագայում խաղաղութիւն հաստատելու միջոցների մասին. մի բան որին մենք անկեղծօրէն ձգտում ենք. իսկ խաղաղութիւն հաստատելու համար պէտք է մոռացութեան տալ ախուր անցեալը, ինչ պատճառներից նա ծագած

լինի, ով էլ յանցաւոր լինում է լինի: Անցեալի և պատճառների մասին խօսել նշանակում է բորբոքել վէրքերը: Աւելի լաւ է պատճառները ձեռք չտալ, մանաւանդ որ նրանք շատ են:

Հայերի կողմից թժիշկ Խատիսնենը յայտնում է որ անհրաժեշտ է քննել նախ և առաջ այս անցքերի պատճառները: Այդ պատճառով հայերը ջերմօրէն ողջունում են երկրի բարձր իշխանութեան առաջարկը—ցոյց տալ չարիքի գլխաւոր աղբիւրը: Մեզ վստահութիւն են ցոյց տալիս, մեզ հարցնում են, մեզ ուզում են լսել: Եւ մենք իհարկէ կը պատասխանենք, եթէ մեզ կը տան խօսքի կատարեալ ազատութիւն: Այդ առաջին պայմանն է որ մեր աշխատանքը արդիւնաւոր կը դարձնի: Մենք պէտք է անկեղծ լինենք ու արդարախօս և ոչինչ չթագցնենք:

Գեներալ Մալամանն ինդրում է որ բոլորն էլ անկեղծ լինեն և արդարախօս:

Շախտախտինսկիյ. մինք մուսուլմաններս ծածկելու բան չունենք և կարծում ենք որ իշխանութեան շատ լաւ յայտնի են բոլոր պատճառները: Մենք ցանկութիւն չունենք յարձակուելու հայերի վրայ և չենք էլ յարձակուել նրանց վրայ: Եւ եթէ հայերը այժմ անկեղծօրէն խաղաղութիւն են ուզում՝ պէտք է մեզ հետ միասին նախ և առաջ մոռացութիւն տան բոլոր անցածը և այստեղ չխօսեն պատճառների մասին: Եթէ արդէն անհրաժեշտ է հաշիւներ տեսնել մեր մէջ՝ այդ կատարենք դրացիների պէս, մամնաւոր խորհրդակցութիւնների մէջ: Իսկ եթէ հայերը չեն ուզում մեզ հետ հարևանների նման բարեկամօրէն խօսել պատճառների մասին, մենք իհարկէ չենք վախենում այստեղ ասել իսկական պատճառները, սակայն հազիւ թէ դա խաղաղութեան հասցնի:

Աղանվ («Իրշագ»-ի խմբագիր): Մեզ լաւ չհասկացան: Մենք եթէ չենք ուզում պրատել անցեալը՝ այդ այն նովատակով որ չմասենք տպագայի գործին, չգրգռենք ասանց այն էլ բորբոքուած կրքերը: Իսկ եթէ այդ անհրաժեշտ է, մենք պատրաստ ենք քննել հայ-թրքական յարաբերութիւնների պատմութիւնը: Այդ նպատակով ցանկալի կը լիներ, ի միջի այլոց, պարզել հետեւալ հարցերը. ա) հայերի և թուրքերի իրաւական-հաստրակական գրութիւնը մինչև հոկտեմբերի 17-ի մասիփեստը. բ) վերաբերմունքը դէպի ազատագրական շարժումը հայերի և մուսուլմանների կողմից. գ) Ի՞նչ գեր են կատարել հայկական կազմակերպութիւնները այդ շարժման մէջ և ի՞նչաէս են նրանք վերաբերուել դէպի մուսուլման ազգաբնակութիւնը: Եթէ արդէն խօսել պատճառների մասին՝ պէտք է հեռուից սկսել և հետագօտել մեր երկրի կազմը տնտեսական, իրաւական և հասա-

րակական կողմերից, որովհետև կոտորածների պատճառները թափնուած են այդ անցեալի մէջ:

Ս. Յարութիւննեանը յարուցանում է սիւնսիների և շիաների հարցը, յայտնելով այն միտքը թէ հայերը ընդհարումներ չեն ունեցել սիւնիների հետ: Այդ բանի զէմ բողոքում են Դագախի ներկայացուցիչ Վեքիլովը և Շախտախտինովին, նախ հակառակը ապացուցող մի քանի փաստեր բերելով և յետոյ զայրոյթ յայտնեւով որ իբրև թէ հայերը ուզում են կռուցնել և իրարից բաժանել սիւնսիներին և շիաներին, գժոռութիւն սերմանել նրանց մէջ: Բայց այդ հայերին չի յաջողուի...

Գեն. Մալատիան հանգստացնում է վրդովուած մուսուլմաններին:

Խնդիններ Խատիսնան: Մենք թրերով զինուած չենք եկել այստեղ, այլ խաղաղութեան ճիւղով: Սիւնսիների մասին պ. Ս. Յարութիւննեանի յարուցած հարցի նպատակն այն էր որ ցոյց տանք թէ մեզ ցանկալի է պակասեցնել հակառակողների թիւը, որպէսզի աւելի հեշտ լինի հաշտութեան գալը: Բայց եթէ այժմ մեզ յայտնում են որ սիւնսիներն էլ են մեզ թշնամի, մենք նրանց հետ էլ կը հաշտուենք:

Հաղջինվ: Այս, թրերով չենք եկել այստեղ, բայց այնպիսի խօսքերով, որոնք, գուցէ, մեզ թրերի կը հասցնեն: Ինչի՞ են պէտք այնպիսի խօսքերը, ի՞նչ հարկ կայ պատճառների մասին խօսել: Եթէ խաղաղութիւնն ենք ցանկանում պէտք է մոռանանք հինը, անցածը և տանք թէ մենք էլ ենք մեղաւոր, հայերն էլ են մեղաւոր:

Ղետն Սարգսնան: Ես կարծում եմ մենք շեղւում ենք հարցից. եթէ ամենագլխաւոր պատճառից խօսենք մենք ոչ թուրքերին կը գրգռենք, ոչ էլ հայերին: Սկսել այնքան հեռուից, ինչպէս այդ առաջարկում է Աղաեվը, աւելորդ է: Ահա 75 տարիներից աւելի է որ Ռուսաստանը տիրել է Կովկասին և այս երկար ժամանակամիջոցում երբէք տեղի չեն ունեցել տեղական հայերի և թուրքերի մէջ այն մասսային ընդհարումները, ինչ որ մենք տեսանք վերջին 12 ամիսների ընթացքում: Ի՞նչն է զրա պատճառը: Մեր թշնամացած և տանչուած երկրում տեղի ունեցած արիւնահեղ անցքերի գլխաւոր պատճառը իմ խոր համոզմամբ կառավարչական պաշտօնեաների բռնած զիրքն է: Առաջներում նա խիստ պատճում էր այն յանցանքները, որոնք նա թոյլ էր տալիս վերջերում: Եթէ Կովկասից աւելի քաղաքակրթուած երկրներում էլ, օրինակ, Փարիզում, Լոնդոնում, Բերլինում թոյլ տրուէր որ մարդիկ անեն այն բոլորը, ինչ որ թելագրում է նրանց կրքերը—գուցէ այնտեղ էլ պա-

տահէր նոյնը, ինչ տեղի ունեցաւ մեր երկրում. սակայն այնտեղ կայ արդար, անկողմնաւպահ և խիստ օրինական իշխանութիւն, որը չէ կարող թոյլ տալ զինուածծ բնդհարումներ իր բնակիչների մէջ: Ամեն տեղ, ամեն մի հասարակութեան մէջ կան զանազան քաղաքական, զասակարգային հոսանքներ, կան անհատներ յանցաւոր հակոմներով, սակայն այդ բոլոր հոսանքների և ձգութեաների հակահասարակական ու յանցաւոր բնոյթը պէտք է զսպուի իշխանութեան ձեռքով և օրինական սահմաններում պահուի: Մեղանում այդ չէ արել տեղակաւ կառավարութիւնը և նրա թոյլատրութիւնը (ուսուցչութեան), նրա յանցաւոր անզործութիւնը պատճառ եղաւ որ հակահասարակական ձգութեան բորբոքուեցան, զարգացան և հասան մասսային ջարդերի և կոտորածների աստիճանին: Տեղական իշխանութիւնը չուզեց ժամանակին շուտափոյթ և խիստ միջոցներ ձեռք առնել և վերջ դնել խոռվութիւններին, մեր աղմինիստրացիան իր Փունկցիաները չկատարեց—ահա թուրքհայկական կոտորածների զարգացման ամենագլխաւոր ռազմատճառը:

Թուրք նառախօնները շարունակում են պնդել որ նրանք ցանկանում են խաղաղութիւն, անցեալի պատճառների բննութիւնը միայն աւելի կը բորբոքի կրքերը և ի նչ հարկ կայ քանի որ կառավարութիւնը ինքն էլ զիտէ թէ նվ է մեղաւորը: Հաջիելի կարծիքով կոտորածի գլխաւոր պատճառը հայ յեղափոխական «Թաշնակցութեան» գործունէութիւնն է:

Ի՞նժեներ Խատիսիսանի կարծիքով խօսել պատճառների մասին աւելորդ է, որովհետև ինքնըստինքեան հասկանալի է որ ամեն մի երկրում ժողովուրդների և զասակարգերի մէջ գյութիւն ունեն զանազան հոսանքներ, շփումներ ու բնդհարումներ. ուստի ոչ թէ այդ հոսանքներն և ընդհարումները պէտք է հասարակական անկարգութիւնների պատճառ համարել, այլ իշխանութիւնը, որովհետև հէնց նրա համար զոյութիւն ունի կառավարութիւնը որ կանոնաւոր ընթացք տայ այդ հոսանքներին և թոյլ չտայ որ նրանք արտայայտուեն բննութիւնների և յանցանքների ձեռվ: Ինչպէս սուս քաղաքացի ես էլ ընտե շրաշուելով բացարձակ է՛առեմ յաւելով որ Կովկասում վերջին 10 տարիների ընթացքում մինչև ազատագրական շարժման սկզբնաւորութիւնը, իշխանութիւնը միշտ ցոյց է տուել յանցաւոր անզործունէութիւնը բոլոր այն զէպքերում, երբ հայերը չարաչար բննութիւնների են ենթարկուել. իշխանութիւնը անարդար է եղել զէպի հայերս, նա ոչ միայն մեզ չի պաշտպանել, այլ և ինքն է ճնշել և վերջի վերջոյ ստիպել է հայերին որ իրանք կանգնեն իրանց կեանքի, իրանց ստացուածքի և տան

պաշտպանութեան համար: Այդ է գլխաւոր պատճառը վերջին անցքերի, ուստի խաղաղութիւնը և կարգը վերականգնելու համար անհրաժեշտ է որ ոռւսաց պետական իշխանութիւնը երկրում լինէր հաստատուն, զօրեղ ու արդարադատ, և անյապաղ ճնշէր և պատժէր ամբողջ թափով ամեն մէկին որ կարգը կը խանգարի, որ բոնութիւն և ոճիր կը գործի, ով էլ լինի նա, ինչ շահերի և նպատակների համար էլ գործելիս լինի նա:

Կարամիւրզա, միակ հիմնական պատճառը բոլոր անկարգութիւնների, որոնք վերջին Յ տարիների ընթացքում յուղեցին Կովկասը այդ, ի հարկէ, ազատագրական շարժումից առաջ տիրող Պլեկեան րեժիմն է, որի բնորոշ ներկայաչուցիչն էր Կովկասում իշխան Գովկիցինը: Հայ-թուրքական կոտորածը այդ կողմից բացառութիւն չէ կազմում և ծագել է նոյն հողի վրայ: Գովկիցինը բէժիմը նպատակ էր զրել սիստեմատիկար ճնշել Կովկասի բոլոր բնիկ ազգութիւնները և մէկը միւսի դէմ յարուցանել, իրար հետ կուռացնել: Երբ յանձին փոխարքայ Վորոնցով-Դաշկովի Կովկաս եկաւ մի իշխանութիւն, որ վստահութիւն յայտնեց հասարակութեան և Կովկասի բոլոր ազգութիւններին, այն ժամանակ հասարակութիւնն էլ, բոլոր ազգութիւններին էլ չնորհիւ վստահութեան ազատ շունչ քաշեցին, և Կովկասի հողի վրայ կարծես բարերար անձրև թափուեց: Սակայն այդ հողի մէջ արդէն ցանուած էին նախընթաց բէժիմի անբաւականութեան և թշնամութան սէրմերը, որոնք անեցին և այդպիսով նոր իշխանութիւնը ստիպուած էր քաղել անցեալի այդ պտուղները: Հասկանալի է թէ ի՞նչ միջոցներով պէտք է ցոււալի երևոյթներին վերջ դնել:

Տեսնելով որ հայ պատգամաւորները պնդում են պատճառների քննութեան վրայ մուսուլման պատգամաւորները փոխում են իրանց ախկին տաքտիկան և յայտնում:

Թոփչիբաշեվ, բոլոր մուսուլման պատգամաւորների կողմից յայտնում եմ որ մենք այժմ ուզում ենք կոտորածի պատճառների լուսարանութիւնը երեան հանել, այն էլ հէնց այսակեղ, այս պաշտօնական նիստում:

Հաջիել, կառավարական իշխանութիւնը զօրեղ է և, ի հարկէ, կարօտ չէ իմ պաշտպանութեան, սակայն արդարութիւնը ստիպում է ասել թէ հայերը բոլորովին իզուր են մեզազրում ուռւ իշխանութիւնը: Կոտորածը սկսուեց Բագւում, ուր հայերը առաջինն էին որ սպանեցին մի բոլորովին անմեղ մուսուլմանին: Ես ինքս ականատես եմ եղել այդ դէմուն: Ի՞նչ մեղ ունի այստեղ ուռւ իշխանութիւնը: Պուլիցիան է սովորցրել հայերին որ սպանութիւն գործեն ի՞նչ

է: Հայերը չե՞ն որ իրանց մասին ասում են թէ իրանք կուտուրական ազգ են... արդ, մի՞թէ իշխանութիւնը կարող է սովորեցնել կուլտուրական ազգին այդպիսի յանցանք գործելու... Բագուի նահանգապետ հանգուցեալ իշխան նակաշիձէն ձեռք էր առնում բոլոր միջոցները որ հնարաւոր էր երկու կողմերն էլ խաղաղացնելու համար, նա ամեն օր աղաչում էր հայերից էլ, թուրքերից էլ որ չկուտեն և խաղաղ ապրեն: Բայց ինչ են մտածում հայերը: Մի՞թէ անպատճառ պէտք է հէնց առաջին սնագամից բոլորին հրացանի բռնէր ի՞նչ է: Բայց մի՞թէ հեշտ է իր հպատակներին հրացանի բռնել, մի՞թէ այդ կուլտուրականն է, մի՞թէ ուստաց իշխանութիւնը այդպէս պէտք է վարուի: Այդ միջոցին իշխանութիւնը դիմում է միայն ծայրայեղ դէպքերում, ուստի ոչ մի պրավովացիա, թոյլատրութիւն կամ իշխանութեան անգործութիւն չի եղել, այդ բոլորը հնարել են հայոց լրազիրները, որոնք ծածկելով ճշմարտութիւնը, տպում էին ամեն տեսակ անհեթեթ բաներ:

Աղանդվ. մենք մուսուլմաններս վերաբննեցին մեր որոշումը և այժմ պնդում ենք որ քննութեան ենթարկուեն բոլոր հարցերը և դրանց թւում նաև կոսորածների պատճառները: Մենք նոր որոշում կայացրինք այն պատճառով որ ուկում ենք սպացուցել որ չենք վախենում մերկացնելու անցեալը:

Պարզ է որ հայերի կարծիքով գլխաւոր յանցանքը ընկանում էր տեղական իշխանութեան յանցաւոր և զիտաւորուած թուլութեան և անգործութեան մէջ, մինչդեռ թուրքերի կարծիքով գլխաւոր պատճառը հայերի յեղափ. կազմակերպութիւնը, Դաշնակցութիւնն էր: Որովհետեւ մենք հայերս լաւ ճանաչում ենք «Դաշնակցութեան» նպատակն էլ, ծրագիրն էլ, ուստի այնքան հետաքրքրական չէ մեր հայերիս ասածները, որքան թիւրքերի կարծիքները այդ մասին: Փետրուարի 23-ի նիստը ամրողապէս նուիրուած էր այդ հարցին:

Հաջիեւ, խաղաղարար բանակցութիւնների ժամանակ իրանք հայերը մեզ ասում էին թէ իրանց յեղափոխական «Դաշնակցականները» և ինչ որ «Ձանթիղաններ»-ն են կոտորածների գրգիչները: Եւ իսկապէս մեզ մօտ Բագւում երեցան ինչ որ փափախաւոր, երկար կօշիկաւոր և զինուած մութ մարդիկ, որոնք մեզ սպառնում էին մահով և քաղաքում սպառնութիւններ և կողովուաներ էին անում: Իրանք խաղաղ հայերն էլ են տուժում այդ մարդկանցից: Նրանք սպանում էին մեր միւսիւլմաններին և ի հարկէ չէին կարող մեր մուսուլմանները սառնասիրա նայել այդ բաների վրայ: Մեղանում էլ կան-

ի հարկէ մարդիկ, որոնք սպանում են, կողոպտում են, բայց դրանք աւագակներ են և ոչ յեղափոխական կազմակերպութիւններ: Ոչ խաղաղ և լուրջ հայերը, ոչ սոլիդ մուսուլմանները, ի հարկէ, մեղաւոր չեն, սակայն այդ «զաշնակցականները» և «ջանփիդաները» սկսեցին սպանութիւններ: Նրանք իրար յետից 9 մարդ սպանեցին Բագրում, այդ սպանութիւնները արեամ վրէժի զգացմանը յարուցին և ծագեց կոտորած: Անցեալ անգամ գեներալ Շիրինկինը ինձ մասնաւորաբար սասաց որ, իբրև թէ, մեղանում էլ կան գաղտնի կազմակերպութիւններ: Ափսոս որ այսօր նա ներկայ չէ. եթէ նա առէր թէ թէ նչ գաղտնի կազմակերպութիւններ կան մեղանում ես մեր մուսուլման յեղափոխականներին էլ կը գատապարտէի, սակայն ինձ ոչինչ յայտնի չէ սրանց գոյութեան և գործունէութեան մասին: Ինձ ուղարկողները յատկապէս խնդրել են որ ես այստեղ աշխատեմ պարզել հայ գաղտնի կազմակերպութիւնների գերը: Իսկ թէ հայերի մէջ կայ այդպիսի կազմակերպութիւն, այն էլ չափազանց յանցաւոր հակավառավարական ձեռվ՝ դրան ապացոյց հետեւալ փոստաթուղթը (Ներկայացնում է «Դաշնակցութեան» շրջաբերականը զինուորական կազմակերպութեան մասին): Ես պնդում եմ որ մեր մէջ խաղաղութիւնը չի վերակադրի մինչև որ այդ բոլոր «խմբելն» և «ջանփիդաները» զինաթափ չեն անուիլ և չեն կազմալուծուիլ:

Պատասխանում է բժիշկ Խատիսենանը, որ մի երկար ճառում ոգեսրուած ջատագովում է «Դաշնակցութեան» գործունէութիւնը, նրա սազմական ոյժը և ցոյց տալիս նրա ազատագրական գերը Թիւրքիայի և Կովկասի հայութեան համար: Նա համոզում էր թուրքերին շնորհակալ լինել «Դաշնակցութեան» գործունէութիւնից մահմեղական Թիւրքիայում, որովհետև «Դաշնակց.» այնտեղ կաիւ է մզել՝ սուլթանական վատթար բեժիմի գէմ, ուրից պակաս չի տուժում և այնտեղի մահմեղական ժողովուրդը:

Թուրքերի կողմից տուած պատասխանները տրամադրում էին կարծելու թէ նրանք մասամբ բաւարարութիւն են ստացել, սակայն յաջորդ նիստերում պարզուց որ նրանք մազաշափ չեն փոխել իրանց անվտանութիւնը դէպի «Դաշնակցութիւնը»: Ամէն մի առիթից նրանք օգտաւում էին շեշտելու համար իրանց իծեռութէ «Դաշնակցութիւն» է» բոլոր խռովութիւնների պատճաճառը և թէ մինչև նա չկազմալուծուի և զինաթափ չանուի՝ անկարելի է վերականգնել խաղաղութիւնը: Բերենք թուրք պատգամաւորների կարծիքների էութիւնը, որովհետև վերջ ի վերջոյ այդ մարդիկ են թուրք ամբոխի իսկական դեկավարներ հանդիսանում:

ԲԺ. Կալրաբէկով. Հաջիելը թուրք ինտելիգենցիայի կտրածիքների արտայայտիչ չէ, այլ դուցէ թուրք բուրժուազիայի, գիւղացիութեան : Բայց նու պիտի առէր այն, ինչ որ առաց, որովհետեւ այդպէս է մեր ժողովուրդի կարծիքը. ևս գիտեմ, որ «Դաշնակցական» կազմակերպութիւնը շատ լաւ ձգումներ ունի. բայց այլ է մեր ժողովրդի կարծիքը:

Ասում են որ Թիւրքիայում ճնշում, հալածանք, բանութիւն կայ. բայց որտեղ չկայ: Մեզանում էլ Հոկտեմբերի 17 մանիքստն էր, որ եկաւ վերջ գնելու հին կարգերին և բոլորին հաւասարապէս ազատ իրաւունքներ չնորհելու:

Դաշնակցութիւնը կոիւ է մղում թիւրքահայերին օգնելու համար. շատ լաւ: Դրա գէմ մենք ոչինչ չունենք: Դեռ Յերլինի դաշնագրութեան ժոմանակ հայոց այժմ կաթուղիկոս Մրիմեանը ներկայացաւ վեհաժողովին՝ մէկ ձեռքին աւետարան, իսկ միւսին խաչ՝ ազատութիւն խնդրելու, բայց Բիսմարկը նրան ասաց.

— Խաչով աւետարանով ազատութիւն չեն ուզում, այլ սըրով ու հրացանով:

Եւ գրանից յետոյ հայերը սրբ ճանապարհն ընտրեցին, իսկ Դաշնակցութիւնը դեկավար եղաւ: Եթէ թուրքերը հաւատացած լինէին, որ այդ կազմակերպութիւնը միայն ընդհանուր համամարդկային շահերի համար է աշխատում, այն ժամանակ իհարկէ ոչինչ չեն ունենայ նրա գէմ, բայց բանը նրանում է՝ որ այդպէս չէ. «Դաշնակցութիւնը» նեղ ազգային, նացիօնալիստական մի կուսակցութիւն է, որ միայն հայի շահերն է պաշտպանում: Ես այստեղ առաջ եմ բերեմ մեր ժողովրդի կարծիքը: Եւ մենք այստեղ պէտք է գլխաւորապէս ի նկատի ունենանք մեր ժողովրդական մասսաների կարծիքները, թալանողները մենք չենք, այլ նրանք և խաղաղութիւնը մեր մէջ չէ հարկաւոր, այլ մասսաների մէջ: Մեր ժողովուրդը ստահանջում է Դաշնակցութիւն գործունէութիւնը Անդրկովկաստում վերացնել փաստերը, կատարուած դէպրերը մուսուլմաններին բերել են այն նպակացութեան որ հայերն այստեղ ուզում են սեփական տերրիտորիա ստեղծել, հայկական աւտոճամփա ձեռք բերել: Դա, ի հարկէ, անմիտ գործունէութիւն է, ցնորք է: Ի՞նչպէս կարելի է յեղափոխական զինուորներ հաւաքելով սուս կառավարութիւնը ոչնչացնել: Օրինակ, Ռուսաստանում ապրալ 30 միլիոն մահմեգականներս մի՞թէ կարող ենք սուսաց զօրքի գէմ գուրս գալ. իհարկէ ոչ, և գրա մասին երեակայելն անգամ աւելորդ է: Բայց հայերն այդպէս վարուեցին Թիւրքիայում, նրանք գուրս եկան սուլ-

թանի հզօր գորքի դէմ: Մենք թուրքերս դարձեալ ոչինչ չէինք
ունենայ հայերի դէմ, բայց նրանք այսուեղ էլ նոյը սկսեցին:

Ահա ի՞նչպէս:

Երբ սկսուեց ոռւս-ճապոնական պատերազմը, երբ կամաց կամաց ներբին խոռվութիւններ ու գժգոնութիւններ երեացին թուսաստանում, հայերը մտածեցին... եթէ չկարողացանք թիւրքիայում մեր նպատակին հասնել՝ հայոց թագաւորութիւն հաստատել Անգլիայի կամ հէնց Ռուսաստանի օգնութեամբ, ուրեմն աշխատենք նոյնը անել այժմ Կովկասում: Եւ ահա այդ նըս-պատակով աշխատեցին տերրիտորիա ստեղծել, թուրքերին հաշլածել: Հասկանալով որ հայկական տերրիտորիա կարող են ստեղծել սիայն բնաջինջ անելով կամ ոտրկացնելով թուրքերին:

Սակայն թուրքերը դէմ են այդ տեսակ գործունէութեան, և որովհետեւ իրանց ամբողջ բախտը տեսնում են Կովկասում ոռւս իշխանութեան հզօրութեան մէջ և միշտ հաւատարիմ են եղել ոռւսաց գահին, ուստի պաշտպան զուրս եկան ոչ միայն իրանց ազգային, այլ և ոռւս օրինական իշխանութեան: Որովհետեւ թուրքերը չեն ուզում օգտուել կառավարութեան թուլութիւնից այն կառավարութեան, որից պաշտպանութիւն են սպասում:

Ահա այսպիսի պայմաններում բանկուեցին հայ-թուրքական ընդհարումները և այդտեղ ահազին դիր խաղաց Դաշնակցութիւնը: Թուրքերը մտածում են, եթէ կառավարութիւնը թոյլ է տալիս այդ տեսակ վիճուած կազմակերպութիւններին գոյութիւն ունենալ, ուրեմն մեք էլ ազմակերպուենք:

Սակայն թուրքերը դրա հետ միասին ասում ենք. — մենք հայոց թագաւոր չենք ուզում, ոչ էլ ուրիշ թագաւոր. մենք ուսաց թագաւորութիւն ենք ուզում, թող հայերը մեզ հանգիստ թողնեն, մենք էլ նրանց դէմ ոչինչ չենք ունենալ:

Մենք մուսուլման պատգամաւորներս այնուամենայնիւ իրաւոնք ունենք պնդելու որ խոռվութիւնների ամենագլխաւոր պատճառը «Դաշնակցութիւն» է. և միշտ նա չվերացուի անկարելի է մտածել խաղաղութեան մասին:

Հաջինվ. Հաւատացնում եմ ձեզ, որ ես այն գոկումենաը ներկայացրի ոչ այն նպատակով, որ զրգում հայերին յուղ-մունքեր առաջացնեմ: Ես միայն ուզեցի ցոյց տալ որ հայերը տէրութեան մէջ սեփական զօրք են կազմել. Պ. Խատիսեանը իզուր խօսեց հայերի քաջութեան մասին, մառզէրի հրացան-ների մասին: Քաջութեան կողմից նրանք երբէք չեն կարող մրցել թուրքերի հետ. դա անկարելի է. իսկ նրանց հրացան-ները պէտք կը գտն միայն պաշտօնաթող զինուորներին՝ թըու-

չուններ սպանելու համար: Քաջութիւնը իմացւում է ոչ հեռուից խփող հրացաններով, այլ դաշոյնի կոռուով... Եթէ ևս էլ Խատիսեանի պէս խօսելու լինեմ, պէտք է յիշեմ մահմեղականութեան հզօրութեան, արաբական արիւնի մասին և այն, բայց թողնենք այդ բոլորը: Մահմեղական պետութիւնները հէնց ջարթուել են այն պատճառով որ բռնի ոյժին աւելի մեծ նշանակութեան են տուել, քան կուլտուրային, քաղաքակրթութեան: «Դաշնակցութիւնը» անմիտ, զսասակար բան է և նրան պէտք է վերացնել: Թէ մեր և թէ ձեր բոլոր գէնքերը աւելի լաւ է յանձնենք ոռու կառավարութեան, իսկ նրանից խնդրենք մեզ համար դպրոցներ և խաղաղութիւն: Տղամարդութիւնը և քաջութիւնը մարդ սպանելու մէջ չէ, այլ խաղաղութիւն կնքելու մէջ, ուստի ձեռք մեկնենք իրար և հաշտուենք:

Ծախտախտինսկիյ. Հայերն այնպէս հանգիստ խօսում են Թիւրքիա հայդուկներ ուղարկելու մասին, որ կարծես թէ դա շատ բնական ու օրինական բան է: Նրանք ի՞նչ գործ ունեն ուրիշ պետութեան ներքին կեանքին խառնուելու, սահմանի այն կողմանց անցնելու: Դա հակառակ է միջազգային օրէնքին: Եթբ Դորբատ քաղաքի գերմանացիները Գերմանիայի միջնորդութիւնը խնդրեցին, որպէս զի Ռուսաստանը նրանց շատ չճշէ, Բիսմարկը պատասխանեց:

—Դա մեր գործը չէ, մենք իրաւունք չունենք ուրիշիներին գործերին խառնուելու:

Մի հզօր պետութեան ներկայացուցիչն այդպէս պատասխանեց, իսկ հայերը, որ այնքան թոյլ ու աննշան ոյժ են, միջամտում են ահագին Թիւրքիայի գործերին, ուզում են նրա կարգերը փոխել: Դա հակառակ է միջազգային օրէնքներին: Թանի որ պետութիւնները գոյութիւն ունեն, ուրեմն նրանց կարգ ու օրէնքն էլ պիտի յարգուի:

Աղայեվ. Ես կարծում եմ, որ Դաշնակցութիւնը միակ պատճառը չէ: Կան ուրիշ շատ պատճառներ: Հայ ու թուրք իրար չեն հաւատում, չեն վստահանում, իւրաքանչիւրը կարծում է թէ ինքնապահանութեամբ է զրադուած և յարձակուղը հակառակորդն է:

Դաշնակցութիւնը հայերի դարաւոր անցեալի արդիւնքն է, հայերը անկարող են նրան ոչնչացնել: Սակայն ընդհարոււների պատճառը աւելի խոր է: Ես գիտեմ, որ կար պլոտվակացիա, կար ցանկութիւն, որ ընդհարում լինի, բայ միթէ այդպիսի ցանկութիւնը կարող էր երկու ազգեր իրար գէմ հանել, եթէ ըլինէին ուրիշ պատճառներ: Ո՞չ կային ուրիշ պատճառ-

ներ, և դա մահմեղականների իրաւագուրկ վիճակն էր Կովկասում: Պատճառը պէտք է որոնել անշուշտ քրիստոնէութեան և մահմեղականութեան հին, այժմ անցած հակամարտի մէջ: Խուսաստանը քրիստոնէայ պետութիւն է և առաջներում ոռու պետութիւնը անկարող էր չտարբերել քրիստոնէաններին մուսուլմաններից և չտալ արտօնութիւններ առաջիններին, կարծելով թէ մահմեղականները իրանց կրօնքով հակառակ են քրիստոնէաններին: Խուսաստանը իբրև քրիստոնէայ պետութիւնը անվստահութեամբ էր նայում մահմեղականների վրայ, իսկ դրա հակառակ քաջալերում էր քրիստոնէաններին, մանաւանդ հայերին Բաւական է աչքի առաջ առնել Կովկասի կեանքը և մենք կը տեսնենք, որ ամեն տեղ հայերն են զեկավար հանգիստողը: Եւ նրանք միշտ էլ օգտուել են իրանց արտօննեալ վիճակից՝ հարևաններին ճնշելու համար: Իմ կեանքում 5—6 անգամ խնդիր եմ տուել թերթի թոյլաւութիւն ստանալու համար, բայց մինչեւ վերջին ժամանակներս այդ ինձ չէր աշխատում, որովհետև հայ ցենզորները միշտ արգելը էին հանգիստում: Առհասարակ հայերը ոչ մի բարեհաճ տրամադրութիւն չեն ցոյց տուել դէպի իրանց իրաւագուրկ և յիտամնաց հարևանները—թուրքերը:

Զեմ խմանունում, գուցէ թուրքերն էլ այդպէս վարուէին նոյն պայմաններում. ևս չեմ մեղադրում հայերին, այլ շեշտում եմ փաստը:

Ահա այդպիսի պայմաններում վրայ հասաւ ոռւսական աղաւարար շարժումը, պայմաններ, որոնց շնորհիւ Կովկասի ազգարնակութեան մի մասն արագ առաջ էր գնում, իսկ միւս հասը յետ մնում և այդ յետ մնացողի մասին ոչ ոք չէր մտածում:

Դեռ նախանցեալ տարուայ զեկտեմբերին էր, որ հայ հեղինակ Շիրվանզադէն եկաւ ինձ մօտ, թէ պրովակացիա կայ, վտանգաւոր լուրեր են պատում, պէտք է հայ թուրքական ինտելիգենցիան զրա առաջն առնի: Եւ մենք ուրախութեամբ արձագանք տուինք այդ հրաւէրին. բայց հազիւ պատրաստում էինք երկու ազգերին համերաշխութեան կոչ ուղղել, երբ հայերը սպանեցին Բարայելին և դա աղքանչան դառձաւ արիւնահեղ դէպքերի: Շիրվանզադէն և պ. Ա. Յարութիւննեանը մինչեւ այդ կոսորածը մեկ ասում էին թէ պատրաստում է կոտորած. ուրեմն ինտելիգենտ հայերը գիտէին որ պրովակատորական սերմերը բերրի հողի վրայ են ընկեր Ուրեմն, մեղաւոր է նախ և առաջ իշխանութիւնը ստեղծելով անհաւասար կուլտուրա, իսկ ասպա լարուած յարաբերութիւնները: Այժմ եթէ

ուզում ենք, որ խաղաղութիւն հաստատուի, պէտք է աշխատենք, որ այստեղ լինեն ոչ թէ հայ, թուրք, վրացի, ոռւս, այլ ազատ կովկասցիներ հաւասար իրաւունքով, իսկ զրա համար պէտք է մտածենք թուրքերի յետամասցութեան մասին, պէտք է պահանջներ իրաւունքներ նրանց համար:

Ներկայ մարդասէր իշխանութիւնից մենք պէտք է պահանջենք որ նա ոչ թէ ոմբակոծի մեղ, այլ տայ մեղ զպրոցներ, տայ մեղ կուլառուրա, և այն ժամանակ մենք կը հասկանանք իրար և երբեք չմեր անհանդատացնիլ նրան մեր երկառութիւներով:

Զիաթլսանով. Մեր երկու ազգերի ապագայ բարդը այս համագումարի եղրակացութիւններից է կախուած, մտածեցէք զրա մասին: Մտածեցեք, որ երկու ազգերի պատերազմը միենոյն պետութեան մէջ կորսաւարեր է երկուսի համար էլ: Մենք ինչ ունենք բաժանելու, որն էլ յաղթի՞ գարձեալ Ռուսաստանի հաղատակ պիտի մնայ: Ով էլ յաղթի, նա յաղթուած է: Լաւ իմացէք: Ճիշտ է, մահմեղականները յետամնաց են, ուրիմն խաղաղասիրութեան մէջ էլ հայերը պէտք է աւելի առաջ գնան: Խատիսեանը գեղեցիկ կերպով պատկերացրեց Դաշնակցութեան ձգտումները: Ես էլ զիտեմ, որ այդ կազմակերպութիւնը շատ լաւ գաղափարների է ծառայում: Ես չեմ մեղադրում նրան:

Գլխաւորը իշխանութեան խաղացած գերն է: Նա հաւասար աչքով պիտի նայէ իր բոլոր հպատակների վրայ:

Հոկտեմբերի մանիքստը շեշտում է այդ միտքը և յոյս ունենք, որ կոմս Վորոնցով-Դաշկովի շնորհիւ մենք մահմեղականներս էլ պէտք է բաժին ստանանք խոստացած շնորհն ներից:

Հայերն ստացան իրանց գպրոցներն ու կալուածները, պէտք է մենք էլ ստանանք հաւասար իրաւունքների:

Կործում եմ հայրեց կարող են զադարեցնել Դաշնակցութեան գործունէութիւնը. բայց ի հարկէ ոչ Թիւրքիայում, ոչ Եւրոպայում, այլ միայն Կովկասում: Դա հարկաւոր է յանուն մեր երկրի խաղաղութեան:

Բաւական է թափուած արիւնը. սթափուենք մենք: Մենք այստեղից կը հեռանանք միայն հաստատուն հաշտութիւն կապելուց յետոյ, թող թագաւորի հայերի և թուրքերի մէջ յարատե խաղաղութիւնը:

Փետրուարի 24-ի նիստում թուրք պատգամաւորները զրին կառավարութեան առջև իրանց բոլոր պահանջները և ցանկութիւնները կը թական և իրաւական հարցերում. ընդհա-

նուր, ձրի պարտազիր ուսում, դասաւանդութիւն մայրենի լիզուով (այդ գէպօռմ էին միայն «թաթար» բառը գործ ածում, իսկ մինչ այդ և յետոյ միշտ «մնաւուլման ազգութիւն(?)» էին ասում), իսկամի ուսուցումը, հողեւը սեմինարիաներ և բարձրագոյն ճեմարանի բացում, վերացում բոլոր սահմանափակումների մուսուլմանների նկատմամբ:

Որպէսզի լիակատար լինի թուրքերի բոլոր մեղադրանքները հայ կազմակերպութեան նկատմամբ մինք առաջ կը բերենք այստեղ նաև փետրուարի 27-ում նրանց ասածները: Այն բոլորը ինչ որ նրանց պարագլուխները ասում էին իրանց «Հէյաթում» և «Իրշագում» այժմ բացարձակ կերպով արտայայտում էին իշխանութեան տռչե, ոչ մի միջոցի առջե կանդ չառնելով, ոչ մի սոփեսառութիւնից և յեղաշրջութիւնից խոյս չառլով: Թուրք պատգամաւորները իրանց ծրագրի 6-րդ կէտում զրկել էին հետեւել պահանջը «միջոցներ, որոնք երաշխատքին բոլոր պաշտօնեաների վրայ դրուած ծառայութեան ֆունկցիաների անխստիան և պատշաճաւոր կատարումը»:

Աղանվ. Ժողովուրդների պատմութեան մէջ լինում էն գէպքեր, երբ կարելի է արդարացնել տերրորը, եթէ նպատակն է վեհ, համամարդկային նորատակներ, և ես, ոչ իրքն պատգամաւոր, այլ անձամբ իրքն հրապարակախոս Աղանվ, զուցէ, և համակրեմ տերրորի որոշ արտայատութիւններին. բայց երբ մի ազգ զիմում է պաշտօնական անձերի ահարեկման իր ազգային շահերի տեսակէտից ի վեաս միւս ազգութեան և դրա շնորհիւ պաշտօնական անձինք ահի ազգեցութեան տակ կորցնում են ընդունակութիւն հաւասար վերաբերուելու զէղի ազգութիւնները, այդպիսի տերրորի ոչ ոք չի կարող համակրել, և մեր մուսուլման ազգաբնակութեան մասսան տուժում է հէնց այդ տեսակի տերրորից, և այն վերագրելով հայ յեղափոխական կազմակերպութեան բնականաբար զայրացել է և զինուել հայերի գէմ: Պաշտօնեանների սպանութիւնները, սումքերը, սպաննական նամակներ և որովզամացիանները՝ հլու հպատակ և յեղափոխական ծգտումներից ազատ մուսուլման ժողովրդի տեսակէտով՝ անտանելի գործողութիւններ էին, որովհետև այդ ըոլորի շնորհիւ պաշտօնեանները երկիւղից վախենում էին եռանդով վերականգնելու կարգը և այն գէպքերում, երբ զոհուողը մուսուլմաններ էին լինում: Այդ ստիպեց որ մուսուլմանները իւրանք արիւնահեղ կտուի գուրս գան տերրորիստների գէմ, որպիսիներին նրանք համարում են հայերին, այսինքն նրանց յիշղափոխական կազմակերպութիւնները. ուստի մինչև որ գոյուժ Փետրուար, 1906.

թիւն կ'ունենան այդ կազմակերպութիւնները՝ մուսուլմանները անկարսղ են հանգստանալ և հաշտուել հայերի հետ։ Պէտք է տերբորին վերջ դրուի։

Հաջիինվ. Այդ կէտը մենք դրել ենք, որովհետեւ չենք ուզում դիմել ինքնապաշտանութեան, ուստի ցանկանում ենք որ օրինական վարչութիւնը և պաշտօնական անձերին չահարեւին։ Ամու չի կարելի բոլոր առաւելութիւնները տալ հայերին։ Նրանց տրուած է և կուլտուրա, և կրթութիւն, և մամուլ և բացի այդ նաև յեղափոխական կազմակերպութիւն ոռոմբերով, և զօրք, և մառուզէր, իսկ մենք մեր յոյաները դրել ենք իշխանութեան պաշտպանութեան վրայ, և այդ էլ սեղանից խլում են տերբորի զիմելով։ Մի հասցնէք մեզ այն դրութեան որ մենք էլ զիմնք ուռմբերի օգնութեան։ Թէ մեր և թէ հայերի ուղղմական կազմակերպութիւնները պէտք է վերացուեն։

Շախմալիինվ. Դնելով այդ կէտը մենք հետու հնք ժամական ֆունկցիաներից, ոչ էլ ուզում հնք հաճոյանալ իշխանութեան։ Բայց համաձայնուէք որ ամեն մէկը քաջութիւն չունի ընդգիւմագրելու տերբորին, և երբ տերբորը համակում է կեանքի բոր խորշերը այն ժամանակ կեանքը անտանելի է դասնում։ Տերբորը անբարոյականացնում է նաև մեր ժուսան, երբ նրա աչքերի առջև սպանում են նահանգապետներին, իշխանաւորներին։ Որոշ միջոցներ տերբորի գէմ մենք չենք կարող առաջարկել այլ միայն ցանկութիւն ենք յայտնում որ հասարակութիւնը գործ դնի իր բարոյական աղղեցութիւնը կազմակերպութիւնների վրայ։

Թովչիբաշելի. Եթէ աչքերը վառկել իրականութեան վրայ այն ժամանակ այդ հարցը աւելորդ կը թուայ։ Բայց նա զրուած է իր՝ կեանքի, իրականութեան կողմից։ Պաշտօնեաները մասնաւող գաւառում, անկարող են կատարել իրանց պարտքը պահանջած խստութեամբ։ Նրանք ասում են. «չէ որ մենք էլ մարդ ենք, մենք էլ երեխաներ ունենք, ինչո՞ւ զոհուենք տերբորներից»։ Եթէ մենք երկու ազգերս կուտում ենք ինչո՞ւ մէջ տեղը պէտք է տուժեն երբոշդ անձինք, պետական պաշտօնեաները։ Խաղաղութիւնը հաստատելու համար անհրաժեշտ է որ տերբոր չգործադրուի պաշտօնեաների դէմ։

Զիաթլսանուլ. Մենք եկել ենք այստեղ իսկական հաշտութիւն կապելու և ոչ միայն թղթի վրայ, ուստի պէտք է խօսել բոլոր հարցերի մասին։ Աւելի լաւ է այստեղ մի քիչ կարմրենք, քան թէ յետոյ նոր արիւնհեղութիւններ պատահելիս զղջանք և ափսոսանք։ Հայերը ասում են թէ տերբորի առաջն առնելու համար առանձին մարմին կայ՝ ժանդարմները։ Բայց

մենք ուզում ենք լեզար ճանապարհով մեր կողմից էլ միջոցներ ձեռք առնել:

Աղայեն. Մեր հասցէին անտեղի յանդիմանութիւններ են ուզղում: Պէտք է խօսենք տերբորի մասին, որովհետև գա հայթուրքական ընդհարութիւնների զլիսաւոր պատճառներից մէկն էր: Հայերը շատ լաւ գիտեն, թէ ինչ տեսակ տերբորի մասին ենք մենք խօսում: Երբ հայերը մի որեւէ համամարդկային նպատակով տերբոր են կատարել, թուրքերը միշտ էլ համակրանքով են վերաբերուել: Բայց հայերը այդ սահմանից վաղուց են դուրս եկել, նրանք սպանալիքներ են ուզղում այն մարդկանց, այն պաշտօնեաներին, որոնք համակրանք են ցոյց տալիս զէպի թուրքերը: Ահա գրա առաջը պէտք է առնել: Մենք այսուհեղ զանազան միջոցներ ենք մշակում, բայց չե՞ որ գրանց գործադրովը պաշտօնեաներն են, ուրեմն նրանց էլ պէտք է աղատել տերբորի երկիր զից, որպէսզի արդարութիւն լինի: Պէտք է նկատի ունենալ նաև մուսուլման տմբոխի հոգեթանութիւնը, մուսուլման աղղաբնակութիւնը կարծում է որ թուրքերի և հայերի մէջ անվստահութեան պատճառը գաղտնի կազմակերպութեան գործունէութիւնն է:

Հաջիեն. Թուրքերը ուզում են իմամալ արգեօք կարելի՞ է պետութեան մէջ պետութիւն ունենալ, ինչպէս այդ արել են հայ կամիսեաները, կարելի՞ է թոյլ տալ որ մի պետութեան մէջ ուրիշներն էլ սեփական զօրք պահեն, շտաբ, զօրավարներ, մասուզէրների պահեստներ ունենան, կարելի՞ է հրամաններ ու սպանալիքներ արձակել: Թող իշխանութեան ներկայացուցիչները մեզ պատասխանեն՝ կարելի՞ է այս բոլորը: Մենք պիտինք որ կան շատ յեղափոխական կազմակերպութիւններ ուսուների, գերմանացիների մէջ, դրանց մենք հակառակ չենք: Դաշնակցութիւնը դրանց նման չէ: Հոկտեմբերին, երբ Բագրում սոցիալ-դեմոկրատները ցոյց սարքեցին, մենք էլ մասնակցեցինք համբուրուեցինք, սակայն «Դաշնակցութիւնը» չկար, նա մեզ հետ չհամբուրուեց: Հաւատացնում եմ ձեզ՝ Դաշնակցութիւնը ինձ ոչինչ չէ արել, նոյնիսկ սպանական նամակ չէ գրել, բայց ես իմ մասին չեմ մտածում, այլ ճշմարտութեան: Թող հայ պատգամաւորները ազգեն Դաշնակցութեան վրայ, իբրև իրանց եղբայրների վրայ, որ նրանք հանգիստ թողնեն թուրքերիս էլ, պաշտօնեաներին էլ: Եթէ այդ պատգամաւորները անզօր են որեւէ աղղիցութիւն անելու, էլ ինչ ընտրեալինել են, դարդակ մարդիկ են: Ես յայսնում եմ որ Բագրում ես շատ բարող եմ անել, կարող եմ ազգել, սաստել: Եթէ մենք

պատգամաւորներս հեղինակութիւն չունենք մեր ժողովրդի մէջ էլ ինչու ենք հաւաքուել այսուեց:

Աղանվ. Իզուր են հայերը մեզ մատնիչներ և ժանդարմաներ համարում, երբ ըննւում է մեր ծրագրի Զ-րդ կետը («կողմանները պարտաւորում են յանձնել ազգային հողի վրայ կատարած ոճրագործութիւնների հեղինակներին»): Մենք լսեցինք պ. Ա. Խատիսեանից որ Դաշնակցութիւնը զօրք ունի, որ կուռմ է լաւ իդէալների համար. լսեցինք և մեր որոշումը կայացրինք: Դնեսով մեր կէտը մենք գործնական նպատակ ունենք. զոհում ենք մասնաւոր շահը ընդհանուրի օդախն: Հայերը ասում են թէ իշխանութիւնը թոյլ էր տալիս ոճիրներ գործելու, յանցաւոր անգործունէութիւն էր ցոյց տալիս. մենք առաջարկում ենք օգնել իշխանութեան, այն ժամանակ մեզ մատնիչ են անուանում, երբ իշխանութիւնն ենք օգնութիւն կամ չում դրանք մեզ ասում են թէ քծնում ենք: Միթէ տարօրինակ չէ այդպիսի վարժունք: Եթէ այս կէտը հայերի համար անյարմար է՝ թող ասեն պարզօքն: Մեզ համար մինոյն է, ոճրագործը Դաշնակցութիւնն է, թէ Խատիսեանը կամ Աղանվը: Ոճրագործը ոճրագործ է: Եթէ զուր իսկական խաղաղաբարներ էք—պէտք է յանձնէք ոճրագործներին: Անհատական սպանութիւններից է որ բռնկւում են մասսայական ընդհարումներ: Ես պընդում եմ որ եթէ Բագում Բարաեկի սպանողին հայերը յանձնէին իշխանութեանը, այն ժամանակ այսքան արիւնհեղութիւն էլ չէր սկսուի: Լաւ մտածեցէք խնդրի մասին այդ տեսակէտից:

Հաջիեվ. Ասում ենք ոճրագործներին յանձնէք իշխանութեան ձեռքը. և մենք մեր չարագործներին կը յանձնենք, իսկ հայերը վախենում են իրանց ոճրագործներից...

Բնորշելով հայերի և թուրքերի տեսակէտները ընդհարումի զլիսաւոր պատճառների նկատմամբ ճառախօսների սեփական խօսքերով, այժմ անցնենք համաժողովի զրագմունքների մէջ երկրորդ նշանաւոր խնդրին, այն է ըսէի հարցին: Այդ հարցում էլ տարբեր էին երկու ժողովութիւնների ներկայացուցիչների տեստկէտները: Առաջ բերենք այստեղ նախ և առաջ պ. Ա. Քալանթարի զեկուցումը բոչի մասին, արտատպիկով այն «Մշակից»:

Ա. Քալանթար: Մեր առաջ զրուած հարցը մեր երկրի ամենախոշոր և ցաւոտ հարցերից մէկն է, ոչ միայն այսօր, երբ մենք զբաղուած ենք հայ-թուրքական կոճիւնները լուծելու հոգսով, այլ և առհասարակ:

Դա մի հարց է որ հայերի կողմից միշտ յարուցուել է,

դա մի հարց է, որ շատ և շատ անգամ զբաղեցրել է վարչական հիմնարկութիւններին, բայց որ երբէք չէ հնթարկուել սխտեմական քննութեան և ուսումնասիրութիւնների վարչական հակա արժանացել է սխտեմական գործողութիւնների վարչական հաստատութիւնների կողմից:

Ես անհրաժեշտ եմ համարում այսօր կանգ առնելու այդ հարցի կարեռութեան վրայ և համողելու, որ չէ կարելի զանցառութեան տալ և բարձիթողի անել մի հարց, որը չափազանց մեծ նշունակութիւն ունի մեր երկրի տնտեսութեան համար:

Քոչի հարցը վերաբերում է ոչ միայն քոչուորին, այլ և այն նստակեաց ազգաբնակութեան, որի գիւղերի մօտով նա անցնում է: Այդ անցնողը մի այնպիսի անցնող չէ, ինչպէս են ճանապարհորդները մեծ ճանապարհով, որոնք գործ ունեն միայն ճանապարհի հետ: Դրանք վաճառականներ և արդիւնականներ արդիւնագործներ չեն, որոնք գալիս են միմեանց հետ հաղորդակցութիւն ունենալու և ապրանքների փոխանակութիւն կատարելու: Եթէ այդպէս լինէր գրութիւնը, այդպիսի սերտ շփման միայն կարելի էր ուրախանալ:

Մեր առաջ կատարուող շարժումը այդ տեսակի չէ: Սա թափառող ժողովրդի տեղափոխութիւն է իր անասուններով և տնային տնտեսութեան պարագաներով:

Անստուններին հարկաւոր է ճանապարհին կերակուր, որը նրանք վերցնում են ճանապարհին գտնուող տեղերից, ուսուի և փչացնում են մերձակայ նստակեաց գիւղերի խոտահարքը, ցանքսերը և արօնները: Իսկ դրանց վրայ աւելանում են և գողութիւնը ու ընդհարումները, որոնք ամեն տարի խլում են ժողովրդից զոհեր:

Քոչի հետ կապուած չափաղանց ծանր հանգամանքներ միշտ գժգոհութեան պատճառ են եղել տեղական ազգաբնակութեան մէջ: Նա մեր երկրի ցաւոտ տեղերից մէկն է, որի մասին տասնեակ տարիներ գանգատներ են հանում վարչական շրջաններին:

Եւ հասկանալի է, որ եթէ սովորական տարիներում մարդկանց այդ չափաղանց անախորժ շփումը առաջացնում է դժբաղութիւններ, այժմ, երբ հայերի և թուրքերի յարարերութիւնները սուր կերպով լարուած են, աւելի ևս պատասխանատու և ծանր հանգամանք է ստեղծուել մեր առաջ:

Նստակեաց երկրագործի համար քոչուորիք մի պատուհաս է, մի չարիք է, որ նա պարբերաբար տանում է ամեն տարի:

Դա մի աղէտ է, մի ծանրութիւն է, մի հարկ է, որից ճնշուել է և ճնշում է մեր ժողովուրդը:

Պէտք է այստեղ յայտնեմ, որ բոչուարական գործի մէջ պէտք է տարբերի մի քանի տեսակեաները: Նրանցից մի քանիսը ոչ միայն անմիաս են շրջականիրի համար, այլ և ինքն ըստ ինքեւն յանկալի գործօններ են մեր իրականութեան մէջ: Օրինակ, մեր լեռնային շրջաններում, ինչպէս են Զանգեզուրի, Դարալագեազի, Նոր-Բայազէտի, Ալեքսանդրօպօլի, Ախալքալաքի և ուրիշ գաւառների լեռնադաշտերում, տեղական գիւղացիները, թէ հայ և թէ թուրք, ամեն տարի ուղարկում են իրանց անասունները մերձակայ լեռնային արօտները, այնտեղ արածացնում նրանց և ապա մի քանի ամսից յետոյ վերադարձնում փիւզ: Նրանք ոչ ոքի առանձին վնաս չեն հասցնում, մնան ճանապարհներ չեն անցնում և մի քանի ժամուայ մէջ զնում են ու գալիս:

Այդ տեսակ են և եւրոպայում գտնուող լեռնաստանների տնտեսութիւնը, օրինակ, Շվեյցարիայում, Զալցբուրգում, Տիրոլում:

Կան և այնպիսիները, որոնք փոքր ինչ տւելի ենու են լեռնային արօտներից և պէտք է մի 10—20 վերստ ճմնապարհ անցնեն: Դրանք թէն արդէն անյարմարութիւններ են պատճառում, բայց գրանց էլ կարելի է հաշտուել:

Սակայն ի՞նչ կարելի է ասել այն քոչուորների մասին, որոնք անցնում են ոչ թէ 20—30, ոչ թէ 50—60, այլ և 100—150 և նոյն իսկ 200 վերստեր: Այդպէս են, օրինակ, Մուղանի, Միլի անապատներից բարձրացող բոչուորները, որոնցից մի քանիսը վրաններ են զարկում, ուր էք կարծում, Աւանայ լճի մօտ գտնուող լեռնարօտներում:

Ահա այդպիսի քոչուորները ըոլորովին արգէն պատուհաններ են զարնում այն գիւղերի համար, որոնց մօտով նրանք պէտք է անցնեն: Եւ եթէ քոչուորների գէմ դանդաս և բողոք կայ, ահա այդ քոչուորներից է:

Այն օրից, որ սուսաց իշխանութիւնը հաստատուել է մեր երկրում, յարուցուել է և քոչուորների ինդիրը, սական իշխանութիւնը երբէք չէ նայել ինդիրի վրայ լայն կուլտուրական տեսակէտով և բաւականացել է նեղ, զուտ աղմինիստրացիական մի քանի կարգադրութիւններով:

Վարչութիւնը տեսնելով քոչերի հասցրած վնասները, երբէմսապէս փորձ է արել արգելելու քոչերը, բայց որովհետև նա չէ նայել գործի վրայ աւելի հիմնական կերպով, չէ կանգ առել այն պայմանների վրայ, որոնք զրդում են մարդկանց

քոչելու և ինքը չէ նպաստել ստեղծելու պայմանները, որպէս զի քոչուորները կարողանան նստակեաց գառնալ, ուստի նրա արձակած հրամանները մնացել են անկտտար և չարիքը մնացել է չարիք, մինչև նոր արգելը և նոր թոյլուութիւնը բոչելու համար:

Դեռ 1850 թուականների սկզբներին Երևանեան հահանգապետը մի հրաման էր արձակել, որ քոչուորները չը բարձրանան Նոր Բայազէտի և Ալիքսանդրօպոլի գաւառները. թէն նրա կարգադրութիւնը կատար չածուեց և միայն մի հետեանք ունեցաւ. որոշուեց քոչուորների արօնների սահմանագիծը:

Գանձակի նահանգապետը թէ 1874 և թէ 1879 թուականներին ներկայացրեց զեկուցումներ քոչուորների մասի և յայտնեց այն կարծիքը որ պէտք է ոչնչացնել բոչերը, բայց այդ զեկուցումները մնացին ատեանների սեղանների վրայ:

Եղել են և ուրիշ կարգադրութիւններ:

Բայց, անկառկած, բոչերը ոչնչացնելու համար վարչութիւնը պէտք է հաւատացած լինէր, որ քոչուորը կարող է մնալ տափարակում և կարող է տպահովել իր ապրուստը երկրագործական աշխատանքով: Եւ եթէ չը կային նպաստաւոր պայմաններ, նա պէտք է հարց յարուցանէր այդ պայմանները ստեղծելու համար: Նա այդ չէ արել: Ճիշտ է նա երբեմնապէս իր զեկուցումների մէջ յայտնել է, որ մի քանի տեղերում ուսուցելու ջուր չը կայ և առուներ չեն անցկացրուած, բայց դրանք միայն հարեանցի ցուցումներ էին, որոնք անցել են և առանց հետեանքների:

Ճիշտ է ինքը, ազգաբնակութիւնը փորձեր արել է նստակեաց դառնալու և մենք գիտենք գիւղերի մի ամբողջ ցուցակ, որոնք առաջ քոչում էին զէսլի սարեր, իսկ այժմ գարձել են նստակեացներ, զիտենք և շատ գիւղեր, որտեղ այժմ խոշոր անառնապահներ և արօտ գնացողներ մնացել են միայն բացառիկ անձնաւորութիւններ, բայց այդ բոլորը կատարուել են չափազանց գանգաղ կերպով և յամենայն զէսլ խրախոյսի ու աջակցութեան չէ հանդիպել պետական հաստատութիւնների կողմէց: Իսկ մեր երկրի քիւրղերը սկսել են նստակեցութեան փորձեր անելու մասամբ իրանց այն ցեղակիցների օրինակին հետեւելով, որոնք ապրում են Թիւրքիայում: Հին զործերից երեւմ է, որ յիսնական թուականների սկզբների թիւրքաց կառավարութիւնը ձեռնարկած է եղել նստակեաց գարձնելու քիւրղերին և թէն կատարեալալազէս չէ հասել իր նպատակին, բայց և այնպէս մի որոշ աստիճանի գարկ է տուել այդ գործին:

Անկասկած, այստեղ ուր նախկին թափառականը սկսել է երկրագործութեամբ պարապուիլ, զարգացրել է այգեգործութիւն, պարտիզանութիւն, բամբակագործութիւն, նա սկսել է ընտենանալ նստակեաց կեանքի և գիտակցել, որ նստակեաց կեանքը աւելի արդիւնաւէտ է և հիմք է անընդհատ բարգաւաճման:

Բայց իրականութիւնը այն է, որ ամեն տեղ դեռ չեն ստեղծուած այդ պայմանները և քոչք դեռ պահպանել է իր գոյութիւնը: Ճիշտ է, մի շաբթ փաստերով կարելի է ապացուցել որ քոչուորների ամբողջ խմբեր գնում են սարերը միայն աւանդաբար, միայն սովորութեան ազգեցութեան տակ, բայց և այնպէս դեռ շատ և շատ են այնպիսիները, որոնք քոչում են և պէտք է քոչեն, մինչև որ կը պատրաստուեն նրանց համար ապրելու նոր պայմաններ:

Քոչը յանկարծուկի կանգեցնել անկարելի է, ոչ ոք չէ կարող այդ առաջարկել: Բայց բարուոքել նրան կարելի է և հնարեղածին չափ դարձնել սակաւ վասարեր: Այն մջոցներից, որ կարելի է առաջարկել, մենք կը յիշատակենք մի քանիսը.

Նախ և առաջ կարելի է և պէտք է կրծատել քոչի ճանապարհների թիւը:

Քոչուոր մարդը պատրաստ է ամեն մի ճանապարհով գնալ առաջ և որքան շատ է ճանապարհների թիւը, այնքան լաւ է նրա համար, որպիշեան նրա անասունները աւելի շատ խոտ կը գտնեն թարմ տեղերում: Եթե որ ճանապարհների թիւը պակասացնուի, այն ժամանակը և կը պակասի այն զրկանքների ու զոհերի թիւը, որ տալիս է նստակեաց գիւղացիութիւնը քոչուորներին:

Երկրորդ՝ մի որոշ աստիճան կ'օգնէր զործին, եթէ լեռները ուզարկուէին միայն անասունները: Աւելորդ մարդիկ, որոնք կենդանիների համար անհրաժեշտ չեն, շատ անգամ որսերով, գողութիւններով ու աւարներով են լինում զբաղուած, որոնցից ամեն տարի մեծ վասո ունեն գիւղացիները:

Երրորդ՝ նպատակայարմար կը լինէր, որ քոչը առաջ ընթանար աւելի կարճ ժամանակամիջոցում և գուրս գար միւսների հետ, եթէ ոչ միտժամանակ, զոնէ շատ մօտ օքերում:

Քոչի աւելի արագ առաջ ընթանալը այն նշանակութիւնն ունի, որ նրանք աւելի քիչ ստիպուած կը լինեն ուտեցնել գիւղերի արտերը և խոտերը:

Չորրորդ՝ կարեոր է, որ ճանապարհների որոշ կէտերում լինեն պահակներ, որոնց կազմութիւնը կարելի էր յետոյ մշակել:

Հինգերորդ՝ բարուոքել անասնաբուժական հսկողութիւնը, կապելով նրան քոչի և արօտների հսկողութեան գործի հետ:

Վեցերորդ՝ մշակել գիւղական պահապանների խմբերի կազմակերպութեան ծրագիր՝ գիւղերը պահպանելու յարձակումներից և վասներից, նոյնպէս խառն պահակախմբեր և արօտների սահմանները ապահովելու նպատակով:

Եօթներորդ՝ արօտների հսկողութեան համար մասնակցութեան կանչել անասնապահների ընտրեալներին:

Անշուշտ այս կետերին կարելի է աւելացնեն և ուրիշները:

Սակայն մեր առաջ մի չափավանց գժուար և ծանր հարց է դրուած, այն է, թէ ի՞նչ անենք այս տարի: Մեր առաջ բերած միջոցները կարող են օգնել քոչուորական գործի բարուորման, բայց ներկայ տարին բացառիկ տարի է: Եւ հարց է ծագում, թէ արդեօք քոչը կարող է այս տարի բարձրանալ թէ ոչ:

Այդ հարցի պատասխանը կախուած է վստահութեան այն չափից, որ մենք ունենք դէպի հայ և թուրք մասսանների տրամադրութիւնները և դէպի հաշտութեան ամրութիւնը:

Մենք, ինտելիգենտ հայ և թուրք անհատներս, անկասակած, շատ ճիշտ կը վճռէինք հարցը մեր մէջ, եթէ դա մեզ վերաբերում լինէր և դրական հետևանքների կը գայինք այս կամ այն կէտի վերաբերմամբ: Բայց այժմ գործը անցել է մասսաներին: Նրանց տրամադրութիւնից է կախուած ամեն բան: Մենք ինտելիգենտներս չօրորենք մեզ փոխադարձ հաւասարացումներով, այլ այնպէս դնենք գործը, որ իրավէս հասած լինենք մխիթարական հետևանքների: Այս տարուայ քոչի դէմ ոչ մէկը մեզանից չէր խօսի, եթէ փոխադարձ վըստահութեան գդացումները խոր արմատներ գցած լինէին մեր մասսանների մէջ:

Ո՞վ կարող է երաշխաւորել, որ ամառը կ'ացնի առանց ընդհարումների, որ հայկական և թուրքական մասսանները, շփուելով միմասնց հետ, չեն ունենայ սուր ընդհարումներ և յետոյ առաջ չեն բերի սարսափելի հրդեհ երկրում:

Հայերը երաշխաւորել այդ չեն կարող: Գաւառներից ստացած գիւղական խնդիրը և մեր պատգամաւորների յայտարարութիւնները յանգում են այն կէտին, որ եթէ կարելի է, ներկայ տարում յատկապէս այն շրջաններում, ուր ընդհարումներ են տեղի ունեցել, վերացուի քոչը: Անկասկած՝ քոչի լինել չը կախուած է քոչի անհրաժեշտութեան էութիւնից, բայց հայերը չեն կարող իրանք իրանց կողմից համարձակ կերպով

ասել, թէ քոչեցէք, ամեն բան հանգիստ ու հանդարտ կ'երթայ:

Հայերը այդ տեսակ պատասխանատւութիւն չեն կարող վերցնել իրանց վրայ: Դա ծանր պատասխանատւութիւն է:

Աղայինի: Քալանթարի ճառը հակասում է սոցիօգիային և ազգերի պատմական էվոլյուցիային: Թուրք ազգերի շարժման պատմութիւնից իրեւում է, որ նրանք ընթանում էին գետերի երկարութեամբ, իսկ չնորհիւ այդ հանգամանքի այժմ տափարակ անդերը ըռնել են մուսուլմանները, իսկ սարհարթերը—ուրիշ ազգերը: Ազգերը ապրում են պատմական զարգացման մի բանի շրջանները: 1) որսորդութեան և ձկնորսութեան շրջանը, 2) թափառական, քոչային կենցազ և 3) կեանքի նստակեաց շրջան: Մուսուլմանները այժմ ապրում են թափառական, քոչի կեանքով, թէ տեղաւում նկատում է անցումն դէպի նստակեաց կեանքը: Վերացնել քոչը վարչական միջոցներով՝ անկարելի է: Մարդկանց տափարակներից դէպի սարերն է քշում մի անտեսական պահանջ—ամառը տափարակի վրայ ամեն բան մեռնում է, չորանում է, չը կայ ջուր, չը կայ բուսականութիւն, չը կայ կեանք, ուստի ամեն ինչ որ կենդանի է, ձգտում է դէպի սարերը: Բայց դրանից նրան քշում է և մալարիան: Ասել տափարակների բնակիչներին. «մի քոչէք, մնացէք այստեղ», կը նշանակէ դիտմամբ դատապարտել նրանց մահուան: Եթէ այդպէս ասէք, ժողովուրդը այդպէս էլ կը հասկանայ, թէ իրան կամենում են դատապարտել մահուան, իսկ եթէ այդ ասէք, էլ ոչ մի հաշտութիւն չէ կարող լինել, խաղաղութիւն չէ կարող հաստատել: Չը պէտք է անջատել մարդկանց, այլ միացնել, բայց որպէս զի ընդհարումներ չը լինեն, թող զրահամար իշխանութիւնները միջոցներ ձեռք առնեն: Մեր անդառնալի վըճինն է, որ քոչն պէտք է լինի, միայն մենք ինչը միջոցներ ձեռք առնել, որ ընդհարումներ տեղի չունենան:

Դորտոր կարարեցով գտնում է, որ հայ կոմիտեները պէտք է գործ գնեն իրանց ազգեցութիւնը իրանց ժողովրդի վրայ և իրանք տանեն թուրքերին մինչև քոչերի տեղը:

Վէքիլով նկատում է, որ քոչում են ոչ միայն թուրքերը, այլ և հայերը, յոյները և ուրիշները:

Եետն Սարգսեան, Ես կ'ուզենայի լրացնել պ. Աղակի պատմակուլտուրական ակնարկը քոչի մասին: Եթէ նա շարունակէր իր մտածողութիւնը ազգերի պատմական զարգացման իրար հսկեող աստիճանների մասին՝ պէտք է տեսնէր որ թուրքերը այժմ այն դրութեան մէջ են որ թափառական-քոչուրական

շրջանից անցնում են նստակեաց դրութեան, որ կուլտուրապէս աւելի բարձր աստիճան է ներկայացնում: Տեղահեղ մեր երկրում թուրք-թաթարական ցեղերը արգէն բոլորովին թողել են քոչուրթիւնը և նստակեաց դառել, իսկ տեղ-տեղ նըանք դեռ անցողական դրութեան մէջ են. կէս-նստակեաց, կէս-քոչուար: Ի՞նչ է պատճառը որ մինչ թուրք-թաթարական ցեղերը այժմ էլ, կասպից ծովի միւս կողմում՝ թուրքեստանում, զեռ չեն գուրս եկել թափառական անամնապահների դրութիւնից, մեզանում, Անդրկովկասում, այդ էվոլյուցիան այնքան առաջ է գնացել որ թուրք-թաթարների մի մասը բոլորովին նստակեաց է դառել, ապրում երկրագործութեամբ, իսկ միւս մասը միայն կիսով չափ նստակեաց-երկրագործ է, իսկ կիսով չափ քոչուոր-անամնապահ: Այդ երեսյթի գլխաւոր պատճառը այն է որ մեր երկրի աշխարհագրական պայմանները շատ տարրեր են թուրքեստանի աշխարհագրական պայմաններից, մեր երկրում չկան լայնատարած և անժամկետ տափառտաններ, որոնց ներկայութիւնն է միայն հնարաւոր դարձնում թափառական անամնապահութիւնը: Այդպիսի տափառտանները հնարաւոր են դարձնում խօշոր խաշնարածութեան ստեղծել նոյն իսկ այնպիսի երկրներում, որ սկզբներում ոչխար չկար, օրինակ Աւստրիայում, ուր այժմ անդիմացները դարպացրել են անամնապահութեան այդ ճիւղը և ընդարձակ տափառտաններում մի քանի միլիոն գլուխ ընտիր ոչխարներ են պահում: Իսկ մեր տափառակները յարմար չեն ընդարձակ անամնապահութեան համար: Եւ մեր պատճական անցեալում մենք չենք տեսնում հակասութիւն մեր առածին:

Երբ Ալ-րդ գարում միջին Ասիայից մեր երկիրը խուժեցին թուրք-թաթարական թափառական ցեղերը, Անդրկովկասի արեելեան մասը ունէր ծաղկած բարձր քաղաքակրթութիւն, ճոխ քաղաք-ներ, շնորհագեր, վիթխարի ջրանցքներ և այլն, այդ բարձր կուլտուրան ունակութաւ, աւելուեց թաթարների հեղեղից և կուր և Արաքս գետի երկու կողմի հարգութիւնների վրայ բարձր կուլտուրան տեղի տուաւ աւելի ստոր՝ քոչուրական կուլտուրային: Անցան դարեր և մեր երկրի աշխարհագրական պայմանները ստիպեցին որ եկուոր թափառական ցեղերը մեր երկրում աւելի արագ անցնեն թափառականից նստակեաց-երկրագործական շըրշանին, քան Միջին Ասիայում մնացած նրանց արիւնակլուցները, որոնք այժմ էլ շարունակում են թափառական անամնապահների կեանքը: Հասկանալի է թէ ի՞նչ ուղղութեամբ է ընթանում էվոլյուցիան մեզանում: Արդ, ինձ թւում է թէ ի՞նքը թուրք

ինտելիգենցիան պէտք է ամեն կերպ ձդուի որ որքան կարելի է շուտ վերջանայ քոչուորութիւնը, թուրք ժողովրդի կեանը այդ անցողական պրոցեսը: Շատ դէպքերում այժմ ոչ թէ քոչում են անհրաժեշտութիւնից, այլ զրդուած ատավիստական սովորութիւններից: Շատ քոչուորներ կամ անասուններ չունին կամ հաղիւ մի տամնեակի է համնում նրանց թիւը:

Եւ թուրքերի այդ ատավիստական սովորութեան շնորհիւ ոչ նրանց երկրագործութիւնն է դառնում կատարեալ, ոչ էլ անասնապահութիւնը ինտենզիւ: Ասում են թէ թողնենք որ կեանքի մէջ ամեն բան իր բնական ընթացքով զնայ: Բայց այդ դէպքում նշանակում է ուրամասլ մարդկային հասարական կեանքում ինտելլեկտի, մտաւոր Փակտորի գերը, կանխատեսութիւնը, որոշ տենդենցիայով և ծրագրով գործելու, կեանքին ուղղութիւն տալու հնարաւորութիւնը: Եթէ թուրք ինտելիգենցիան և տեղական իշխանութիւնը համակուած լինեն բոչի վերացման անհրաժեշտութեամբ՝ նրանց ձեռք առած բոլոր միջոցների մէջ կ'երևար այդ տենդենցը, և անցողական շրջանը այնքան երկարաւու և ցաւագին չէր լինի: Երկրագործութիւնը և անասնապահութիւնը մեր երկրում պէտք է խոր դիֆֆերենցիայի ենթարկուին. առաջինը պէտք է կատարելագործուած ձեւեր ստանայ տափարակներում, իսկ երկրորդը ալպեան շերտերում, դառնալով գլխաւոր զրադմունք լեռներում ապրող աղքաբնակութեան այն մասին, որ բանում է բարձը արօապեղիներին կարած շերտերը, ապրում է ալպիական գօտու հարկանութեամբ:

Այդ մասերի բնակիչներին հարկաւոր չի լինի անասնապահութեան համար տնով տեղով քոչել զանազան գիւղերի միջով և վրդովել ճանապարհի վրայ բազմաթիւ անձանց հանգստութիւնը: Ալպիական շերտերին մօտ լինելով նրանց հարկաւոր է միայն գիւղից մի քիչ վերև քշել իրանց հօտերը: Միւս կողմից պէտք է ի նկատի ունենալ որ այդ լեռնալանջերի հոգային-կլիմայական պայմանները այնպէս են / որ երկրագործութիւնը այդ տեղերում անկարող է լիովին վարձատրել մարդու աշխատանքը և, բնականարար, պէտք է լեռնականը ոյժ տայ անասնապահութեան կատարելագործուած ձեւերին: Երբ քոչը վերացուի մեղանում՝ անասնապահութիւնը կը կենտրոնանայ ալպիտկան շերտերի վրայ, տափարակների բնակիչները կը ծախեն իրանց հօաերը ալպիական շերտերի բնակիչներին, իսկ փոխարէնը ձեռք կը բերեն ինտենսիւ երկրագործութեան համար կարեոր կենդանի և այլ ինվենտար: Մեզ ասում են որ քոչը բղխում է կլիմայական պատճառներից. տա-

Քից և մալարիայից հիւանդանում են մարդիկ. բայց չէ որ տափարակի վրայ ապրում են քոչուրներից բացի գերմանացիներ, հայեր, ոռուսներ, նոյն իսկ տեղ-տեղ նստակեաց թուրքեր, և նրանք չեն քոչում: Աւելի ևս բարուրքէք տափարակներում գիւղերի սանիտարական-կուլտուրական վիճակը: Այն ծախսըով որով պէտք է ապահովուի արուեստական միջոցներով քոչուրների տեղափոխութիւնը, այն ծախսերով որ պահանջելու է կազակների պահակախմբերի պահպանութիւնը աւելի նպատակայարմաք չէ՞ր լինի տափարակի բնակիչների համար ջրանցներ շինել, այդ գիւղերի սանիտարական կեանքը բարուրքել, բժշկներ պահել այդ վայրերում և այլն: Քոչը պէտք է վերացնուի. այդ կատեղորիկ պահանջի համաձայն ինքը կեանքը կը գտնի ելք, լուծում, յարմարուելով աւելի բարձր կուլտուրական կեանքի պայմաններին. այդ տենսկեսնցիան պէտք է երեկի կատավարութեան ձեռք տանելիք միջոցների մէջ: — Այդ ուղղութեամբ պէտք է պրոպագանդ անի թուրքը ինտելիգենցիան:

Ի՞նչ վիրաբերում է ալ. Կարաբէկովի առաջարկին՝ որ հայ յեղափոխական կազմակերպութիւնները օգնեն և ապահովեն քոչը վտանգներից—դա հակասութիւն է. դուք մի քիչ առաջ առաջարկում էք կազմալուծել, ոչնչացնել նրանց. իսկ այժմ խնդրում էք որ նրանք աշակցեն...

Ծախմակինվ, պտնում է, որ եթէ քոչը թոյլ չը տրվի,
գրանից մեծ բարզութիւններ կ'առաջանան: Պէտք է նկատի
ունենալ, որ ոչ միայն ամարային, այլ ձմերային քոչառեղեր
կան, օր. Մուղանի, Եփրակի դաշտերը:

Ն. Դուլեան. մի երկար ճառում բնորոշելով թուրք և հայ ժամանելի տրամադրաւթիւնը, որ այս լուպէին թշնամական է և ցոյց տալով, որ եթէ թուրքերը այն կարծիքն ունեն, թէ հայերը կամենում են ջնջել մուսուլմաններին, հայերն էլ այն կարծիքի են, թէ թուրքերը կամենում են ապրել իրանց գաւանակից պետութեան՝ Թիւրքիայի տիրապետութեան տակ և զրա համար հարկաւոր են համարում ջնջել հայերին—զանուժ է, որ պէտք է թողնել որ այդ կրքերը հանդարատեն, պէտք է թոյլ չտալ, որ վրէժինզրութեան զգացումը աւելի զարգանայ: Ուստի պէտք է աշխատել հեռացնել հայերին և թուրքերին միմիանցից և թոյլ չտալ քոչը: Մենք պէտք է վտանդին դէմ ու դէմ նայենք և չթագցնենք, իսկ վտանդ կայ, այն ևս շատ մեծ: Ըստում եմ, որ յանկարծ չէ կարելի փոխել կեանքի կաղմը: Թող այդ հարցն որոշեն իշխանութիւնները և տեղական մարդիկ, մենք ամենսկին չենք կամենում, որ մուսուլմանները դաս կրեն: Մի բանի վիճակագրական տեղեկու-

թիւններ, որ բերում է, ցոյց են տալիս, որ քոչում են ոչ միայն խաչարածները, այլ և նրանք, որոնք ոչ մի խաշն չունեն:

Զիաթիւնով. Եթէ կառավարութիւնը 50 տարուայ ընթացքում չկարողացաւ ոչնչացնել քոչը, ուրեմն մենք ամեննեին չենք կարող: Եթէ մենք վճառնք վերացնել քոչը, դա նոր բուժնեկութիւններ առաջ կը բերէ: Իշխանութիւնները կարող են այնպէս անել, որ ընդհարութիւններ չինեն: Մենք արդէն որոշեցինք հանգստացել ազգարնակութիւնը. այդ միջոցը երբ իրագործուի, հսարաւոր կը լինի անցնել նստակեաց կեանքի եղանակին, բայց այժմ քոչի վերացման մասին խօսք անդամ լինել չէ կարող:

Յ. Մելիք-Յէջլարեան նկատում է, որ այդպիսի կարեսը հարցի լուծան համար մուսուլմանները եկել են առանց հարկաւոր նիւթերի, պէտք է նրանք մասնամատն մշտկէին այդ հարցը և ապա կարելի կը լինէր լուծել:

Տէր-Շէտիլինան Ծանօթացնում է այդ հարցի վրութեան հետ Երևանի նահանգում, գլխաւորապէս իւրտերի հարցի հետ. առաջարկում է որ այդ իւրաեւը տրաւեն բացառապէս խաշնարածներին և ոչ նրանց որոնք խաշն չունեն և իւրատպերը իւրի սեփականութիւն գրամով տալիս են սրան-նրան օգտուելու համար:

Մ. Լազարեան Գանում որ քոչը սկսում է ապրիլին և կերջանում օգոստոսին: Մի քանի անգամ թուրքերը բարձրանում են և իջնում. լո՞նչպէս կարելի է տասնեակ վերտոների տարածութեան վրայ պահակներ դնել: Աւելի լաւ է մի կերպ այս տարի չթողնել սար բարձրանալ:

Թուիչիբաշեվ: Տեսականապէս քոչը անկանոն երևոյթ է, բայց քանի որ նա գոյտթիւն ունի և վաղուց, չէ կերելի մի բոպէում ջնջել նրան: Նա շայլութիւն չէ, այլ կեանքի պահանջ: Այդպէս փորձեր անելը վտանգաւոր է: Մենք արդէն առաջարկել ենք այն միջոցների ծրագիրը, որոնցով կարելի է կանոնաւորել քոչի հարցը:

Նահանգապետ Ռատշ, այն միտքը յայտնեց թէ լսելով արտայայտուած կարծիքները, կարելի է հակասութիւն տեսնել երկու կողմերի մէջ, բայց այդ հակասութիւնը միայն առերեւոյթ է:

Հայերը պաշտպան են այն կարծիքի, թէ հարցը պէտք է վճռել օրգանական, արժատական կերպով, իսկ մուսուլմանները չհերքելով սկզբունքով այն հարցը, որ ցանկալի է քոչը ջնջել և անցնել աւելի բարձր կուտուբայի, գտնում են միայն, որ այժմ այդ իրագործելը անհնարին է: Դա պատմական էվոլյուցի-

այի խնդիր է: իսկ եթէ մենք այժմ լուծենք, դա կը լինի ոչ
թէ էվոլյուցիս, այլ ըէվոլյուցիս: Իմ խոր համոզմունքով, ամեն
մի բէվօլյուցիս կանգնեցնում է կիանքի ընթացքը և մնասում
նրան: Կարելի է երկու հարցերն ևս միաժամանակ մշակել: Ես
կ'առաջարկէի ընտրել երկու մասնաժողովներ, մինը կը զբաղուի
ընդհանուր հարցի նկատմամբ, միւսը այն հարցով, թէ ի՞նչ
գործնական միջոցներ մշակել՝ ընդհարումների առաջն տանելու
համար: Թրամադրական առած կայ. Le mieux est l'ennemi du bon
—լաւագոյնը լաւի թշնամին է: Մշակենք լաւագոյնը, բայց դեռ
լաւը ընդունենք:

Շատ բնորոշ էին նաև հայերի ծրագրի 6-րդ կէտի քըն-
նութեան ժամանակ երկու կողմերի տեսակէտները: Այդ կէտում
տառած էր. «Որոշումն եւ պահանջման վեամեների քաղաքներում՝ և
զիսլիքում առանձին մասնաժողովների ծերուվ, կազմուած
իշխանութեան ներկայացուցիչներից եւ ժողովրդի ընտրեալ-
ներից»: Առաջ բերենք վիճաբանութիւնները:

Ս. Յարդիկելու անանկացրին երկիրը. զիւ-
գական ամբողջ ըրջանները այրուած են. ոչչացրուած են աներ,
շինութիւններ, այդիներ: Յարդիկելի պատճառած մնամները
պէտք է պահանջել: Անհրաժեշտ է որ վաստուածները յետ ստա-
նան իրանց վասները, տուաւել ևս անհրաժեշտ է որ մեզաւոր-
ները վասս հատուցանելով ոչ միայն անձնական, այլև գոյքի
պատասխանատուութեան ևնթարկուեն: Ի՞նչ ձեռվ պէտք է որո-
շուեն և պահանջուեն վասները: Օրէնքը սիայն մի միջոց գի-
տէ դատաստանը: Սակայն ցաւելով պէտք է նկատել որ դա-
տավարական ձեւականութիւնները չափաղանց բարդ են և կա-
պուած են ծախքերի հետ, յաճախ աւելի քան հնարաւորութիւն
ունեն հոգալու վաստածները: Յաճախ դատաստանական ճա-
նապարհով անկարելի է լինում որևէ հետևանքի համար: Ան-
հրաժեշտ է որ համայնքները պատասխանատու լինեն պատճա-
ռած վասների համար: Համայքները գիտեն իրանց անդամնե-
րին և կը բաժանեն վասները իսկական յանցաւորների մէջ: Սակայն օրէնքով համայնքները այն ժամանակ է պատասխանատու
իր անդամների գործունէութեան դիմաց, երբ ապացուցուած
է որ այդ անդամները գործել են համայնքի յանձնաբարու-
թեամբ: Այդ է պատճառը որ դատաստանական ճանապարհը
պէտք է ներկայ արտակարգ հանգամանքներում մի կողմ թող-
նել և ընտրել աղմինխատրատիւհասարակական միջոցներ:

Այժմ երբ անհրաժեշտ է գիմել աղդու միջոցներին դա-
տաստանը իր ռաւելի լաւ է արգարացնել, բան դատապարտել»

նշանաբանով պէտք է տեղ տայ ագմինխոտրացիային։ Սակայն միւս կողմից էլ պահանջել համայնքներից վնասների ամբողջ գումարը միաժամանակ յարմար չէ, որովհետև այդ կը նշանակէր բոլորովին աղքատացնել նրանց, ուստի աւելի նպատակայարմար է, համաձայն հայերիս ծրագրի 10-րդ կէտին, որ կառավարութիւնը օդնութեան համուէ, այն է ի հաշիւ յանցաւոր համայնքներից ստանալի վնասների, այժմ իսկ փոխ տալ գանձարանից անորոշ ժամանակով գումարներ վնասուածներին։ Համայնքները, ինարկէ, կարող են մասնակից անել վնասներին և արտօնեալ զասակարգերը, այն է ազալարներին և բէկերին, որոնցից շատերը մեծ գեր են խաղացել արիւնահեղ դէպքերի ժամանակ պարագլուխ (КОНОВОДЪ) հանդիսանալով։ Այս խնդրի հետ սերտ կապ ունի և մեր ծրագրի այն կէտը, որ առաջարկում է թեթեացնել հարկերի վճարումը։ Շատ գիւղեր բոլորովին աւերուած են, նրանց համար պէտք է յիտաձգել հարկերի վճարումը։

Զիաթիսանով։ Գտնուում է անհնարին դատաստանական փունկցիաները վարչութեան յանձննելլ, դա կը լինէր յետադիմութիւն։ Վարչութիւնը չունի արդարագատութեան այնպիսի երաշխաւորութիւն, ինչպէս դատարանը։ Զէ որ մուսուլմանները այն չափ կորցրել են, ինչքան և հայերը, և սակայն մենք հակասակ ենք վնասների պահանջման, որովհետեւ դա անհնարին է, քանի որ աւերումը ընդհանուր է։ Պահանջել կարելի է միայն յանցաւորներից, թող զարարանը որոշէ ամեն մէկի յանցանքը և պահանջէ նրանից, իսկ պահանջել վնասները համայնքից—անարդարութիւն է։ Զարդերի ժամանակ հարատացել են միայն խուլիգանները, նրանք յափշտակել են գոյքերը և ծախել չնչին գնով, և այժմ գուը կամենում էք, որ նրանց տեղ վճարեն այն տարրերը, որոնք չեն մասնակցել այդ աւարառութեան։ Եթէ համաձայննք հայ պատգամաւորների պահանջին, գուը կը գայ մի մեծ անարդարութիւն և գրանից կը ծագեն գուցէ ուրիշ և նոր չարդեր։

Ս. Յարութիւննեան. Այստեղ ասում են թէ անհնարին է վնասներ պահանջել։ Ուրեմն, այլ ևս ինչի՞ համար են մասնաժողվներ՝ վնասները որոշելու համար, եթէ չեն աւնելու այդ վնասները։ Վարչութիւնը այժմ շատ տեղերում պահանջում է վնասները։ Դա համապատասխան է ժողովրդի աշխարհայեացքին և սովորոյթային իրաւունքին, որ թոյլ է տալիս համայնական երաշխաւորութիւնը։ Ուրեմն մեր առաջարկած միջոցը փոփոխութիւն չի մտցնի ժողովրդի հայեացքի մէջ։ Վնասների պահանջումը կարենը է յանուն արդարագատութեան, այլապէս

նոր ջարդեր կը լինեմ, Ամբոխը կարող է մտածել. քանի որ պատիճ չկայ, ինչու նորից չօգտուել:

Ա. Դուկասիան. Թուրքերի ուշադրութիւնն է զարձնում որ նրանց ծրագրի § 9-ի մէջ վնասների հատուցումը համայնքից դրուած է միայն այսուհետև լինելիք դէպքերի նկատմամբ: Օտարօտի է որ անցեալի վերաբերմամբ անհնարին են գըտնում վնասները պահանջելու այն եղանակը, որ առաջարկում են ապագայի վերաբերմամբ: Այդ ի՞նչ տեսակ երկդիմի Յանուս է, որ իր դէմքը կամ այս կամն է ուղղելու կամ այն կողմը:

Աղանվ. Այսուեղ կոնֆերենցիա չէ երկու կոուող ազգերի, որոնք որոշում են փոխադարձ վնասները: Անցեալ տարուայ դէպքերի մէջ չկար մի կամք, որ ուղղում լինէր մի ազգ միւսի դէմ, այլ մասսաների տարերային բաղխում էր, այդ տարերային հոսանքը իր մէջ էր գցում և անհատներին հակառակ նրանց կամքին: Դա պատերազմ չեր իր ուլտիմատումով, պատրաստութիւններով և այնու և քանի որ դա պատերազմ չէր, խօսք չի կարող լինել կոնտրիբուցիայի մասին: Դուք, հայ պատգամաւորներ, ասում էք որ բոլոր այս ցաւալի թշնամութիւնը ծագեց իշխանութեան ստորին գործակալների կամքով, որոնք ցանկանում էին իրը թէ կանգնեցնել ազատազրական շարժումը և նրանց ձեռքում մուսուլման տգէտ ամերիսը գործիքի դեր է խաղացել (թէս մենք բոլորովին համաձայն չենք այդ կարծիքի հետ և երբէք չենք եղել գործիք իշխանութեան ձեռքում): Ի՞նչ իրաւունք ունէք ուրեմն այժմ պահանջել վնասներ այդ գործիքից, թողնելով մի կողմ այն կողմը որ ձեր կարծիքով ուղղում էր այդ գործիքը:

Ապացուցէք որ մուսուլման ժողովրդի տուանձնաշնորհեալ զասակարգերը զեկավարում էին մասսան և միայն այդ ժամանակ զուք իրաւունք կ'ունենաք պահանջել նրանցից վնասները, այսինքն կործանել նրանց: Ես մեր արտօնեալ զասակարգերի երկրպագուն չեմ, բայց կարծում եմ որ առանց իր բէկերի և աղալարների մուսուլման ժողովուրդը կը կորչէ, որովհետեւ նրանք հանդիսանում են նրա ինտելիգենցիան, հոգեոր, մտաւոր, բարոյական դեկավարները: Մէսա այդ գիտակից տարրը գուք կամենում էք տնտեսապէս ոչնչացնել, կորցնել և այդպիսով խաչ դնել մուսուլմանութեան վրայ մեր երկրում: Բայց մուսուլմանութիւնը թոյլ չի առաջ ալդ: Մէսա ապացուցեցինք որ միշտ պատրաստ ենք հնագանդուել արդար օրէնքին, բայց երբ վնասները կ'որոշեն գաւառապետները, որոնց թերութիւնների մասին գուք խօսում էինք երկէ, այդպիսի անփետուաբ, 1906.

արդար օրէնքին մհար չենք հնագանզուիլ: Երկրի տնտեսական բախտը ոստիկանութեան յանձնելը ծայրացեղ անարդարութիւն կը լինէր»:

Հարցի քննութիւնը յետաձգուեց մարտի 2-ի ժողովին:

Հ. Առաջելեան. Նախիջևան քաղաքի և գաւառի աւերուած ազգաբնակութիւնը տուել է ինձ այսպիսի պատուէր. «Պահանջիր կրած վնասների հատուցումը, յանցաւորների պատիճը, առ որ միայն այդ հողի վրայ, միայն ալդալիսի պայմաններով ժողովութը երաշխաւորուած կը լինի ապագայ ջարդերից և հնարաւոր կը լինի խաղաղութեան և անդորրութեան վերականութնուժը: Եւ ահա ոչ միայն յանուն արդարութեան վեհ իդէալին թէ «ամեն մի ոճրադործութիւն պէտք է պատժուի», այլ ուղղակի գործնական տեսակէտից, որպէսզի արժատականապէս ոչնչացնուի ամեն փորձ ապագայում ջարդեր առաջացնելու. այդ տեսակէտից ևս պնդում եմ որ վնասների հատուցման հարցը պէտք է լուծուի զրականապէս:

Տէ՛ը Անետիրեան. Համայնքների կրած վնասները պէտք է հատուցուեն՝ դա կենսական հարց է: Դուք մեզ ուղարկում եք դատաստան, բայց չէ որ գորք ինքներդ ասացիք որ Շախմալիսի գործը 100 տարի է տեսում: Դուք ասում եք որ ջարդերը տարերային երեսյթ էին. ոչ, չկար տարերայնութիւն, այլ կտարեալ զիտակցութիւն: Թալանի գալիս էին արտաներով, ջուաներով, ուղարերով: Թուրքերի այդպիսի բացարութիւնը ինձ յիշեցրեց հետեւեալ անհկդում. Գողը մտել էր բանջարանոց և վարունկ էր լցում իր պարկը: Յանկարծ վրայ է համում բանջարանոցի աէրը և հարցնում. —Ի՞նչ ես շինում այստեղ: —Քամին ինձ այստեղ գցեց, պատասխանում է գողը: —Բայց ինչ չու ես բռնել վարունկները: —Վարունկներից պինդ բռնել եմ, որպէսզի քանին ինց ուրիշ տեղ չթացնէ: —Լու, բայց պարկը քեզ մօտ ինչացնել է: —Այդ ես չգիտեմ...

Խօսում են նաև այն մասին թէ գժուար է խմբովին պատասխանատութեան ենթարկել ժողովրդին: Ինչու, եթէ կարելի է խմբովին աշաւանքներ և թալան կատարել, ուրեմն կարելի է խմբովին պատասխանատու լինել: Իւրաքանչիւր զիւղում կը լինեն մարդիկ, որոնք կամ դրդող են եղեւ, կամ վկայ, կամ թաղցնող: Թող գրանք բոլորն էլ տուժեն այժմ: Ինչու եք վախենում տեղական ընտրած մասնաժողովից, որ վարչութեան հետ միասին պէտք է որոշը և պահանջի վնասները: Դուք չէիք որ ինդրում էիք մացնել տեղական տարրը դատաստանական գործերում: Ահա այդ տեղական տարրը կը լինի մասնաժողվներում: Տարբերութիւնը այն է որ չէնց չիլինի փաստարանների այն

«կրիուկուածք»-ն, որից այնքան վախենում է պ. Աղաեվը:

Աղաեվը, Յարձակուողները ամեն տեղ հայերն են եղել: Զը-կազմակերպուած թուրք ժողովրդի վրայ յարձակուել է հայ կազմակերպուած զօրքը: Ի՞նչ պէտք է անէր թուրքը ի՞նք-նապաշտպանութեան համար: Մնում էր որ այդ պարոն Խատիսովներին վաստիք, գիպչելով նրանց գրանին: Երբ ձեր զրպանին են խփում այն ժամանակ էք դուք բղա-ւում: Պէտք էր այրել ոչնչացնել գրանց տնտեսական ոյժը: Կոիւը աղջային բնաւորութիւն է ստացել և ես կը արհամարհէի թուրք բէզերին և ինտելիգենտներին, եթէ նրանք պաշտպան չկանգնէինք իրանց ժողովրդին: Մի կողմից «մառ-գերներով զինուած, անսպառ փամփուշտներ ունեցող, կազմա-կերպուած զօրք», միւս կողմից անկազմակերպուած մի ամբոխ: Ի՞նչ պէտք է անէր, ձերդ պայծառափայլութիւն, մի անկուլ-տուրական ժողովուրդ ինքնապաշտպանութեան համար. և նա հրկիցեց զրանց ունեցածը, գրանց հարատութիւնը, գրանց նաւ-թահանքերը: Դա զատապարտելի չէ: Ես ինքս՝ Աղաեվս էլ կը հրգեհեմ! Եթէ դուք դնում էք վաստիրի հատուցման հարցը, զրէք և Դաշնակցութեան կազմալուծման հարցը, որովհետև նա իր տերրորով արգելում է որ վարչութիւնը արդարութեամբ վերաբերուի վաստիրի հատուցման խնդրին: Տեղական վարչու-թիւններին Դաշնակցութիւնը սպառնական նամակներով կ'ա-հարելի: Մենք արդէն հարիւր տարիների անցեալով ցոյց տու-ինը որ գիտենք հպատակուել իշխանութեանը, բայց այժմ թոյլ չենք տալ անարդարութիւն գործադրել մեր գլխին: Ես այստեղ դիմում եմ ուռա պետական իշխանութեան և ասում. պաշտպա-նեցէք մեզ հայ կազմակերպութիւններից, կազմալուծեցէք Դաշ-նակցութեան «զօրքը» կամ մեզ էլ հնարաւորութիւն տուէք կազմակերպուել, մեզ զէնք տուէք:

Ս. Թաղիանոսիան: Աղաեվս ասում է որ հրգեհելը ի՞նք-նապաշտպանութեան միջոց է և ինքն էլ պարտաւոր է նոյնն անելու: Բայց թող հասկանան որ դրանով վաստում են ոչ այն-քան կազմակերպութիւններին որքան գիւղացիութեան: Գիւղից և-կած բանուորները Բագուից միլիօններ էին ուղարկում իրանց թշուաւ գիւղերը և այգիներով տուն պահում: Նաւթահանքերի այլելով տնտեսական հարուած էք հասցըել հայ գիւղացիու-թեան և ոչ Մանթաշեմներին:

Երբ հայերը պահանջում են վաստիրի հատուցում աղմի-նիստաթիւ ձեռվ, թուրքերը էթիկայի անունից են խօսում և զատապարտում են հայերին: Բայց դա աւելի քան անտեղի է: Առհասարակ սպանութիւնը վաս բան է և եթէ սովորական

ժամանակներում Ռուսաստանում մի ճապոնացու սպանէին, անշուշտ կառավարութիւնը դրա համար ամենախիստ պատժի կ'ենթարկէր մարդասպանին: Բայց ոռուս-ճապոնական պատերազմի ժամանակ նոյն գործողութեան համար ոչ միայն պատիշ չէին տալիս, այլ ընդհակառակը շքանշաններով էին վարձատրում, հերոս են անուանում ամենից շատ ճապոնացիներ սպանողին: Նոյնը մեր կեանքում: Գեներալ Գոլոշապովը Շուշու և հարեան գաւառներում ոմբակոծում է գիւղերը, ամենախիստ պատժի է ենթարկում մարդկանց. բայց և այնպէս այսօր այնտեղ ժողովրդի ներկայացուցիչները հեռագրով դիմել են Փոխարքային և խնդրել որ Գոլոշապովին չհեռացնի: Ինչու որովհետև ժողովուրդը արիւնաքամ է եղել, նրան հանգստութիւն է հարկաւոր, իսկ Գոլոշապովը իր թնդանօթներով նպաստում է այդ հանգստութեան հաստատելուն: Մեր երկրի արիւնոտ զէպքերն և արտակարգ պայմաններն աչքի առաջ ունենալով երբէք չպէտք է զարմանալ որ մենք ադմինիստրացիայի միջամտութիւն ենք ուզում ֆիասների հատուցման խնդրում: Այս հատուցումը անհրաժեշտ է, որպէսզի մարդիկ համոզուեն, թէ անպատճ կերպով չէ կարելի թալանել, կոտորել, այրել:

ԲԺ. Խաւոյիսնան. Թուրք ճառախօսները չափազանց շաւ հագործում են անցեալ օրուայ իմ ճառը Դաշնակցութեան մասսին: Ես բողոքում եմ զրա դէմ: Թուրքերը իրանց «Կազանի որբեր», գառնուկներ են երեացնում: Իրբև թէ իրասք միշտ ենթարկուել են յարձակումի. մինչդեռ դա իրողութեան աղաւաղում է. փաստերը, թուերը, ցոյց են տալիս որ Յագուս, Նախճաւանում, Գանձակում և ուրիշ տեղերում միշտ էլ թուրքերն են նախայարձակ եղել: Ասում են ակնարկելով իմ խօսքերը թէ «հայերը մառվէր ունեն»: Բայց ինչու են մոռանում Հաջինիվի խօսքերը, որը անցեալ անգամ պարձանքով ասում էր թէ զէնքի ու քաջութեան կողմից ոչ ոք չէ կարող մրցել թուրքերի հետ: Եւ դա բնական է. թուրքերը իրեւ թափառական ժողովուրդ պէտք է որ զինուած լինէին և նրանցից իրաքանչչիւրն զէնք ունի. Ինչու փաստերը յետ չպահանջնէն—ժողովուրդը կ'անբարոյականանայ: Թուրք պատգամաւորները իրանք այստեղ ցանկութիւն էին յայտնում որ մենք օգնենք բարձրացնելու թուրք մասսայի կրթութունն ու կուլտուրան: Բայց զրա համար անհրաժեշտ է հաւատ ներշնչել նոյն մասսային թէ չէ կարելի թալանել ու աւերել: Աղաեզն ասում է, որ հայերը բէպերի, խաների և աղալարների-զէմ արշաւանք են ոկսել, ուզենալով յամբողջ մուսուլմանութիւնը ոչնչացնել: Դա սխալ է: Ամեն տեղ էլ արտօ-

նեալ դասակարգը միայն շահագործող է. ժողովուրդի կենսունակութեան հիմքը միայն աշխատաւոր դասակարգն է և ինտելիգենցիան: Թուրք աղալարները, բէգերը և խաները միջնադարեան ֆէօդալներ են և պէտք է անհնուանան: Դրանից միայն կ'օգտուի թուրք մասսան»:

—Միւս հարցերը հիմնական նշանակութիւն չունէին երկու կողմերն ընորոշելու տեսակէտից: Մարտի 6-ին Փոխարքան փակեց հայ-թուրքական կոնֆերենցեան հետեւալ ճառով.

«Ձեր նիստերում զուք շօշափեցիք մի շարք հարցեր, որոնց մեծամասնութիւնը չի լուծում ներկայ ըոպէի անյետաձգելի պահանջները: Երբ տունը այրուում է ժամանակ չէ մտածել նրա մասին թէ ինչ նիւթից և ինչ պլանով պէտք է շինել նոր անհրդենելի շինութիւն: Պէտք է որոշել թէ ուր է հրդեհի կենտրոնը և նրա վրայ ուղղել հանգժնելու բոլոր միջոցները: Բայց այդ կենտրոնը դուք չորոշեցիք, թէկ իւրաքանչիւրիս բոլորովին յայտնի են պատճառները, որոնք ներկայ ըոպէում պահպանում են հրդեհը: Անկարդութիւնները պահպանում են մի կողմից զինուած անկեզալ կազմակերպութիւնները, իսկ միւս կողմից աւագակային խմբերը, որոնք յաճախ ծածուկ զեկավարուում են աղդեցիկ մարդկանցով:

Այդ տեսակ արտայայտութիւններ չեն կարող համբերուել կառավարութիւնից, և արդէն ձեռք են առնեում և պէտք է ձեռք առնուեն ամենակարուեկ միջոցներ՝ կարգ խանգարողներին հալածելու համար: Թագաւոր կայսրին հաճելի է որ հայ-մուսուլմանական պառակառումը վերջացնուի, և նա պէտք է վերջացնուի: Ձեզ եմ դիմում, պարոններ, որ դուք էլ գործադրէք ձեր աղդեցութիւնը յարձակումները և աւարառութիւնները վերջացնելու և հաղորդելու ժողովրոխն ինչպէս կայսեր կամքը այնպէս և խստութեան այն միջոցները, որոնք պէտք է գործադրուեն չարիքը արմատախիլ անելու համար: Գործնական միջոցների թւում, որոնց նկատմամբ համաձայնութեան եկաք, ես մի քանիսը ընդունելի եմ համարում, և դրանք ձեզ կը յայտնուեն: Այժմ ես կ'ուզենայի կանգ առնել մի կէտի վրայ: Ես կարծում եմ որ գրչի շարժումով անկարելի է ստիպել որ ժողովուրդը յանձնի զէնքը, որը նա կրել է հազար տարիների ընթացքում: Զէնքը մեծամասնութեան մօտ գտնուում է ինքնապաշտպանութեան համար: Նրա կրելը բայց է անհրաժեշտութիւնից: Բայց ես կը համաձայնէի ընդհանուր զինաթափութեան օգուտի հետ, եթէ ես հաւատացած լինէի այդ միջոցի իոկական իրազործման հնարաւորութեան մէջ: Սակայն ես համոզուած եմ որ միայն խաղաղ մարդկիկ կը յանձնեն զէնքը, իսկ նրանք, որոնք զէնք

են պահում յանցաւոր նպատակների համար, զէնքը կը թագցը նեն: Ուստի ես ընդհանուր զինաթափման օգուտը չեմ ընդունում, սակայն ես պնդում եմ որ անհրաժեշտ է խլել զէնքը բոլոր զինուած զազմակերպութիւններից և հասարակութիւններից և առանձին անձերից, որոնք ի չար են գործ գնում զէնքը: Կարծում եմ կը գայ ժամանակ, երբ նաև կովկասիան ժողովուրդները կը հանեն իրանց վրայից զէնքը, իբրև աւելորդ ժանրութիւն: Այդ ժամանակը վրայ կը հանի, երբ զէպի մերձաւոր սէր և զէպի օրէնքը յարգանք տածող քաղաքակրթութիւնը մուտք կը գործի Կովկասի բոլոր վայրերը և սեփականացնութիւնն կը դասնայ բոլորի, փոքրից սկսած մինչև մեծը:

Վերջացնում եմ նրանով որ ձեր խորհրդակցութիւններից հսկարող էին սպասել աւելի բէալ միջոցների մշակում: սակայն ես նրանցից զուրս եմ բերում համոզմունք, որ զուր բոլորդ ձգտում էք խաղաղ համաձայնութեան: Արդ այդ ձգտումը ներածէք ձեր ցեղակիցների մէջ, և խաղաղութիւնը կ'իրականացնայ»:

—

Քննելով հայ և մուսուլման պատղամաւորների առաջարկած միջոցները, նախօրօք քննելով այն փոխարքայի խորհրդի տառանձին նիստում, կոմս Վորոցով՝ Դաշկովը հնարաւոր է համարում:

1) Հաւստատել այս տարի քոչի կանոնաւորման մասին և դաշտային աշխատանքների ապահովման մասին յանձնաժողովի հղուակացութիւնները.

2) Հիմնել փոխարքայի կառավարութեան կից առանձին խորհուրդ երկու ազգերի ներկայացուցիչներից.

3) Նահանգապետների և գաւառապետների կից նոյն հիմքերով կազմել խաղաղարական յանձնաժողովներ, այն նպատակով որ տեղական իշխանութիւնները անհրաժեշտ դէպքերում կարողանան դիմել նրանց՝ հայ-թուրքական յարաբերութիւնների առիթով. գաւառական յանձնաժողովները պէտք է գաւառի գիւղերը շրջելիս ամեն կերպ նպաստեն բոլորին այնքան ցանկութիւնացները:

Անկախ գրանցից փոխարքան իսկոյն կարգադրելու է որ աղքինիստրացիան ամենակտրուկ միջոցներ ձեռք առնի. ինչպէս անկարգութիւնների առաջն առնելու, այնպէս և այդ անկարգութիւնները ճնշելու, խիստ պատժելով մեղաւորներին և ապահովելով ազգաբնակութեան համար հաղորդակցութեան ճառապարհների անվտանգութիւնը և խաղաղ դրազմունքները,

բնակիչներին վերադարձնելով աւերուած գիւղերը, եթէ նրանք այդ կը ցանկան:

Այս անձինք, որոնք զէնք են կրում յանցաւոր նպատակ-ներով պէտք է զինաթափ անուեն: Այս գիւղերը, որոնց բնակիչները մեղաւոր կը ճանաչուեն շփոթ յարուցանելու մէջ, ադմինիստրացիայի պատասխանառութեան կ'ենթարկուեն:

Անցած ջարդերի վնամները պէտք է պարզուեն ժողովրդից ընտրուած մարդկանց մասնակցութեամբ կաղմած յանձնաժողովների կողմից և հաստատուեն այն կարգով, որ կառավարութիւնը կը գործադրի Ռուսաստանի կենտրոնական նահանգներում նման ջարդերի դէպքերում:

Հարգերի ժողովման թիթեացում ջարդերը պատահած վայրերում կը կատարուի օրէնքից հաստատած կարգով:

Գիւղական հասարակութիւնների բայօնական դասաւորումները, անվտանգ տեղերում հողեր տալը, հողաբաժինների յօժարակած փոխանցով, կատարուելու են ըստ չափու կարողութեան, ազգաբնակութեան խնդիրքով:

Ինչ վերաբերում է նահանգական և գաւառական ազմինիստրացիայի և ոստիկանութեան վերակաղմութեան, վորխարքան ինքը մտահոգ է այդ հարցով և նրա լուծման ժամանակի նկատի կառնուեն խորհրդակցութեան ցանկութիւնները, իսկ աղմբնիստրացիայի և ոստիկանութեան լաւագոյն անձնական կազմի ապահովութեան նկատմամբ արդէն ձեռք են առնւում միջոցներ և անշեղ կերպոց ձեռք են առնուելու: Ինչպէս և յարուցուելու է խնդիր որ ազգաբնակութեան տրուի արագ արդարագատութիւն խորհրդակցութեան ցոյց առւած հիմքերով:

Լուսաւորութեան և մուսուլմանների իրաւունքների հաւասարեցման վերաբերեալ խորհրդակցութեան նկատած հարցերը արդէն քննւում են կենտրոնական կառավարութեան կողմից և պէտք է կարծել, լուծուելու են խորհրդակցութեան ցանկացած մտքով: Իսկ փոխարքան իրանից կախուած բոլոր միջոցներով պէտք է տարածի գրագիտութիւնը ազգաբնակութեան մէջ և հարկաւոր բարձրութեան վրայ զնի պարոցական գործը:

Անյապաղ ձեռնամուխ է լինուելու՝ պարզել օրէնսդրութեան և վարչական կարգադրութիւնների մէջ մուսուլմանների նկատմամբ սեղմումները՝ որպէսզի ամենը ինչ կախուած է փոխարքայի իշխանութիւնից իսկոյն և եթ հարթուի, իսկ նրա իշխանութեամբ անլուծելի հարցերը՝ սահմանած կարգով յարուցուեն: Առաջին հերթը պէտք է բռնի այն որ ուսուցչական սեմինարիան փոխադրուի մուսուլմանների համար աւելի յարմար տեղ քան Գորին:

Վերջապէս առանց յիտաձգելու փոխարքայի կառավարութեան կից կազմուելու է խորհրդակցութիւն՝ ընսելու ընդհանուր հարցը այն միջոցների մասին, որոնք պէտք է նպաստեն բոչուրներին նստակեաց կեանքին անցնելուն:

Սոր առնետրական լաշնագիր Դերմանիայի հետ:

Այժմ, երբ համարեա բոլոր երկրներում տիրում է պրոտեկցիօնական (հովանաւորական) սիստեմը, որը ձգտում է զանազան երկրների տնտեսական կեանքը զատել իրարից հովանաւորական մաքսիրի չինական պատերով, երկիրների մէջ փոխադարձ առևտուրը դառնում է կարելի միայն այն ժամանակ, երբ նրանց մէջ հաստատում է փոխադարձ համաձայնութիւնը զիջումներ՝ օտար սովորանքների ներմուծման համար:

Բոլոր այս զիջումները ձեսկերպուելով և հաստատուելով երկու կողմերի պետութիւններից ստանում են առնետրական լաշնագրի անուն:

Հասկանալի է որ ամեն մի պետութիւն աշխատում է զիջումներ ձեռք բերել այն ապրանքների նկատմամբ, որոնք գերակշռող դեր են կատարում այդ երկրից արտահանող ապրանքների մէջ:

Այսպէս, երկրագործական երկրը կարիք ունենալով արդիւնարերութեան (ինգուստրիա) մթերքների մէջ, և ինքը արտադրելով զիւղատնտեսական մթերքներ, զիջումներ է անում առաջինների (արդիւնաբերական) մաքսի վերաբերմամբ:

Իսկ ինդուստրիական երկրը ընդհակառակը, սպասելով ինքը գլխաւորագիս գիւղատնտեսական մթերքներ աւելի հեշտութեամբ զիջումներ է անում այս մթերքների նկատմամբ:

Դաշնագրերը առհասարակ մեծ ազդեցութիւն ունեն երկրի տնտեսական կեանքի վրայ:

Ահա թէ ինչուսահմանագրական երկրներում, ուր հասարակական կարծիքը մեծ ազդեցութիւն ունի կառավարչական բոլոր գործունէութեան վրայ, նոր գաշնագիր կապելու հարցը դրաւում է ազգաբնակութեան խաւերի բոլոր մարդկանց ուշադրութիւնը:

Այսպէս օր., այս նոր սուս-գերմանական առևտրական գաշնագիրը, որը կնքուել է 1904 թ. յունիսի 15 ին և սկսել է գործել միայն այս տարուայ մարտի 1-ից (նոր. տ.) քննազմառութեան նիւթ. էր դառել Գերմանեայում դեռ 1900 թ-ից սկսած:

Առաջարկուել են շատ նախագծեր, որ քննակատութեան են ենթարկուել թէ մամուլի, թէ մասնագիտական ուսումնասիրութիւնների մէջ:

Այս առիթով վիճաբանութիւններ են եղել Ռէյլսոտագում, կազմուել են ահազին միտինգներ և այլն: Միայն մի տարուայ (1901 թ.) ընթացքում գերմանացի ագրարները (հողատէրերը) կազմել են Գերմանիայի զանազան անկիւններում 900 ժողովներ, ուր բացատրել են գիւղատնտեսական մթերքների վրայ մաքսերի բարձրացնելու անհրաժեշտութիւնը: Միւս կողմից մեծ միտինգներ են կազմել նոյնպէս և բանուորները և նոյնիսկ կանայք, որոնք պահանջում էին հակառակը և այլն:

Իսկ ինչպէս էր պատրաստում գաշնագրի նախագիծը մեզանում: Բուսաստանում: Այստեղ, ինչպէս ոռուն է ասում «тишь и гладь да Божья благодать»: Ինչպէս միշտ այսպիսի հարցեր վճռելիս ես, կազմուել է մի յանձնաժողով իր 4 ենթաժողովներով, և կանցելեարեանների խորքերում սուս փուս քննուել զանազան նախագծեր...

Բայց այսպէս երկար չը շարունակուեց:

Յունուարի 26-ին 1904 թ. Պորտ Արտուրում առաջի անդամ լսուեց թնդանօթի ձայնը:

Սկսուեց ուսումնական պատերազմը: Պատերազմի աստուածը անվերջ զոհներ ու փող էր պահանջում: Բուսաստանը ստիպուած էր իրար յետեից փոխառութիւնների դիմելու:

Ֆինանսների մինիստր Վիտակն ստիպուած էր, ի միջի այլոց, գիմել և Գերմանիային, որի օգնութիւնը գրաւելու նպատակով 1904 թ. յունիսի 15 ին Բերլինում ստորագրուեց սուս-գերմանական առետրական գաշնագրի նախագիծը, որ ձեռնատու է գերմանացիների համար և ծանր բեռ ոռուս ժողովրդի շահերի տեսակէտից: Այդ դաշնագրի ազգեցութիւնը պէտք է զգացուի ոռու գիւղատնտեսութեան վրայ ամբողջ 11 տարիների (գաշնագիրը կնքուած է մինչև 1918 թ.) ընթացքում:

Ի՞նչ փոփոխութիւններ մտցրեց այս նոր գաշնագիրը և ինչպէս պէտք է ազդի նա ոռուաց գիւղատնտեսութեան վրայ, որը կազմում է ժողովրդական տնտեսութեան հիմքը, ահա հարցեր, որոնց մենք կ'աշխատենք համառօտապէս պատասխանել այս յօդուածում:

Այս գաշնագիրը գիւղատնտեսութեան բոլոր մթերքների մաքսերը զգալի չափով աւելացրեց:

Իսկ յայտնի է, որ Բուսաստանը լինելով զլիաւորապէս

երկրագործական երկիր, արտահանում է առաւելապէս գիւղատնաեսական մթերքներ։ Այսպէս, օրինա, վերջի տարիների միջին թուով արտահանած ապրանքների արժեքի 42% ընկնում է միմիայն հետևեալ 5 գլխաւոր հացահատիկների վրայ. ցորէն, հաճար, գարի, վարսակ և սիմինդր:

Իսկ Ռուսաստանի հետ առևտուր ունեցող երկրների մէջ առաջի տեղն է բնոււմ Գերմանիան։ Ռուսաստանից արտահանուող հացահատիկների մի երրորդ մասը մտնում է Գերմանիա, որը միւս կողմից Ռուսաստանից արտահանող գլխաւոր հացահատիկի (հաճարի) գլխաւոր սպառողն է։

Պէտք է նկատել որ հաճարը *) (քօյք) իր զժուալամարսութեան շնորհիւ ուրիշ երկրներում սպառողներ գժուար է գանում։ Այս բոլորից պարզ է որ գերմանական շուկան Ռուսաստանի համար, նա մանաւանդ այս վերջինի գիւղատնատեսութեան համար, ունի մեծ նշանակութիւն։ Հրաժարուել այդ շուկայից Ռուսաստանը չի կարող։

Միւս կողմից պարզ է որ նոր դաշնագիրը աւելացնելով Ռուսաստանից արտահանուող նիւթերի գլխաւորների մաքսը, աննպաստ պէտք է ազդի երկրի արտադրութեան վրայ։

Յոյց տալու համար թէ որքան են աւելացել այդ մաքսութը, բերենք հետեւ թուերը**)։

հացահատ.	նախար. լուշն.	ներկայ լուշն.	աւել.	աւել. %
ցորեն	27,3	41,7	14,4	57,8
հաճար	26,5	37,9	11,4	43,0
վարսակ	21,2	37,9	16,7	78,8*

Միայն այդ երեք հացահատիկների աւելորդ մաքսերը ֆինանսների նախարարութեան հաշուով կը կազմեն տարեկան 13,5 միլլ. րուբ.։

Բացի այս աւելացրուած են մաքսերը նոյնպէս ձիերի, խոզերի, թուչունների և իւղի վրայ։ Այս արտահանուող ապրանքների աւելորդ մաքսերն էլ նոյն նախարարութեան ւարժիրով տարեկան պէտք է հաշուել 1,2 միլլ. րուբ.։

*) Հաճարից պատրաստած սկ հացը մաքսում են միայն գերմանական և ռուսական ստամոքսները, երկար զարեր վարժուած լինելով այդ գործածութեան։

**) Թուերը արտայայտում են այստեղ փութերի գները կոպեկների վերածած։

Աւելացրած է մաքսը նսյնպէս և մասի ու ձուերի վրայի Բոլոր գիւղատնտեսական մթերքներից միայն գարու (յամեհ). Նկատմամբ մաքսերը իջել են և կազմում են 5½ կոպ. փթին:

Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ գաշնը կնքուած է 11 տարով, մենք կը ստանաք, որ Ռուսաստանը այդ ժամանակամիջոցում մօտ 162—163 միլ. բուր, աւել մաքսպէսք է վճարի:

Միւս կողմից ի նկատի առնելով Ռուսաստանում տիրող այժմեան հարկահանութեան սիստեմը, գիւղատնտեսութեան ստոր աստիճանը, մթերքները արտահանելու անկազմակերպութիւնը, գիւղացու տնտեսական զրութիւնը, կարելի է համոզուած կերպով ասել որ այս գումարը, իթէ ոչ ամրողապէս, գոնէ մեծ մասամբ, կը ընկնի Ռուսաստանի արտադրող գառակարգի (գիւղացիութեան) վրայ:

Հասկանալի է որ մաքսերի աւելացումը կարող է երկու ձևով արտայայտուել: Առաջին՝ կամ նոյն չափով պէտք է ընկնի մթերքների գները մեզանում, կամ ընդհակառակը բարձրանայ զրսում: Երկրորդի վրայ յոյս դնել անկարելի է նախ և առաջ բերած պատճառների հիման վրայ, երկրորդ՝ այն հանգամանքի շնորհիւ, որ Ռուսաստանը գերմանական շուկայում ունի այնպիսի ուժեղ մրցակիցներ կամ կոնկորդներներ, ինչպէս են Ամերիկան, Արգենտինան, Բուլմանիան և այլն: Մնում է ուրեմն ենթադրել առաջի հետևանքը, այն է՝ գների ընկնելը Ռուսաստանում: Խոկ այս վերջի երեսոյթի հետ կապուած է և այն, որ գիւղացին այժմ իր կարիքները հոգալու համար, պէտք է ծախի աւելի շատ հայահատիկներ, որպէս զի, պակաս գնով ծախելով, կարողանայ ստանալ փողի առաջուայ քանակութիւնը: Բայց գիւղատնտեսութեան այժմուայ տեխնիկայի ժամանակ գիւղացին այդ նպատակին կարող է հասնել կամ աւելացնելով իր ցանքսի քանակութիւնը կամ կրճատելով իր ապրուստի պահանջները: Թէ այս և թէ այն շատ բայցայիշ ազդեցութիւն պէտք է անհնայ գիւղացու վրայ: Հողերի հերկումը (բառաշակա) Ռուսաստանում, կարելի է ասել արդէն հասել է իր վերջի տատիճսնին: Ինչ վերաբերւում է ապրուստի պահանջների նուազեցման, յայտնի է որ ասանց այն էլ սուս գիւղացին չափազանց սակաւագետ է և արտահանում է ոչ թէ այն, ինչ որ աւելացնում է իր և իր ընտանիքի գործածութիւնից, այլ կտրելով թիքան թէ իր և թէ իր երեխաների բերանից և գրանով ենթարկելով իր սերունդը հետզհետէ կատարեալ այլասերման:

Միւս կողմից հացահատիկները աւելի մեծ քանակութեամբ արտահանելը պէտք է աւելի ևս նպաստի այդ հայա-

հատիկների գների անկման և շարունակ պահպանի այդ տեհն-
դենցիան:

Այսպիսով, ուրիշն, այս նոր դաշնագիրը սպառում է մեր
«բազմաբարչար» գիւղատնաեսութիւն մեծ հարուածներով:

Բայց այսպէս չէ հայում գործին ֆինանսական նախա-
րարութիւնը: Նա այս մաքսերի աւելացման փոխարէն բարձ-
րացնում է Գերմանիայից ստացուող մերենաների և քիմիական
մթերքների մաքսերը և թուարանակն 4 գործողութիւններով
աշխատում է ցոյց տալ որ այս դաշնագրով մուսաստանը ոչ
միայն ոչինչ չի կորցնում, այլ նոյն իսկ մի բան էլ աշխա-
տում է:

Բայց այսպէս է արգեօք: Արդիւնաբերութեան մթերքնե-
րի մաքսերի այս բարձրացնելը չը պէտք է արգեօք ընկնի
կրկին նոյն գիւղացու շինքին և աւելացնի նրա աւանց այն էլ
ծանր բեռը: Յայտնի է որ առանց այն էլ ոռւս սպառողը բա-
ւական մեծ տուրք է վճարում իւրաքանչիւր տարի, որպէս զի
կարողանայ մուսաստանում զարգանալ «հայրենի արդիւնա-
բերութիւնը»՝ Վիտոհի այդ զուրդուրած զաւակը:

Այս հովանաւորական մաքսերի շնորհիւ է որ մեղ մօտ
անհրաժեշտ պիտոյըները շատ աւելի թանգ են, քան ուրիշ
երկրներում:

Օրինակի համար, ամերիկացին մի փութ մեխի համար
վճարում է 1 ր. 52 կ., մինչդեռ մենք միայն մաքս ենք վճա-
րում 3 ր. 20 կ., մի փունտ ամենավատ թէյը մեզ մօտ արժէ
1 ր. 40 կ., իսկ լոնգոնում 31 կ.: Թուղթը, ծխախոտը մեզ
մօտ 7 անգամ աւելի թանգ է քան Գերմանիայում: Այս հովա-
նաւորական մաքսերի շնորհիւ չէ որ ոռւսաց շաքարով Անգլիա-
այում խողերին են կերակրում, իսկ մեզ մօտ գիւղացին «կծովի»
է խմում, և այլն: Կարելի է բերել այսպիսի թուեր մեծ քանա-
կութեամբ, բայց բերածներն էլ բաւական են ցոյց տալու համար
որ այս նոր դաշնագիրը պէտք է աւելի վատթարացնի ոռւս գիւղա-
ցու առանց այն էլ անսախանձելի և թշուառ գրութիւնը:

ԱՐՏԱՎԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Միմիութեան վարժուարիս և Խտախուամ.—Ռենդուան պարամենի խախուամը.—+ Աճոն Մենցե և Խովին Ռիստը.—Միմիութեան վարժուարիս Քառնիստը և Անգլիան, Թրանսիստ և Խտախուան արևատականում են:

Խոալիան այն երկրներից մէկն է, ուր սահմանադրութիւնը յաճախ մինիստրների ձեռքում զառնում է ձեւկանութիւն։ «Ժամանակաւոր կանոնների», «շրջաբերականների» «և հրամանների» միջոցով մեծ անհրեսութեամբ պարոն մինիստրները կտրողանում էին նոյնիսկ գաղաքացնել պարլամենտի գործունէութիւնը, ինչպէս այդ արաւ, օրինակ, 1894 թուականին Կրիստին։ Կառավարութիւնը միշտ հնարաւորութիւն ունէր «գաղանի ֆոնդի» միջոցով կաշառել մամուլը, արտակարգ լիազօրութիւնների միջոցով սաստկացնել ցենզուրան, հալածել ծայրայնդ կուսակցութիւնները։ Աղքատ և տգէտ ժողովրդի կեանքի բարուոքման վրայ համարեա ուշադրութիւն չէր դարձնուում. խոշոր կալուածատէրների և բանկային գեշիքտմախներների հետ սերտ կապուած մինիստրները յաճախ ըռնում էին սկանդալիօզ գերփումների մէջ։ Զնայած այդ ներքին ողորմելի իրականութեան խոալիան ձգտում էր արտաքին շլացուցիչ գերխողալ միջազգային կեանքում և յետ չմնալ մեծ պետութիւններից։ Կարծեմ միայն Մենելիքի տուած ջարդից (1895 թ.) յետոյ մի քիչ խելքը զլուխն հաւաքեց տանia grandiosa ախտով բռնուած այդ բաղաքականութիւնը։

Աղքատ և տգէտ է մանաւանդ հարաւային խոալիան՝ Սիցիլիա կղզով, ուր խոշոր կալուածատէրութեամ կողքին թըշուառ կեանք է քաշում հողագուրկ կամ թգուկաչափ հողարածին ունեցող գիւղացիութիւնը։ Ժողովրդի տգիտութեան և աղքատութեան միացրէր մի խայտանակ աղմինիստրացիա և դուք կը ստանաք բացատրութիւն թէ ինչու այնքան յաճախ են կրկնուում այդ երկրում ժողովրդական խանակութիւններ, ինչու այնքան գիւղացկան են կամնորրայի և մաֆիայի նման սրիկայտան գաղանի կտրմակերպութիւններ, որոնց արուած տերորից աղատուելու համար իւրաքանչիւր խտալացի փրկուում

Եր որոշ առուրք վճարելով: Սակայն այդ «ազնիւ տղերանցից» (giovanī d'onore), ինչպէս իրանց են անուանում այդ սրիկայական կազմակերպութիւնների անդամները, աւելի լաւ չէին այն մինխարները, որոնց յանձնուած էր երկրի բարօրութիւնը: Դրանք գեղեցիկ ճառերով էին քողարկում իրանց կատարեալ ապիկարութիւնը, մինչև որ արմատական կուսակցութիւնների գործունէութիւնը ժողովրդի մէջ բաւականաչափ հող չփառ իր ոտների տակ և հտալիայի նշանաւոր գիտնականներից մէկը էնրիկօ Ֆերրին գլուխ չանցաւ նոր քաղաքական կուսակցութեան: 1906 թուականին ընտրութիւնների ժամանակ իտալական պարլամենտի մէջ ընտրուեցան 32 սոցիալիստներ և զգալի գոռու տարէցտարի պարլամենտի մինոլորտի ընդհանուր բարուոքումը: Այժմ երբ ընկաւ Յորտախոի մինխարութիւնը աւելի և բացարձակ է երեսում իտալական պարլամենտի շեղումը զէմի ձախ: Սոնսինօի նոր մինխարութիւնը կազմուած է իտալական նշանաւոր անտեսակչաններից, ինքը նախագահ՝ մինխար Սոնսինօն, գանձարանի մինխար Լուցցատատին, առևտրի, արդիւնագործութեան և երկրագործութեան մինխար Պոնտանին, Գինանսների մինխար Սալանդրան, լուսաւորութեան մինխար Բողելին, երկաթուղիների մինխար Կորմինէն—րոլորն էլ յայտնի են իրեւն նշանաւոր էկոնոմիստներ և անպայման մաքուր մարդիկ արմատական աշխարհայեցողութեամբ:

Սոնսինօն հէնց իր առաջին կարգադրութիւններով ցոյց տուեց որ նոր ընթացք է սկսւում իտալական ներքին բաղաքականութեան մէջ: Նա ոչնչացրեց գաղտնի Փոնդը, որ նրա նախարարները գործադրում էին մամուլը կաշառելու համար: Նա վերացրեց լրագրական հետազրական ցենզուրան, իր ծրագրի մէջ առաջնակարգ տեսլը գրեց հողային հարցը, ժողովրդի լուսաւորութեան գործը, զաղթային հարցը և բանուորների ապահովութիւնը, որոնք պէտք է լուծուեն ինպաստ մասսայի: Եւ հաստրակական կեանքի երեսոյթներն խիստ քննադատող մամուլըն անդամ հաստատում է որ նոր մինխարութիւնը գործ պէտք է տեսնէ և ոչ խօսքերով քնացնի հասարակութիւնը: Իտալական սոցիալիստների պարագում էնրիկօ Ֆերրին իր Անտի թերթում մեծ համակրանքով է ողջունում Սոնսինօի մինխարութիւնը, յոյս տածելով որ նրանից սկսւում է հտալիայի վերածնութիւնը: Զի կարելի բոլոր սրտից չցանկալ որ այդ տաղանդաւոր և համակրելի ժողովուրդը վերջապէս աղատուի այն թշուառութիւնից, որի մէջ նոր պահւում է մօտ կէս դար «հտալիայի միութեան» տանջալից երկունքի անցնելուց յիշոյ անդամ:

Բուն ժողովրդական մասսաների բարօրութեան հարցը մոռացութեան է արուած և մի այլ երկրում, որ կլասիկ կարող է համարուել իր բուռն նացիօնալիստականութեամբ: Մեր խոռը անշուշտ Ունգարիայի մասին է: Նրա ազնուականութիւնը և բուրժուազիան ամենաթունդ նացիօնալիզմով ըստուած՝ ահա երեք տարի է կորե են մզում աւոտրիական կառավարութեան դէմ, պահանջելով որ ունգարական զօրքի հրամանատարութիւնը կատարուի ունգար լեզուով: Ունգարական մազնատների սրտին այդ հարցը աւելի մօա է, քան ընտրողական իրաւունքը, որ պահանջում է ունգար ժողովուրդը: Ունգար մազնատները մի կողմից հակառակում են այդ արդար պահանջին, որ պէտք է չէղորացնէր իրանց իշխանութիւնը, միւս կողմից իրանց նացիօնալիստական պահանջի մէջ այնքան հեռու են դըս ուալիս նոյն իսկ սահմանալիքութեամբ կայսրին վերապահած արաօնութիւնները զօրքի հակառակում ունգար ընդդիմադիր կուսակցութիւնների միութիւնների միութիւնը պահանջում է վերաքնննել սահմանադրութեան այն կէտերը, որոնց հիման վրայ նայսրը մերժում է գոհացում տալ մազնատների պահանջներին զօրքի ազգայնացման վերաբերում: Այդ նոյն ունգար ազգասէրները ոչինչ չեն ուղում լսել սահմանադրական այնպիսի փոփոխութիւնների մասին, որոնց հետևանքը պէտք է վիճի ընդհանուր ձայնուութիւնը թագի և ընդդիմադիր միութեան լորուած դրութիւնը վերջի վերջոյ այնքան սուր կերպարանը ստացաւ որ կայսրը բռնի ուժով փնտրուարի Ե-ին արձակից ունգարական պարլամենտը, մի քայլ որ ընդունակ է ժողովրդական մասսաների համակրանքը, ուղղելու մինչ այդ ատելի առանձնաշնորհեալների—մազնատների կողմը:

Ծնդհանուր ընտրողական իրաւունքի այն բեֆորմը, որ մշակել է Գառուչը և այժմ քննուում է Վիէննայի բայիսրատում, ահապին նշանակութիւն ունի իրեն առաջին փորձ լուծելու միասին ազբող ազգութիւնների կեանքում ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի բնարողական իրաւունքի իրագործումը: Այժմուանից արդէն նկատելի է որ գերմանացիները վերիշխող փոքրամասութիւն կազմելով չեն ուղում այդ արդար սկզբունքի շնորհիւ կորցնել իրանց արտօնեալ դրութիւնը ոլաւօնների նկատմամբ, որոնք թուով կրկնակի են Աւստրիայում (18 միլ.): Գոհ չեն երեսում և լեհերը, որոնք Գալիցիայում ճնշում էին լուսին ազգաբնակութիւնը: Խնքըստինքեան հասկանալի է որ այդ բեֆորմի կողմնակից են լինելու ժողովրդական մասսաների շահերն ողաշտպանող կուսակցութիւնները, որոնց մէջ առ

հասարակ թոյլ է լինում զարգացած նացիօնալիստական անտագոնիզմը, երբ մանաւանդ այդ մասսանների մէջ սերմանած են լինում սոցիալիստական գաղափարներ: Իսկ այդ գաղափարներն անդիմազբելի թափով տարածում են, ինչպէս մի ժամանակ քրիստոնէութիւնը: Շատ բնորոշ է այդ կողմից աշխարհայցքի այն անկախ էվոլյուցիան, որ կատարուեց հռոշակաւոր աւտորիական իրաւաբան Անտոն Մենգերի մէջ: Վիճնայի համալսարանի այդ նշանաւոր դիտականը, որ վախճանուեց այս յունուտրի 25-ին, իրաւական նորմաների տարրալուծութեամբ կամաց-կամաց լիրերալիզմից հասաւ սոցիալիզմին: Նրա «Պիտութեան մասին նոր ուսմունք» գրուածքը գալիս է ցոյց տալու որ իրաւական-բարոյական հարցերի տարրալուծումն ևս մարդկային ապագան սոցիալիզմի մէջ է գտնում: Ահա մի զիտնական որ գեկավարուելով անկախ, ազնիւ և լայն մտածողութեամբ, առանց պատկանելու այս կամ այն նեղ կուսակցութեան, այլ սոցիալական արգարութեան մեծ հարցի լուծման նոր ճանապարհներ որոնելով, զալիս է կանգնում այն ուղղութեան վրայ, որին հասել են էկոնոմիստները տնտեսական կատեգորիայի երեսյթների անտիպով: Արժէ որ մեր ընթերցողները կարգան Անտոն Մենգերի յիշած գրուածքը, որի թարգմանութւանը ուսւերէն (Новое учение о государстве)

հեշտ է ձեռք բերել:

Լայն մտքով հասկացած լիրերալիզմին հաւատարիմ մնաց մինչև կեանքի վերջը փետրուարի 25-ին վախճանած հոչակառը գերմանացի Ռիխտերը: Ով հետաքրքրուել է գերմանական րայխստագի կեանքով նրան պէտք է լաւ ծանօթ լինի այդ պերճախոս և սրամիտ հսկաորի և գերման աղաստամիտների պարագլուխ, Բիսմարկի պարլամենտական նշանաւոր ախոյանի անունը:

Քաղաքական տպատութեան, քաղաքացիական հաւասարութեան այդ քաջարարութիկ կոռուպը պարլամենտարիզմի անխորդակելի նեցուկ էր Գերմանիայում, սակայն անսահման ազատութիւնը տարածելով նաև տնտեսական յարաբերութիւնների վրայ, նա հասարակական անարդարութիւնը վերացնելու սոցիալիստական միջոցները վնասակար ուտոպիա էր համարում և պակաս չէր մաքառում ույյիստագում Բերեների, Ֆոլմարների և Զինգերների դէմ: Լիրերալիզմի այդ խրոխա ժայռը չհասկացաւ իր շուրջը ծփող կեանքի նոր հոսանքները, տնտեսական ստրուկտուրայի փոփոխութեան շնորհիւ առաջացած ժողովրդական նոր խաւերի ոյժը, ուստի նրա կուսակցութիւնը օրէցօր նուազեց և դուցէ պարագլխի մահով

գաղարի գոյութիւն ունենալու Բայց իհարկէ երբէք չի
մոռացուի այն ահազին ծառայութիւնը որ կատարեց 30
տարիների ընթացքում գերմանական պարլամենտարիզմի
այդ տաղանդաւոր և անվիճեր մարտնչողը, որի իւրաքան-
չիւր խօսքը սուր նետի պէս ցցւում էր Բիսմարկի և Վիլ-
հէլմ 11-րդի որտումը, երբ գրանք փորձում էին զանա-
զան կապանքներ զնել ժողովրդական ազատ ներկայացուցչու-
թեան վրայ կամ սազմասիրական ֆանտազիաների վրայ մսխել
ժողովրդի կապէկները: Եթէ վերջին տարին նա հիւանդ
չինէր՝ երեխ Մարոկոյի հարցում Վիլհէլմի ըռնած զիրքը
Ֆրանսիայի նկատմամբ կծու բննազատութիւնների ենթարկուէր
Ռիխտերի կողմից, որովհետև այդ զիրքը սպառնում է ֆրանս-
գորմանական պատերազմի ուրուականով: Մարոկոի հարցը
այսօր մեծ մտատանջութիւն է պատճառում ֆրանսիական ժո-
ղովուրդին: Եւ Ռուվիէի մինիստրութեան անկման գլխաւոր
պատճառը համարում է հէնց այդ հարցը: պարլամենտը պա-
հանջում էր որ Ռուվիէն աւելի մօտ ծանօթացնի իր մտադրու-
թիւնների հետ մարոկեան հարցում, իսկ մինիստրը, «ազգաւ-
յին շահերով» արդարանալով, խուսափող պատասխաններ էր տա-
լիս: Գոռհ չէին և նրա գանդաղ քաղաքանութիւնից եկեղեցա-
կան գոյքերի ցուցակագրութեան ժամանակ. 89 հազար եկեղե-
ցիներից միայն 25 հազարի գոյքն է դես ցուցակագրուած:
Ծայրայեղ ձախակողմեանները երես դարձրին Ռուվիէից և նա
ընկաւ: Ֆալիիրը նոր մինիստրութեան կազմակերպելը յանձ-
նեց Սարիէնին. կազմուեց աւելի արմատական մինիստրու-
թիւն, որի մէջ արտաքին գործերի պորտֆելը ստանձնեց Լէօն
Բուրժուան, իսկ ներքին՝ Փ. Կլեմանսօ: Այդպիսով Ֆրանսիա-
յում կառավարութիւնը աւելի ևս արմատական-ձախակողմեան
դառաւ, ինչպէս և իտալիայում ու Անգլիայում:

Հ. Ս.

Մարտի 1-ին:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՅ ԿԵԱՆՔԻ ՔՐՈՆԻԿ:

—Զմիրնի Գարաթաշթապի ընակիչներէն էվէրէկցի Տիկին
Մարիամ Գ. Սինանիան նոյն թաղի մէջ իր ունեցած չորս տու-
ները նուիրեր է Ս. Կարապետ եկեղեցին, պայմանով որ իրեն
և իր ամուսին մահէն յետոյ, այդ տունների վարձքերէն գոյացած

հասոյթը յատկանայ յիշեալ եկեղեցիի պէտքերին և աղքատ-ներին:

—Մալաթիայի Առաջնորդէն Պատրիարքարան եկած գրութիւն մը կ'իմացունէ որ երկրաշարժի ցնցումները 45 օր շարունակուելէն վերջ դադրած են հիմա և ժողովուրդը հետըզ-հետէ իր բնակարանները կը քաշուի, մանաւանդ որ ստիպուած է այդպէս ընել, ձմբան խստութեան պատճառով: Քանի մը հայ ընտանիքներ անպատսպար մնացեր են բնակարան չունե-նալու պատճառով:

—Յունաստանի ներքին գործերի նորընտիր նախարար Տ. Գալօքիրօբուլօ հրամայեր է Յունաստանէն արտաքսել այն Հայերը որոնք թիւրք կառավարութեան թելաղրութեամբ իբ-րև անիշխականներ ձերբակալուելով լանտարկուած էին, բայց Լամփաի եղեննադատ ատհաեին առջև դատուելով անպարտ հոչակուած ու ազատ թողուած էին:

—Տ. Օրմանեան Պատրիարքը Վառնալի Թաղ. խորհրդին ուղղած մէկ նամակովը աշալուրջ ուշաղրութիւն կը հրաւիրէ հետեւալ ծանուցագրին վրայ՝ որ դրկուած է Պուլկարիոյ իշխանին գաղտնի գրասենեալի տնօրէնութեան կողմէ Պոլսոյ Պուլկարիոյ գիւնապիտական գործակալին:

«Իբր հետեւանք իմ օգոստ 26 թիւ նամակին, պատիւ ու-նիմ ձեզմէ խնդրելու որ հաղորդէք Նորին ամենապատռութեան Հայոց Պատրիարքին, թէ ի պատասխան իր խնդրագրին զոր ուղղած էր Ն. Ա. Բ. Իշխանին, իշխանապետութեան Հանրային Կըրթութեան Նախարարութիւնը Նկատողութեան առնելով պա-հանջելի յատկութիւններով օժտուած ընտրելիներու, պիտի շարունակէ ինչպէս անցեալի մէջ թոյլատութիւններ ընել Պուլկարիայի մէջ հայ վարժարաններու ուսուցիչներու մասին, հակառակ կըթական օրէնքին 58, 157 և 199 յօդուածներուն.. բայց սակայն, բաղձալի է որ Ս. Պատրիարքը հարկ եղած մի-ջոցները ձեռք առնէ պատրաստելու համար օրէնքի պահանջքին համապատասխանող մարդիկ, և ամեն տարի չինդրել թոյլտու-ութիւններ՝ որոնց չորրումը կրնայ օր մը մերժել նախարա-ռութիւնը, որովհետև օրէնքը այդ մասին յստակ է: Տոպրովիչ»

Այս ծանուցագրիը, ինչպէս յայտնի է, կը վերաբերի հայ վարժարաններու մէջ հայ ուսուցիչներուն առանց պուլկարա-կան վկայականի պաշտօնավարելու կինսական խնդրին, որուն շարունակմանը մասին Տ. Օրմանեան Պատրիարք քանիցս գի-մումներ ըրած է Պուլկան կարավարութեան, և ինչպէս կերե-նայ նախարար Տոպրովիչի ծանուցագրէն՝ օրէնքը այսուհետեւ

ոլիսի կրնայ օր մը յանկարծ գործադրութեան դրուիլ՝ առանց յետաձըգումի:

—Այնթապի ամերիկեան գոլէճը, որ բժիշկներ և զիտուն աշակերտներ հասցնելով կիլիկիայի համար բարիք մը եղած էր, հրդեհի ճարակ եղեր է բոլորովին: Շէնքը ապահովագըրուած էր:

—Պ. Մ. Ֆարհատ Լոնգոնից գրում է «Խազմիկ» թերթին հետեւալլ այն պկ. Շիրազի մասին, որ յայտնի դեր խաղաց բագուի թուրքերի «համիսլամական պատմութեան» հարցում.

«Ատենէ մը ի վեր Ռազմիկի մէջ կը կարդամ Շիրազի անուն անձի մը ձերբակալման շուրջը «գործալական» տեղեւկութիւններ: Լաւ պիտի ըլլար եթէ ձեր ընթերցողները ստոյգ տեղեկութիւններ ունենային այդ տիրահռչակ անձնաւորութեան մասին:

«Շիրազի» վերագիր անունն է, խոկական անունն է Հովել Կալա-Մուչի: Ան հայ չէ, այլ պարսկաստանցի Ասորի մը՝ կրթուած Թաւրիզի Արամեան գպրոցը: «Խան» տիտղոս բնաւ չէ ունեցած: Խլիւաթընտիր Լօնտօն Նիւզի հինգ տարի առաջ թղթակից եղած է, ներկայիս մէջ առանց որ և է կատ ունենալու, ինչ որ հաստատած եմ: Յեղափոխական չէ բնաւ և պատճառներ ունինք յայտնելու, որ թուրք ոստիկանութեան աջակցելու խրկուած է Լօնտօնի Օսմանեան դեսպահատափն կողմէ:

Վերջերս Լօնտօնի Պարսկական Ազգային Պանքը» արտօնած է ձերբակալելու այս սրիկան, որ Պարսկական հիւպատուսին յանձնարարականով չորթած էր յիշեալ գրամատունը:

Ասկէ եօթը տարի առաջ Պարսկահայ ձևանալով մեր ընկերութեան 25 շիլինը կոկորդը անցուցած է և վերջին գատավարութեան անյայտացաւ: Մողիւմանները կան մեր ձեռքին տակը և պահանջել հարկին կրնանք հրապարակ հանել: Ցիշեալը կատարեալ ճարպիկ խաչագող մըն է, որմէ աւելի գերազանցը գուցէ անկարելի է որ գոյութիւն ունենայ, որովհետեւ իսիստ ճարպիկ, լեղուագէտ և զարգացած է միանգամայն, ափսոս սակայն որ վտանգաւոր:

—1905 Դեկտ. 31-ի մարդահամարին համաձայն՝ Պուլկարիոյ բանակը շուտեան թիւը կը հասնի 4,200,000-ի, մինչդեռ 1900-ի մարդահամարը 3,700,000.ի կը հասցնէր: Ալս հաշուով 5 տարուան մէջ Պուլկարիոյ բնակչութիւնը կէս միլիօն աւելացած է: Հայերի թիւը Բոլղարիոյ մէջ 15 հազարի չափ է:

—Լոնգոնում սկսաւ լոյս տեսնել խմբագրութեամբ աշխարհածանօթ «Ռէվիուզ»ի խմբագիր Պն. Ռւիլիը

Սթէտի որդուն Պն. Ա. Սթէտի, և աշխատակցութեամբ այլ նշանաւոր անձերու անգլիերէն «Pro Armenia»: Ծաւալով, պարունակութեամբ կամ ուղղութեամբ ֆրանսական «Փլո Արմէնիա»ին կը նմանի և վատահ ենք որ իր անժխտելի օգուտները պիտի ունենայ:

—Խարբերդի երկրաշարժը պատահած է Նոյ. 21ի (ը.թ.) ցերեկը, ճիշտ կէս օրի ատենները և տեսած է 21 վայրկեան: Նամակներէ կ'իմանանք որ Խարբերդի գաշտին մէջ ամենէն շատ վնասուած գիւղերը եղած են՝ Դատեմ, Մորենիկ և Քէսրիկ, մանաւանդ այս վերջինը: Տուները մեծաւ մասամբ փլած և կամ անբնակելի դարձած են, իսկ անձի կորուստը, բարերազդաբար, շատ աննշան եղած է: Գիւղին կեղրոնական մասը և ծօրմորենց տան շրջակայքը ամենէն գէշ վնասուած վայրերն են: Քէսրիկի եկեղեցին՝ որ իւր մեծութեամբ, ճարտարապետական գեղեցկութեամբ և հոյակապ զանգուածով ամբողջ Թուրքիոյ մէջ նշանաւոր է, հիմա կիսաւեր վիճակ մը կը ներկայացնէ: Գմբեթը, կամարները, խորանը և խորանի հուեկ պատը մասամբ փլած և վար թափած են, իսկ ամբողջ եկեղեցին խարխած է և բոլորովին անապահով դարձած հաւաքուսի և աղօթատեղիի համար:

Խարբերդի գիւղօրայքը մեծաւ մասամբ անվնաս են, իսկ շրջակայքի վիճակը, նամակագիր մը այսպէս կը տեղեկագրէ: «Իզօլ և շատ մը բիւրտի գիւղերը, Թութլի-Քէօյ, Խան-Քէօյ, չափազանց վնասուեր են, և կ'սուի թէ՛ Քէօմիր-Խան լեռ մը ձեղքուած ոււխ ու կրակ կ'ելլէ: Փէթիրկէ, Այվազ, Շիրոյ և ուրիշ տեղեր անթիւ վնասներ, մինչ իսկ ձորի մը մեջ գիւղ մը բոլորովին կորսուած է երկու լեռ իրարու գալով»:

Նշանակելի է որ երկրաշարժը տակաւին դադարած չէ, պարբերական շարժումներ ամեն օր տեղի կ'ունենան: Նոյ. 27 ին՝ Մալաթիա սաստիկ ցնցում մը տեղի ունեցեր է, և առանուած տեղեկութեանց նայելով, «500 տունէն աւելի կորսուած, 3 մզկիթ և կառավարատունը բոլորովին վնասուած և 90 մարդէն աւելի մեռած ու վիրաւոր գտնուած են: Խարբերդէն բժիշկ և գեղօրեայք զրկուած են»:

Խարբերդ այժմ ժողովուրդը ահ ու սարօափի մէջ կ'ապրի: Դալրոց և եկեղեցիի բացում արգիլուած են կառավարութեան կողմէն՝ կեանքի մեծկակ և հաւաքական կորուստ մը տալու վախէն, կառավարութիւնն ալ նոյնիսկ ից նիստերը դադրէցուցեր է: Ժողովուրդը ապահով չզգար կանգուն մնացող տուներու մէջ պատսպաշուիլ և քաշուած արտերը՝ փալասաներէ ու կապերաներէ վրան շինելով, անոնց տակ կը բնակի: Կառա-

գարսւթիւնն իր տրամադրութեան տակ եղած զինուորական վրաններով ժողովուրդը կարելոյն չափ պատսպարեր է, և կ'ըսուի թէ հիւղակի (խուզ) նման բաներ մալ կ'ուտայ որպէս զի մնացածներ ալ անոնց տակ պատսպարուին: Առետուր, գործ և արտադրութիւն գաղաք առած են:

—Փետրուարի 23-ին Լոնդոնում ի նպաստ Թիւրքիայի ճաշուած ժողովրդների տեղի ունիցու յայտնի ֆրանսական գործիչ Դ'Էտուրնէլ գը Կոնստանի նախագահութեամբ կոնֆերանցիա, որին մասնակցեցին Ասկլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և այլ եւրոպական երկրների նշանաւոր զբական և քաղաքական գործիչները անձամբ կամ ուղարկած նամակներով: Հասարակական կարծիքը միշտ լարուած պահելով Արևելքի կնճոռա հարցի վրայ այդ կոնֆերնցիները անշուշտ որոշ նախապատրաստական գեր են կատարում:

—Հայ յեղ. Դաշնակցութեան Ամերիկայի օրգան «Հայրենիք» շաբաթերթը այդ տարուայ № 1 (339)-ի մէջ «համհանիք» շաբաթերթին (panarmenisme) խորագրով առաջնորդողութ հետեւալ կերպով է բնորոշում այդ ուղղութիւնը.

ՀԱՄՀԱՆԻՔՈՒԹԻՒՆ (Panarmenisme)

Համհանամութիւն, համալաւութիւն, համագերմանութիւն — աղդանշանները եղան, իւրաքանչիւն իր ծննդեան վայրին մէջ—կծու աղդամութեան մը, օտարատեցութեան մը:

Գիրմանացիք տիեզերական տիբապետումի մը տեսնը ունիցան, աչքերնին ուղղելով ոչ միայն Աւարիա, այլ և մինչև Փոքր Ասիա արևելքն, և մինչև Պրազի՛ արևմուտքէն: Գիտութեամբ ու գրականութեամբ տիբապետումը չէր բաւեր անոնց. Սէտան ու Սատովան անոնց ախորժակը գրգուցին:

Իուս կատավարութիւնը, ալավասէրներու ջոկատի մը առաջնորդութեամբ, պահ մը երազեց ձուլել իր մէջ Լիհաստանէն մինչև ամբողջ Պալքանեան թերակղզին, Բիւզանդիոնը վերականգնել, մօտիկ ապագային կլլել պատրաստուելով նաև յոյները:

Իսկ սուլթան Համիտ նոր խալիքայութիւն մը սաեղծելու յոյսով, ահա կ'աշխատի տարիներէ իվեր, գրգուելով աշխարհի ըոլոր միւսիւլմանները քրիստոնեաներուն դէմ: Ճիւկ կը թափէ ինքինքը ընդունել տալու հրամանատարը իւլամ աշխարհին:

Հայը, բաժնուած երեք հասուածներու, Ռուսիա, Թիւրքիա, Պարսկաստան—այդ երեք շարժումներու գրիթէ ներդաշնակ հարուածներուն տակ ինկաւ:

Թէ ոռւս թէ թիւրք և թէ գիրման կատավարութիւնները

պահ մը համաձայնեցան Փոքր Ասիան հայերէն պարպլւած տեսնելու։ Ամէնքն ալ իրենց զատ հաշիւներն ունէին՝ այդ գաւառները իրենց տիրապետութեան յատկացնելու համար։

Համիւլամութիւն և համալաւութիւն մասնաւորապէս ներդաշնակիցին իրենց գործողութիւնները—ատոնց հետեանքն էր 1895 ի ջարդերը Հայաստանի մէջ, և 1905ի հայաթաթար կոիւները Կովկասի մէջ։

Հայը հալածուած էր իր պատմական հայրենիքին մէջ, իր բնակած հողին վրայ—Փոքր Ասիոյ մէկ ծայրէն միւսը, որովհետեւ հայ էր։ Կը հալածուէր ոչ իր կրօնքին, իր հարստութեան, իր ընկերական գիրքին համար—հայ ժողովրդին բոլոր խաւերը կը հալածուէին անլստրորէն, հարուստ քաղաքացիէն մինչև աղքատ գիւղացին, եկեղեցականէն և ուսեալէն մինչև տգէտ բանուորը—միայն անոր համար որ հայ էին։

Որովհետեւ հայը հոգեվարք ժողովուրդ մը չէր, ընկերային կեանքի իտէալ մը ունէր։

Սալին և մուրճին միջեւ ինկած էր հայը։

Եւ ահա, բնականօրէն, անզգալի կերպով, կամաց կամաց, մօտեցան իրարու հայութեան անջատ հատուածները—ուուսահայ, տաճկահայ և պարսկահայ համոզուեցան որ, իրենց գրկութիւնը իրենց միաբան զործակցութեանը մէջն է—թէ հայուն շահերը ներդաշնակ են, որ կառավարութեան ալ հպատակ ըլլայ ան, թէ բոլոր հատուածներու հայերը դաշնակցելու են—քանի որ մեր թշնամիները զաշնակից են՝ մեզի ջախջախելու իրենց ծրագրին մէջ։

Այս գաղափարի զարգացումին օգնեց զրականութիւնը, իրականացումին՝ Հայ Յեղափոխական կազմակերպութեանը։

Հայրենիքի բացասումը ջատագովոր, այս կառ այն մասնաւոր գասակարգի շահերը պաշտպանող վարդապետութիւնները չեն հայութեան մէջ դեկավար զաղափարը—այլ բոլոր գասակարգերուն նուրբական շահը՝ հայրենի օճախին պաշտպանութեան և զարգացումի գաղափարն է որ կ'ոգնորէ և շունչ կուտայ ամէնուն։

Օճախ՝ իր ամէնէն լայն իմաստով՝ հայ մարդը աէր իր հողին, իր աշխատանքին, իր կեանքին, իր պատուին և իր ընկերային իտէալներուն։

Եւ այսօր, 1906 ի սկզբին, եթէ տակաւին արտասանուած չէ ՀԱՄԱՀԱՅՈՒԹԻՒՆ, բառը իրը բաղաքարկան ծրագիր մը—բայց հայուն գիտակցութեան մէջ բուն դրած է արդէն։ Վաղուան նշանաբանն է ան։

Ազգայնական ծրագիր մըն է առ բառին վսիմագոյն ըմ-

բոնումին մէջ—իրար փոխագալձարար ողաշտականելու, և ոչ
օտարը ատարամերժարար հալածելու վարդապետութիւն մը:

Ահա այն մեծ զիծը որ կ'անջատէ համահայութիւնը՝ հն-
չլւսով նման, բայց նոպատակով հակոտնիայ համասլաւութիւն,
համագերմանութիւն և համիսլամութիւն կոչուող անհամակրելի
ու վտանգաւոր շարժումներէն»:

Ինչպէս տեսնում էք «ոլանարմէնիզմ» խօսքը Ովկիանոսի
այն կողմում այնպիսի ցասում և զայրոյթ չի յարուցանում,
ինչպէս այս կողմում...

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Աօխսանմէ, Ժողովրդական, տըս-
տեսական, գիւղացիական շարաթա-
թերթ.—Գիւղամանտես պ. Ա. Աթա-
նասիանի խմբագրութեամբ հրատա-
րակուող այս նոր թերթի նպատա-
կը պարզ է զերկ բերուած նրա վեր-
նագըց, ֆիւզը և գիւղացիութիւնը
սկէտք է լինի այդ օրգանի մտածո-
ղութեան գլխաւոր առարկան: Մինչեւ
այժմ լրյա տեսած 7 համարներում
բաւական պարզուել է այդ շարա-
թաթերթի պրոցեսիւ աշխարհա-
յեացքը շօշափուած հարցերի մէջ,
սակայն մի քանի յօդուածների լի-
դուն, նիւթը, զատողութիւնների
վերացականութիւնը աւելի յարմա-
րեցրած են ինտելիզենտ քաղաքա-
ցիների, քան մեր խեղճ գիւղացինե-
րի ըմբռնողութեան: Մատչելիու-
թեան կողմից լաւ են «Գիւղամանտե-
սութիւն» բաժնում Ազգոնոմի «զը-
րոյցները»: Արդէն բոլորովին քա-
ղաքում ապրող՝ այն էլ որոշ տիպի
զրականասէների ճաշակին՝ վայել են
պ. Մտորակէտի որախօսական յա-
ւակնութիւնները, որոնք գիւղացու-
համար բոլորովին անպէտք բաներ

են և որոնց փոխարէն աւելի նպա-
տակայամար կը լինէր տալ օգտա-
կար զիտելիքներ, խորհուրդներ,
գիւղացիական հարցերի պատաս-
խաններ:

Ճայլիւ. հողկոր-ըարոյական, պատ-
մական, հաստակական և մանկա-
վարժական շարաթաթերթ. — Եղնիկ
ք. Երզնիկանի այդ թերթը իր գրւ-
խաւոր նոպատակն է զրել մեր եկե-
ղեցւ, հոգեորականութեան և գըպ-
րոցների շուրջը պտտող հարցերի
քննութիւնը: Առայժմ շաբաթաթեր-
թի մէջ աշխատող գլխաւոր ոյժերն
են Ս. Մ., Արսէն վ., Բենիկ վ., Գր.
ք. Երզնիկան, Եղ. ք. Գեղամեան և
Բարգուղիմէոս եսլ. Գէորգեան: «Հո-
վիւր» կարծես լրացնում լինի «Արա-
րատը» Ով ճետաքրթւում մեր կը-
զերի, եկեղեցու և զպրոցի հարցե-
րով՝ նա այդ շաբաթաթերթի մէջ
կը զանի նիւթեր և որոշ աշխար-
հայացքով լուսաբանուած դատողու-
թիւններ, զատ չէ ունենալ մի այդ-
պիսի օրգան, որի մէջ կենտրոնա-
նան մեր իրականութեան մէջ բա-

ւական զգալի գեր խաղացող մի գառ-
սակարգի պահանջները, որպէսզի թէ
ժողովուրդը և թէ մամուլը՝ մեր հա-
սարակական երևոյթները քննիլիս և
կարգադրելիս՝ կարողանան զիտակ-
ցօրէն հաշուի տոնել և այդ ոյժը,
ինկատի ունենալ և նրա ձայնը
Շերտաւորումը աւելի է պարզում
կացութիւնը և անելիքը...

Հասկեց: 1906 թ., յունուար.—
խնամքով կազմուած այս համարում
էլ զլիաւորապէս ի նկատի են առ-
նուած զպարտոցական հասակի մանուկ-
ները։ Յանկալի էր որ չմոռացուելին
մանկապարտիկական հասակի երե-
խաներն են։ Իբրև մանկապարժական
յաւելուած կցուուծ է Հենրիկ Վեր-
նից՝ «Երեխաների կրթութիւնը մին-
չև տարեկան հասակը» զրքոյիի
թարգմանութիւնը։ Ցիշեցնում ենք
մեր ընթերցողներին որ մանկական
պատկերագրեր այդ ամսապիրի բա-
ժանորդագինն է տարեկան, մանկա-
վարժական բաժնով, 4 ր., արտա-
սահմանում 12 ֆրանկ։

Բազմաթիւ: իետրուար.—«Հա-
յերը բիւզանդական գրականութեան

մէջ Յատյնի է թէ ինչ մեծ զեր են
խաղացել հայերը Բիւզանդիայում։
հայաղդի թաղաւորների և զօրա-
վաբների, Պրոյեեսիս ճարտարա-
խոսի մասին շատերն են լսել չ.
Սահակեան տալիս է ցարդ անծանօթ
մի շարք անուններ, որոնք անպայ-
ման հայկական են, թէև Բիւզանդիա-
կան գրականութեան մէջ միայն յի-
շատակուած։ Թոռնիկ, Վարդան,
Ծնճղուեկ, Արտաւազ, Խաչիկ և այ-
լըն Այս համարում խօսումէ Ար-
տաւազ աստղաբաշխի մասին, որ
ապրում էր Տլլլ-ըլ զարում։ «Ազ-
գագրական տեղեկութիւնը հայոց վը-
րայ օտար պատմչաց քով» զրուած-
քըն շահագրգիռ է մեր անցեալով
հետաքրքրուուղների համար, հայկա-
կան բանուածքների, ժողովրդական
և նախարարական աարագների, հե-
րազարդման մասին օտար պատմիշ-
ների հասուլկուր խօսքերը լոյս են
սփոսում շատ մութ ինչդիրների վր-
այ։ «Բազմավէպից այս տարուայ հա-
մարներում, ի միջի այլոց, տպւում
է Հենրիկոս Սենկեվիչի «Սրով ու
հրով» պատմական վէտի թարգմա-
նութիւնը և Տասոսի «Երուսաղէմի
տռումը»։

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Մեր նոր բաժանորդներից նրանք, որոնք կը ցան-
կանան ձեռք բերել «Հայջի Բարձր» վէտի այն մասը, որ
տպւուել է 1905 թ. ընթացքում—պէտք է ուղարկեն
հանապարհածալսը 50 կոպ. (կարելի է նամակադրօշ-
մով)։ «Հայջի Բաբայի» Ա. մտար, որ լոյս է տեսել 1904
թուին և արժէ 2. րուբլի, մեր բաժանորդների համար
արժէ 1 ր., ճանապարհածալսը 1 ր. 50 կ.։

Նոր բաժանորդներից նրանք, որոնք թիւրիմացու-
թեամբ ստացած չեն լինի 1905 թ. նոյեմբեր-դիւնեմ-
ընը ի համարը (ձրիաբար)՝ թող հաճեն բաց նամակով
իմաց տալ մեզ այդ մասին։

Բանուորների խնդիրքով «Մուրճ»-ի բաժանորդակինը բանուորների համար ևս լինելու է 8 րուբլի։ Բանուորները «Մուրճ»-ի տարեկան բաժանորդագինը կարող են վճարել ամսէ-ամիս, իւրաքանչիւր անգամ 1 րուբլի (ութ ամիսների ընթացքում)։ Փոխադրական ծախքերից աղատուելու համար Բազովի և շրջակայքի ըանուորները կարող են բաժանորդագինը վճարել ու Դանիէլ Տէր-Դանիէլ յանուիլ յանուիլ («Մանթաշեան և ընկ» գրասենեակ)։

Առանձարի «Վշակի ծիծաղ» գիրքը «Մուրճի» բաժանորդների համար արժէ 70 կոպ. (1 րուբլու փոխարէն)։

Խմբագիր՝ 1. Անգվանոն
Հրատարակիչներ Պ. Պանամեան
Լ.-Անգվանոն։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵՒՆՆԵՐ

ԲԱՑՈՒԱԾ Հ. ԲԱՅԵՍՆՈՐԴԱՅՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„ԿԵԱՆՔ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹԻ,
ՈՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՇՆՈՐՀԻՒ ԱՐԱՅԺՄ ԿԸ ՀՐԱ-
ՏԱՐԱԿՈՒԻ ԻԲՐԵՒ

ՃԱՐԱԹԱԹԵՐԹ

Բաժանորդագինն է՝ թիֆլիսում տարեկան 2 ր. 50 կ., գուրսը
տարեկան 3 ր., արտասահման տարեկան 4 ր., Ամսական թիֆ-
լիսում 20 կոպ., գուրսը 30 կ., արտասահման 40 կ.։ Հատով
թիֆլիսում 5 կ., գուրսը 7 կ.։

Հացէն՝ Տիֆլիս Պեդակցիա «Կյանք», Չավչավածքան № 4.
արտասահմանից՝ Tiflis, Rédaction «Kian». Tschewtschawads-
kaia № 4.

Խմբագիր-Հրատարակիչ՝ Բ. Իշխանեան

ԲԱՑԻԱԾ է 1906 ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ.

Կ Ո Ռ Դ Ա Վ Ա

(ՔՍԱՆԵԼԻԵՐԵՑԵՐՈՒԴԻ ՏԱՐԻ)

Սոյն 1906 թւին լոյս կըտեսնի քաղաքական-գրական աշմենորեայ «Նոր-Դար»-ը նոյն ծրագրով և նոյն ուղղութեամիջը:

Ամբողջ ռուս կայսրութեան մէջ «Նոր-Դարի»-ի տարեկան բաժանորդագինն է 10 ր., վեց ամսուանը՝ 6 ր., ամսականը՝ 1 ր., առողջ 5 կ.:

Արտասահմանի բաժանորդը վճարում է տարեկան՝ 40 ֆր. վեց ամիսը՝ 25 ֆրանկ:

Յայտարարութիւնների ընդունում են և օտար լեզուներով, բառը 2 կ., առաջին երեսում 4 կ.: Շատ անգամ կրկնուող յայտարարութիւնների համար լինում է մեծ զիջում:

Բաժանորդ գրւում են Թիֆլիսում՝ «Նոր-Դարի»-ի գրասենեակում, Գրիգորեգորյան փողոցում, № 14.

Պոստով «Նոր-Դար»-ի հասցէն՝ Տիֆլիս, բեր. «Հօր-Լար», կամ Tiflis Gaucase, Rédaction «Nor-Dar».

Ժանուցում: Թերթիս խմբագիրը մի տարի առաջ Պետերբուրգում իրաւունք է ստացել ընդարձակելու թերթի ծրագիրը, տալով թերթի մէջ պատկերներ, և առանձին ծրագրով լոյս հանելու շաբաթական պատկերազրդ յաւելւած: Հարկ ենք համարում ծանուցանելու՝ հէնց որ թերթի միջոցները ներեն, կը ձեռնարկենք պատկերազրդ «Նոր-Դար»-ի հրատարակութեան և կուղարկենք «Նոր-Դարի»-ի բաժանորդագիններին 10 բուբլի բաժանորդագինի հաշւում:

1—3

ԲԱՑՈՒԱԾ է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ 1906 ՏԱՐԻԱՅ

“ԲԱԶՄԱՎԵՊ”Ի

Կանխիկի բաժանորդագինն է ֆր. 10:
Դիմել հետեւալ հասցէին.

Redaction de la Revue «Bazmavep» Venice (Italie)

ԲՍՅԻԱԾ կ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՄՇԱԿ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵԽ ԳՐԱԿԱՆ ՀՐԱԳՐԻ

(34-րդ տարի)

ԱՌԱՋԻԿԱՑ

1906

ԹԻԱԿԱՆԻՆ

«Մշակ» կը հրատարակուի նոյն պրոզրամմով և նոյն ուղղութեամբ

Ամեն օք սացի տօներին յաջորդող օքերից:

Բաժանորդագինը «Մշակի», տարեկան գինը 10 ռուբլի է, տասնեւթէկ ամսանը նոյնպէս 10 ռ., տասն ամսանը՝ 9 ռ., ինն և ութ ամսանը՝ 8 ռ., եօթն ամսանը՝ 7 ռ., վեց ամսանը՝ 6 ռ., հինգ ամսուանը՝ 5 ռ., չորս ամսուանը՝ 4 ռ., երեք ամսուանը՝ 3 ռ., երկու ամսուանը՝ 2 ռ. և մի ամսուանը 1 ռուբլի:

Արտասահմանեան բաժանորդագրութիւնը. Ամ երիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարտկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի:

«Մշակին» գրուել կարելի է Խմբագրատանը (Բազարնայա և Բարոնսկայա փողոցների անկիւն):

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «Մշակին» գըրուելու համար և առհասարակ նամակներ և ծրաբներ ուղարկելիս՝ պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ՏԻՓԼԻՍ, Ռեդակցիա „ՄՇԱԿ“», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւնները ըստունում են բոլոր լեզուներով:

Ազատիկ ըուժանորդագրութիւն չէ ընդունում: 2—3

ԲԱՑԻԾԾ Է 1906 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԱՐԵՎԱԼՈՅՎՍ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՕՐԱԹԵՐԹԻ

24 պատկերագարդ յաւելուածներով, որ կանոնաւորա-
պէս լոյս կը տեսնեն ամիսը երկու անգամ.

Թերթի ձգուումն է պետական սահմանադրական կազմ,
կովկասեան ներքին լայն խնդնավարութիւն, տեղական գեմատ-
վօ, զեմստվօյտկան մանր միութիւններ և աղատ կապակցուց
այդ մանր միութիւնների:

Հողի բաւարար բաժիններ սակաւահող գիւղացուն՝ պետա-
կան և կալուածական հողերից, և օշխսպրական բաւարարու-
թիւն բանուորի կենսական պահանջներին:

Հնարական սկզբունքի լայն գործադրումը ընդհանրապէս,
և մասնաւորապէս մեր զպրոցական գործի կազմակերպութեան,
հկեղացական կալուածների տնտեսութիւնն և հասարակական
հիմնարկութիւնների զեկավարութեանն մէջ:

Թերթի գլխաւոր ուժը ուղղուած կը լինի հայ կեանքի
պահանջներն առաջ սղելու և աշխատելու նրանց իրականաց-
մանը գեմոկրատ ոգով:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՈՈՒՍՍՍԱՆՈՒՄ

ԱՐՏԱՍՍԱՆՈՒՄ

Տարեկան 7 ա.՝ — —	32 ֆր. 28 մարկ. 28 շ. 7 դոլ.
Վեց ամիսը . . . 4 » — —	20 » 16 » 16 » 4 »
Երեք ամիսը . . . 2 » 25 կ.	12 » 10 » 10 » 2 »
Մի ամիսը . . . — — 75 »	4 » 3 » 3 » 1 »
Տարեկան բաժանորդները կարող են վճարել մաս-մաս. Յունուա- րին 4 ա. և յունիսին 3 ա.:	

**Ապառիկ բաժանորդագրութիւն յի ըն-
դունում.**

Կարելի է գրուել խմբագրատանը (Թիֆլիս, Գանովսկայա
№ 11) կամ զործականների մոտ: Ուրիշ տեղերից դիմել՝ Ռեդակ-
ցիա գազետ «Արշալույս». կամ Tiflis, Rédaction du journal «Ar-
schalouis».

Խմբագիր-հրատարակիչ՝ Գ. Մելիք-Կարսկե Զենք
փ. (3)

16. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ	
17. ԽՄԲԱԳԲԱՒԹԻԱՆ ԿՈՂՄԻՑ	
19. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ	
20. ՅԱԼԵՐԱԿԱԾ. ՋԷյմս Մորիէլ «ՀԱԶԻ ԲԱԲԱՆ ԱՆԳ-	
ԼԻԱՅՈՒՄ», վեպ պատրիկ, կեանքից, թարգմ.	
անդ. Մ. Կարառկահան	174—206

ԽՄԲԱԳԲԱՒԹԵԱՆ ԿԱՆԱՆՆԵՐ

1. Խմբազրութիւնը յատում է յօդուածագրերից՝ գլեւ պատճ, մասնաւոնից քուեր, յատուկ անուննեն ու օտար բաներ, և թերի մխան մի եւնախ վրայ, ու անմասպես առ գայնձեզ կտաքութեան, ու դրաքութեան իւ նու պարբերի նիները սրուալի լինելու վրայ. Թարգմանութեան հետ պէտք է ու զարկել խմբազրութեանը նաև բնագիրը:

2. Չընդունուած մեծ յօդուածները պահուում են խմբազրատանը 6 տարիս, իսկ յետոյ սչնչացնուում են: Չեսազիրը յիշ ստանալու համար պէտք է ուզարկել ճանապարհածախուց: Փոքր յօդուածներն ու ստանաւուները չեն վերապարհուում:

3. Գրուածքների վարձատրութեան չափը որոշում է խմբազրութիւնը: Խմբազրութեան առանց պայմանների ուզարկուած ճանազիրները համրուում են անգնարիփ:

4. Խմբազրութիւնս իրան է վերապահուում ուզարկուած յօդուածները վուփունելու կամ կրծատելու իրաւունքը:

5. «Մուրմի» համարը չստացուելու գլուքում պէտք է խմբազրութեանը տեղեկութիւն տալ ոչ ուշ, քան յաջորդ համարի լոյս տեսնելը:

6. Խմբազրութիւնը գանհազան հարցումներով գիմող անձինք պէտք է ուզասախանի համար ուզարկել համակադրուշ՝ կամ պոստալին բանկ:

7. Հասցե փոխելու համար պէտք է ուզարկել 40 կողէկու Հասցեի գուփունումը պէտք է ստացուի իւրաքանչիւր ամսի 10-ից ոչ ուշ, որպէսզի առաջիկայ համարն ուզարկուի նոր հասցեով: Նոր հասցեի հետ պէտք է այսնել նաև հին հասցեն:

ԹԵՐԱՎՈՒՅԻՆԻ կ ԲԵՔԵՆԱՐԴՅԵԳՐԱԿԹԻՒՆ

1906 թ.

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ԵԽ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա. Մ Ա Ա Գ Ռ Ի Ւ
(Եսր արջան Վ առքի)

Բ Ա Ժ Ա Ն Ա Բ Պ Գ Ա Գ Ի Ն Ը

Օպերատորն առքելուն 10 ր. Արտասահման 12 ր. (32 գ.)

Կայունութան կեռ առքին 6 » » 7 » (18 գ.)

Համայնքաւ 1 բուրլի բաժանուղազինը ամսականը 1 բուրլի:
Մանօրաւ թիմ, բաժանուղազինը կարելէ վճարել նաև մաս-մաս,
Ծխակ, դպր, վարժուհների և ուսուցիչների, գիւղական քահանաների,
միջն. ուս., աշակերտների, ուսանողների և բանուղների համար բաժանու-
ղազինն է 8 բուրլի միուսաւանում:

ԲԱԺԱՆՈՒՐԴԱԳՐԱԿԹԻՆԻՆՐ ՀԵԴԱՒՆԻԱԽՄ է

Թիմավորութափառան (Ճամփառական փողոց, տ. № 12)
Կայունութան այ տեղերից պէտք է դիմել Տիֆլիս, վե րադարձ
յարական այլ աշխատանքունութափառան:

Արտասահմանից՝ Tiflis, Rédaction de la revue «MOURTCH».

«ՄՈՒՐՃ»-ի գրամականից:

Ավելանուղուղուր, —պ. Լեռն Մանուկյան

Բազմ. —ք. Գ. Սարգսիան (Ե. Մօրեկ. լ. № 26) և պ. Յ. Քոչարեան:

Էլիֆ-Էլիքար—պ. Գ. Տ. Գանիելյան:

Երեւան - «Եկամառ» զրահանեաթի:

Կուրու—պ. Համազարդ Տ.-Խաչատրեան:

Մուկուտ—պ. Ստ. Թումելյան:

Անի—պ. Արմամ Յակովեան (Սեծովեզերևայ շրջան):

Անուշիսնդ—թ. ք. Բէկկիւլեան (Անգրկասպեան երկիր):

Արմենույլ—պ. Ն. Հայրապետյան:

Թիմիկ—«Գուտանենլեր» և «Եհենարոնական» դրամանու:

Վանդիլուկազ.—Յ. ք. Սատիկյան:

Թուուրիզ—պ. Հ. Պանիլյան:

Եզիկսոս—զոկոսը կ. Փաշալիեան-Խան (Ալեքսանդրիա):

Լուգլիք—պ. Գ. Մէլիք-Աբշահան:

Կոր-Զուլու—պ. Տիգրան Արդարեան:

Թէհրմն—պ. պ. Ալեքսան Թունիսնց և Ա. Բուրակյան:

ՑԱՅՍԱՐԱՐՈՒԹՅԻՆ շնորհուում է ամեն լեզուով: Յարտարա-
բութիւնների համար վճարում են, — 1 երես բանող յայտարարութեան համար
15 ր., 1/2 եր., 8., 1/3 եր., — 4 բան տաղակ (կորպ.)—40 կ.:

Խմբագիր ՀԵՂՈՒՄ ՍԱՐԳՍԵԱՆ